

# ԼՈՒՍԱԾԻՆ





ԴԵԿՏԵՄԲԵՐ 1996

ԾԳ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Դեկտեմբեր
1996

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հաղորդագրություն ....3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վատիկան և Իտալիա ....4
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալական հեռագիրը Հովհաննես-Պողոս Բ Պապին Իտալիայից Ս. Էջմիածին վերադառնալիս ....91
Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի քարոզը դեկտեմբերի 22-ին, Մայր Տաճարում մատուցվող Ս. Պատարագի ընթացքում, Վատիկան կատարած իր պաշտոնական այցելության առթիվ ....92
Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխանը՝ տրված Փարիզի «Յառաջ» թերթին ....96
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մամլո ասուլիսը ....98
Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի ցավակցական հեռագիրը Նորին Սրբություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Նորայր արքեպս. Պողարյանի մահվան առթիվ ....102
Նորին Սրբություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխան ցավակցական հեռագիրը Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին ....103
Հայ Երուսաղեմի նվիրյալը ....104
Վախճանուեց Նորայր արքեպս. Պօղարեանը ....105
Գարեգին Ա Կաթողիկոսի այցը Գյումրի՝ երկրաշարժի զոհերի ութերորդ տարելիցի առիթով ....106
ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ - Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում ....115
ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ - Հայոց սպարապետ Հեթում Պայլի Յիշատակարանը ....129
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Հայոց տոմարի որոշ հարցերի մասին ....135
ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ - Հովհան Օձնեցի Իմաստասեր ....165
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ - Դեպի համիտենություն ....168
ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ - Նորօրեայ թարգմանիչները ....176
ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ - Գիրքը՝ մարդու նման հարատևող ....178
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Աբեղայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ....181
Տ. Ներսեհ աբեղա Խալաթյան ....183
Տ. Մաշտոց աբեղա Ժողոյան ....183
Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյան ....184
ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում և Ստեփանոս Նախասարկավագին նվիրված երեկույթ Հոգևոր Ճեմարանի սրահում ....185

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ - Համաշխարհային Առաքելության և Ավետարանչության ԺԱ համաժողովը Բրազիլիայի Սալվադոր քաղաքում ..................... 189
ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ուխտագնացություն «Վանեվան» եկեղեցի .......... 191
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ - Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի .......... 192
Ընդունելություններ Մայր Աթոռում .......... 209
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - եկեղեցական բեմ. լուրեր .......... 210
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1996 թվականի տպագրված նյութերի .......... 212
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата .......... 221
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin .......... 223
«Etchmiadzine» organe officiel du Saint-Sierge d'Etchmiadzin .......... 225

ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Նորին Ս. Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից 1996 թ. դեկտեմբերի 10-ին պաշտոնական այցելությամբ մեկնեց Հռոմ, Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հրավերով՝ եղբայրական սիրո ողջագուրմամբ լինելով հյուրը Սրբազան Քահանայապետի դեկտեմբերի 10-13-ը, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Սրբազան Պատրիարքների և թեմակալ առաջնորդ ինը եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների հետ:*

*Պատմական այս այցելությունը, որով նոր էջ բացվեց երկու Եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ, տեղի ունեցավ փառաշուք հանդիսավորությամբ ու եղբայրական փոխըմբռնմամբ, հավարտ որի Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ Պապը և Ամենայն Հայոց Հայրապետը ստորագրեցին Համատեղ Հայտարարություն՝ ի խնդիր Եկեղեցիների միջև սիրո և միության ամրապնդման ու գործակցության, որում երկու Վեհապետերի մասնավոր հոգածությունն է արտահայտվում հայ ժողովրդի հանդեպ և արժևորվում նրա անցած 1700-ամյա Քրիստոսադրոշմ ճանապարհը:*

*Այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը պաշտոնական հանդիպում ունեցավ Իտալիայի Հանրապետության նախագահի հետ, հովվապետական ուղևորությամբ եղավ իտալահայ համայնքում:*

*Ապա Գարեգին Ա Վեհափառը այցելություն տվեց Վենետիկի Մխիթարյան Միաբանությանը ի Ս. Ղազար՝ հրավերով միաբանության ընդհանուր Աբբահայր Հայր Հովսեփ վարդապետ Բեհեսնիլյանի:*

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը իր շքախմբով վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին 1996 թ. դեկտեմբերի 20-ին:*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏԻԿԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱ

### *ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ*

*1996 թվականի դեկտեմբերի 10-14-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այցով եղավ Վատիկանում՝ որպես հյուրը Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու և նրա հոգևոր պետ Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ-ի:*

*Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը նախապես ծրագրված և խնամքով պատրաստված էր Հռոմի Պապի և Վեհափառ Հայրապետի պաշտոնական ներկայացուցիչների կողմից:*

*Իր տեսակի մեջ այս այցելությունը եզակի էր, քանզի առաջին անգամ Հայ Եկեղեցու գերագույն պետը Հռոմ էր մեկնում ազատ և անկախ Հայաստանից: Գարեգին Ա Հայրապետն առաջին Կաթողիկոսը չէր, որ այցելում էր Հռոմ, սակայն նախորդ Հայրապետները գնացել էին իրենց տառապյալ ազգի համար օգնություն հայցելու: Միակ բացառությունը երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի այցն էր 1970 թվականին, բայց այն ևս մթագնված էր Հայաստանի խորհրդային վարչակարգի տիրապետությամբ:*

*Եվ ահա առաջին անգամն էր, որ Հայոց Հայրապետը մեկնում էր Հռոմ ոչ թե որպես խնդրատու, այլ որպես եղբայր ու գործակից՝ իր կորակցությունն ու սերը արտահայտելու և համագործակցության ու փոխադարձ ճանաչողության նոր ասպարեզ բացելու:*

### *ՄԵԿՆՈՒՄ*

*Այսպիսով, ըստ նախապես համաձայնեցված ծրագրի, 1996 թվականի դեկտեմբերի 10-ի առավոտյան ժամը 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Հռոմ՝ այցելելու Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ Պապին՝ վերջինիս հրավերով:*

*Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախմբում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին*

*արք. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը և գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:*

*Մինչ մեկնելը, Նորին Սրբությունը Մայր Տաճարում իր բարի երթի աղոթքն առաքեց առ Աստված, ապա ուղղվեց դեպի «Զվարթնոց» օդանավակայան:*

*Հայոց Հայրապետին ճանապարհելու էին եկել Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը, միաբանության անդամները, ՀՀ կրոնից գործոց նախագահ Լավար Սուջյանը և բարձրաստիճան այլ անձինք:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՀՌՈՄ

*Հռոմի ժամանակով ժամը 11.45-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը լոնդոնահայ ազգային բարերար Վաչե Մանուկյանի կողմից տրամադրված հատուկ ինքնաթիռով ժամանեց «Շիամփինո» օդանավակայան, ուր նրան դիմավորեցին Վատիկանի Քրիստոնեական Միության Քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Կասսիդին, խորհրդի քարտուղար Պիեռ Դյուպրե եպիսկոպոսը, Վատիկանի Պետական քարտուղարության կողմից Ռե եպիսկոպոսը, այլ բարձրաստիճան ներկայացուցիչներ, որոնց թվում՝ Վատիկանի մոտ ՀՀ ներկայացուցիչ Մարիամ Երեմյանը և Իտալիայում ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը:*

*Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել նաև շքախմբին մաս կազմելու համար նախօրոք Հռոմ ժամանած Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արք. Գազանճյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արք. Հովսեփյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արք. Նագգաշյանը, Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավյան երկրների Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանը, Կ. Պոլսո Պատրիարքության Կրոնական Ժողովի ատենապետ Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը, ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանը, Հռոմի Քահանայապետական Արևելյան ինստիտուտի ուսանողներ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանն ու Միքայել սրկ. Ֆինդիկյանը, Միլանի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգսյանը:*

*Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեցին նաև Միլանի հայ համայնքի ներկայացուցիչները, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայտնի ազգայիններ:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՎԱՏԻԿԱՆ

*Օդանավակայանի պատվո սրահում տեղի ունեցած ընդունելությունից հետո Նորին Սրբությունը և իրեն ուղեկցող ներկայացուցչական պատվիրակությունը պատվո պահակախմբի ուղեկցությամբ առաջնորդվեց դեպի Հռոմ և պատշաճ պատիվներով մուտք գործեց Վատիկանի հնադարյան պարիսպներից ներս: Վեհափառը իր շքախմբի հետ հյուրընկալվեց հատուկ բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված «Ս. Մարթայի տուն» (*Domus Sanctae Martae*)-ի հյուրատանը, որի պաշտոնական բացումը տեղի էր ունեցել նույն թվականի նոյեմբերի 1-ին:*

## ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Այստեղ, «Ս. Մարթայի տանը», ժամը 13.30-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում կարդինալ Կասսիդին բարիգալստյան խոսք ասաց Նորին Սրբությանը՝ կարևորելով Հայ Առաքելական Եկեղեցու պատվիրակության ներկայությունը Վատիկանում:*

*Իր փոխադարձ խոսքում Վեհափառ Տերը ուրախություն հայտնեց, որ հանդիպելու է Սրբական Պապին, որովհետև այն լինելու է մի նոր առիթ երկու Եկեղեցիների համատեղ գործակցության, ինչպես նաև բարեկամական հարաբերությունների առավել ամրապնդման գործընթացում:*

*Ճաշկերույթին ներկա էին նաև Դյուպրե, Ռե եպիսկոպոսները և այլ բարձրաստիճան հոգևորականներ:*

## ԱՅՑ Ս. ՊԵՏՐՈՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

*Կարճատև հանգստից հետո, օրվա երկրորդ կեսին Նորին Սրբությունն իրեն ուղեկցող պատվիրակության հետ և կարդինալ Կասսիդիի ուղեկցությամբ այցելեց Սուրբ Պետրոս Մայր Տաճար:*

*Ս. Պետրոս Մայր Տաճարը, որն այսօր Կաթոլիկ Եկեղեցու կենտրոնն է, հիմնվել է Կոստանդիանոս կայսեր օրոք և օծվել 349 թվականին: Ներկայիս հրաշք կոթողի շինարարությունն սկսվել է 1506-ին և ավարտվել միայն 120 տարի հետո: Շինարարությանը մասնակցել են անվանի ճարտարապետներ: Իր կյանքի վերջին տարիները բազիլիկի ձևավորմանն է նվիրել նաև աշխարհահռչակ քանդակագործ Միքելանջելոն, ում այդպես էլ բախտ չվիճակվեց տեսնել այն ավարտուն տեսքով: Չնայած հետագայում կատարված ճարտարապետական որոշ փոփոխություններին, Սուրբ Պետրոս տաճարն իրավամբ համարվում է Միքելանջելոյի ճարտարապետական գլուխգործոցը:*

*Տաճարի կենտրոնական դռնից ներս մտնելով, որը բացվում է*




ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ՝
ՊԱՏՎՈ ՊԱՀԱԿԱԶՈՐԻ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՄԲ



ՈՂՋԱԳՈՒՐՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՐԸ



ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՀԵՏ



ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ



ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ



ՄԻ ՊԱՀ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԱԼԱՏԻ ՄՈՒՏՔԻ ՄՈՏ

միմիայն հովվապետների այցելության պարագային, Հայոց Հայրապետն առաջին աղոթասացությամբ խոնարհվեց Միքելանջելոյի հայտնի «Վիշտ» (Pieta) քանդակի առջև, որ մայրական անեղծելի սիրո կատարյալ խորհրդանիշն է:

Ապա կենտրոնական խորանի առջև, որի տակ ամփոփված է Սուրբ Պետրոս առաքյալի մասունքը, Նորին Սրբությունը և իր շքախումբը երգեցին «Ուրախ լեր» շարականը, ապա Գարեգին Ա Վեհափառն աղոթք առաքեց առ Բարձրյալը՝ բարեխոսություն հայցելով կույգ Եկեղեցիների հիմնադիր առաքյալներից՝ Հռոմի Կաթողիկե Եկեղեցու հիմնադիր Սուրբ Պետրոսից և Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադիրներ Սուրբ Թադեոսից ու Սուրբ Բարդողիմեոսից:

Իջնելով գետնահարկ, պատվիրակության անդամները Սուրբ Պետրոսի շիրմի առջև երգեցին «Երանելի Սուրբ Առաքեալք» շարականը:

Կաթոլիկ Եկեղեցու Պապերի դամբարանում շրջելիս, Վեհափառ Հայրապետը, որպես հարգանքի տուրք, «Հոգւոց» արտասանեց Հովհաննես ԻԳ և Պողոս Զ երջանկահիշատակ Պապերի շիրիմներին, որոնց անձնապես ճանաչել էր:

Ապա Վեհափառը մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ ծանոթացավ եկեղեցու տակ կատարված պեղումներին, որոնց ընթացքում բացվել են հնագույն տաճարի մնացորդներն ու քրիստոնեական դամբարանները:

## ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով ժամանեց Պապական պալատ, որտեղ Վատիկանի շվեյցարական պատվո պահակայորի ուղեկցությամբ առաջնորդվեց դեպի Սրբազան Պապի առանձնասենյակ: Հենց այստեղ էլ տեղի ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբազնություն Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Պապի անդրանիկ հանդիպումը:

Ֆրանսերենով շուրջ կես ժամ տևած առանձնազրույցից հետո, Սրբազան Քահանայապետի հանդիսավոր ընդունելությունների սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Կաթողիկե Եկեղեցու պետին առանձին-առանձին ներկայացրեց իր շքախմբի անդամներին:

Ուղիղ մեկ ժամ տևած առաջին հանդիպումն ավարտվեց ժամը 19.30-ին, որից հետո Հայ Եկեղեցու պատվիրակությունը վերադարձավ հյուրանոց՝ ընթրիքի:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

*Այցելության երկրորդ օրը, դեկտեմբերի 11-ի առավոտը, երկար, շատ երկար կմնա Ֆրանսիայից, Անգլիայից, Գերմանիայից, Իտալիայից, Չեխոսլովակիայից և աշխարհի տարբեր երկրներից ժամանած 10.000-ից ավելի ուխտավորների հիշողության մեջ և սրտերում, ովքեր հավաքվել էին Պողոս Զ Պապի անունը կրող հսկա դահլիճում, ուր ամեն չորեքշաբթի տեղի է ունենում ուխտավորների բաց՝ հրապարակային ունկնդրություն Սրբազան Պապի կողմից։*

*Մինչ հրապարակային ունկնդրությունը, ժամը 10.30-ից մինչև 11.00 իրենց երկրորդ տեսակցությունն ունեցան Գարեգին Ա Հայրապետը և Հովհաննես-Պողոս Բ Պապը։*

*Ժամը 11-ին բազմահազար ուխտավորների ծափողջույնների ներքո Սրբազան Պապը և Վեհափառ Հայրապետը մուտք գործեցին դահլիճ՝ բազմելով երկու միանման գահերի վրա։ Պատմության մեջ առաջին անգամ էր, երբ հիշյալ ընդունելությանը, որ տևում է մեկ ժամ (այս անգամ տևեց մեկ ու կես ժամ), Հռոմի Կաթողիկե Եկեղեցու Քահանայապետի հետ միասին նախագահում էր մեկ այլ քույր Եկեղեցու հոգևոր առաջնորդը։*

*Հովհաննես-Պողոս Բ Պապը նախ և առաջ ներկայացրեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հորը հետևյալ ջերմ խոսքերով.*

*«Մեր այս հանդիպման սկզբում մեծ ցնծության զգացումով ձեզ եմ ներկայացնում ի Քրիստոս մեծարգյալ ու թանկագին եղբայր՝ Նորին Սրբություն Գարեգին Ա-ին, Գերագույն Կաթողիկոսին Ամենայն Հայոց, ով այս օրերին ապրում է ինձ մոտ՝ Վատիկանում, իր Եկեղեցուականավոր ներկայացուցիչների՝ Երուսաղեմի Հայ Պատրիարքի, Կ. Պոլսի Հայ Պատրիարքի և այլ հայտնի արքեպիսկոպոսների հետ միասին։*

*Իր հեռավոր երկրից՝ Հայաստանից, Կաթողիկոսն ուխտի է եկել Պետրոս և Պողոս առաքյալների խոստովանության վրա հիմնված Հռոմի Եկեղեցուն։ Այս քաղաքը նրան արդեն հայտնի էր։ Մինչ այդ նա այստեղ երկար ապրել է Վատիկանի Բ ժողովի ժամանակ, որին իր մասնակցությունն է բերել որպես արթուն և ուշադիր դիտորդ։ Ես ինքս հաճույքն եմ ունեցել ընդունելու նրան 1983-ին, երբ, Լիբանանում Կիլիկիո Հայոց Աթոռը գլխավորելու կոչվելուց քիչ անց, նա ինձ այցի եկավ։ Այս կարևոր և ավելի պաշտոնական առիթներից բացի այս երկար տարիներին մենք նաև եղբայրական թղթակցություն ենք պահել և փորձել ենք կիսել մեր Եկեղեցիների կյանքի կարևոր իրադարձությունները։ Անցած տարվա ապրիլին, երբ նա կոչվեց Էջմիածնի փառավոր Աթոռի և Հայ Առաքելական Եկեղեցու գլխավորության, ես կարդինալ Էդվարդ Իդրիս Կասիդիին*



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԴԱՀԼԻՃՈՒՄ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ



ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

*վստահեցի ինձ ներկայացնելու պաշտոնը իր գահակալության հանդեսին։ Այսօր, ավելին, ես ընդունում եմ մի եղբոր, որին վերագտնում եմ սիրո և ցնծության մեջ։*

*Ղեկավարվելով այն խորին հաղորդությամբ, որն արդեն իսկ միացնում է մեզ, Գարեգին Կաթողիկոսն ու ես հույս ենք տածում, որ այս օրերի հանդիպումներն ու մտքերի փոխանակությունները նպաստելու են դեպի լիակատար միություն ուղղված հետագա քայլերին»։*

Ապա Հովհաննես-Պողոս Բ Պապը հրավիրեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր սրտի խոսքը, հայրապետական պատգամն ու օրհնությունը բաշխելու ներկաներին: Նորին Սրբությունն իր խոսքում ֆրանսերենով ի մասնավորի ասաց.

*«Ձերդ Սրբություն,*
*սիրելի եղբայրներ,*
*Ես ամբողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում անկեղծ և քրիստոնեական սիրով լի խոսքերի համար, որ վերաբերում են անխտիր բոլոր ժողովուրդներին, ներառյալ մեր հայ ժողովրդին։*

*Այսօր ես այս հոկա դահլիճում լսեցի բազմաթիվ լեզուներ, սակայն ես ինձ ամենևին Բաբելոնում չզգացի, քանզի քրիստոնեական հավատքն է, որ ստեղծում է միությունը, որով մենք կարող ենք հասկանալ և միասին ապրել այն խաղաղության ու սիրո մեջ, որ մեր բոլորի Տեր Հիսուս Քրիստոս մեզ տվեց։ Ես Ձեզ ողջունում եմ նոր անկախ պետություն հռչակված Հայաստանի ողջ ժողովրդի անունից, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անունից և ողջ աշխարհում սփռված հայ ժողովրդի անունից։*

*Մենք աղոթում ենք Տիրոջը, որ Ձեզ շնորհի կատարյալ և մշտական առողջություն ոչ միայն Հռոմի Կաթոլիկ եկեղեցու բարօրության, այլև ողջ մարդկության համար։ Եվ այս ոգով, Հայաստանի, Հայ Եկեղեցու, Հայաստանի ժողովրդի, Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքությունների, ինչպես նաև Իտալիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Ավստրիայի, Լատինական Ամերիկայի և Միացյալ Նահանգների հայության անունից ես ողջունում եմ Ձեզ, և ահա այս դահլիճում հայերեն լեզուն հնչելու է նույն իղձով և նույն աղոթքով նույն Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի համար»։*

Այնուհետև հայերեն լեզվով հնչած Կոմիտասյան «Հայր մերից» հետո երկու քահանայապետերն օրհնեցին ուխտավոր ժողովրդին, ավարտ որի նախ հոգևոր դասը, ապա հավատավոր ժողովուրդը համբուրեց սրբազան առաջնորդների աջերը:

### *ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ*

Ընդունելությունից հետո «Սուրբ Մարթա» հյուրատան ճաշասրահում, ի պատիվ Գարեգին Ա Կաթողիկոսի և իր շքախմբի, կարդինալ Կասսիդիի կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին նաև Արևելյան Կաթողիկե

Եկեղեցիների խորհրդի նախագահ կարդինալ Սիլվեստրինին, Քրիստոնեական Միության Խորհրդի պատվավոր նախագահ կարդինալ Վիլբրանդսը, Պետական քարտուղարության ներկայացուցիչներ Թորան և Ռե եպիսկոպոսները, Քրիստոնեական Միության Խորհրդի քարտուղար Դյուպրե եպիսկոպոսը և այլ բարձրաստիճան հոգևորականներ:

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին ճառեր, որոնցում մեկ անգամ ևս շեշտվեց քրիստոնեական միության անհրաժեշտությունը ներկա պայմաններում:

### ԱՅՑ Ս. ՊՈՂՈՍ ՏԱՃԱՐ

Ճաշից հետո, ժամը 17-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը և նրան ուղեկցող շքախմբի անդամները այցելեցին Հռոմի պարիսպներից դուրս գտնվող Սուրբ Պողոս Տաճար:

Սույն տաճարը կառուցվել է Ս. Պողոսի գերեզմանի վրա և Հռոմի չորս գլխավոր տաճարներից երկրորդն է:

Այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետն իր շքախմբի անդամների հետ աղոթեց Սուրբ Պողոսի շիրիմին, ապա ծանոթացավ տաճարին և այցելեց բենեդիկտյանների կից վանքը, որոնց հսկողությանն է հանձնված այս հոյակավոր տաճարի պահպանությունը:

Վեհափառը հիշեց, որ ժամանակին ինքը եղել է այս վանքում և տաճարում, որտեղ Հովհաննես ԻԳ Պապը ունեցել էր հայտնատեսական գաղափարը Վատիկանի Բ ժողովը գումարելու:

Այցելությունը տևեց մոտ երկու ժամ և մեծ տպավորություն թողեց ներկաների վրա:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ԷՋԻԴԻՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.00-ին, Տրաստեվերեի Սուրբ Մարիամ հինավուրց եկեղեցում Վեհափառ Հայրապետն իր շքախմբի անդամների հետ ներկա եղավ երեկոյան ժամերգությանը, որին ներկա էին Հռոմի Սուրբ Էջիդիո երիտասարդական համայնքի 3.000-ից ավելի երիտասարդ հավատացյալներ:

Սուրբ Էջիդիո բարեսիրական համայնքը հիմնվել է 1960 թվականին, Հռոմում, Տրաստեվերեի եկեղեցում, որի կամավոր անդամներն են դպրոցական և համալսարանական տարիքի երիտասարդները: Նրանք կոչված են օգնության ձեռք մեկնելու աշխարհի ողջ կարիքավորներին, այդ թվում՝ անտուններին, գաղթականներին, բանտարկյալներին և օգնության կարիք ունեցող ուրիշ շատ անձանց: Այսօր այս կազմակերպությունը շատ հզոր է և ունի մեծ հնարավորություններ: Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառը Սուրբ Էջիդիո համայնքի լավագույն



Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ



ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐ ԿԱՍՍԻԴԻԻ ԵՎ ՍՈԴԱՆՈՅԻ ՀԵՏ



Ս. ԷՋԻԴԻՈՅԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ



ԲԵՆԵԴԻԿՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՆՔՈՒՄ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ ՊԱՊԻ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՄՈՏ

*քարեկամն է հիմնադրման օրից: Նա բազմիցս այցելել է այս համայնքին նաև որպես Կիլիկիո Կաթողիկոս:*

*Թափորով մուտք գործելով չորրորդ դարի այս հրաշակերտ տաճար՝ Վեհափառ Հայրապետն իր հայրական օրհնությունը բաշխեց ներկաներին: Խունկերաւ բազմության միջով, սաղմոսների և հոգևոր երգերի ուղեկցությամբ, Հայոց Հայրապետն առաջացավ դեպի Ավագ Խորան և բազմեց կենտրոնական գահին:*

*Ժամերգությունից հետո Նորին Սրբությանը ողջունեց երիտասարդաց միության հոգևոր խորհրդատու հայր Մարկո Նիավին, հատկապես նշելով, որ իրենք ուրախ են՝ կրկին տեսնելով Նորին Սրբությանն այս տաճարում, բայց այս անգամ արդեն որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ապա նա Սուրբ Էջիդիո համայնքի անունից շնորհակալություն հայտնեց այդ շնորհաբեր այցի համար և ասաց, թե հուսով է, որ համեղբայրությունը, հիմնված Հիսուս Քրիստոսի ավանդների ու սիրո վրա, առավել կսերտանա: Ողջույնի խոսքից հետո հայր Նիավին հրավիրեց Վեհափառին իր օրհնության խոսքն ասելու:*



Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի քարոզը
Ս. Էջիդիոյի համայնքի հավատացյալներին

*Հայոց Հայրապետը ֆրանսերեն լեզվով քարոզ խոսեց՝ իր հայրական պատգամը հղելով համայնքին՝ առավել շեշտելով կարևորությունը փոխադարձ օգնության, համագործակցության, խաղաղության և կարեկցության: Նաև ավելացրեց, որ իր այցելությունը Հռոմ լիարժեք չէր լինի, եթե չհանդիպեր Սուրբ Էջիդիոյի երիտասարդությանը: Նորին Սրբությունը քաջալերեց*

համայնքի անդամներին, որպեսզի գան և տեսնեն 1700-ամյա պատմություն ունեցող Հայոց Առաքելական Եկեղեցին՝ շեշտելով, որ բավական չէ քրիստոնյա լինել և ապրել առանձին, քրիստոնյա պետք է լինել միասնաբար:

Նորին Սրբությունը իր խոսքի համար բնաբան ընտրեց Ղուկասու Ավետարանից երիտասարդ մի իշխանավորի մոտեցումը Հիսուսին և արքայության արժանի լինելու ցանկության դրվագը: Դիպուկ վերլուծումներով, Վեհափառը բացատրեց, որ բարիք գործելու այս կերպը սիրո գերապանց և ամենաառաքյալական եղանակն ու արտահայտությունն է:

Հայերենով «Հայր մեր»-ը երգելուց հետո, Վեհափառ Հայրապետն օրհնեց երիտասարդությանը՝ Բարձրյալ Աստծուց հայցելով հովանավորել համայնքին ու նրա աստվածահաճո գործունեությունը:

Այս առիթով Ս. Էջիդիոյի համայնքը Վեհափառին նվիրեց իտալահայ հայտնի նկարիչ Գ. Շըլդյանի նկարազարդումով մի գեղեցիկ Աստվածաշունչ, իսկ Վեհափառից ստացավ հայկական մի գեղեցիկ մանրանկար:

Ապա Հայ Եկեղեցու պատվիրակությունն ուղղվեց դեպի քիչ հեռու գտնվող Սուրբ Էջիդիոյի գողտրիկ եկեղեցի, ուր Սուրբ Խորանի վրա դրված են տարբեր երկրներից բերված մասունքներ, այդ թվում նաև՝ Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ վանքից բերված մի մասունք և Մայր Աթոռից տարված մի թևավոր խաչքար: Այս Սուրբ Խորանի առջև ամեն օր հատուկ պաշտամունք է կատարվում: Այստեղ իրենց աղոթքն առ Աստված հղեցին նաև Հայ Առաքելական Եկեղեցու սպասավորները:

Այցելությունն ավարտվեց Ս. Էջիդիո համայնքի նախագահ պրոֆեսոր Ռիկկարդիի կողմից տրված սիրո ընթրիքով՝ ի պատիվ Նորին Սրբության և իր շքախմբի:

## ԱՅՑ ԼԱԹԵՐԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Այցելության երրորդ օրը, դեկտեմբերի 12-ի առավոտյան, Նորին Սրբությունն իր շքախմբի անդամների հետ այցելեց Հռոմի եպիսկոպոսի Աթոռանիստ Լաթերանի Սուրբ Հովհաննես Մայր Տաճար, ուր Վեհափառին մուտքի առջև դիմավորեց Հռոմի պապական փոխանորդ կարդինալ Ռուինին:

Տեղի ունեցավ էկումենիկ արարողություն, որի ընթացքում հնչեցին լատին և հայ շարականներ, ապա փոխանակվեցին ողջույնի խոսքեր:

Արարողությունից հետո կարդինալ Ռուինիի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը շրջեց Տաճարում, ապա այցելեց հնագույն մկրտարան, որի թվագրությունը հասնում է մինչև Կոստանդիանոս կայսեր ժամանակները:



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԸ ԼԱԹԵՐԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՏԵԼԻՍ



ԼԱԹԵՐԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

### ԱՅՑ Ս. ԿՂԵՄԵՍ ԲԱԶԻԼԻԿԱ

*Այնուհետև Հայոց Հայրապետն այցելեց Սուրբ Կղեմեսի երկհարկանի բազիլիկա, խոնարհվեց բազիլիկի ներքնահարկում ամփոփված Սուրբ Կղեմես հայրապետի նշխարների, ինչպես նաև սլավոնական ժողովուրդներին գիր պարգևած լուսավորիչներ Սուրբ Կիրիլի և Սուրբ Մեֆոդիի դամբարանների առջև: Այստեղ նույնպես բազմադարյան եկեղեցու կամարների տակ ղողանջեցին հայկական շարականները՝ իրենց անկրկնելի գեղեցկությամբ գերելով ներկաներին:*

### ԱՅՑ ՀՌՈՄԻ ԼԵՎՈՆՅԱՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՎԱՐԺԱՐԱՆ

*Նույն օրը, ժամը 13.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Լևոնյան հայ կաթողիկե վարժարան, ուր դիմավորվեց Թարմունի և Մարիաթյան գերապայծառների կողմից:*

*Վեհափառը նախ «Հրաշափառով» առաջնորդվեց Վարժարանի Ս. Նիկողայոս եկեղեցի, ուր աղոթքից հետո՝ «Պահպանիչով» օրհնեց ներկաներին:*

*Ապա վարժարանի հանդիսությունների սրահում բարիգալստյան և ողջույնի ջերմ խոսք ասաց վարժարանի տեսուչ Հայր Անտոն վրդ. Սարրոյանը:*

*Այնուհետև ներկաներին իր հայրական հորդորը բաշխեց Նորին Սրբությունը՝ հատկապես շեշտելով, որ առաջին անգամ չէ, որ այցելում է վարժարան և իրեն զգում է ինչպես սեփական տանը:*

*Հայրական խոսքից հետո ուսանողությունն ու հայկական համայնքի փոքրաթիվ անդամները աջահամբույրով ստացան Վեհափառ Հայրապետի օրհնությունը:*

*Վերջում տրվեց սիրո ճաշ՝ ի պատիվ Վեհափառ Տիրոջ, որին ներկա էին նաև կարդինալներ Կասսիդին և Սիլվեստրինին:*

### ԱՅՑ Ս. ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

*Նույն օրը, ժամը 16.00-ին, Գարեգին Ա Վեհափառը ժամանեց Սուրբ Մարիամ Մայր տաճար, ուր նրան ջերմորեն ընդունեց Հռոմի պապական նախկին փոխանորդ կարդինալ Պոլետտին:*

*Ս. Մարիամ Տաճարը Հռոմի չորրորդ կարևոր բազիլիկան է և նվիրված է Աստվածամորը:*

*Աղոթքից և շարականների երգեցողությունից հետո կարդինալի ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը շրջեց տաճարում, ծանոթացավ այնտեղ պահվող սրբություններին:*

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՊԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*Ս. Մարիամ Մայր տաճարից ժամը 17.30-ին Նորին Սրբությունն իր շքախմբով ուղղվեց Հռոմի Պապական Արևելյան ինստիտուտ,*

ուր դիմավորվեց կարդինալ Սիլվեստրինիի և Ինստիտուտի տնօրենության ու դասախոսական կազմի կողմից:

Դիմավորողների մեջ էր «Հիսուսյան» միաբանության պետը՝ Հայր Քոլվենբախը, որը հայտնի հայագետ է և Վեհափառ Հայրապետի երկար տարիների անձնական բարեկամը:

Այս ինստիտուտը հիմնվել է 1917 թվականին՝ Արևելյան Եկեղեցիների աստվածաբանությունը, դավանաբանությունը, ծեսը, կանոնագիտությունը և պատմությունը ուսումնասիրելու նպատակով: Վատիկանի 1962 թվականի երկրորդ ժողովից հետո, այստեղ ուսանում են նաև Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Այստեղ են ուսանել նաև Հայ Առաքելական Եկեղեցուց Տ. Զարեհ արք. Ազնավորյանն ու Տ. Խաժակ արք. Պարսամյանը: Այսօր էլ ինստիտուտն ունի երկու հայ ուսանողներ՝ համձինս Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանի և Միքայել սրկ. Ֆինդիկյանի:

Արևելյան ինստիտուտում գումարվել էր Գիտաժողով՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Նորին Սրբությունը հրավիրվել էր այստեղ՝ եզրափակելու հայկական մշակույթին և աստվածաբանությանը նվիրված մեկօրյա այս նստաշրջանը, որին մասնակցում էին աշխարհի տարբեր համալսարանների պրոֆեսորներ, գիտնականներ, հայագետներ: Ելույթ ունեցող բանախոսները ներկաներին ծանոթացրել էին այժմ կատարվող ուսումնասիրություններին, որոնք ամփոփում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության առանձին փուլերն ու շրջանները:

Վեհափառի ժամանումից հետո ինստիտուտի տնօրեն Հայր Ջ. Պելլանդը նախ մասնակիցներին և ներկաներին մանրամասնորեն ծանոթացրեց Հայոց Հայրապետի կենսագրությանը, ապա ներկայացրեց նրա կատարած աշխատանքը Եկեղեցիների համեղբայրության (էկումենիզմի) ուղղությամբ:

Ապա իտալերեն հատուկ խոսքով հանդես եկավ Արևելյան Կաթողիկե Եկեղեցիների ժողովի նախագահ և Ինստիտուտի գլխավոր խորհրդատու կարդինալ Սիլվեստրինին՝ առանձնակի անդրադառնալով Հայ Եկեղեցու յուրահատուկ ներդրումին քրիստոնեական մշակույթի անդաստանում.

***«Ձերդ Սրբություն,***

***Ինձ համար պատիվ և հաճույք է Ձերդ Սրբությանը հղել իմ ամենաջերմ ողջույնն այս Պապական Արևելյան Ինստիտուտի հարկի տակ, իմ ձայնը միախառնելով ակադեմիական հեղինակությունների ձայնին: Ինձ համար կրկնակի պատիվ է կատարել այն այս Գիտաժողովի ավարտին, որն այս Ինստիտուտը դովելի նախաձեռնությամբ կամեցավ կազմակերպել Ձերդ Սրբության· ի պատիվ՝ այն նվիրելով Հայ Եկեղեցու եկեղեցական գիտություններին:***

***Այս պատիվն ու այս ցնծությունը առաջին հերթին ուղղված են Հայ ժողովրդին, ում Դուք այստեղ ներկայացնում եք այն շրջագծի մեջ, որը***

*Նրան առանձնակի կերպով մեծ է ներկայացնում ողջ քրիստոնեության աչքին Արևելքում և Արևմուտքում, և որն իր հավատքն է։*

*Կկամենայի այս պահին հիշել հայ ժողովրդի հավատքի վկայության մեկ բնագավառը՝ բեղունությունը, որով այն արգասավորել է իր մշակույթը։ Եվ ես սա կատարում եմ այն ժամանակ, երբ մոտենում է Հայաստանի մկրտության 1700-ամյակի ոգեկոչումը՝ մի իրադարձություն, որով Ձեր ժողովուրդն իրավացիորեն հպարտ է, քանզի դրանով ներկայանում է որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ։ Սուրբ Գրիգորը, ում շնորհիվ տեղի ունեցավ այդ իրադարձությունը, կոչվում է «Լուսավորիչ Հայոց»։ Արդեն իսկ այս տիտղոսով ճանաչվում է իր կրկնակի գործունեությունը որպես Ավետարանի քարոզիչ և որպես մշակույթի առաքյալ՝ համաձայն այն անքակտելիության, որը մշտապես բնորոշելու է հայ ժողովրդի քրիստոնեական վկայությունը։*

*Դրա սքանչելի օրինակներն են Սուրբ Թարգմանիչները, մասնավորապես Սահակն ու Մեսրոպը, որոնց սրբությունը արտացոլվում է հատկապես Ավետարանին հայալեզու այբուբեն տալով, Նրան մարմնանալու, հայերեն խոսելու հնարավորություն ընձեռելով։ Եվ արդեն սրբության այս առանձնահատուկ տիպարանությամբ լիակատար ձևով հայտնվում է հավատքի արժեքը մշակույթի համար։*

*Նույն հետքերով ընթացան զարմանալիորեն մեծաքանակ պատմագիրների բոլոր սերունդները, ովքեր ակներևաբար ձգտել են նկարագրելու պատմական անցուդարձները հայ և այն ժողովուրդների, որոնց հետ նա շփման մեջ է մտել։ Իրականության մեջ նրանք եղան ոչ միայն ժամանակագրության ճշմարտապատում և ստույգ նկարագրողները, այլ նաև իսկական և կատարյալ հոգևոր քերթողները փրկագործության պատմության, որն ըմբռնվում էր որպես այն վայրը, ուր Աստված հայտնում է իր մեծագործությունները և չի դադարում հրաշքներ գործելուց, որոնց վկայությունն ու պատումը Սուրբ Գիրքն է։*

*Եվ դեռ մշակույթի սուրբերը այն վանականներն են, որ չբավարարվեցին աղոթարաններ ու ճգնարաններ հաստատելով, այլ այն ուժգին կերպով օժտեցին մշակութային նկարագրով, այդ վայրերը դարձնելով իմաստության իրական շտեմարաններ՝ միշտ ծառայելով ավետարանչությանը։ Պատահական չէ, որ վարդապետի՝ գիտնական-վանականի կերպարը, որն այնքան թանկ է հայ ավանդության համար, հասնում է մինչև նույն սուրբ Մեսրոպը՝ հայրն այբուբենի։ Այդ վանքերը, հայ հողի վրա հրաշալիորեն ծաղկելով ու բազմապատկվելով, ժամանակի ընթացքում դարձան հավատքի միջնաբերդերն ու այն ջահերը, որ լուսավորեցին մարդկային հանճարի չքեղագույն հաղթանակները։*

*Մինչև իսկ նահատակությունը, որ ողբերգական հաճախականությամբ բնորոշեց հայ ժողովրդի պատմությունը, դարձավ նրա մշակույթի բաղկացուցիչ մասը, կարծես ընթերցանության մի բանալի՝ մեկնելու համար կարոտի հյուծող զգացումով գեղուն հայկական ոգին, որը հզոր կերպով նույնացվում է Քրիստոսի հետ, որ դարձավ քավիչ Զոհը աշխարհի փրկության համար։*

*Ձերդ Սրբություն,*

*Կկամենայի այստեղ՝ ակադեմիական այս դահլիճում հայտնել ողջ քրիստոնյաների երախտագիտությունը ի Քրիստոս ունեցած այն հավատարմության համար, որն այնքան թանկ արժեցավ հայ ժողովրդին։ Առանց այդ հերոսական ընծայումի, Եվրոպայի քրիստոնյաների ճակատագիրը գուցե այլ ընթացք ունենար։ Այս հավատարմությունը դարձավ կարծես մի ամրոց՝ հաճախ վերահաս պատահարների ընդոտնիչ կատաղության տակ, սակայն միշտ տոկուն՝ արյան և անգամ բնաջնջումի գնով այլ ժողովուրդներին հնարավորություն ընծայելով, նույնիսկ ընդամենը մի քանի օրով, սեփական խաղաղությունը և նյութական ու հոգևոր բարգավաճումն ապրելու։*

*Նաև կկամենայի, որ իմ այս ձայնը կարողանար մեկընդմիշտ արտահայտել երախտագիտությունն ու հիացումը այն իրողության համար, որ, չնայած խաչի այս եզակի ու տևական փորձառությանը, հայ ժողովուրդը քրիստոնեական հավատքին փոխանցել է խորության ու հարստության մի սքանչելի ներդրում, որն ընդունել է, որով ապրել է, որին հավատացել է, որի մեջ խոկացել է և որի համար աղոթել է։*

*Ձերդ Սրբություն,*

*Կա մեկ այլ տարր, որ մեր մեջ արթնացնում է Ձեր ժողովրդի հանդեպ գնահատանքի ու սքանչացումի զգացումը՝ իր բնական «էկումենիկ» կոչումը։ Հակառակ այն ողբերգական դեպքերին, որոնք նրան երկար ժամանակ դատապարտեցին մեկուսացման, հայ ժողովուրդն իմացավ, գուցե այլուր տարբեր չափով ու բնույթով, բացառիկ ընկալունակությամբ ընդունել տարբեր ժողովուրդների հոգևոր ու մշակութային նպաստը։ Այսպես Կապադովկիայի և ավելի ուշ Բյուզանդիայի ավանդությունները և ասորական ազդեցությունները, բացարձակապես յուրահատուկ եղանակով, ընդունվեցին ու մշակվեցին մի համաձուլվածքի մեջ և դրոշմվեցին հայկականության հատուկ հանճարով։ Այստեղ դարձյալ հիշելի է Սուրբ Թարգմանիչների գործը, ովքեր ցանկացան իրենց ազգակիցներին ծանոթացնել ուրիշ ավանդությունների գանձերին և դրանք թարգմանեցին հայերենի՝ հնարամիտ ճարտարությամբ ու ջանադրությամբ։ Եթե Ձեր ժողովրդի մշակույթի վրա այս բոլոր նպաստների արդյունքում տեսանելի է ամբողջապես հայկական մի արձագանք, սա ինքնին ապացույց է, թե որքան խորունկ և հզոր է եղել այս բոլորը յուրացնելու և ներդաշնակելու կարողությունը՝ առանց նախանձի և ինքնամփոփումի, առանց այլամերժության ու եսապաշտության, և սրանով հանդերձ իր բնիկ անկրկնելի առանձնահատկություններից ոչինչ չկորցնելով։*

*Եվ այստեղ՝ Հռոմում, ուր հանգչում են գլխավոր Առաքյալների աճյունները, չի կարելի մոռացության մատնել այն բեղուն շփումը, որ հայերին միացրեց լատինների քաղաքակրթությանն ու մշակույթին, հատկապես Հայկական Կիլիկիայի արդյունաշատ ու դրամատիկ շրջանում, երբ այս ավանդությունների մշակութային փոխազդեցությունը մասնավորապես արգասաբեր եղավ և հետքեր թողեց հայ ժառանգության վրա՝ նույն պտղաբերումով, ինչպես որ նախապես եղել էր այլ ավանդու-*

թյունների պարագայում։ Եվ եթե այս գործընթացի մեջ տեղ գտան անհասկացողություններ ու անպատեհություններ, դժվարություններ, որոնցից խուսափելու դեպքում թերևս ավելի մեծ արդյունքներ ստացվեին, այնուամենայնիվ այդ մարդկանց և այդ իրադարձությունների և մանավանդ այդ մշակույթների ներդրումն օգնեց քրիստոնեական պատմությունն առավել հարստացնելուն։

Նմանապես մենք ուզում ենք հարգանք ընծայել սույն մշակութային և «էկումենիկ» ընկալունակության կոչմանը այս հեղինակավոր հարկի տակ, ուր քրիստոնեական ավանդությունների ուսումնասիրությունն ինքնին միանում է ամենօրյա լուռ, բայց խոր շփմանը զանազան Եկեղեցիների ու քրիստոնեական փորձառությունների պատկանող դասախոսների և ուսանողների միջև։ Մաղթում եմ, որ հենց այս հիմնարկը, ուր ուսանել են և շարունակում են ուսանել Հայ Առաքելական Եկեղեցու բազմաթիվ նշանավոր եկեղեցականներ, կարողանա պտղաբեր փոխադարձ հարաբերություններ հաստատել Ձերդ Սրբության գլխավորած Եկեղեցու ակադեմիական հաստատությունների հետ, որպեսզի այս աքանչելի ավանդությունը կենդանի մնա։

Հուսկ, Ձերդ Սրբություն, կփափագեի արտահայտել գոհունակության այն վերջին շարժառիթը, որ վերաբերում է ինքնին Ձերդ Սրբության ներկայությանը մեր մեջ։ Լիբանանում մեր ունեցած հանդիպումից ի վեր ինձ հմայել է այն եղբայրական վերաբերմունքը, որով Դուք ինձ ընդունեցիք։ Այժմ, երբ Հայ Առաքելական Եկեղեցու գերագույն պատասխանատվությունն եք ստանձնել, ամեն օր ինձ են հասնում այն սպասումների ձայները, որ հայ ժողովրդի զավակների և նաև այդ ժողովրդին հարգող ու սիրող ամեն մեկի կողմից կենտրոնանում են Ձեր և Ձեր առաքելության վրա՝ ոչ միայն Ձեր ժողովրդի, այլև ողջ քրիստոնյա աշխարհի ճակատագրի համար մասնավորապես նրբին ու նախախնամական այս ժամանակաշրջանում։

Նոր ու աննախընթաց մարտահրավերներ են ուղղվում մեր Եկեղեցիներին. պահանջվում են խիզախ քայլեր՝ մղված լոկ կենդանի Աստծո հանդեպ այն վստահությունից, որ չի կարող մեզ հուսախաբել։ Արևելքի և Արևմուտքի ավանդությունների ծանոթությունը, որին տիրապետում է Ձերդ Սրբությունը, ստեղծում է մի բնական կամուրջ և մի նոր հնարավորություն՝ հեռատեսության և սրտաբացության Ձեր անձնական ձիրքերից այն կողմ։ Անցյալի առավել փառապանծ էջերը, որ ցույց են տալիս մեր ժողովուրդների միջև եղած սերն ու հարգանքը, թող ոգեշնչողը լինեն նորագյուտ և ոչ նվազ վեհանձն ձեռնարկների։

Մենք բոլորս սպասում ենք, որ Ձերդ Սրբությանը վստահված բարձր պատասխանատվությունը կկարողանա լինել մի նոր գարնան սկիզբ, որը կլինի ոչ միայն հայ ժողովրդի, այլև բոլոր քրիստոնյա ժողովուրդների և ողջ մարդկության համար։ Հավատքի քաջությունը թող Ձերդ Սրբությանը ներշնչի հավատարմության ուժ և գալիքի սուրբ խիզախություն։ Հաճախ ժամանակների անկայունությունները գգալու ընդունակ եկեղեցականների շնորհը անկանխատեսելի հնարավորություններ է տվել պատմությանը։

*Գրիգոր Լուսավորչի հավատքը, Թարգմանիչների իմաստությունը, վանականների հանճարի հոգևոր թռիչքները և նահատակների արիությունը թող Ձեզ առաջնորդ ու խրախույս լինեն այս ճանապարհին։ Մենք Ձեզ համար լինելու ենք բարեկամներ ու եղբայրներ այստեղ՝ Հռոմում, ուր Ձեզ առաջնորդեցին եղբայրության սուրբ քայլերը»։*

*Անգլերենով արտասանած իր խոսքով Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառը նախ մանրակրկիտ ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցին, տվեց նրա պատմական գնահատականը, արժևորեց Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև կարևորեց 1700-ամյա ուղի անցած Հայոց Եկեղեցու կյանքի վերջին շրջանը, մատնանշեց մեր Եկեղեցու կարևոր ներդրումը էկումենիկ շարժման մեջ: Այնուհետև Նորին Սրբությունն ավելացրեց, որ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունը պետք է նկատել ոչ միայն համահայկական, այլև համաքրիստոնեական:*

*Ստորև ներկայացնում ենք Վեհափառի խոսքի անգլերեն բնագիրը, որտեղ տրված են քրիստոնեության հայկական ավանդությանը և վկայությանը բնորոշ գլխավոր հատկանիշները.*

## TRADITION: LIVING AND LIFE-GIVING

This is a moment in my life that will remain in me and with me as long as I live; an event which will never be erased from the screen of my mind and memory. I had been several times in the precincts of this institution of high learning, scholarly research and Christian fellowship, the Oriental Pontifical Institute. Many years ago, I used to sit at one of the desks overloaded with books, being surrounded by brothers in Christian faith and friends and associates in scientific work in search of historical and theological truth. But it never occurred to me to think that one day I would be here in the capacity of the first servant of our Armenian Apostolic Orthodox Church, as the Catholicos of All Armenians and to be honoured by the Principal and scholars with this whole day of common study of the traditions of my own Armenian Church. This is the first time in my almost 45 years of Christian ministry that I am given such a tribute that goes not to my humble person but to the Church that I am born in and have tried to serve as faithfully and fruitfully as humanly possible.

I wholeheartedly thank the Principal, the Rev. Robert Taft who has initiated and organized this public function of scholarly nature and value and also all my brethren and sisters who have participated with so highly valuable contributions to the study of Armenian Church's traditions in theological, literary, and liturgical spheres of scientific research.

I can not offer any contribution of specific nature to the scholarly content of this symposium. Let me try to offer only a few thoughts that have taken shape in my mind and heart as I have lived and in the very heart of that have reflected



ՊԱՊԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ ԵԼՈՒՅԹ Է ՈՒՆԵՆՈՒՄ
ԴՈԿՏՈՐ ՀԱՅՐ ՌՈԲԵՐՏ ԹԱՖԹԸ



ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

upon its significance for the Armenian people and for the Christian world at large. I hope that by sharing them I may have a certain degree of right to deserve this tribute that you are honouring me with, and so graciously and generously:

## I

## ARMENIAN CHRISTIAN TRADITION IN RETROSPECT

1. The Armenian Christian tradition as expressed through centuries of unbroken continuity is not *a tradition of isolation,* grown by itself and confined to the boundaries of its own national existence. It has emerged and developed *in association and inter-relationship with* and under the influences of other Christian traditions, such as the Syriac, Greek, Georgian, Latin traditions, to mention the most important ones. Armenia was — and is — not an island. Located in such a geographical, geo-political and socio-economic area and environment as are the eastern regions of Asia Minor and the whole of Caucasus, communion and communication with other Christian traditions historically were unavoidable. It is true that geo-politically Armenia was situated on the fringes of what the Graeco-Roman world knew under the word *Oikumene.* Being geographically on the fringes, however, did not mean, historically speaking, to be marginal. Armenia from the very beginning of Christian era was part and parcel of the missionary, spiritual, theological, liturgical and cultural life and heritage of the early and Medieval *oikumene*. It is true that it was not situated within the Mediterranean basin area but culturally it fell within the orbit of that *oikumene* even before the Christian era, and most distinctly in the time of Tigranes the Great (1st century B.C.). Indeed, it had become as so many historians have put it, a cross-road within that *oikumene,* in the larger sense of the word, particularly on its easternmost borders with Persia, from Parthian to Sassanid times. Sirarpie Der Nersessian has rightly depicted this feature by entitling one of her articles with the words: *"Armenia: Between East and West"*. For Armenian history to draw a sharp line of distinction between East and West means not to recognize the true historical image of Armenia.

The very origin of Christian history of Armenia is impregnated by this relationship as a conditioning factor in the very process of shaping of Armenian Christian history. Jerusalem, Antioch, Nisibis, Melitene, Caeserea in Cappadocia, Alexandria, Byzantium were mixed in an inextricable way and in a decisive manner and with determining scope of influence in the very core of the formation of the Armenian Christian tradition from its initial phase of evangelization to the normative constitution of the liturgical, theological, hierarchical, canonical, monastic, literary and cultural aspects.

As I have said it elsewhere I think I am justified in repeating it here, in this purview, that our richest centuries of Christian life and creative culture have been the centuries where the ecumenical dimension of our Church life has been the most dominant factor. Thus, we have called the 5th century the *"Golden Age"* of

our history. Politically speaking, it has been one of the weakest periods of our history, a time when the country was already divided into two parts, under the sovereignty of Mazdean Persia and the Christian empire of Byzantium, a time when we had lost the kingdom of the Arsacids and were largely subjugated to Persia and partly to the Byzantine empire. The age was *Golden* because of *the cultural achievements* which had such a tremendous impact on the whole course of Armenian history. It was a time when the Syriac and Greek cultural influences through the large-scale movement of translations, which began with the Holy Scriptures, and covered the spiritual and intellectual heritage of the Church Fathers and liturgical, geographic, historical and philosophical literary heritage of the early Christian centuries, greatly enhanced the cultural life of Armenia and gave impetus to the rise of the Armenian original literature.

Again we call *"Silver Age"* the 12th and 13th centuries when, in Cilician times, our Church and culture were once more re-opened to the cultural heritage of the Greek and Latin cultures.

In this brief survey I cannot elaborate and extend my observations on other aspects and times of such *ecumenical openness*. But my own reading of Armenian Church tradition has convinced me of the fact that the tradition of our Church was formed and sustained not in isolation, but in ecumenical communication. That is why the Armenian Church tradition constitutes an integral and unseparable part of Eastern Christian tradition as a whole being in close touch with the Western Christian culture particularly in Medieval times. That is also the reason why I consider the 1700th anniversary of the official acceptance of Christianity to be so to speak, not an "Armenian affair" but a "pan-Christian affair" worth of recognition and celebration on a world-wide level.

2. I think that this ecumenical nature and dimension of the Armenian Christian tradition proved to be not a contradiction with its *national character*.

History tells us eloquently that the Armenian Church's creative tradition was one of the strongest factors in the shaping of Armenian *national identity*. The circumstances of the historical life of the Armenian people developed in such a way that the Christian faith became for the entire nation that spiritual and cultural force that shaped the distinct character of the people as a nation. It is a well known historical fact that beginning from the first step of the official acceptance of Christianity as the religion of the nation, the Armenian Christian witness was carried on along the lines of *struggle, resistance, endurance* and *creative survival*. The fourth century was the time of struggle against the persistent pre-Christian pagan tradition that tried to reconquer its lost place mostly under the influence of Mazdean Persia and its allies within the feudal ranks of the Armenian nobillty and the rural societies.

The creation of the Armenian alphabet in the beginning of the 5th century and the translation of the Holy Scripture and the Patristic literary works laid the foundations of the original Armenian literature and consolidated the Armenian identity, that is to say, the self consciousness of an independent people with its own sense of dignity. The Armenian Christian culture penetrated the whole texture of

the national life, from the social habits of the people and the family life to the higher levels of cultural life including literature, architecture, music and other arts and patterns of social and political life.

I believe that as Yeghishe, the 5th century writer puts it so expressively, figuratively and eloquently, Christian faith became like *"the colour of the skin"*[1]. The battle of Avarayr, that was fought for the defense of the Christian faith and of a christianized nation and country, consolidated that association between Church, as the embodiment of the Christian faith, and Nation, as having found in that faith its own identity and human value of life.

The struggle continued on in the subsequent centuries. From the fifth century on it first became a resistance to attempts undertaken by the Byzantine empire to impose upon the Armenians the acceptance of the Council of Chalcedon. The resistance by the Armenians, besides being motivated by theological reasons, was mixed with the concern for the preservation of national identity as the endeavours by the Byzantine empire had also political reasons by being motivated by imperialistic, expansionist intentions aimed at the extension of Byzantine hegemony and gradual assimilation of other non Greek speaking minor peoples and communities.

Fundamentally the same struggle and resistance trend proved to be the case in the later relationship with the Roman Latin Church after the times of the waves of the Crusaders.

I do not need to comment on this aspect as it is so well known. What I would like to emphasize is that in all these trends the national character of the Church, generally speaking, did not cut off the Armenian Christian tradition from the ecumenical dimension, that is to say, from the communication and relationship with the other Christian traditions with a spirit of openness and with a commitment to partnership, fellowship and collaboration. It is my strong feeling of my reading of Church history, of my own Church and of that of other Churches, that the Armenian Christian tradition has been one of the Oriental Christian Churches' historical experiences that has been the most open to other churches' traditions. One of the reasons may have been the background of the Indo-European nature of Armenian ethnic entity and culture.

3. Related to this feature of the role of the Armenian Church in the development of national identity is the character of what I would call *tenacity* that the Armenian Christian tradition displays so distinctly. The Christian faith, it seems to me, has played a very determining role in the preservation and unbroken continuity of the Christian witness in Armenia in the face of so many and so perilous threats by non-Christian forces, invasions and persecutions. From the times of the Arab Muslim conquest of Armenia to the times of the Seljukid, Tatar, Mameluk

---

[1] In fact it was St. Vardan who on the eve of the battle of Avarayr, addressing his army in a powerful exhortative speach, said: "He (Yazkert, the enemy) who supposed that we have put on Christianity like a garment now (realizes) that it is like the colour of our skin that he cannot change".

and Turkish Ottoman dominations, Armenia passed through innumerable moments of *Gethsemane* and *Golgotha* experiences of temptation, trial and tribulation. And yet it did not succumb. The last and most deadly episode of such times of crucifixion was the genocide perpetrated against the Armenian people during the first World War.

The *Cross* for Armenians acquired the *existential sense of crucifixion*. In the Western Christian tradition there is much speculation, theological discussion, speculative analysis of *the idea* of the Cross and its significance in understanding the salvation work of Jesus Christ. For Armenian and other Middle Eastern, and Caucasian Christian people the Cross was lived as part of their daily life. Archdale king makes a remark of great significance when he says that "Armenian historiography is synonymous to martyrology".

I am reminded also by the what St. Paul says about suffering which has been like a second name to Armenian life story. Writing to the Romans he says: "We rejoice in our sufferings, knowing that suffering produces endurance, and endurance produces character, and character produces hope, and hope does not disappoint us" (**Rom. 5:3-4**).

Obviously, the Cross finds its ultimate meaning in the Resurrection of Christ. And that is what captured the hearts and minds of the Armenian and other peoples who had the suffering as a kind of permanent and sometimes dominant line of their both personal and communal life. Is it not that a major reason why Easter has been a much more influential feast in Eastern Christendom than in the Western Christian world where the Christmas, the feast of the Incarnation has become so popular. The faith in the imunortality constituted a major force in the religious faith and practice of the Eastern Christian peoples in general and in the Armenian witness in particular.

There is one striking testimony to this effect in Yeghishe's book, the "History of Vardan and the Armenian War". When he speaks about how Yazkert the King of Kings of Persia became extremely anti-Christian and how, upon the instigation of the Magi, the religious leaders of the Mazdean religion, he ordered the intensification of the persecution of the Christians, he says:

"He grew furious at the name of Christ, when he heard that he had been tortured and crucified, had died and been buried.

As in this fashion he madly raved from day to day in the same designs, one of the youngest of the Armenian princes debated with him and said:

—"Valiant king, whence did you learn to speak such things about the Lord?"

The king answered:

—"They have read your erring Scriptures before me".

Then the young man replied, saying:

—"Why, O king, did you have them read only to that place? But have the reading prolonged and you will hear of his resurrection, his appearance to many, his ascension to heaven, his sitting at the right hand of the Father, the promise of his Second Coming when he will effect the miraculous resurrection of all, and the summary compensation of his just judgment".

When the king heard this he was deeply smitten, but outwardly he laughed and said:

—"All that is fraud."

The soldier of Christ replied and said:

—"If his bodily sufferings are credible to you, even more credible to you should he his awesome Second Coming."

When the king heard this he blazed up like the fire of the furnace in Babylon, until his own people around him were consumed like the Chaldaeans.

Then he poured out all the fury of his ire on that blessed man, whose name was Garegin. Bound hand and foot he was given over to torture for two years, and deprived of his princely rank, he received sentence of death."

Armenian Christian tradition for me provides and existential illustration of the victory of faith and life over despair and death.

II

## ARMENIAN CHRISTIAN TRADITION IN PROSPECT

These few observations surely are inadequate to make a full assessment of the ethos and the general character of Armenian Christian tradition. They are only a few hints which can lead many of us to pursue and complete this task which I consider to be of paramount importance for our self-understanding of our historical image and the present-day predicament.

The Armenian Christian tradition although rich in history but is not reduced to history. You cannot study it only in historical archives and museum walls and shelves or in ruined remnants of cultural monuments or in the pale pages of ancient manuscripts. It is a living, on-going tradition that today inspires and nurtures about 8 million Armenian Christians who live in their own motherland of Armenia, only one part of historical Armenia, and in the widespread world diaspora.

Today the Church in Armenia faces a new challenge of tremendously decisive and crucial significance. Towards the end of this 20th century Armenia has reached its "finest hour" by having recovered its freedom and independence that were lost for so many centuries. We have just come out of a kind of 70 years of captivity under the Soviet oppressive and aggressively atheistic rule. No one can visualize and weigh fully the damage that has been inflicted upon the Christian Churches under the Soviet rule unless one lives there with some length of time and personally witnesses to the consequences of a well devised policy aimed at the eradication of the Christian faith from the country and the elimination of the Christian prints, habits, customs, observances, from the public life of the people.

It is true that stones and parchments never ceased to speak of the Christian tradition in Armenia. That "language", however, was mostly related to historical memory. But Christian faith and tradition are not associated or identified with the

past heritage of the nation's culture. It is true that they had lost their impact on the ordinary public life of the people in Armenia for the seven decades of Soviet régime. But their silent witness was there, deeply immersed and tacitly eloquent in the hearts and minds of the people.

Today a new era has dawned upon Armenia. Its Christian image is re-surfacing and being given a new opportunity of rediscovering its historic authenticity in the context of a living and life giving witness. The Church today is called to a new responsibility of bringing back to life what was tried to be enshrined in and as "historical monuments" of a past heritage.

The reader of Armenian Christian history is surely cognizant of the fact that that history displays a scene and a process of such cultural upheavals in which light and darkness have interchanged their places and roles on the road of their historical journey. There have been times of great achievements and times of stagnation and decadence. When one reads Arakel Davrijetsi's description of the 16th and early 17th century conditions of Etchmiadzin, one is struck by the image of desolation. The books were abandoned and thrown in corners like "pieces of wood" ("կոճեղս փայտից") covered by dust. Yet in the same description the author speaks of the reformatory work of people like Movses Datevatsi and other figures of the renaissance of the monastic life and culture.

*Renewal, constant* renewal, has been a driving force and a permanent feature in the long historical experience of the Armenian Christian tradition. Today that *is* the word that I would like to see turning into a kind of motto, an absolute imperative, a well devised policy that is called to motivate and guide our task as a Church in our renewed country. The Church needs new servants with a new sense of apostolate in pastoral, spiritual, social and cultural spheres of life and action. The Christian edification of the people should become such an intense course of activity by which the rich heritage of the past may turn into an incentive for revitalizing the Armenian Christian tradition. Today is not a time of remembrance of the past; it is a time of re-christianizing the present and building a more solid future. During my pastoral visits to the different parts of Armenia, from East to West and from North to South, when I see all the architectural glories of the past, most of them now in damaged, ruined and abandoned conditions, my heart bleeds and my eyes get wet. The books, the beautifully illustrated and scholarly substantiated volumes published in Armenia and in so many other countries cannot comfort me with a sense of spiritual satisfaction or national pride. I can hear deep in my heart the voice of the damaged stones and the fallen domes crying for our human touch and care, for renovation and restoration, rebuilding and re-enlivening of their values.

When I see our liturgical tradition so often emptied of its life and reduced to sheer texts, the scholarly studies of their literary richness cannot give full satisfaction to my concern and desire of seeing it re-acquiring its living and life-giving force within the life of the people for whom it was destined.

What I am trying to say can be summed up in one brief statement: Armenian

Christian tradition has to come back to life if we want our country to be faithful to its past, to assure its continuity as a Christian nation and to buttress the new Republic with sound and solid moral principles of human life.

And if the Church today fails in this tremendously important task, it is my fear that our people in Armenia may become a victim of an extreme secularistic culture that is now invading it, as other countries that emerged from the former Soviet Union. The temptation, the threat is there. I see it every day. The avalanche of influence of certain superficial aspects of what is called *'Western culture'* in the ordinary understanding of the people, particularly of the young generation, and presenting itself under the word of *modernism*, is, indeed, threatening the whole concept of human life as moulded by the Christian faith all along the past centuries. The technologically dominated world in which we live, the mass media communication systems so often above our control, the new culture of consumerism are making havoc.

We need to act and not wait for *reacting*. The task before us is an urgent one. And I see that we as Armenian Church and State, with the present-day politico-socio-economic conditions of the country, cannot fulfill this immense and urgent task alone. Surely, we will do our utmost. But we need the solidarity and the support of our Armenian and non-Armenian brethren, sisters and friends from the outside world.

You all are aware that the Armenian Church and State are now engaged in the process of celebration of the 1700th anniversary of the proclamation of Christianity as the religion of the nation. Marking the 17th centenary cannot be a celebration in the fullest and truest sense of the word if it is not turned into a movement of renewal. I do not think that the celebration will be genuine only by rendering homage of the past, with a sense of self-glorification; it will be genuine when it is converted into a movement of self-conscientization, a kind of rediscovery of our true image as a Christian nation with the Armenian Christian tradition becoming a living and life-giving force in our new Armenia.

Today the most salient trend in Christendom is the ecumenical movement. Ecumenism for me is not what happens between the Heads of Churches or their assistants and representatives, but what happens in the life of the Churches, the laos, the people of God both internally and inter-relatedly. True ecumenism leads to our renewal in Christ and in His Church, in the spirit of unity and through common service to humankind. That is why I look forward to your work to seeing it become a source of stimulation and motivation for the present and the future. You are *students* of history. I see in you *teachers* for the present and coming generations. Let us make every effort to see that this Armenian Christian tradition be understood not only as one lived in the past, but as one living and life-giving today and for always.

It is in this spirit and with this hope and expectation that I extend to you all my deepest thanks and highest appreciation.

*Հանդիսության ավարտին Գարեգին Ա Վեհափառին շնորհվեց Արևելյան ինստիտուտի պատվո պրոֆեսորի վկայական, փոխանակվեցին հուշանվերներ, ապա տրվեց պաշտոնական ընթրիք:*



Գարեգին Ա Վեհափառին Պապական Արևելյան ինստիտուտի պատվո պրոֆեսորի վկայականի շնորհման պահին

***ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ ԿԱԹՈՂԻԿԵ ՎԱՐԺԱՐԱՆ***

*Ընթրիքից անմիջապես հետո, ժամը 21-ին, Ամենայն Հայոց Հայրապետն այցելեց Ինստիտուտի հարևանությամբ գտնվող Ռուս Կաթողիկե Վարժարան՝ «Ռուսիկում»:*

*Ռուս Կաթողիկե Վարժարանը հիմնվել է 1927 թվականին՝ ռուս տարագիրների մեջ քարոզչական աշխատանք տանելու մտադրությամբ: Այսօր, սակայն, այն դարձել է հյուրընկալության վայր բազմաթիվ ուղղափառ ուսանողների համար, ովքեր ուսանում են Հռոմում: Այստեղ են բնակվում նաև Հայ Առաքելական Եկեղեցուց Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանն ու Միքայել սրկ. Ֆինդիկյանը: Սա էր պատճառը, որ թեև ծրագրով այս այցելությունը նախատեսված չէր, սակայն Վեհափառը սիրով ընդառաջեց վարժարանի տեսուչի և հայ ուսանողների փափագին՝ իր բարձր ներկայությամբ պատվելով այդ վարժարանի սաներին ու հյուրերին:*

*Նախ և առաջ ռուսերեն հոգևոր երգերի ուղեկցությամբ Վեհափառն առաջնորդվեց վարժարանի Ս. Անտոն եկեղեցի, ուր*



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՊԱԿԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ՝
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԻՍՈՒՍՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՀԱՅՐ ՔՈԼՎԵՆԲԱԽԻ



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼԱՆՋԱԽԱՉ Է ՆՎԻՐՈՒՄ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍՍԻԴԻԻՆ

աղոթքից ու երկրպագությունից հետո հաղթականորեն հնչեց նաև «Էջմիածինն ի Հօրէ» շարականը:

Ապա Վեհափառն իր շքախմբի անդամների հետ ուղղվեց դեպի վարժարանի մեծ սրահ, ուր դասախոսական կազմի և ուսանողության անունից ողջույնի և բարիգալստյան խոսք ասաց տեսուչ Հայր Ռիչարդ Չեմուսը, որից հետո ուսանողությանն իր հայրական հորդորները հղեց Նորին Սրբությունը: Այցելությունն ավարտվեց աջահամբույրով:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Այցելության չորրորդ օրը, դեկտեմբերի 13-ի առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետն իր շքախմբով այցելեց Հռոմի Քրիստոնեական Միության Քահանայապետական խորհրդի գրասենյակ, ուր նրան ընդունեց խորհրդի նախագահ կարդինալ Կասսիդին:

Նորին Սրբությունը ծանոթացավ գրասենյակի աշխատակազմին, ապա ներկայացրեց իր շքախմբի անդամներին: Երկուստեք փոխանակած ողջույնի խոսքերից հետո Գարեգին Ա Վեհափառը կարևորեց գրասենյակի կատարած մեծ աշխատանքը: Վեհափառ Հայրապետը իր հուզիչ խոսքում շեշտեց հատկապես այն հանգամանքը, որ այս վայրը Հռոմում, Վատիկանի Բ ժողովի հաջորդական երեք նստաշրջանների ընթացքում, իր համար եղել է երկրորդ տուն, որտեղ դիտորդները հյուրընկալվում էին ջերմ սիրով և խոսում իրենց հուզող հարցերի մասին՝ միշտ գտնելով բարյացակամ ոգի: Փոխանակվեցին նաև հուշանվերներ:

### ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 13-ի ուրբաթ օրը երկու Եկեղեցիների պատմության մեջ կարձանագրվի որպես քրիստոնեական սիրո և համագործակցության օր:

Այդ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով ժամանեց Պապական պալատ: Պատվո պահակայորի ուղեկցությամբ Հայոց Եկեղեցու պատվիրակությունը, ազգայինների հետ համատեղ, հանդիսավորապես անցնելով սյունազարդ դահլիճներով, Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Սրբազան Պապի պաշտոնական ընդունարան:

Փոխադարձ ողջագուրումից հետո, երկու քահանայապետերը մոտ մեկ ժամ տևողությամբ առանձնազրույց ունեցան Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների ապագա փոխհարաբերությունների շուրջ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

*Առանձնազրույցից հետո բոլորը հրավիրվեցին Պապի առանձնական գրադարան, ուր հանդիսավորապես իրենց պաշտոնական ուղերձներն ընթերցեցին երկու Եկեղեցիների պետերը: Նախ ֆրանսերենով իր ուղերձը հղեց Սրբազան Պապը.*

*«Մեծարգյալ և սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.*

«Ուր երկու կամ երեք հոգի հավաքվեն իմ անունով, ես այնտեղ եմ, նրանց մեջ» *(ՄԱՏԹ. ԺԸ 20): Խորապես հավատում ենք, որ Ինքը՝ Քրիստոս, ներկա է մեր մեջ և Քրիստոսի անունով է, որ մենք ընդունում ենք Ձեզ և Ձեզ ընկերակցող բարձրաստիճան անձանց: Այս նոր հանդիպումը մեզ համար մեծ ցնծության, գնահատանքի և վստահության առիթ է: Նախ և առաջ մենք փառք ենք տալիս Լուսո Հորը (Հովհ. Ա 17), որ մեզ հաղորդության կոչեց Իր Որդու միջոցով. ամեն մի կատարյալ պարգև Իրենից է գալիս: Բոլորդ էլ բարի եք եկել այս տունը և մեր Եկեղեցին, քանզի մեզ համար սիրեցյալ եղբայրներ եք: Վստահ եղեք, որ Ձեր այցելությունը իսկապես մի օրհնություն է Պետրոս առաքյալի հաջորդի, Հռոմի Եկեղեցու և համայն Կաթոլիկ Եկեղեցու համար:*

*Տիրոջ ներկայությունը իր իրական առատությունն ու իմաստն է հաղորդում մեր հանդիպմանը: Խոր հաղորդությունը, որ մենք զգում ենք այս պահին, իր ակունքն է գտնում մեր հասարակաց հավատքի և մեկ Տիրոջ մեջ՝ մի հավատք, որ կնքված է մկրտության շնորհով:*

*Առաքելական հաջորդականության շնորհն է, որ մեզ թույլ է տալիս փոխադարձաբար ճանաչել քահանայական պաշտոնի և եպիսկոպոսության վավերականությունը: Մեր Եկեղեցիները կատարում են նույն խորհուրդները, մասնավորապես մկրտությունը և Սուրբ Հաղորդությունը: Հետևաբար մենք կարող ենք միասին փառավորել Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, ինչպես նաև լինել Աստծո սիրո ծրագրի նշանն ու խորհուրդը, որ կամենում է իր բոլոր ցրված զավակներին համախմբել միության մեջ (ՀՈՎՀ. ԺԱ 52): Մեր Եկեղեցիները նույն առաքելության մեջ են ընդգրկված մերօրյա աշխարհում: Արդ, մենք փափագում ենք միասին կատարել այս առաքելությունը՝ յուրաքանչյուրն իր մասնահատուկ պարտավորություններով, հաստ այն հատվածի հոգատարությունից մղված, որ Քրիստոս հանձնել է Իր հովիվներին, և նաև այն գիտակցությամբ, որ մեկս մյուսի կարիքն ունենք: Եղբայրական այս փոխադարձ ոգով է, որ Հայ Կաթողիկե Եկեղեցին, որ Ձեր Եկեղեցու հետ նույն հոգևոր արմատներն ու մշակույթն ունի, իր տեղն է գրավում այս առաքելության մեջ և նպաստում է մեզ առավել ևս միացնելուն:*

*Հայ Առաքելական Եկեղեցին ունի ավանդությունների անհամեմատելի մի հարստություն, որոնք հասնում են մինչև մեր հավատքի ակունքները: Հայ ազգը առաջիններից էր, որ ընդունեց Բարի Ավետիսը՝ տալով Նրան առանձնահատուկ կերպարանք՝ համաձայն իր ինքնությանը, լեզվին ու պատմությանը: Այսպիսով այն դարձավ կենդանի քրիստոնյա համայնք՝ ճշմարտապես արմատանալով տեղական մարդկային իրականության մեջ, մասնակիցը լինելով ողջ ժողովրդի ուրախություններին ու տառապանքներին: Մնալով հարափոփոխ մի աշխարհամասում, շփվելով զանազան մշակույթների ու կրոնների և տարբեր քաղաքական ուժերի հետ՝ Հայ Եկեղեցին հալածանքներ ճանաչեց: Նա կնքեց Քրիստոսի հանդեպ իր*

*անխախտ հավատարմությունը իր անթիվ նահատակների արյամբ՝ իր ողջ պատմության ընթացքում: Եկեղեցին չմոռացավ այս եզակի փորձառությունը, ինչն արմատապես պատշաճեցնում է աշակերտին իր Վարդապետին, և ողջ աշխարհում սփռեց փրկության Ավետիսը, որ ձրիաբար ստացավ Քրիստոսի խաչով: Այո, նահատակների արյունը քրիստոնյաների սերմն է: Այսօր էլ Եկեղեցին կա և մնում է նահատակների Եկեղեցի. բոլոր մայրցամաքներում նա շատ թանկ գին է վճարում: Սակայն հավատքով և հույսով մենք ընդունում ենք, որ ի Քրիստոս նվիրված վկայությունն ամրացնում և սրբագործում է Աստծո Եկեղեցին:*

*Հայ Եկեղեցին այսօր մի նոր ու հսկայածավալ պարտավորության առջև է գտնվում: Բացարձակապես հարգելով Նրա առանձնահատուկ ինքնությունն ու մասնավոր կենսաձևը, Կաթոլիկ Եկեղեցին ցանկանում է նեցուկ լինել և օգնել Նրան՝ ներկա ժամանակների մարտահրավերներին դիմագրավելու գործում: Տակավին վերջերս, 1988 թվականին Հայաստանը պատուհասած ահավոր երկրաշարժի ողբերգությունից հետո, մենք առիթ ունեցանք ցուցաբերելու մեր եղբայրական սերը՝ մարդկային տառապանքները գեթ փոքր ինչ չափով թեթևացնելու ներդրումով և մեր հարատև աղոթքներով ձեր ժողովրդի համար, ում վերքերը կրկին նորոգվեցին: Բազում են Ձեր երկրի քրիստոնյաների կարիքները: Մենք պետք է միասնաբար ուսումնասիրենք համագործակցության առավել արդյունավետ ուղիները Եկեղեցին վերակառուցելու և Հայաստանի ժողովրդին աջակցելու գործում, որ նա այսուհետ կարողանա իրապես արժևորել իր վերագտած ազատությունը: Նման համագործակցությունը կդառնա կոնկրետ սիրո մի արտահայտություն, որ սեր է եղբայրների հանդեպ, և որը մեծապես կխթանի երկխոսությանը՝ ընդհուպ մեր ամբողջական հաղորդությանը խանգարող խոչընդոտների հաղթահարումը:*

*Ինչպես արդեն համոզվածությամբ ասել եմ վերջին* (Ut unum sint) *կոնդակի մեջ, որը նվիրված է քրիստոնյաների միջև միության ձգտմանը, էկումենիկ շարժումը միաժամանակ «դարձի երկխոսություն» է և «շնորհների փոխանակություն»: Երկխոսությամբ մենք պետք է անդադար փորձենք քաջաբար վկայել ճշմարտությունը՝ ի ծառայություն աշխարհի Փրկչին և պատմության Տիրոջը: Համենայն դեպս, մեր սրբերն ու նահատակները մեզ հրավիրում են հավատարմության և մշտապես ավելի խոր հաղորդության՝ ի սեր Քրիստոսի մարմնի:*

*Ձերդ Սրբություն, Դուք էկումենիկ շարժման ռահվիրաներից եք: Վատիկանի Բ ժողովի երեք նստաշրջաններում Դուք Ձեր Եկեղեցու դիտորդը եղաք: Եղաք նաև Կաթոլիկ Եկեղեցու վերարժևորման ու վերանորոգման ջանքերի, ինչպես նաև հօգուտ էկումենիզմի կատարված անշրջադարձելի փոփոխության վկան, որի պտուղներից մեկը եղավ դա: Դուք նշանակալից էկումենիկ գործունեություն ծավալեցիք թե՛ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում՝ համաշխարհային մակարդակի վրա, և թե՛ Միջին Արևելքի Եկեղեցիների Խորհրդում՝ տեղական մակարդակի վրա: Մենք արդեն խոսել ենք քրիստոնեական միությանն ի սպաս մեր ընդհանուր գործունեության բնագավառների մասին Հռոմի Եկեղեցուն տված Ձեր նախորդ այցելության ժամանակ՝ 1983 թվականին, երբ դեռևս նոր էիք ստանձնել Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության գահակալի պարտականությունը:*

*Ես անձնապես հույս եմ հայտնում, որ այս համագործակցությունը*

*շարունակվելու և զարգանալու է, որպեսզի մենք կարողանանք ավելի հավատարմորեն իրականացնել մեր առաքելությունը մերօրյա աշխարհում: Այս իմաստով մենք մաղթում ենք, որ այսպիսի հանդիպումները նորոգվեն ու բազմապատկվեն, որպեսզի հետզհետե դառնան համագործակցության ու կոնկրետացման իրական հանդիպումներ. այսպես, մենք միանալու ենք ավետարանչության առաքելության մեջ, որ մեզ է սպասում երրորդ հազարամյակի շեմին:*

*Մեծարգյալ և շատ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, միասին աղոթենք Տիրոջը, որ Ձեր ուխտագնացությունը Պետրոսի և Պողոսի շիրիմներին, Պետրոսի Հաջորդի Աթոռին, կարողանա վերակենդանացնել Կաթոլիկ և Հայ Եկեղեցիների կապերը և դրանք ամրացնի այն հավատքի մեջ, որ իրենք խոստովանել են իրենց նահատակությամբ: Մենք նմանապես հուսով ենք, որ Ձեր բազմաթիվ հանդիպումները Հռոմում զանազան անձնավորությունների և հաստատությունների հետ Ձեզ առիթ տվեցին՝ բացահայտելու և քաջալերելու համագործակցության բազմաթիվ նոր նախաձեռնությունները ինչպես աստվածաբանական ու հովվական պատրաստության, այնպես էլ մեր ժամանակակիցների բարօրությանն ի խնդիր վկայության ու ընդհանուր ծառայության համար: Թող մեր հաշտությունն ու միությունը բաց անի նաև ազգերի միջև խաղաղության ու եղբայրական մերձեցման ճանապարհը մի աշխարհում, որը տակավին շատ հաճախ բնորոշվում է անարդարությամբ, աղքատների նկատմամբ արհամարհանքով, ծայրահեղ ազգայնամոլության սրտմտությամբ կամ խտրականությամբ:*

*Մեր տեսակցության վերջում, թույլ տվեք ինձ վերստին հայտնել մեր մեծ ուրախությունը Ձեզ մեր մեջ ընդունելու համար: Թող մեր հանդիպման շնորհն ու սրտալիությունը լինի* «իբրև ճրագ, որ լույս է տալիս մութ տեղում՝ մինչև ցերեկն սկսի լուսավորել, և արուսյակը ծագի ձեր սրտերում» *(Բ ՊԵՏՐՈՍ Ա 19):*

«Նրան, որ կարո՛ղ է ավելի անել, առավել առատությամբ, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք և մտածում, ըստ այն զորության, որ գործում է մեր մեջ, – Նրան փա՛ռք եկեղեցում Քրիստոս Հիսուսով, բոլոր ժամանակներում» *(Եփես. Գ 20-21) այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն»:*

*Ստորև ներկայացնում ենք Սրբազան Քահանայապետի ուղերձի ֆրանսերեն բնագիրը.*

## L'ALLOCUZIONE DEL SANTO PADRE

Questo il testo del discorso pronunciato da Giovanni Paolo II nel corso dell'incontro con Sua Santità Karekin I Sarkissian:

Vénéré et Bien-Aimé Frère dans le Christ,

1."Là où deux où trois se trouvent réunis en mon nom, je suis au milieu d'eux" /Mt, 18, 20/. Nous croyons profondément que le Christ est lui-même présent au milieu de nous et c'est au nom du Christ que nous vous accueillons, vous-même et les personnes éminentes qui vous accompagnent. Cette nouvelle rencontre est pour nous un motif de grande joie, de reconnaissance et de confiance. Nous rendons grâce avant tout au "Père des lumières" /Jc 1, 17/, qui

nous a appelés à la communion dans son Fils; c'est de Lui que vient tout don parfait. Soyez tous les bienvenus dans cette maison et dans notre Eglise, car vous êtes pour nous des frères bien-aimés. Soyez assurés que votre visite est véritablement une bénédiction pour le Successeur de Pierre, pour l'Eglise de Rome et pour toute l'Eglise catholique.

La présence du Seigneur donne à notre rencontre sa signification et sa richesse véritables. La communion profonde que nous éprouvons en ce moment trouve sa source dans notre foi commune en l'unique Seigneur, foi scellée par le don du baptême.

2. En vertu de la succession apostolique, qui nous permet de reconnaître mutuellement la validité du sacerdoce ministériel et de l'épiscopat, nos Eglises célèbrent les mêmes sacrements, en particulier le Baptême et l'Eucharistie. Elles peuvent ainsi, ensemble, glorifier Dieu, Père, Fils et Saint-Esprit, et être le signe et le sacrement du plan d'amour de Dieu qui veut rassembler dans l'unité tous ses enfants dispersés /cf. Jn 11, 52/. Nos Eglises sont par conséquent engagées dans une même mission pour le monde d'aujourd'hui. Ainsi, nous entendons accomplir ensemble cette mission, chacun selon sa charge spécifique, dans le souci de la partie du troupeau que le Christ a confiée à chacun de ses Pasteurs, sachant que nous avons vraiment besoin les uns des autres. C'est dans cet esprit de réciprocité fraternelle que l'Eglise arménienne catholique, qui a les mêmes racines spirituelles et la même culture que votre Eglise, a aussi sa place dans la mission et qu'elle contribue à nous relier encore davantage.

3. L'Eglise arménienne apostolique est porteuse d'une richesse incomparable de traditions, qui remontent aux origines de notre foi. Le peuple arménien a été parmi les premiers à accueillir la Bonne Nouvelle et à lui donner un visage particulier, accordé à son identité, à sa langue et à son histoire; il est ainsi devenu une communauté chrétienne vivante, vraiment enracinée dans la réalité humaine locale et solidaire des joies et des souffrances de tout le peuple. Demeurant dans une région tourmentée, à la jonction de différentes cultures et religions, et de différentes entités politiques, l'Eglise arménienne a connu la persécution. Elle a scellé sa fidélité inébranlable au Christ dans le sang de ses martyrs innombrables, tout au long de son histoire. L'Eglise n'oublie pas cette expérience unique, qui conforme radicalement le disciple à son Maître et qui sème dans le monde la Bonne Nouvelle du Salut, reçu gratuitement par la Croix du Sauveur. Car, le sang des martyrs est la semence des chrétiens. Aujourd'hui encore, l'Eglise demeure une Eglise de martyrs et, dans tous les continents, elle paie un lourd tribut. Mais, dans la foi et l'espérance, nous reconnaissons que le témoignage rendu au Christ affermit et purifie l'Eglise de Dieu.

4. L'Eglise arménienne se trouve aujourd'hui devant une tâche nouvelle et immense. L'Eglise catholique désire se tenir à ses côtés, pour la soutenir et l'aider à répondre aux appels du temps présent, dans le plein respect de sa vie propre et de son identité particulière.

Récemment encore, après le drame du terrible tremblement de terre qui a frappé l'Arménie en 1988, nous avons eu l'occasion de manifester notre charité

fraternelle en contribuant tant soit peu à soulager les souffrances humaines et en accompagnant de nos prières ferventes votre peuple, blessé une nouvelle fois. Les besoins des chrétiens de votre terre sont nombreux. Nous devrons étudier ensemble comment une plus étroite collaboration pourra aider à la reconstruction de l'Eglise et fournir un soutien au peuple d'Arménie, qui doit désormais apprendre à se servir dignement de sa liberté retrouvée. Une telle coopération sera un enrichissement pour tous et la charité concrète, qui est un amour pour les frères, fera croître grandement le dialogue, afin de surmonter les obstacles qui s'opposent encore à notre pleine communion.

5. Comme je l'ai dit aves insistance dans la dernière Lettre encyclique **Ut unum sint**, consacrée à la recherche de l'unité entre les chrétiens, la démarche oecuménique est à la fois un "dialogue de la conversion" /n. 35/ et un "échange de dons" /n. 28/. Par le dialogue, nous devons chercher sans cesse à rendre courageusement témoignage à la vérité, pour le service du Rédempteur du monde et du Seigneur de l'histoire. De part et d'autre, nos saints et nos martyrs nous appellent à une fidélité et à une communion toujours plus profondes, par amour pour le Corps du Christ.

6. Sainteté, vous faites partie des pionniers dans le domaine oecuménique. Vous avez été observateur de votre Eglise pendant trois sessions du deuxième Concile du Vatican et vous avez pu être témoin de l'effort de ressourcement et de renouveau de l'Eglise catholique, ainsi que de son engagement irréversible en faveur de l'oecuménisme qui en a été un des fruits. Vous avez pareillement déployé une activité oecuménique tout à fait remarquable, tant dans le cadre du Conseil oecuménique des Eglises, sur le plan mondial, que dans celui du Conseil des Eglises du Moyen-Orient, sur le plan régional. Nous avons d'ailleurs déjà pu nous entretenir de cet engagement commun au service de l'unité chrétienne, lors de votre précédente visite à l'Eglise de Rome, en 1983, quand vous veniez d'accéder à la charge de Catholicos de la Maison de Cilicie.

Personellement, j'espère que cette collaboration pourra se poursuivre et s'intensifier, afin que nous puissions accomplir plus fidèlement notre mission dans le monde d'aujourd'hui. Dans ce sens, nous souhaitons que des rencontres comme celle-ci puissent se renouveler et se multiplier, pour devenir peu à peu de véritables réunions de concertation et de travail commun; ainsi, nous serons unis dans la tâche évangélisatrice qui nous attend au seuil du troisième millénaire.

7. Vénéré et très cher frère dans le Christ, prions ensemble le Seigneur afin que votre pèlerinage aux tombeaux des Apôtres de Pierre et Paul, siège du Successeur de Pierre, puisse raviver les liens entre l'Eglise catholique et l'Eglise arménienne, en les affermissant dans la foi qu'eux-mêmes ont confessée jusque dans leur martyre. Nous espérons aussi que les nombreuses rencontres que vous avez eues à Rome avec diverses personnes et institutions vous ont permis de découvrir et d'encourager plusieurs initiatives nouvelles de collaboration dans le domaine de la formation théologique et pastorale, de même que dans le témoignage et le service communs pour le bien de nos contemporains. Que notre réconciliation et notre union ouvrent aussi la voie à la paix et à l'entente

fraternelle entre les peuples, dans un monde qui est encore trop souvent marqué, par l'injustice, le mépris des pauvres, l'exaspération d'un nationalisme exacerbé ou la discrimination!

8. Au terme de notre entretien, permettez-moi de vous dire une fois encore notre joie profonde de pouvoir vous accueillir parmi nous. Que la grâce et la cordialité de notre rencontre deviennent "comme une lampe qui brille dans un lieu obscur, jusqu'à ce que le jour commence à poindre et que l'astre du matin se lève dans vos coeurs" /2 P 1, 19/! "A Celui dont la puissance agissant en nous est capable de faire bien au-delà, infiniment au-delà de tout ce que nous pouvons demander ou concevoir, à Lui la gloire, dans l'Eglise et le Christ Jésus, pour tous les âges et tous les siècles. Amen!" /Ep 3, 20-21/.

*Ապա անգլերենով Իր պաշտոնական ճառն արտասանեց Վեհափառ Հայրապետը.*

***«Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,***

***Եղբայրական սիրո ի՜նչ մեծ ուրախություն է լցնում Իմ և Իմ պատվիրակության անդամների սրտերը, ինչպես նաև սրտերը միլիոնավոր Հայերի և՛ մայր Հայրենիք Հայաստանում, և՛ ի սփյուռս աշխարհի, երբ մենք այսօր հանդիպում ենք իրար, ողջունում ենք միասին և միասին կիսում ենք մեր մտքերը, փորձառությունները, տեսակետներն ու հայացքները կապված մեր ծառայության հետ նույն Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Իր Ավետարանին և Իր եկեղեցուն՝ հնազանդ Իր կամքին և Իր պատվիրաններին, որ վստահվել է մեզ: Օրհնյալ լինի Իր անունը:***

***Առաջին անգամն է, որ անձնական եղբայրական հանդիպման պահին Ես Ձեզ հետ կիսում եմ այս միասնականությունն ու այս հոգևոր հաղորդությունը Իմ նոր պատասխանատվության ընթացքին՝ որպես առաջին սպասավորը Իմ եկեղեցու: Տասներեք տարիներ առաջ, երբ Ես ծառայում էի Իմ Հայ Եկեղեցուն որպես Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, մենք հանդիպեցինք այստեղ՝ Վատիկանում: Սակայն առաջին անգամն է, որ որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց և Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք, Ես ողջագուրվում եմ Ձեզ հետ սիրո եւ եղբայրության նույն ոգով, որով Մեր սիրեցյալ Նախորդը՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը ողջագուրվեց Ձեր Նախորդի՝ նույնպես երջանկահիշատակ Պողոս Զ Պապի հետ քսանվեց տարիներ առաջ:***

***Ժամանակները փոխվում են, փոխվում են մարդիկ, սակայն ոգին մնում է անփոփոխ, քանզի այն գալիս է որպես արտացոլում Սուրբ, Անփոփոխ և Հավիտենական Հոգու:***

***Իմ Նախորդը Հռոմ եկավ մի երկրից և մի ժողովրդի անունից, որ վկայում էին նույն Տիրոջը, սակայն խորհրդային վարչակարգի ճնշող տիրապետության ներքո՝ ապաքրիստոնեացման և մեծ չափով նաև ապամարդկայնացման իր ողջ անհավատ մարտնչող քաղաքականությամբ:***

***Այսօր Ես գալիս եմ Արարատ լեռան նույն հավերժական հայացքի ներքո գտնվող նույն երկրից՝ Հայաստանից, նույն ժողովրդից, որը սակայն Աստծո ողորմությամբ կրկին վայելում է ազատության շունչն ու կենսաձևը որպես մի Անկախ Հանրապետություն, ուր մարդիկ իրենց հոգի ծառաներն ու տերերն են միաժամանակ՝ Աստծո լիակատար իշխանության ներքո:***

Ես գալիս եմ Ձեզ մոտ Հայ Եկեղեցու Մայր Աթոռից, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունից, Ս. Էջմիածնից, որն այժմ վայելում է ողջ ազատությունն ու հնարավորությունը առաջ տանելու իր ժողովրդի հոգևական առաջնորդության աստվածատուր առաքելությունը:

Ես Ձերդ Սրբությանը և համաշխարհային Հռոմեական Կաթոլիկ մեծ Եկեղեցուն բերում եմ քրիստոնեական վկայության 17 դարերը՝ խորհրդանշված Ս. Էջմիածնով, որը ծննդավայրն ու մկրտության ավազանն է մեր ժողովրդի՝ որպես քրիստոնյա ժողովուրդ: Եկեք միասին խոնարհաբար գոհություն և փառք վերընծայենք Ս. Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Ս. Հոգուն, վերստին պայծառակերպության այս մեծ հրաշքի համար, որ Հայաստանի պատմական հողը մեկ անգամ ևս ճաշակեց իր երկար և հաճախ դժվարին ուխտագնացության ճանապարհին՝ երկրպագելու Երրորդութենական Աստծուն և ծառայելու մարդկությանը Փոքր Ասիայի և Կովկասի այս ամենաարևելյան տարածաշրջանում:

Ես լավ գիտեմ, թե որքան մոտ և զգայուն է Ձեր սիրտը այն քրիստոնյաների աղաղակի հանդեպ, որոնք անցել են Սովետական իրավակարգի 70 տարիների արհավիրքների միջով: Թող փառավորվի Աստծո անունը, որ օգնեց մեզ՝ հայերիս, նախկին Խորհրդային Միության բոլոր մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի հետ վերագտնելու մեր ազատությունը, որն ամենից առաջ Աստծո պարգևն է և չի բռնագրավվում ոչ մի մարդկային ուժով /Բ Կորնթ. Գ 17, Գաղ. Ե 13/:

Ես գալիս եմ Ձեզ մոտ ընկերակցությամբ իմ եղբայրների ի Քրիստոս և ի ծառայություն Հայ Եկեղեցու՝ Նորին Ամենապատվություն Երուսաղեմի Պատրիարք Տ. Թորգոմ Արք. Մանուկյանի, Նորին Ամենապատվություն Կ. Պոլսո Պատրիարք Տ. Գարեգին Արք. Գազանճյանի և Հայաստանի, Արցախի և Սփյուռքի գրեթե բոլոր մայրցամաքների արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների: Նրանց ներկայությունն, անշուշտ, Ինձ համար հոգեկան զորության և անսահման ուրախության աղբյուր է:

Այսօր մեր Եկեղեցին, և՛ Մայր Հայրենիքում, և՛ աշխարհի բոլոր ծագերում, փորձաքարի առաջ է կանգնած և վերանորոգումի շրջան է ապրում: Ինչպես Ձերդ Սրբությունը լավատեղյակ է, այս Ի դարը մեր հայոց պատմության համար բացվեց մութ ամպերով՝ Կաթոլիկ Եկեղեցուն և ընդհանրապես աշխարհին հայտնի ջարդերի և ցեղասպանության պատճառով: Խարի մայրամուտին, մենք երախտագիտությամբ ծունկի ենք իջնում Աստծո առջև և գոհություն հայտնում Նրան, որ մեզ շնորհեց, նախքան դարի վերջալույսը, տեսնե՛լ մեր ժողովրդի և Եկեղեցու վերածնունդը՝ անկախության վերագտնումով մեր մայր հայրենիքում և մեր ժողովրդի վերածաղկումով և վերականգնումով ողջ Սփյուռքում:

Ճիշտ է, որ մեր երկիրը «կաթի ու մեղրի» երկիր չէ: Ջրերը դեռ կատարյալ «հանգիստ» և արոտավայրերը դեռ կատարյալ «դալար» չեն /Սաղմ. ԻԲ 2/: Մենք անցնում ենք նեղությունների ամենադժվարին շրջանների միջով: Կյանքի տնտեսական և ընկերային վիճակը, մեղմ ասած, ամենացածր մակարդակի է: 1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժի վերքերը դեռ արյունում են: Լեռնային Ղարաբաղի մեր ժողովուրդը դեռ սպասում է կատարյալ խաղաղության և ապահովության հաստատմանը: Մեր երկրին պարտադրված շրջափակումը ծանրորեն խոչընդոտում է կյանքի պայմանների բարելավմանն ուղղված մեր ջանք ու ճիգերին: Սակայն

*հույսն ու հանձնառումը, նվիրման ու վճռականության կամքը, որը մենք ժառանգել ենք մեր հայրերից, ավելի լավ ապագայի հեռանկար է խոստանում մեզ:*

*Օգտվելով այս առիթից Ես Ձերդ Սրբությանն ու ողջ Կաթոլիկ Եկեղեցուն հայտնում եմ մեր ամենաանկեղծ երախտագիտությունն ու խոր գնահատանքը այն անգնահատելի ծառայությունների համար, որ երկրաշարժի օրերից ի վեր Դուք մատուցեցիք մեր Եկեղեցուն ու ժողովրդին: Շարունակեցեք, խնդրեմ, Ձեր աղոթքները առ Աստված՝ մեր Երկնավոր Հայրը, որ զորացնի մեր երթը իր Երկնային Թագավորության ճանապարհին:*

*Ձերդ Սրբություն,*

*Երեք տասնամյակների ընթացքում, որ սահել են Ձեր և Իմ նախորդների վերջին հանդիպումից ի վեր, զգալի առաջընթաց է տեղի ունեցել Կաթոլիկ և Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցիների հարաբերությունների մեջ: Ոչ պաշտոնական և կես-պաշտոնական աստվածաբանական երկխոսությունները, որոնք մոտիկից դիտվեցին և քաջալերվեցին մեր համապատասխան եկեղեցական իշխանությունների կողմից, պարզաբանեցին բազմաթիվ հարցեր, որոնք անհամաձայնության ու բանավեճի նյութեր էին մեր Եկեղեցիների հարաբերության մեջ: Ճանապարհ է հարթված քրիստոսաբանական մարզում, այսինքն՝ Քրիստոսի անձի մասին մեր ըմբռնման մասին փոխադարձ հասկացողության վերաբերյալ: Դավանական նյութերի շուրջ կարևոր համաձայնություններից բացի, մենք շատ ավելի առողջ փորձառություն ենք ձեռք բերել մեր քրիստոնեական վկայության հովվական և ծառայողական մարզերում: Ես խորապես համոզված եմ, որ փոխադարձ սիրո և գործակցության այս աճող էկումենիկ ոգով մեր այս հանդիպումը մի անկյունաքար է դառնալու մեր հովվական խնամքին հանձնված ժողովուրդների ծառայության մեջ միասնականության և համատեղ գործակցության ոգու զարգացման համար: Էկումենիկ միասնականության այս նոր ձգտումը շարունակվելու է իբրև ընդհանուր նպատակ ունենալով մեր Եկեղեցիների զորացումը՝ նույն Տիրոջը և Իր մեկ Եկեղեցուն ծառայելու մեր ընդհանուր գործունեության մեջ: Ես ուրիշ ճանապարհ չեմ տեսնում, բացի այն ճանապարհը, որ բացված է մեզ համար մեր Տիրոջ կողմից՝ ճանապարհը Իր և Իր Եկեղեցու միության, որ այնքան պերճախոս կերպով ցույց է տրված Հովհաննու Ավետարանի /Գլուխ ԻԷ/ և անշուշտ նաև ամբողջ Ավետարանի մեջ, ներառյալ Գործք Առաքելոցն ու սուրբ առաքյալների թղթերը:*

*Մենք մոտենում ենք քրիստոնեական պատմության երկրորդ հազարամյակի վերջին: Մենք պատրաստվում ենք մտնելու երրորդ հազարամյակ: Աշխարհն այսօր դիմակայում է փոխադարձ մտահոգության այնքա՜ն բազմաթիվ և այնքա՜ն խռովիչ հարցերի: Մենք ամբողջ սրտով ողջունում ենք Ձեր լուսավոր պայքարը հոգևոր արժեքների վերարժևորման համար, մի այնպիսի աշխարհում, որն ախտահարված է կյանքի և մշակույթի ծայրահեղ ապասրբացած և աշխարհականացած փիլիսոփայությամբ: Ս. Գրքում և Եկեղեցու Ավանդության մեջ մարմնավորված կյանքի բարոյական սկզբունքները կոխկրտվում են կյանքի մի հասկացողությամբ և ընթացքով, որը բնորոշվում է արդիականություն* (modernism) *բառով և որը հղացվում է իբրև մի նոր կուռք, որը մեծապես խնկարկվում է աշխարհի շատ անկյուններում: Անշուշտ, առաջընթացը Աստծո կողմից ծրագրված բաղկացուցիչ մասն է մեր քրիստոնեական հավատքի ու կյանքի: Սակայն*

*առաջընթացն աստվածայնորեն իրական և մարդկայնորեն վավերական է, քանի դեռ այն մարմնավորում է մարդկային, հոգևոր ու բարոյական, մտավոր և մշակութային արժեքներ՝ ամեն սեռի մարդկանց իրական երջանկության ծառայության մեջ:*

*Մենք, Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցին, Կաթոլիկ Եկեղեցու, ինչպես և այլ Եկեղեցիների մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի հետ միասնաբար, մասնակցելու ենք երկրորդ հազարամյակի տոնակատարությանը: Միևնույն ժամանակ՝ 2001 թվականին մենք իր լրումին ենք հասցնելու քրիստոնեությունը որպես մեր ազգի կրոնը պաշտոնապես ընդունելու 1700-ամյա հոբելյանը: Մենք ակնկալում ենք, որ Ձեր Կաթոլիկ մեծ Եկեղեցին և բոլոր քրիստոնյա Եկեղեցիները բաժնեկից դառնան մեր Հայ Եկեղեցու պաշտոնական հաստատման այս 17-րդ դարադարձի ոգեկոչմանը: Մեր անկեղծ փափագն է, որ հայ քրիստոնեական վկայության 17 դարերը, որ հաճախ առաջ տարվեցին նահատակության գնով, ճանաչվեն և արժևորվեն իբրև մաս և բաժին այն համաքրիստոնեական ժառանգության, որով Աստված մեզ օրհնել է:*

*Այս մտածումներն իմ մտքում և այս իղձը իմ սրտում և այս ոգին իմ հոգու մեջ, մինչ անցնում ենք Հիսնակաց օրհնյալ շրջանով՝ մեր Տիրոջ մարդեղության տոնին պատրաստվելու, ես նայում եմ դեպի առաջ պայծառ ապագայի ակնկալիքով՝ մաղթելով Ձերդ Սրբությանը քաջառողջություն և հարաճուն պտղաբեր գործունեություն, որն այնքա՜ն էական և օգտակար է ողջ մարդկության համար և այնքա՜ն հաճելի մեր երկնային Հորը, Իր Միածին Որդուն և Սուրբ Հոգուն:*

*Ստորև ներկայացնում ենք Վեհափառ Հայրապետի ելույթի անգլերեն բնագիրը.*

"Your Holiness,
Beloved brother in Christ,

What a great joy of brotherly love fills my heart and the hearts of the members of my delegation as well as the hearts of the millions of Armenians of our motherland of Armenia and of the world-wide Diaspora as we meet together, we pray together and we share together our thoughts, experiences, concerns and visions related to our service to the same Lord Jesus Christ, to His Gospel and to His Church, in obedience to His will and to His commission entrusted to us. May His name be praised.

This is the first time that I share this togetherness, this spiritual communion with you in a personal brotherly encounter, in my new responsibilities as the first servant of my Church. Thirteen years ago when I was serving my Armenian Church as Catholicos of the Great House of Cilicia we met here in Vatican. But it is the first time that as Catholicos of All Armenians and Supreme Patriarch of the Armenian Church I embrace you in the same spirit of love and brotherhood that my beloved predecessor, of blessed memory, Catholicos Vazken I embraced your predecessor, again of blessed memory, Pope Paul VI twenty-six years ago. Time changes, people change, but the spirit remains unchanged because it comes as a reflection of the Spirit Holy, Unchangeable and Eternal.



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է ԻՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ



ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՊՕՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԸ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

My predecessor came to Rome from a country and a people who were witnessing to the same Lord but under the oppressive rule of the Soviet régime with all its aggressive atheistic policy of dechristianization and to a large extent also of dehumanization. Today I come to you from the same land of Armenia, the same people, under the same eternal gaze of Mount Ararat, but now once more enjoying, with the grace of God, the breath of freedom and the state of life as an Independent Republic where the people are at the same time the servants and the masters of their own land under God's all-encompassing dominion.

I come to you from the Mother See of our Armenian Church, the Catholicosate of All Armenians, Holy Etchmiadzin, which is now enjoying all the freedom and the possibilities for carrying on its Christ-given mission of pastoral leadership of our people. I bring to Your Holiness and to the great Roman Catholic Church spread all over the world the seventeen centuries of faithful Christian witness symbolized by Holy Etchmiadzin, the birthplace and the baptismal font of our Armenian nation as a Christian nation. Let us together in all humility, render thanks and glory to the Holy Trinity, the Father, the Son and the Holy spirit for this great miracle of re-transfiguration that the historic land of Armenia experienced once more in its long, and often hardest, journey of pilgrimage in worship of Triune God and in service to humankind in the easternmost region of Asia Minor and Caucasus.

I know well how close and how sensitive is your heart to the plight of the Christians who went through the tribulations of the seventy years of Soviet rule. May God's name be praised for having enabled us Armenians, together with all our Christian brethren and sisters of the former Soviet Union, to have recovered our freedom which above all is a gift of God not to be usurped by any human power (2 Cor. 3:17, Gal. 5:13).

I come to you being accompanied by my brethren in Christ and in the service of the Armenian Church, namely, their Beatitudes the Patriarch of Jerusalem Archbishop Torkom Manoukian and the Patriarch of Constantinople Archbishop Karekin Kazanjian, together with Archbishops and Bishops from Armenia, from Artsakh (Nagorno-Karabagh) and from the Diaspora, from almost all continents. Their presence with me, indeed, is a source of spiritual strength and infinite joy.

Our Church today, both in our motherland and in all the corners of the earth, is passing through a time of both test and renewal. As Your Holiness is well aware this twentieth century was opened in our Armenian history with dark clouds hovering upon us because of the massacres and the genocide well known to the Catholic Church and to the world at large. As the century draws near its end, we kneel before God in gratitude and we thank Him for having granted us that before the close of the century we could see the renaissance of our nation and the Church with the recovery of the independence in our own motherland and of the regeneration and redressment of our people in the whole of the Diaspora.

It is true that our country is not a country of "milk and honey". The waters are not yet completely "still" and the pastures are not yet fully "green" (Psalm 23:2). We are going through most difficult times of hardships. Economic and social

conditions of life are at a very low level, to say the least. The wounds of the horrible earthquake of 7th December 1988 are still bleeding. Our people of Nagorno Karabagh are still waiting for the establishment of complete peace and security. The blockade imposed upon our country is heavily weighing on our strenuous efforts for the betterment of the conditions of life. Yet, the hope and the commitment, the will of dedication and determination, as we have inherited them from our fathers, provide sustenance for our prospects for a better future.

We take this opportunity to extend to Your Holiness and to the entire Catholic Church our most sincere thanks and deepest appreciation for the invaluable service you rendered to our Church and people since the days of the earthquake. Please, continue your prayers to God our Heavenly Father to strengthen us in our march in the ways of His Kingdom.

Your Holiness,

In the course of the three decades that have elapsed since the last meeting between your and my predecessors, considerable advance has been made in the relationship between the Catholic Church and the Armenian Apostolic Orthodox Church. Theological conversations of unofficial and semi-official levels, closely followed and encouraged by our respective Church authorities, have clarified many issues which were matters of contention and dissension in the relationship of our Churches. The way is paved for mutual understanding on Christological ground, namely, in our conception of the person of Christ. Besides significant consensus on doctrinal matters, we have acquired a much healthier experience of collaboration in pastoral and diaconal dimensions of our common Christian witness. I am firmly convinced that in this growing ecumenical spirit of mutual love and cooperation, this our meeting will become a landmark for the promotion of the spirit of togetherness and common action in service to the peoples entrusted to our pastoral care. This new trend of ecumenical association will continue by having as commonly shared target the strengthening of our Churches in our common task of serving the same Lord and His One Church. I can see no other way than the one opened for us by our Lord, the way of unity in Him and in His Church, as so eloquently shown to us in St. John's Gospel (chapter 17) and indeed, in the whole Gospel including the Book of Acts and the Epistles of the Holy Apostles.

We are approaching the end of the second millennium of Christian history. We are preparing to enter the third millennium. The world today is facing so many and so disturbing problems of mutual concern. I wholeheartedly welcome your enlightened advocacy for the re- valorization of the spiritual values in a world affected by an extremely desacralized and secularized philosophy of life and culture. Moral principles of life embodied in the Holy Scriptures and in the Tradition of the Church are being trodden down in the name of such a pace of life which is depicted by the word of modernism and which is conceived as a new idol so heavily incensed in so many quarters around the world. Obviously, progress is integral part of our Christian faith and life as designed by God. But progress is

divinely genuine and humanly authentic in as much as it incorporates human values, spiritual and moral, intellectual and cultural in service to true happiness of men and women.

We, the Armenian Apostolic Orthodox Church, in association with our Christian brethren and sisters in the Catholic Church, as well as with other Christian Churches will be participating in the celebration of the second millennium. At the same time, in A.D. 2001 we will be bringing to its culmination the 1700th anniversary of the official acceptance of Christianity as the religion of our nation. We look forward to seeing your great Catholic Church and all Christian Churches share in the celebration of this 17th centenary of the official establishment of our Armenian Church. It is our sincere wish that the seventeen centuries of Armenian Christian witness, carried on so often at the cost of martyrdom, be recognized and assessed as part and parcel of the pan-Christian heritage that God has blessed us with.

With these thoughts in mind and this desire in heart and this spirit in the soul, and as we pass through the blessed season of Advent in preparation for the celebration of our Lord's incarnation, I look forward to a brighter future wishing Your Holiness a good health and ever-increasingly bountiful ministry so essential and beneficial to all humankind and so faithful to our heavenly Father, His Only begotten Son and the Holy Spirit".

### *ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ*

*Ուղերձների փոխանակությունից հետո Քրիստոնեական Միության Քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Կասսիդին ամենքի ներկայությամբ ընթերցեց այն Համատեղ Հայտարարությունը, որով արժևորվում էր վերջին շրջանի էկումենիկ շարժման կարևորությունը՝ հիմնված քրիստոնեական սիրո վրա:*

*Ստորև ներկայացնում ենք համատեղ հայտարարության անգլերեն և հայերեն բնագրերը.*

## COMMON DECLARATION BY POPE JOHN PAUL II AND CATHOLICOS KAREKIN I

As they bring to a close their solemn meeting which they are deeply convinced has been of particular significance for the on-going relations between the Catholic Church and the Armenian Apostolic Church, His Holiness John Paul II, Bishop of Rome and Pope of the Catholic Church, and His Holiness Karekin I, Supreme Patriarch and Catholicos of all Armenians, give humble thanks to the Lord and Saviour Jesus Christ who has enabled them to meet in His love for prayer together, for a fruitful discussion of their common desire to search out a more perfect unity in the Holy Spirit, and for an exchange of views about how their Churches may give a more effective witness to the Gospel in a world approaching a new millennium in the history of salvation.

Pope John Paul II and Catholicos Karekin I recognize the deep spiritual communion which already unites them and the bishops, clergy and lay faithful of their Churches. It is a communion which finds its roots in the common faith in the Holy and life-giving Trinity proclaimed by the Apostles and transmitted down the centuries by the many Fathers and Doctors of the Church and the bishops, priests, and martyrs who have followed them. They rejoice in the fact that recent developments of ecumenical relations and discussions carried out in the spirit of Christian love and fellowship have dispelled many misunderstandings inherited from the controversies and dissensions of the past. Such dialogues and encounters have prepared a healthy situation of mutual understanding and recovery of the deeper spiritual communion based on the common faith in the Holy Trinity that they have been given through the Gospel of Christ and in the Holy Tradition of the Church.

They particulary welcome the great advance that their Churches have registered in their common search for unity in Christ, the Word of God made flash. Perfect God as to His divinity, perfect man as to His humanity, His divinity is united to His humanity in the Person of the Only-begotten Son of God, in a union which is real, perfect, without contusion, without alteration, without division, without any form of separation.

The reality of this common faith in Jesus Christ and in the same succession of apostolic ministry has at times been obscured or ignored.Linguistic, cultural and political factors have immensely contributed towards the theological divergences that have found expression in their terminology of formulating their doctrines. His Holiness John Paul II and His Holiness Karekin I have expressed their determined conviction that because of the fundamental common faith in God and in Jesus Christ, the controversies and unhappy divisions which sometimes have followed upon the divergent ways in expressing it, as a result of the present declaration, should not continue to influence the life and witness of the Church today. They humbly declare before God their sorrow for these controversies and dissensions and their determination to remove from the mind and memory of their Churches the bitterness, mutual recriminations and even hatred which have sometimes manifested themselves in the past, and may even today cast a shadow over the truly fraternal and genuinely Christian relations between leaders and the faithful of both Churches, especially as these have developed in recent times.

The communion already existing between the two Churches and the hope for and commitment to recovery of full communion between them should become factors of motivation for further contact, more regular and substantial dialogue, to a greater degree of mutual understanding and recovery of the communality of their faith and service.

Pope John II and Karekin I give their blessing and pastoral support to the further development of existing contacts and to new manifestations of that dialogue of charity between their respective pastors and faithful which will bear fruit in the fields common action on the pastoral, catechetical, social and intellectual levels.

Such a dialogue is particulary imperative in these present times when the



ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՊԱՀԻՆ

Churches are faced with new challenges to their witness to the Gospel of Jesus Christ arising out of the rapidly changing situations in the modern world so deeply affected by an extreme secularistic and secularizing pace of life and culture. It requires closer collaboration, mutual confidence and a greater degree of concern for common action. It presumes and requires an attitude of service which is not self-seeking and which is characterized by a mutual respect for the fidelity of the faithful to their own Churches and Christian traditions.

They appeal to their clergy and laity to carry out more actively and effectively their full cooperation in all fields of diaconia, and to become agents of reconciliation, peace and justice, struggling for the true recognition of human of human rights and dedicating themselves to the support of all those who are suffering and are in spiritual and material need throughout the world.

John Paul II and Karekin I express a particular concern for the Armenian people, both those living in their historic motherland where freedom and independence were once more recovered and reestablished recently through the new Independent State of Armenia, those living in Nagorno Karabagh in need of permanent peace, and those who live in a state of world-wide diaspora. Amid upheavals and tragedies, especially during this century, these people have remained to the apostolic faith, the faith of martyrs and confessors, the faith of milllon of unnamed believers for whom Jesus Christ, the Son of God incarnate and Saviour of the world, has been the foundation of their hope, and whose Spirit has guided them across the centuries. As they approach the seventeenth centenary of the official establishment of the Church in Armenia, may they receive the special blessings of the Triune God for peace with justice and for a renewed dedication to witnessing faithfully to the Lord Jesus Christ.

Rome, 13 December 1996.

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրենց պաշտոնական հանդիպման ավարտին, որն իրենց խորին համոզմամբ մասնավոր կարևորություն ունեցավ Կաթոլիկ Եկեղեցու և Հայ Առաքելական Եկեղեցու շարունակվող հարաբերությունների համար, Հռոմի Եպիսկոպոս և Կաթոլիկ Եկեղեցու Պապ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ը և Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ն խոնարհաբար գոհություն են հայտնում Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին, որը նրանց հնարավորություն տվեց իր սիրո մեջ հանդիպելու, միասնաբար աղոթելու, Սուրբ Հոգով ավելի կատարյալ միության փնտրտուքի իրենց ընդհա-

նոր ցանկությունը արդյունավետորեն քննարկելու և տեսակետներ փոխանակելու այն մասին, թե ինչպես կարող են իրենց Եկեղեցիները Ավետարանի ավելի արդյունավետ վկայություն տալ փրկագործության պատմության մերձեցող նոր հազարամյակի աշխարհում:

Հովհաննես-Պողոս Բ Պապը և Գարեգին Ա Կաթողիկոսը գիտակցում են այն խոր հոգևոր հաղորդությունը, որն արդեն իսկ միացնում է իրենց և իրենց Եկեղեցիների եպիսկոպոսներին, հոգևորականությանն ու աշխարհական հավատացյալներին: Սա մի հաղորդություն է, որն իր արմատները է գտնում առ Սուրբ և կենսատու Երրորդությունը ունեցած ընդհանուր հավատքի մեջ, որը քարոզվել է Առաքյալների կողմից և դարեր շարունակ փոխանցվել նրանց հաջորդող Եկեղեցու Հայրերի և Վարդապետների, եպիսկոպոսների, քահանաների ու նահատակների միջոցով: Նրանք հրճվում են այն իրողությամբ, որ քրիստոնեական սիրո և եղբայրության ոգով առաջ տարված էկումենիկ հարաբերությունների և աստվածաբանական խոսակցությունների վերջին շրջանի զարգացումները ցրեցին անցյալի վեճերից ու անհամաձայնություններից ժառանգված շատ սխալ հասկացողություններ: Նման երկխոսություններն ու հանդիպումները առողջ մթնոլորտ պատրաստեցին փոխադարձ հասկացողության և ավելի խոր հոգևոր հաղորդության վերանորոգման համար, հիմնված ի Սուրբ Երրորդություն ընդհանուր հավատքի վրա, որը նրանք ստացել են Քրիստոսի Ավետարանի և Եկեղեցու Սրբազան Ավանդության միջոցով:

Նրանք մասնավորապես ողջունում են այն մեծ առաջընթացը, որ իրենց Եկեղեցիները գրանցել են Քրիստոսի՝ մարմնացյալ Բանին Աստծո մեջ միության իրենց ընդհանուր որոնման մեջ: Կատարյալ Աստված ըստ Իր աստվածության, կատարյալ մարդ ըստ Իր մարդության, Իր աստվածությունը միացել է Իր մարդությանը Աստծո Միածին Որդու անձի մեջ մի (այնպիսի) միավորմամբ, որն իրական է, կատարյալ, անխառն, անշփոթ, առանց որևէ տեսակի բաժանման:

Ի Հիսուս Քրիստոս և առաքելական իշխանության նույն հաջորդականությամբ եղած այս ընդհանուր հավատքի իրականությունը երբեմն մթագնել է կամ անտեսվել: Լեզվական, մշակութային և քաղաքական գործոնները մեծապես նպաստել են աստվածաբանական անհամաձայնություններին, որոնք արտահայտություն են գտել իրենց վարդապետությունները բանաձևելու իրենց եզրաբանության մեջ: Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ը և Նորին Սրբություն Գարեգին Ա-ն արտահայտեցին իրենց վճռական համոզումը, որ առ Աստված և առ Հիսուս Քրիստոս ունեցած հիմնական ընդհանուր հավատքի՝ լույսի ներքո այն վեճերն ու ցավալի բաժանումները, որոնք երբեմն հաջորդեցին

հավատքը տարբեր ձևերով արտահայտելուն այս Ներկա հայտարարության լույսի տակ, չպետք է շարունակեն այսօր ազդել Եկեղեցու կյանքի ու վկայության վրա: Նրանք Աստծո առջև խոնարհաբար իրենց ցավն են հայտնում այս վեճերի ու անհամաձայնությունների համար և իրենց վճռականությունը՝ իրենց Եկեղեցիների մտքից ու հիշողություններից հեռացնելու դառնությունները, փոխադարձ մեղադրանքներն ու անգամ ատելությունը, որը երբեմն իրեն ցույց է տվել անցյալում և որն անգամ այսօր կարող է ստվեր նետել երկու Եկեղեցիների առաջնորդների ու հավատացյալների ճշմարտապես եղբայրական և անկեղծորեն քրիստոնեական հարաբերությունների վրա, որոնք առանձնապես զարգացել են վերջին ժամանակներում:

Երկու Եկեղեցիների միջև արդեն իսկ գոյություն ունեցող հաղորդությունը և միմյանց հետ ամբողջական հաղորդության վերագտման հույսն ու հանձնառությունը պետք է մղիչ ազդակներ լինեն հետագա շփումների և ավելի կանոնավոր ու հիմնավոր երկխոսության համար, որն առաջնորդի փոխըմբռնման ավելի բարձր աստիճանի և իրենց հավատքի ու ծառայության ընդհանրության վերագտնումի:

Հովհաննես-Պողոս Բ Պապը և Գարեգին Ա Կաթողիկոսը իրենց օրհնությունն ու հովվական աջակցությունն են տալիս գոյություն ունեցող կապերի հետագա զարգացմանն ու իրենց ենթակա հովիվների ու հավատացյալների միջև սիրո այդ երկխոսության նոր դրսևորումներին, որոնք պտուղ կտան ընդհանուր գործունեության դաշտում՝ հովվական, ուսուցողական, ընկերային և մտավոր մակարդակների վրա:

Նման երկխոսությունը մասնավորապես հրամայական է այս Ներկա ժամանակներում, երբ Եկեղեցիները գտնվում են նոր մարտահրավերների առջև՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի իրենց վկայության մեջ, որոնք ի հայտ են գալիս կյանքի ու մշակույթի ծայրահեղ աշխարհայնական ու աշխարհայնացնող ընթացքին խորապես ազդված ժամանակակից աշխարհի արագորեն փոխվող իրավիճակներից: Այն պահանջում է սերտ համագործակցություն և միասնական գործունեության համար նախաձեռնողության ավելի բարձր աստիճան: Այն ենթադրում և պահանջում է ծառայության մի այնպիսի վերաբերմունք, որը եսակենտրոն ուղղվածություն չունենա և որը բնութագրված լինի փոխադարձ հարգանքով իրենց ուրույն Եկեղեցիների և քրիստոնեական ավանդությունների նկատմամբ հավատացյալների ունեցած հավատարմության հանդեպ:

Նրանք կոչ են ուղղում իրենց հոգևորականությանն ու աշխարհական դասին՝ ավելի աշխույժ և արդյունավետ կերպով առաջ տանելու իրենց ամբողջական համագործակցությունը ծառայության բոլոր ասպարեզ-

ներում և դառնալու հաշտության, խաղաղության և արդարության գործակալները, պայքարելու մարդկային իրավունքների ճշմարիտ ճանաչման համար և իրենք իրենց նվիրելու՝ զորավիգ լինելու բոլոր նրանց, որոնք տառապում են և հոգևոր ու նյութական կարիքի մեջ են ողջ աշխարհում:

Հովհաննես-Պողոս Բ-ը և Գարեգին Ա-ն մասնավոր հովվական հոգածություն են արտահայտում հայ ժողովրդի նկատմամբ, նրանց նկատմամբ, ովքեր ապրում են իրենց պատմական հայրենիքում, որտեղ ազատությունն ու անկախությունը մեկ անգամ ևս վերջերս վերանորոգվեցին ու վերահաստատվեցին նոր անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումով, նրանց նկատմամբ, ովքեր ապրում են Լեռնային Ղարաբաղում մնայուն խաղաղության սպասումով, նրանց նկատմամբ, ովքեր ապրում են աշխարհով մեկ ցրված սփյուռքի պայմաններում: Վերիվայրումների և ողբերգությունների պայմաններում, հատկապես այս դարում, այս ժողովուրդը հավատարիմ է մնացել առաքելական հավատքին, նահատակների ու վկաների հավատքին, միլիոնավոր անանուն հավատացյալների հավատքին, որոնց համար Հիսուս Քրիստոս՝ մարմնացած Աստծո Որդին և աշխարհի Փրկիչը եղավ իրենց հույսի հիմքը և որի Հոգին նրանց առաջնորդեց դարերի միջից: Մինչ նրանք մոտենում են Հայաստանում Եկեղեցու պաշտոնական հաստատման տասնյոթերորդ հարյուրամյակին, թող նրանք ընդունեն Սուրբ Երրորդության հատուկ օրհնությունները հանուն արդար խաղաղության և վերանորոգված նվիրումի՝ հավատարմորեն ծառայելու Տեր Հիսուս Քրիստոսին:

Հռոմ, 13 դեկտեմբեր 1996

*Այնուհետև միաժամանակ ստորագրվեց համատեղ հայտարարությունը, ապա կատարվեց հուշանվերների փոխանակություն: Այս առիթով Վեհափառը Պապին հանձնեց Հռոմի Ս. Պետրոս և Էջմիածնի Մայր Տաճարները պատկերող մի գեղանկար, իսկ Սրբազան Պապը Հայոց Հայրապետին նվիրեց Ս. Գրիգոր Լուսավորչի մի դիմանկարը՝ վերցված Վատիկանի հնագույն ձեռագրերից մեկից: Նմանապես Վեհափառին ուղեկցող սրբազան հայրերը ստացան արծաթյա լանջախաչեր, իսկ վարդապետները՝ հուշամեդալներ:*

*Հետագայում Վեհափառ Հայրապետը այսպես բնորոշեց համատեղ հայտարարության ոգին և բովանդակությունը.*

*«Հատկապես մենք ասացինք այն, որ ինչ-ինչ վեճեր, որոնք տեղի են ունեցել մեր պատմության ընթացքում երկու եկեղեցիների միջև՝ դավանաբանական որոշ հարցերի և հատկապես Հիսուս Քրիստոսի անձի*




Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ՆՎԵՐԸ՝ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՎ
ՎԱՏԻԿԱՆԸ ՄԻԱՍԵՂ ՊԱՏԿԵՐՈՂ ԿՏԱՎՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻՆ



ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԸ ԻՐ ՓՈԽԱԴԱՐՁ ՆՎԵՐՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ



ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ



ՋԵՐՄԻԿ ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑ



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ԿՏԱՎԸ



ՀՌՈՄԻ ԳԵՏՆԱԴԱՄԲԱՐԱՆՆԵՐՈՒՄ

*ըմբռնման մեջ, այս վեճերը այսօր կորցրել են իրենց այժմեականությունը, որովհետև մենք տեսնում ենք և փոխադարձ ուսումնասիրությունների, տեսակցությունների, խոսակցությունների որպես եզրակացություն եկել ենք այն համոզմանը, ինչ որ արտահայտվել է աջանչելի կերպով, կարող եմ ասել՝ անկրկնելի հստակությամբ, մեր Եկեղեցու ամենից սուրբ անձերից Ներսես Շնորհալու կողմից: Համակապես թե՝ մենք ընդունում ենք զՔրիստոս որպես կատարյալ Աստված և կատարյալ Մարդ և երկու բնությունները՝ աստվածայինը և մարդկայինը չե՛ն իրարից անջատ, այլ միացյալ անշփոթարար: Այս հիմնական ճշմարտությունն էր, որ վերահաստատեցինք մենք մեր միասեղ Հայտարարության մեջ: Եվ նաև ասացինք, թե ուժ ենք տալու, քաջալերություն ենք ընծայելու փոխադարձ հասկացողության ձգտող բոլոր խոսակցություններին մեր երկու Եկեղեցիների միջև հառաջիկայում:*

*Սա է ամենից հիմնականը, որ այսօր աշխարհը իմանա, մարդկությունը իմանա, որ քրիստոնեական Եկեղեցիները այլևս իրար հետ կռվելու փոխարեն իրար հետ գործակցելու, իրար հասկանալու ճանապարհի մեջ են մտել: Եթե չենք մտել, կնշանակի, որ աշխարհի ընդհանուր քրիստոնեական միութենական շարժումին մասնակից չենք»:*

## *ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Սրբական Պապի հետ այս պատմական հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը Պատրիարք հայրերի և խաժակ սրբազանի ուղեկցությամբ այցելեց Վատիկանի Պետական Քարտուղարություն, որտեղ սիրալիր հյուրընկալության արժանացավ Պետական Քարտուղար կարդինալ Անջելո Սոդանոյի կողմից:*

*Մոտ մեկ ժամ տևած ընդունելության ընթացքում Վեհափառն ու Պետական քարտուղարը կարևորեցին երկու Եկեղեցիների փոխադարձ համագործակցության հրամայականը՝ հատուկ ուշադրության առարկա դարձնելով Հայաստանի ներկա կացությունը և Արցախի հարցի արդար լուծման հնարավորությունները:*

## *ՄԱՍՆԱՎՈՐ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՄՈՏ*

*Նույն օրը, ժամը 13-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբական Պապի կողմից հրավիրվեց մասնավոր ճաշի, որին մասնակցեցին նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո հայոց Պատրիարքները, Պարգև և Խաժակ սրբազանները:*

*Ճաշի ընթացքում ծավալվեց մտերմիկ զրույց, որի ժամանակ Սրբական Պապը հատկապես նշեց, որ քաջածանոթ է հայոց հինավուրց ազգին, նրա դարաքույր մշակույթին և որ դեռ Լեհաստանում ուսանած տարիներից ի վեր շրջապատված է եղել հայ մարդկանցով:*

*Վեհափառ Հայրապետը մանրամասնորեն պատմեց Հայաստանի այսօրվա վիճակի, հատկապես տնտեսական ծանր դրության մասին, միաժամանակ անդրադառնալով Արցախի ժողովրդի արդար իրավունքներին:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳԵՏՆԱԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

*Ժամը 16.30-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Հռոմի Ս. Պրիսկիղայի հայտնի գետնադամբարաններ (catacombs), ուր մեծ հետաքրքրությամբ դիտեց վաղ քրիստոնեական այդ հուշարձանախումբը:*



Գարեգին Ա Վեհափառը «Անարատ հղության» միաբանության կույսերի մենաստանում

*Ապա Վեհափառ Հայրապետը հանդիպեց տեղի Կուսանաց վանքի քույրերին: Վանքում ամենքը նախ համատեղ աղոթեցին, ապա Հայոց Հայրապետն իր հայրական պատգամներն ու խրատները տվեց միաբանության քույրերին, հորդորեց հավատարիմ մնալ իրենց ուխտին՝ ի փառավորումն Տիրոջ ու Նրա պատվիրանների:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

*Նույն օրը, երեկոյան ժամը 18.00-ին, Նորին Սրբությունն այցելեց Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, ուր*

ջերմ սիրով նրան և շքախմբի անդամներին դիմավորեցին Իտալիայում հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը, ինչպես նաև Վատիկանի մոտ ՀՀ ներկայացուցիչ Մարիամ Երեմյանը:

Տրվեց փոքրիկ հյուրասիրություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը կարևորեց երկու հավատարմատարների առաքելության մեծ նշանակությունը որպես ազատ և անկախ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների Իտալիայում և Վատիկանի մոտ՝ ի մասնավորի ավելացնելով.

*«Սիրելի պարոն Հավատարմատար Գագիկ և սիրելի Մարիամ, այս պահը չգիտեմ ինչու, ինձի համար սովորական պահերեն մեկը չէ: Ես Վատիկան և Հռոմ հաճախ գտնված եմ ու կրնամ ըսել այն բոլոր կենտրոնները, որ այցելեցի, այդ բոլորին մեջ եղած էի տարբեր հանգամանքներով, որպես վարդապետ, եպիսկոպոս և Կիլիկիո Կաթողիկոս: Բայց այսօր այս փոքրիկ տարածքը, որ Վատիկանի Սուրբ Աթոռին մոտ մեր ներկայացուցչության տունն է, ասիկա մեկ հայրենիքից քաղված պատառ հող է մեզ համար, հայրենիքի մեկ կտոր է, որի վրա կանգնած ենք մենք, որովհետև մեր հայրենիքի ներկայացուցչությունն է, որ կողջունենք Իտալիո մեջ և Վատիկանի մոտ:*

*Ես անոնցմե եմ, որոնք օտար երկրի մեջ ծնած են և ամեն անգամ, որ ուրիշ երկիր գացած են, օտար անձնագրով ներկայացած են և օտար դեսպաններով ներկայացած են: Այսօր ես կուգամ հայկական անձնագրով և կուգամ հայկական դեսպանատունը, կուգամ իմ հայրենիքի «օտար, ամայի ճամփեքի վրա» նետված այս կտորին մեջ և հանուն մեր հոգևորականության, մեր սիրելի Պատրիարք սրբազաններուն, մեր բոլոր առաջնորդներուն և հոգևորականներուն, նաև մեր շատ սիրելի աշխարհական-ազնվական ներկայացուցիչներու, որոնք եկած են այստեղ Հռոմ՝ ինձի հետ ըլլալու այս պատմական օրերուն, կրնամ ըսել, այս օրը բոլորիս հիշողության մեջ պիտի մնա հայության օրը Իտալիո մեջ: Գրեցեք ձեր քով՝ հայության օրը Իտալիո մեջ»:*

Օգտվելով առիթից, Հայոց Հայրապետը ֆրանսերեն լեզվով կես ժամանոց հարցազրույց ունեցավ իտալական RAI հեռուստաընկերության թղթակցի հետ՝ կարևորելով իր այցի պատմական նշանակությունը ներկա պայմաններում (սույն հեռուստառեպորտաժը հետագայում հեռարձակվեց իտալական առաջին հեռուստածրագրով):

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ

Նույն օրը, ժամը 20.00-ին, Հռոմի գեղեցիկ և պատմական հյուրանոցներից մեկում՝ «Կոլումբուս» պանդոկում, Վատիկանում ՀՀ դեսպանատան կողմից, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կազմակերպվեց ընդունելություն, ուր հրավիրված էին Իտալիայում և Վատիկանի մոտ հավատարմագրված բազմաթիվ երկրների դեսպաններ:

*Ընդունելությանը ներկա էր Իտալիայում ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը, որը ներկա դեսպաններին մեկ առ մեկ ծանոթացրեց Նորին Սրբության հետ:*

*Հրնթացս ընդունելության Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեցին Վատիկանի մոտ ՀՀ ներկայացուցիչ Մարիամ Երեմյանը և կարդինալ Կասսիդին: Ապա ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը:*

*Նորին Սրբությունն անդրադառնալով ներկա աշխարհում քրիստոնեական Եկեղեցու դերակատարությանը, շեշտեց այն պարագան, որ Եկեղեցին պետք է դառնա բարոյական առողջ սկզբունքների քարոզիչը մի այնպիսի աշխարհում, որտեղ մարդկային կյանքը օրեօր առավել ևս խեղդվում է նյութապաշտական կյանքի ըմբռնումներից և ապրելակերպից: Նա հանգամանորեն խոսեց նաև Հայաստանում մեր Եկեղեցու կատարած դերի մասին, մեր նոր պետության կազմավորման այս ամենակարևոր շրջանում:*

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՏԻԿԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Գարեգին Ա Վեհափառը Վատիկանի գրադարանում դիտում է տեղի հայկական ձեռագրերը

**Դեկտեմբերի 14-ի առավոտյան Վեհափառ Հայրապետը կարդինալ Կասսիդիի ուղեկցությամբ եղավ Վատիկանի Առաքելական գրադարանում, մանրամասն ծանոթացավ ընթերցասրահներին,**



ՎԱՏԻԿԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ



ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՏԻԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ



ԳԵՂԱՔԱՆԴԱԿ ԽԱՉՔԱՐԻ ՄՈՏ՝ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ, Ի ՀԻՇԱՏԱԿ
ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ

գրապահոցներին: Հայ Եկեղեցու պատվիրակությունը եղավ նաև այն սրահում, ուր ցուցադրվում են ձեռագիր մագաղաթները, որոնց շարքում նաև հայկական ձեռագրեր:

### ԽԱՉՔԱՐԻ ՋԵՏԵՂՈՒՄ

Նույն առավոտ Վեհափառ Հայրապետը իր պատվիրակության անդամների հետ միասին, ընկերակցությամբ կարդինալ Կասսիդիի և Դյուպրե եպիսկոպոսի, այցելեց Վատիկանի պարտեզ և Սրբազան Պապի բնակարանի մոտ բարձրահայաց մի վայրում զետեղեց Հայաստանից իր տարած խաչքարը, որպես մնայուն հիշատակ այս այցելության: Քարը, որ երկու օր տևած աշխատանքով զետեղվել էր պարտեզի կենտրոնում, օրհնվեց Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Սրբությունն ասաց, որ «այս խաչքարը թող մնա հայ ժողովրդի սրտից բխած բարի զգացումների վկայություն և Սուրբ Էջմիածնի եղբայրական սիրո արտահայտություն»:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԻՔՍՏԻՆՅԱՆ ՄԱՏՈՒՌ

Այնուհետև պատվիրակությունը, Նորին Սրբության գլխավորությամբ, այցելեց Միքելանջելոյի գլուխգործոց հանդիսացող Սիքստինյան և Պողոսյան մատուռներ և հիացավ իտալացի հանճարի անմահ ստեղծագործությամբ:

Սրանով էլ եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Վատիկան և Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես-Պողոս Բ-ին և սկսվեց պաշտոնական այցը Իտալիա և տեղի հայ համայնքին:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

## *ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ*

*Վեհափառ Հայրապետը մինչ իտալահայ համայնքին հայրապետական պաշտոնական այցելություն տալը պաշտոնական հանդիպում ունեցավ Իտալիայի Հանրապետության նախագահի հետ:*

*Դեկտեմբերի 14-ին, ժամը 13.00-ին, Գարեգին Ա Կաթողիկոսը Հռոմի Քիրինալե պալատում շուրջ 45 րոպեանոց պաշտոնական հանդիպում ունեցավ Իտալիայի Հանրապետության նախագահ Օսկար Լուիջի Սկալֆարոյի հետ:*

*Հանդիպմանը ներկա էին ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը, կարդինալ Սիլվեստրինին, Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Արևելյան Կաթողիկե Եկեղեցիների Խորհրդի հայկական բաժնի վարիչ Հայր Կ. Գուջջերոտտին:*

*Երկուստեք փոխանակված ողջույնի խոսքերից հետո շոշափվեցին Հայ Առաքելական և Հռոմեական Կաթողիկե Եկեղեցիների համագործակցությանն ու փոխադարձ մերձեցմանն առնչվող հարցեր, կարևորվեցին Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպանատան բացման անհրաժեշտությունը, խոսվեց երկու պետությունների բարեկամական կապերի ամրապնդման և զարգացման խնդիրների մասին, ինչպես նաև անդրադարձան 2001 թվականին Հայաստանում քրիստոնեության պետականացման 1700-ամյակի կապակցությամբ Իտալիայում կազմակերպվելիք հանդիսություններին:*

*Իտալիայի Հանրապետության նախագահը նշեց, որ ինքը քաջածանոթ է Հայոց պատմությանը ու հայ ժողովրդի մշակույթին և իտալա-հայկական շփումների զարգացման առջև որևէ խոչընդոտ չի տեսնում:*

## *ՄԵԿՆՈՒՄ ՀՌՈՄԻՑ*

*Նույն օրը, ժամը 16.00-ին, Հայոց Հայրապետը մեկնեց Հռոմից՝ այցելելու Միլանի հայկական համայնքին:*

*Հռոմի Լեոնարդո դա Վինչիի անունը կրող միջազգային օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ողջերթի էին եկել կարդինալ Կասսիդին, Դյուպրե եպիսկոպոսը և Քրիստոնեական Միության Խորհրդի այլ պատասխանատու աշխատակիցներ:*

*Նաև նույն օրը Հռոմից իրենց պաշտոնատեղիները մեկնեցին Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքները, Վաչե, Մեսրոպ և Խաժակ սրբազանները:*



ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՕՍԿԱՐ ԼՈՒԻՋԻ ՍԿԱԼՖԱՐՈՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՄԻ ՊԱՀ

### ԺԱՄԱՆՈՒՄ ՄԻԼԱՆ

*Դեկտեմբերի 14-ի երեկոյան, տեղական ժամանակով ժամը 17-ին, Ամենայն Հայոց Հայրապետն իրեն ուղեկցող շքախմբով ժամանեց Միլանի «Լինատտե» միջազգային օդանավակայան:*

*Նորին Սրբությանն ընկերակցում էին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ արք. Նագգաշյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Արգենտինայի հայոց առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանը, Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, գավազանակիր Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, Իտալիայում ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանը և Վատիկանի մոտ ՀՀ ներկայացուցիչ Մարիամ Երեմյանը:*

*Միլանի օդանավակայանի պատվո սրահում Վեհափառ Հայրապետին և իրեն ընկերակցող բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Միլանի Հայոց Եկեղեցու վարչական կազմի անդամները՝ հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգսյանի գլխավորությամբ:*

### «ՀՐԱՇԱՓԱՌ» ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԻԼԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Օդանավակայանից անմիջապես պատվո պահակախմբի ուղեկցությամբ Գարեգին Ա Վեհափառն առաջնորդվեց դեպի Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցի և «Հրաշափառ»-ով մուտք գործեց տաճար, ուր ներկա էր միլանահայության մեծ մասը:*

*Պետք է նշել, որ Միլանում և շրջակայքում ապրում են շուրջ 1000 հայեր, իսկ ողջ Իտալիայում՝ ընդամենը 2000:*

*Կանոնական աղոթքից հետո հավատավոր միլանահայությանն իր պատգամը հղեց Ամենայն Հայոց Վեհափառը: Դիմելով հավաքվածներին, Նորին Սրբությունը հատկապես շեշտեց այն իրողությունը, որ 1700-ամյա փառավոր ուղի անցած Հայոց Առաքելական Եկեղեցին եղել է, կա և ապրելու է հարատև մեր նախնյաց, մեր Սուրբ Հայրերի միջոցով մեզ ավանդված պատգամների ճշմարտության վեհ գիտակցության, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի համայն քրիստոնյաներին պարգևած խորախորհուրդ սիրո շնորհիվ: Նաև հորդորեց ամենուր բարձր պահել հարապատ ժողովրդին բնորոշ հատկանիշները, որոնցով հայտնի է հայը համայն աշխարհում.*

*«Սիրելի Հոգեւոր եղբայրներ, Հոգեւոր Հովիւ Իտալիոյ եւ Միլանոյի, Հարգարժան Եկեղեցական Հոգաբարձութեան անդամներ, Միլանոյի Հայկական Միութեան անդամներ եւ թանկագին Հաւատացեալներ.*

*Առաջին բառերս, որոնք շրթներես պիտի արտաբերվին որպես առաջին սպասավորը մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին, ձեզի ուղղած խոսքեր չեն, այլ մեր Երկնավոր Հորը. – փա՛ռք Քեզ, Աստված, փա՛ռք Քեզ, որ այս օրը տվիր ինձի և այս սուրբ եկեղեցվո կամարներուն ներքև ես տեսա անգամ մը ևս, բայց այս անգամ պատասխանատվության գերագույն աստիճանով, մեր ժողովուրդի զավակները, որոնք կապրին իտալական հողին վրա և կմնան հոգևոր իրենց հայրենիքին մեջ, Հայաստանյայց Եկեղեցի կոչվող և համատարած՝ առանց աշխարհագրական սահման ճանչցող մեր հոգևոր հայրենիք Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցիին անդաստանում: Ապրիք, հավատացյալներ, երբ այսպես կենդանի կպահեք ձեր հավատքը, ատիկա Աստված կընդունի իբրև խունկ անուշավետ դեպի երկինք ձեր սրտերեն գացող հավատարմության զգացումով:*



Միլանահայերը ունկնդրում են Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին

*Ես այսօր ահավասիկ եկա Միլանո, որովհետև չէի կրնար չգալ: Ըլլալ Իտալիո հողին վրա, ըլլալ Վատիկանի պետության սահմաններուն մեջ, ըլլալ Կաթոլիկ համատարած Եկեղեցիին կենտրոնին մեջ և չգալ Միլանո, կկարծեմ, որ «մեղք» գործել կնշանակեր: Ատոր համար ահավասիկ եկած եմ քաղցր սիրով ողջունելու ձեզ բոլորդ իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն: Խոնարհաբար հոգիիս մեջ ծունկի կուգամ այս Խորանին վրա և փառք կուտամ Աստուծո, որ ինձի շնորհեց այդ մեծագույն պատիվը, որ ես ջանացի շահիլ այն պատիվը, որ առաջին Կաթողիկոսն եմ, որ կուգամ ձեզի ձեր Մայր Հայրենիքեն, մեր բոլորի Մայր Հայաստանեն, ազատ ու անկախ և նոր շրջանեն, պայծառ շրջանե մը, ուր հայը տերն է և ծառան իր հողի: Կուգամ ձեզի նոր Հայաստանեն: Իմ երջանկահիշատակ*

նախորդը՝ անմոռանալի Վազգեն Ա Վեհափառը, երեսունինը տարի գահակալեց, և ես գիտեմ, թե ինչ դժվարին պայմաններում միջեն անցավ, և ինքն ալ տեսավ արշալույսը, բացումը Հայոց Հայրենիքի ազատության: Ես այսօր կուգամ ձեզի ազատ ու անկախ Հայրենիքեն:

Այսօր, երբ ժամը մեկին գտնվեցա Իտալիո նախագահի մոտ, Քվիրինալե պալատին մեջ, հետս էր իմ Հայրենի պետության ներկայացուցիչը: Ուրիշ անգամ եթե երթայի, ինչպես իմ նախորդը կերթար Սովետ իշխանու- թյուններու ժամանակ, այդպես չէր լինի: Մենք հիմա մեր դիմագիծն ունինք, մեր ինքնությունն ունինք ազգային, պետական հասկացողությամբ, և ամեն մեկս մենք զմեզ, տարեց ըլլանք, թե միջին տարիքի պատկանինք, թե այս անուշիկ փոքրիկներու տարիքին ըլլանք, մենք բոլորս ալ փառք պետք է տանք, բախտավոր զգանք մենք զմեզ, որ այս դարու վերջավորության ողջունեցինք մեր Հայրենիքի ազատությունը:

Ձեզմե շատերը ինձի չափ գիտեն, որ երբ որ այս դարը բացվեցավ, ողբ ու կոծ էր չորս դին Հայոց աշխարհին: Հայաստանը մթագնեց: Հազիվ 1918-ին ունեցանք անկախության շունչը վերստին ի Հայաստան, այդ շունչը երկու տարվան կյանք ունեցավ և ան ալ մարեցավ: Եվ դարասկզբից մենք դառը լացինք՝ արյունով, սև ամպերով, ջարդով, ցեղասպանությամբ: Բայց այսօր, այս դարու վերջին տասնամյակին, երբ կփակվի երկրորդ հազարամյակը և կբացվի պատմության մեջ քրիստոնեության երրորդ հազարամյակը, փառք տանք Աստծուն, որ խավարով սկսածը, լույսով կվերջացնենք, ցավով սկսանք, վերականգնումի կամքով է, որ կփակենք այս դարը:

Ես եկած եմ ձեզի ձեր, իմ, բոլոր հայերուս Մայր Հայրենիքեն, հույսի, լույսի, հավատքի; վերանորոգման, սեփական պետություն դառնալու, ամրանալու այս ընթացքին մեջեն: Շատ ծանր է վիճակը Հայաստանի՝ տնտեսական, ընկերային, կենցաղային և այլ չափանիշներով դիտված: Բայց իմ տանս մեջի հիվանդը իմս է, ուրիշինը չէ: Եվ իմ պարտքն է դարմանել, հոգ տանել, որպեսզի տունս առողջ մնա ընտանիքովս: Այս է մեր կյանքի փիլիսոփայությունը:

Ես կուգամ ձեզի այսօր Հռոմ քաղաքեն, ինչպես կըսեն, ամենեն մեծ տպավորություն թողնող քաղաքեն: Երեք անգամ անձնական խոսակցու- թյուններ ունեցանք Սրբազան Քահանայապետին հետ: Ես տեսա, թե ինչ սեր ունի հանդեպ մեր Եկեղեցիին: Հայությունը իրեն համար գիրքեն ծանոթ չէ: Ինքը հայերուն հետ ապրած է, արտահայտվելով նաև, որ «Հայություն կնշանակե պարկեշտություն և բարեկամություն: Ես այդպես ճանչցա ձեզի: Լավագույն իմ ընկերներս եղած են հայկական ծագումով պոլոնեացիներ, որոնց մեջ ես տեսած եմ հայության արժանիքները»: Հետևաբար կուգամ ձեզի տալու նաև հոգևոր ողջույնները իմ հոգևոր եղբոր՝ Հովհաննես-Պողոս Բ Քահանայապետին: Պիտի ասեմ անկեղծ զգացումով ձեզի, որ անցնող օրերը հայության օրերն էին Հռոմի մեջ: Կատակով ըսի, թե աս արշավանք մըն է, բայց ոչ քանդելու, այլ սիրո և բարեկամության արշավանք մըն է: Երբ ինձի հետ էին նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո պատրիարքները, մեր Եկեղեցու տարբեր թեմերի առաջնորդներ աշխարհի չորս կողմերից, մեկ խոսքով փոքրիկ բանակ մը Հայ Եկեղեցիեն իր վեղարներով, Արարատը

*հիշեցնող վեղարներով Վատիկանը լեցուց և հայոց երգը. «Հայր մեր»-ը հայերենով ցնծաց Վատիկանի Սուրբ Պետրոսի կամարներուն ներքև. Սուրբ Պողոս եկեղեցիին մեջ. «Ուրախ լեր», «էջ Միածինն ի Հօրէ» շարականները. մեկ խոսքով Հռոմեական Կաթողիկե Եկեղեցվո բոլոր ղեկավարները զգացին, որ Հայոց Եկեղեցին անցյալ չէ, հիշատակ չէ, հուշարձան չէ, Հայոց Եկեղեցին վերանորոգվող, վերաշնչավորվող, վերածաղկող և պտղաբերող Եկեղեցի մըն է իր ամբողջ ժողովրդով, որուն մի փոքրիկ հատվածը անհավասիկ Միլանի համայնքն է:*

*Ես հայրական սիրով կողջունեմ ձեզ բոլորդ: Ձեզմե ոմանք նախապես ճանչցած եմ և սակայն կուզեմ, որ այս երկու օրերը ըլլան բոլորիս համար վերանորոգման օրեր: Այնպես զգանք, որ ավազանին ջուրերը կխառնվին, լճացած չեն, կենդանության շունչ տարածվի մեր բոլորի կյանքերուն մեջ: Այդ զգացումներով, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, հանուն մեր Սրբություն Սրբոց, իբրև քրիստոնյա ազգ, մեր ծննդավայրի: Էջմիածինը Հայոց Բեթղեհեմն է: Իբրև քրիստոնյա ազգ, այնտեղ ծնանք մենք: Հետևաբար եկած եմ ձեզի բերելու այդ հավատքի կենդանության շունչը և ոչ թե միայն դարերու պատմության հիշատակը:*

*Նորոգվեցե՛ք հոգիով, սիրելինե՛ր, նորոգվեցե՛ք: Մեր ազգին ճանապարհը ապագան է և ոչ թե անցյալը միայն, որքան ալ հարուստ ըլլա այդ անցյալը: Թող Աստված օրհնե ձեզ բոլորդ: Այս գաղութը մի ըսեք, թե փոքր է թիվով: Շատ գաղութներ տեսած եմ, որ փոքր են թիվով, բայց կարևորը ոգին է: Երբեմն մեծ գաղութներու մեջ անապատ կա և երբեմն անապատներու մեջ կա օազիս: Ահա մի օազիս հայոց հոգևոր կյանքին այս եկեղեցիով: Եկած եմ քիչ մը ջուր ավելցնելու այդ օազիսին մեջ, որպեսզի կանաչը ավելի ծաղկի և մանուկներու ձայնը ավելի հնչեղ ըլլա Աստուծո փառքին համար հավիտյանս հավիտենից. ամեն»:*

*Այնուհետև Հայ Եկեղեցու բարձրաստիճան պատվիրակությունն առաջնորդվեց քաղաքի բարձրակարգ «Ռամադա» հյուրանոց, որի ճաշասրահում համայնքի հոգևոր հովվի և Եկեղեցու վարչության անդամների կողմից, ի պատիվ Նորին Սրբության և իր շքախմբի, տրվեց ընթրիք:*

*Ընթրիքից հետո հրաժեշտ տալով Վեհափառ Հայրապետին Տ. Գյուտ արք. Նագգաշյանը մեկնեց իր պաշտոնատեղին՝ Փարիզ:*

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԻԼԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Միլանահայության հիշողության մեջ դեռ երկար կմնա դեկտեմբերի 15-ի կիրակի օրը: Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, առավոտյան ժամը 10.30-ին, իր շքախմբի անդամների հետ մեկտեղ, ժամանեց Յոմելլի փողոց, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցի, սուրբ Պատարագ մատուցելու և իր հայրապետական պատգամը տալու միլանահայությանը:*

*Հարկ է նշել, որ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին կառուցվել է ոչ վաղ անցյալում՝ 1958 թվականին, Հովհաննես և Սարգիս Դիարբեքիրյան եղբայրների նախաձեռնությամբ ու միջոցներով՝ ի վայելումն միլանահայ հավատավորների:*



Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը մուտք է գործում եկեղեցի

*Եկեղեցի էր եկել գրեթե ողջ միլանահայությունը՝ ներկա գտնվելու մատուցվող Հայրապետական Սուրբ Պատարագին: Հընթացս Պատարագի, հավուր պատշաճի ու բովանդակալից քարոզ խոսեց Վեհափառ Տերը, ի մասնավորի շեշտելով միասնության կարևորությունը: Միայն եղբայրական սիրով, փոխհամաձայնությամբ ու միասնությամբ է մարդը կորեղ: Միաբանությամբ փոքրերը մեծանում, հզորանում են, իսկ անմիաբանությամբ մեծերը փոքրանում, տկարանում են, ինչպես ասում էր Կ. Պոլսի Պատրիարքներից Հակոբ Նալյանը: Ուստի մշտապես հարատևելու համար պետք է միակամ լինել: Եթե ամեն ոք իր քրտինքից մի կաթիլ, իր սիրուց մի շող տա հանուրի միասնականությանը, ապա այն առավել հզոր ու մշտնջենավոր կլինի.*

*«Սիրեցյալ Հոգևոր եղբայրներ և Թանկագին Հավատացյալներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո և Հայ ազգի, որ կբնակիք իտալական այս Հողի վրա և Հատկապես Միլանո քաղաքին մէջ.*

*Այսօր առաջին անգամն է, որ ես Պատարագ կմատուցեմ այս Սուրբ Տաճարին մէջ որպես ձեր առաջին սպասավորը, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց:*

*Եվ առաջին հերթին պատիվ և փառք կընծայեմ բոլոր անոնց, ովքեր այս տաճարը կյանքի կոչեցին, մարմարեն, աղյուսեն, ապակիեն եկեղեցի կառուցեցին, նյութը հոգիացուցին և նյութեղեն այս տաճարին մեջեն Աստուծո Հոգիին, մեր հայրերու չունչին կյանք տվին մեր բոլորին կյանքերուն մեջ:*

*Ես կհավատամ, որ Աստված երկնքեն, երանական ժպիտ է դցած բոլոր այն անձերուն, ովքեր այս եկեղեցուն կառույցին մեջ ունեցան իրենց բաժինը և առաջին հերթին Դիարբեքերյան ընտանիքին, եղբայրներուն և բոլոր անդամներուն, որոնք այս երկրին վրա չեն հիմա: Ան, որ քրիստոնեական հավատք ունի, չի կրնար այս ճշմարտությանը չհավատալ: Աստուծո ներկայությունը մեր կյանքին մեջ գերագույն ուժն է և այդ ուժին նյութեղեն արտահայտությունը եկեղեցին է: Եվ դուք, որ այսպես չեն կպահեք եկեղեցին, պատիվ ձեզի. հարգանք, աղոթք, հանգիստ և երանություն հոգիներուն այն բարերարներուն մեր ազգին, որոնք այս երկրին վրա չեն այլևս: Եվ որովհետև ես երջանիկ բախտը ունեցած եմ ժամանակին այս գաղութին մեջ անձամբ ճանչնալու անձեր, որոնք այժմ ներկա չեն, ես սրտի պարտք կզգամ, անոնց հիշատակն ալ վերակոչել այստեղ, որոնցմե ոմանք մեր արդի պատմության և մանավանդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերարները եղած են: Անմոռանալի Երվանդ Հյուսիսյանը, դոկտոր Արզումանյանը, Ստեփան Սրապյանը, Արամայիս Սրապյանը, Օննիկ Մանուկյանը և ուրիշներ, որոնք իրենցմե, իրենց հայրերեն ժառանգած ոգիեն այս գաղութին մեջ այնպիսի վկայություններ տվին, որոնք երբեք չեն մոռցվի մեր պատմությանը մեջ: Հարգանք բոլոր գնացողներուն: Պատիվ և փառք ապրողներուն: Անոնք գացին, Աստուծո մոտն են: Մենք ունինք տակավին մեծ պարտավորություններ այսօր: Անոնց հիշատակը թող մղիչ ուժ դառնա մեր բոլորիս համար:*

*Սիրելինե՛ր, Ավետարանեն տող մը այսօր պիտի քաղեմ, և ձեր բոլորի մտքի սլաքը, ուշադրության կենտրոնը պիտի այդ խոսքին վրա հրավիրեմ: Այդ խոսքը կարդացվեցավ երեկ, մեր եկեղեցվո մեջ: Ամեն օր, առանց բացառության, մեր հայրերը սահմանած են Սուրբ Գիրքեն երեք հատվածներ, որ մեր ժողովուրդը կարդա: Եվ անոնք, որ կկարծեն, թե մեր Եկեղեցին արժեք չի տար Սուրբ Գրքին՝ Աստվածաշնչին, չարաչար կսխալին: Ամեն օր Սուրբ Գիրքեն նշանակված հատվածներ կան՝ Հին Կտակարանեն և Նոր Կտակարանեն:*

*Երեկ Սուրբ Հակոբի տոնն էր: Սուրբ Հակոբին տոնին առիթով ընտրված էր հատված մը Ավետարանեն, որուն մեջ Հիսուս կըսե. «*Ես եմ *հովիվը: Քաջ և ճշմարիտ հովիվը դռնեն կմտնե: Գողը և ավազակը պատուհանեն կամ ճեղքերեն ներս կմտնի: Ես եմ դուռը ոչխարաց»: Եվ կավելցնե. «Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք և առավել ևս ունենաք:» Ի՞նչ ըսել կուզեր Հիսուս: «Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք»: Մի՞թե մարդիկը կյանք չունեին: Իրմե առաջ ապրող մարդիկը կյանք չունեի՞ն: Իր ժամանակին Իրեն հետ ապրողները կյանք չունեի՞ն: Անշուշտ ունեին: Ինչո՞ւ, ի՞նչ իմաստով Հիսուս կըսե. «Ես եկա, որպեսզի դուք կյանք ունենաք»: Ի՞նչ տեսակ կյանք: Մարդիկ ունեին Աստուծմե տրված կյանքը որպես Աստուծո*

*տուրքը, բարիքը մեզի՝ ծնելու, աճելու, զգալու, մտածելու և հետո անհետանալու կյանքի ընթացքեն: Ատիկա բնախոսական կյանքն է, ֆիզիոլոգիական կյանքը: Ամենն ալ ունին, կենդանին ալ ունի, որոշ իմաստով բույսերն ալ ունին կյանքի այս, այսպես կոչված, բնախոսական ընթացքը: Հիսուս եկավ, որպեսզի մեզի այդ կյանքին իմաստը, արժեքը բերե, ներդաշնակելու Աստվածայինով ներթափանցված կյանքը մեր ամենօրյա կյանքի բնական ընթացքին հետ:*

*Եղբայրներ և քույրեր, սքանչելի խոսք մը կա ըսված: Կուզեմ որ այդ խոսքը մեզմե յուրաքանչյուրը այսօր իր սրտի տախտակին վրա գրած մեկնի այս տաճարեն: Մարդ երկու անգամ կծնի. կծնի ի հորե և ի մորե մեկ անգամ, և կծնի այն ատեն երկրորդ անգամ, երբ կգիտնա, թե ինչու ծնած է, կգիտնա կյանքի նպատակը: Անիմաստ, աննպատակ, առանց տեսիլքի, առանց հավատքի, առանց սիրո, առանց ծառայության կյանքը ի՞նչ է: Ի՞նչ է այդ կյանքին տարբերությունը, ինչպես սաղմոսերգուն կըսե, խոտ է, գեղեցիկ ծաղիկ: Կյանքը եթե երբեք Աստուծո հավատքի գաղափարի, արժեքի, ծառայության, բարիքի, երջանկության ապրումներով չլեցվի, այլ ապրվի «կեր, արբ և ուրախ լեր» նշանաբանով, այդ կյանքը կյանք չէ: Կյանքը Քրիստոսի կյանքն է, Քրիստոսի բերած կյանքն է: Եվ ես հաճախ հարց տված եմ՝ մարդիկ իրենց կյանքին գույն կուտան, դիմագիծ կուտան, կերպարանք կուտան իրենց գործերով: Եվ այսօր անհատական կյանքեն անդին իմ այս պատկերը կտարածեմ հավաքական, ազգային մեր կյանքին վրա:*

*Իտալիան և Հայաստանը ո՞վ ստեղծեց: Աստված ստեղծեց: Իտալիո և Հայաստանի հողը ինչո՞վ տարբեր է մեկը մյուսեն: Եթե երբեք մեկը չգիտնար այս Իտալիան է և այն Հայաստանն է, եթե ուրիշ մոլորակեն, երևակայաբար կըսեմ, մեկը գա, որտեղե՞ն պիտի գիտնա, թե այս հողը Իտալիան է և այն հողը Հայաստանը: Բնությունը չէ, որ ստեղծած է Հայաստանը կամ Իտալիան: Հայ մարդը և իտալացի մարդը իրենք իրենց հավատքին, գաղափարին, շնորհքին, արժեքին կնիքը գրած են և ատոր համար այդ հողը Հայաստան է կամ Իտալիան է և ոչ թե Աֆրիկե է կամ Ասիա է կամ ուրիշ երկիր: Կյանքը Աստված կուտա տեսակ մը իբրև պաստառ: Դուք կապրեք Իտալիո մեջ: Ես կուզեմ այս պատկերը գործածել: Մարդն է, որ Աստուծո տված այդ պաստառին վրա պիտի գծե իր կյանքին պատկերը: Եվ ինչ որ գծեց, այդ է, որ դրոշմ կըլլա, այդ է, որ պատասխան կըլլա Աստուծո տվածին: Օր մը բոլորս ալ պիտի գտնվենք Աստուծո առջև, երկնքին առջև և պիտի հարցումը դա մեզի. «Ես տասը քանքար տվի քեզի, ի՞նչ տվիր տասը քանքարին փոխարեն: Ես հինգ քանքար տվի քեզի, ի՞նչ տվիր ինծի: Ես մեկ քանքար տվի քեզի, ի՞նչ տվիր ինծի»: Մեկը պիտի ըսե. «Ով Տեր, դուն ինծի տասը տվիր, գացի, քու տված տասի վրա աշխատեցա և ահավասիկ տասը ավելին»: Եւ Տերը պիտի ըսե. «Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ, մուտ յուրախութիւն Տեառն քո»: Մյուսին, որ հինգին դիմաց հինգն էր բերած, պիտի ըսե. «Ազնիվ ծառա, մտիր քո Տիրոջ ուրախության մեջ»: Իսկ մեկը պիտի ըսե. «Ով տեր, ես գիտեի, որ դու խիստ մարդ ես, գացի քո տված մեկդ ծրարեցի, պահպանեցի, ահավասիկ քեզի կվերադարձնեմ»: Անոր պիտի ըսվե. «Ծառա անպիտան, դու որ հավատարիմ*

չեղար իմ տվածիս, առեք անոր տվածը և տվեք անոր, որ իմ տվածը արժևորել գիտե, իմ տվածին պատասխանել գիտե ստեղծագործական ձևով»:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, իմ առաջին քարոզն է սա այս եկեղեցու կամարների ներքո որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Եթե մեր աչքերը քննական ձևով սևեռենք մեր պատմագրքի էջերուն վրա, մեր ժողովուրդը շատ-շատ անգամ զրկվեցավ կյանքի, Աստուծո տված կյանքի բարիքներեն: Կյանքը հաճախ պակսեցավ մեզի: Եկան, ջարդեցին, քանդեցին, ավերեցին, ջարդերու ետևեն եկավ ցեղասպանությունը, եղավ գերությունը, կյանքին մեջ կյանքը խափանեցին, բայց Աստուծո տված կյանքը, «Ես եկա, որ դուք կյանք ունենաք», - ինչպես ըսավ Հիսուս, և այդ կյանքը մեզմե չկրցան խլել: Բանաստեղծին խոսքը պիտի բերեմ ձեզի.

Եկեղեցին Հայկական մեն մի քարին տակ գետնի
Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի:

Հավատքի ճամփան է սա: Մեր թշնամիները մեր բոլոր ճամփաները գտան, մեր բոլոր ճամփաները խափանեցին, բայց այդ գաղտնի ճամփան չկրցան գտնել: Անիի մեջ եկեղեցիները քանդեցին, ուրիշ վայրերուն մեջ եկեղեցիները քանդեցին, բայց աՀավասիկ դուք Հոս, Իտալիո մեջ այս փառահեղ եկեղեցին շինեցիք: Հավատք. մարդուս արժեք տվողը, մարդուս կյանքը կյանքեն անդին ապրեցնողը, բնախոսական կյանքեն անդին իմաստավորված, Հայոց պատմության մասնիկ դարձած կյանքն է, որ կմնա:

Մեկ օր ինծի պատահեցավ, երբ ես Նոր Ջուղա, Պարսկաստանին Հարավային շրջանի առաջնորդն էի, թանգարան մը շինած էինք: Այդ թանգարանին մեջ մարդիկը կգրեին իրենց տպավորությունները: Մեկը գրած էր Հոն, վանեցի Հայ մըն էր, և ինքը գրել էր «Վանեցին Այգեստանից. Երբ որ ես այդ թանգարանը մտա, վաթսուն տարեկան էի, երբ թանգարանեն դուրս ելա, երկու Հազար տարեկան զգացի»: Ի՞նչն էր այդ երկու Հազար տարին. իր ժողովուրդին կյանքն էր, որ իր մեջը գիտակցության վերածված էր և ինքն ալ կուզեր այդ երկու Հազարամյա և երեք տարիներով չվերջացող, Հավերժացնաց մեր Հայության կյանքին մասնակիցը դառնար: Վա՜յ այն անձին, որ կյանքի կենտրոնական պողոտային մեջեն չի քալեր, լուսանցքեն քալող անձ մըն է: Պատմություն կերտողը կենտրոնական պողոտայեն քալողն է:

Այսօր ես կուգամ ձեզի ձեր պաշտելի Մայր Հայրենիքեն, կուգամ ձեզի մեր բոլորի սրտերուն մեջ ներկա և սրտերեն երբեք չբաժանվող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն: Բայց չեմ գա ձեզի որպես անցյալը Հիշեցնող, այս խոսքերս մի մոռնաք. չեմ եկած ձեզի ըսելու, թե մենք անցյալին 130 Կաթողիկոս ունեցած ենք: Չեմ եկած ձեզի միայն ըսելու, թե 1700 տարի առաջ Տրդատ արքան և Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեությունը պետական կրոն Հռչակած են: Ես անցյալ եղանակով չեմ խոսի: Եկած եմ ձեզի ըսելու, թե ձեր Սուրբ Աթոռը կյանքով լեցուն, կյանքի մեջը առավել ևս ստեղծագործական դառնալու կամքով տոգորուն, բաբախուն կենտրոնն է՝ ձեր բոլորի սիրտերը իր մեջ ամրացուցած կենտրոն: Այլապես ո՞վ ենք

մենք այնտեղ: Ո՞վ են մեր սրբազանները և վարդապետները այնտեղ, եթե ոչ մեր ժողովուրդի սրտերուն հավաքական տրոփին արձագանքը Հայաստանին մեջ, մեր սրբագույն հողին վրա, Սուրբ Էջմիածնին մեջ: Աստված հայ մարդուն հանդիպեցավ, ուր երկինքը երկրին միացավ և երկրի ու երկնքի համբույրեն ծնավ Էջմիածին: Երբ այս խորհուրդով ապրեք ձեր կյանքը, ուրիշ կըլլա իմաստը ձեր կյանքին:

Հետևաբար, այս իմ անդրանիկ քարոզին առիթով ես կուզեի ձեր բոլորին բերել, որքան իմ մարդկային տկարությունները կներեն, լույսի, առավել լույսի և ավելի պայծառ ապագայի կամքը, հոգեկան փարվածությունը դեպի մեր օրեցօր առավել ևս ամրացող Հայաստանի Պետությանը, մեր Հայրենիքին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Քիչ առաջ, երբ խորանի վրա մեր երկու սրբազանները ներկա էին, մեկը Երևանեն, Արարատյան թեմեն, մյուսը՝ Լենինականեն կամ Գյումրիեն, Ղարաբաղի հայոց առաջնորդը այստեղ Պատարագին կբերե իր մասնակցությունը, վարդապետները Հայաստանեն եկած, մյուս սրբազանը Արգենտինայից եկած, ձեր մեջ ով գիտե որ երկրներեն քանի՞ մարդիկ եկած են այստեղ, ես կըսեի, որ Հայաստանը, Սուրբ Էջմիածինը մեր Եկեղեցին, մեր հավատքը ինչքան ուժեղ այն հոգեկան հոսանքն է, որ մեզ կմիացնե: Աշխարհագրական, լեզվական, քաղաքակրթական տարբերություններեն վեր մեզ իրար հետ կշաղախե: Տեսեք՝ նույն շարականը, նույն երգը, նույն աղոթքն է, որ կթափանցե մեր բոլորին հոգիներուն մեջ: Այսօր հայությունը պետքն ունի այս ամբողջականության: Եթե երբեք Հիսուս ըսավ, ինչպես քիչ առաջ մեջ բերեցինք՝ «Ես եկա, որ կյանք ունենաք», այս կյանքին մեջ ոչ մեկ տեսակի բաժանում եղեր է: Աստուծո տված կյանքը չփչացնելն է արժեքը: Իմս չէ կյանքս: Ես տնտեսն եմ կյանքին: Ձերը չէ կյանքը: Աստված տված է, որ դուք զայն ապրեք Իր կամքին համաձայն և այդ կամքին մեջ սերը, միությունը, ամբողջականությունը, ընդհանրականության գերագույն շահը ավելի բարձր նկատեք: Այս է կյանքի փիլիսոփայության ամենեն առողջ տեսակետը: Այս է, որ Քրիստոս բերավ մեզի՝ սեր, միություն, եղբայրություն, գործակցություն, անոնց մեջեն եկող երջանկություն:

Բարեկամներս, վերջին հարցումը ձեզի կուղղեմ: Մեր տկարության պահերը պատմության մեջ այն պահերը եղած են, երբ թշնամին ոչ թե միայն մեզ ջարդած է, ոչ թե միայն քանդած է մեր շինած տուները, եկեղեցիները, գյուղերը, քաղաքները, բերդերը, կամուրջները կամ աղբյուրները, մեր տկար պահերը եղած են այն ատեն, երբ թշնամիները հաջողած են մեզ իրար դեմ հանել, պառակտել: Պիտի ժայռ դառնանք, ժայռ բոլոր տեսակի նենգ այն փորձերու դեմ, որ մարդիկ մեզի դեմ կուղղեն: Փխրուն հող չկարծեն մեզ: Եվ իսկա՛պես, երբ մեր վերստին ընտրյալ Նոր Նախագահը իր երդման արարողությունը կկատարեր Երևանի խորհրդարանի սրահին մեջ, և երբ որ ես, սրբազաններով միասին գացի, երբ ինքը դրավ իր ձեռքը հայոց ձեռագիր Աստվածաշնչի վրա և իր երդումը կատարեց, այն ատեն, երբ ինծի խոսք տրվեցավ, որ ես Հայ Եկեղեցվո խոսքը բերեմ հայ ազգի այդ կարևորագույն պահերեն մեկուն, մեջ բերեցի խոսք մը, որ այստեղ կուզեմ կրկնել, որը Ձեզմե ոմանք թերևս կարդացեր են: Նալյան Հակոբ Պատրիարք 18-րդ

*դարում, ասկե 220 տարիներ առաջ գրած է.* «Անմիաբանությամբ մեծերը կփոքրանան, միաբանությամբ փոքրերը կմեծնան»*: Ձեռքս ձեռքիդ մեջ ավելի ուժեղ է: Ձեռքս իմ ձեռքի մեջ միայն տկար է, որքան ալ զորավոր ըլլա: Այս գիտակցությունն է, որ մեր Նոր Հայաստանի և վերանորոգյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատգամն է մեր ողջ հայությանը: Ամեն մեկը իր քրտինքեն կաթիլ մը, իր ձեռքի ուժեն բաժին մը ընծայե Եկեղեցիին, ազգին, մշակույթին, դպրոցին, որպեսզի անոնց ապրելովը մենք կարենանք ուժեղ մնալ և ապրինք՝ աշխարհի մեջ պատիվ շահելով:*

*Ես կուգամ ձեզի ոչ ուղղակի Էջմիածնեն: Կգամ ձեզի՝ անցնելով Հռոմեն: Հռոմի չորս օրերու ընթացքին ահավասիկ անոնք, որոնք ներկա էին մեզ հետ, մեր սրբազանները — վկաներն են, թե Հռոմեական Կաթողիկե տարածում եկեղեցվո Պետը ինչ հարգանք ունի, իրապես ինչ մեծ համարում ունի հայության նկատմամբ, գիտե անոր տառապանքը: Երեկ առավոտ ժամը մեկին, երբ Քվիրինալե պալատին մեջ 45 վայրկյանի հանդիպում մը ունեցա այս երկրի՝ Իտալիո նախագահին հետ, «Գիտեմ,– ըսավ,– որ դուք շատ տառապած ազգ մըն եք և մենք, աշխարհը ձեզի հանդեպ շատ մեծ պարտավորություններ ունի»: Ըսի պարոն Նախագահ, ես իբրև Նոր Կաթողիկոս, կուզեմ ձեզի մեկ բան ըսել խոնարհաբար. մենք այլևս տառապած, ջարդված, ցեղասպանության ենթարկված ժողովուրդ չենք, այդ պատկերով չենք ուզեր ներկայանալ: Հերիք է լացը՝ մենք ջարդված ենք, մենք հալածված ենք: Այսօր փառք տանք Աստուծո, որ ազատ ու անկախ երկիր ենք: Այսօր մեր դրոշակը կտեսնեք միջազգային բոլոր ժողովուրդներու դրոշներու շարքին մեջ, այսօր Հայաստան, Արմենիա բառը կկարդաք ամեն տեղ: Գիտնանք այդ անունին համապատասխան կեցվածք ունենալ և ոչ թե զանազան հարցերով այս աքանչելի, գեղեցիկ օրը, որ բացված է քսաներորդ դարու վերջավորության, մենք մեր ձեռքերով պղտորենք:*

*Ես, հետևաբար, եկած եմ այսօր ձեզի մեր «անլռելի զանգակատունին»՝ Սուրբ Էջմիածնին, հոգևոր «անլռելի զանգակատունին» ղողանջը դառնալու և ըսելու ձեզի՝ ամուր մնացեք, տոկուն մնացեք: Ձեր ազգը Աստուծո շնորհքով այսօր մտած է նոր ճանապարհի մը մեջ, նոր կյանքի մը մեջ: Քրիստոսի բերած կյանքն է, որ վերստին կարժևորվե: Դուք բոլորդ ալ ձեր մասնակցությունը լիովին բերեք, որպեսզի երջանիկ ըլլաք և անմահության ճամփուն ճամփորդը մնաք ձեր կյանքին ամբողջ ընթացքին:*

*Բայց կուզեմ քանի մը խոսք ես ըսել մեր սիրելի եղբորը, որ կներկայացնե Միլանոյի կարդինալ Մարտինիին:*

*Սրբազան.*

*Անձնապես և խորապես զգացված եմ հոս Ձեր ներկայությենեն, որ կներկայացնե այս շրջանին Կաթոլիկ Եկեղեցին: Ձեզ շնորհակալություն կհայտնեմ և կխնդրեմ, որ իմ ամենաանկեղծ և եղբայրական ողջույնները փոխանցեք իմ սիրելի եղբորը՝ կարդինալ Մարտինիին:*

*Վաղը երրորդ անգամը ըլլալով, գինքը պիտի տեսնեմ և գիտեմ, թե ինչ խորիմաստ տեղ կգրավե հայ ժողովուրդը իր սրտին մեջ:Հայ ժողովուրդը, ըլլա Իտալիայի կամ ուրիշ երկիրներուն մեջ, Հայաստանեն դուրս, հայը միշտ հավատարիմ կմնա բոլոր այն երկիրներուն ու ազգերուն, որոնք զինքը ուրախությամբ և Աստուծո սիրով ընդունեցին:*

*Համամիութենականությունը (էկյումենիզմը) եկեղեցվո պաշտոն մը չէ, այլ արմատացած է եկեղեցվո էության մեջ, որովհետև Աստուծո Միածին Որդին մեզի ուսուցանեց, որ եթե մենք մեկ չենք կրնա ըլլալ, ապա կկորսնցնենք մեր վստահությունը, որովհետև մենք չենք կրնար բազմաթիվ և բաժնված անձեր և եկեղեցիներ ներկայացնել Քրիստոնեական Հավատքի մեջ (Տե՛ս Հովհ. ԺԶ 11): Քրիստոնեական Հավատքը այն Աստվածային ուժն է, որ մեզ կմիացնե: Կրնանք մշակույթի տարբերություններ և տարակարծություններ ունենալ Աստուծո արարչական ծիրին մեջ, բայց տարբերություն և բաժանում երկու բավական տարբեր բառեր են: Ուստի Ձեր ներկայությունը առավել ևս Համամիութենական գույն մը կավելցնե մեր աղոթքին ու պաշտամունքին այս առավոտ այս եկեղեցվո մեջ: Եվ այն եղբայրական ոգիով Ձեզ կողջունեմ, ինչպես ողջունեցի եղբորս՝ Նորին Սրբության՝ Հովհաննես-Պողոս Բ Պապը Հռոմի մեջ: Եվ, կարծեմ, պատմական պահ մը եղավ Հռոմի Կաթողիկե և Հայ Առաքելական եկեղեցիներուն տարեգրության մեջ, այն միատեղ հայտարարությունը, որ ստորագրեցինք առջի օրը:*

*Ուրեմն, այս ոգիով Ձեզ կողջունեմ և կհայտնեմ իմ եղբայրական ջերմ սերն ու խորին շնորհակալությունը և կուզեմ, որ այդ եղբայրության զգացումը մեր երկու ժողովուրդներու միջև մնա միշտ ամուր, անխախտելի և նաև ստեղծագործական մարդկության օգտին ու մարդկության մեջեն Աստուծո փառքին համար հավիտյանս հավիտենից. ամեն»:*

*Մատուցվող Պատարագի ընթացքում Վեհափառ Հայրապետի ձեռամբ Սուրբ Հաղորդություն ստացան մեծաթիվ հավատավոր միլանահայեր: Հավարտ Սուրբ Պատարագի Նորին Սրբությունը միլանահայ համայնքի հոգևոր հովվին՝ արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Սարգիսյանին նվիրեց արծաթյա սկիհ, որպեսզի այնտեղ պահելով Երկնառաք Վարդապետի մարմինն ու արյունը դարձած հացն ու գինին, Աստվածորդու հետ միշտապես կգան նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայությունը:*

*Սուրբ Պատարագին ներկա էին Միլանի արքեպիսկոպոս կարդինալ Կառլո Մարիա Մարտինիի ներկայացուցիչ Ֆրանչեսկո Կոկոպալմերիո եպիսկոպոսը, Էկումենիկ հարաբերությունների բաժնի վարիչ հայր Բուտինին:*

*Պատարագի սրբազան արարողությունից հետո, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի խաղաղություն եկեղեցու բարերարների, նրանց ծնողաց և գերդաստանների հոգիների:*

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ
### Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Նույն օրը, կեսօրին, «Ռամադա» հյուրանոցի շքեղավարդ սրահներից մեկում տեղի եկեղեցական համայնքի կողմից, ի պատիվ Վեհափառ Հոր, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում էին համայնքի 150 գործուն անդամներ:*

*Համատեղ աղոթքից հետո, Վեհափառ Տերն օրհնեց սեղանն ու սեղանակիցներին: Ճաշկերույթի ընթացքում ողջույնի խոսքեր*

*ասացին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը և Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը: Ապա բոլոր ներկաներին իր խոսքը հղեց Նորին Սրբությունը՝ մանրամասնելով Հայոց Եկեղեցու պատվիրակության ներկա այցելության նպատակն ու այդ նպատակի առանձնակի կարևորությունը, ինչպես նաև միլյանահայության ներդրումները Առաքելահիմն մեր Եկեղեցու բարգավաճման գործում.*

*«Սիրելի եղբայրներ և քույրեր.*

*Իմ խոսքին անցնելե առաջ, խորանին վրա երկու անգամ իմ սրտի խոսքը ձեզի ուղղելեն ետքը, այսպես նստեր ենք միասին և Սիամանթոյի անմաշելի բառերով պիտի ըսեմ, երբ «քառասուն անձ մեկ տան զավակ բոլորակի նստեր ենք, յուրաքանչյուրն մեկս մեկու նայվածքին մեջ իր դրախտը կտեսնե»: Ասկե ավելի խորունկ բանաստեղծություն ես ո՛չ ֆրանսիականի մեջ տեսած եմ, ո՛չ անգլիականի և ո՛չ ալ ուրիշներուն: Եթե կա իտալականին մեջ, ես տեղյակ չեմ, ներողամիտ կըլլաք: Հայը հայուն աչքին նայի և միայն դրախտ տեսնե, այս է հայության ճշմարիտ սահմանումը: Հայը հայուն ձեռքը բռնե և Աստուծո ձեռքը զգա, Հայաստանի ձեռքի հետ միասին՝ այս է միակ սահմանումը: Այս իմաստով կողջունեմ ձեզ, այս միասնությունը, կողջունեմ այս սրտբացությունը: Այստեղ ոչ խոսքի առատությունն է կարևորը, ոչ ձևականությունն է, մեր միասին ըլլալն է և մանավանդ ինձ համար, որ առաջին անգամ այս գաղութը չէ որ կուգամ, բայց առաջին անգամն է, որ կուգամ իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս: Դուք կտեսնեք խորանին վրա մեր զգեստները, կտեսնեք մեր զարդերը, կտեսնեք ծիրանին, բայց անոր ետին ինչ կա, դժվար կտեսնեք:*

*Այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը այնպիսի նոր կացության մը առջևը կգտնվի, որ ես իմ ուսերը, իմ կարողությունները շատ տկար կզգամ՝ այդ ամբողջ բեռը կարենալ վերցնելու համար: Անցյալները, երբ Հայաստանին Նախագահի հետ կխոսեինք միասին, երբ ինքը իր երդումի արարողությունը կատարելեն ետքը, հաջորդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եկավ՝ իր հարգանքը մատուցելու մեր Սուրբ Եկեղեցվո կենտրոնին, այն ատեն ըսի, թե պարոն նախագահ, կարծեմ թե քու գործը քիչ մը ավելի դյուրին է, քան իմս: Դուն երեք ու կես միլիոն ժողովուրդին պետն ես քաղաքականորեն, մեկ օրենք կհանես բոլոր հայերուն համար: Մեկ խոսքով, հստակ են քո սահմանները: Բայց ես շատ թիվով ժողովրդին հոգևոր պետն եմ՝ մեկը կապրի Հայաստան և Արցախ, մեկը կապրի Ռուսաստան, մեկը կապրի Ուկրաինա: Մեկուն համար եկեղեցի շինեցինք Սամարղանդ, ուրիշին համար եկեղեցի շինեցինք Օդեսա, և՛ Կրասնոդար, և՛ Սոչի, և՛ Վրաստան, Ախալքալակ, Ախալցխա՝ Ջավախք նահանգին մեջ, կան տակավին արտասահմանի երկիրները, որ կճանչնաք: Ամեն մեկը մի տեսակ կացության մեջ կապրի, ամեն մեկը մի տեսակ կացություն կդիմագրավե, մեկը լեզվեն կզրկվի, մեկը փոքր կազմեն, թիվեն կտառապի, մեկ խոսքով՝ բազմատեսակ կացություններու առաջ կկանգնինք: Բայց այս մեր պարտքն է:*

*Եվ եթե մարդ, ով կուզես ըլլա, ընտանիքի հայրեն, զավակեն մինչև ամենեն պարզ պաշտոնյան, եթե պատասխանատվության զգացում չունենա, մարդ չէ: Եթե պատասխանատվություն չկա, մեր կյանքը անիմաստ է: Եվ շատ աղվոր խոսք մը կա, որ ես Հայաստանին մեջ կըսեմ հաճախ՝ այն, որ ազատությունը ունինք, բայց ազատությունը պատասխանատվության սկզբունքով կարժևորվի: Ազատությունը ձեռք բերինք, փառք Աստուծո: Կացությունները այնպես ստեղծվեցան, որ արթուն գտնվեցանք: Մենք հերոսներ տվինք, ֆեդայիններ տվինք այս անկախության հասնելու համար: Այսօր ունինք զայն, արժեցնենք պատասխանատվությամբ և ոչ թե ընդհանուր խոսքերով, որոնք ոչ մեկ արժեք ունին, որովհետև կյանքեն հեռու են այդ խոսքերը: Ի՜նչ աղվոր խոսքեր ունի մեր ժողովուրդը՝ «լեռը նստիր, ծովը գովե, ծովը նստիր, լեռը գովե»:*

*Մեկ խոսքով մենք այսօր կգտնվինք մեր հայության պատմությանը մեկ բացառիկ նոր ժամանակաշրջանի առջև և՛ դրական կողմերով, և՛ ժխտական: Զըսի փափուկ, հարթ, գեղեցիկ ճանապարհներու վրա, բայց վճռական կացության առջևն է:*

*Այսօր ես, որ մեր ժողովուրդին կամքին ընդառաջելով և անոր մեջ Աստուծո կամքը տեսնելով, այս ծանր պատասխանատվությունը ուսերուս վրա դրած եմ, այդ պատասխանատվությունը բոլորս միասին պիտի տանինք՝ հոգևորական մեր եղբայրներով և աշխարհական մեր ժողովրդով: Եվ այստեղ է, ուր ըսելիք մը ունիմ մասնավորաբար Միլանոյի մեր համայնքին: Ինծի անծանոթ չէ Միլանոն: Եղեր եմ Միլանոյում, եղեր եմ իբրև անձնական բարեկամ ձեզմե շատերուն: Այսօր ամենեն մեծ ուրախությունը, որ լսեցի, ոչ թե լոկ լսեցի, կուզեմ ձեզի ալ փոխանցել, իմ ուրախությունը, այն է, որ որոշ տարակարծություններ, դժվարություններ, որոնք առաջ եկած էին այս եկեղեցիին, այս փառավոր եկեղեցիին շուրջը, փառք Աստուծո,ատոնք բոլորը փոշիի պես գացին, ամպի նման ցրվեցան և հայության միության արևը անգամ մը ևս ծագեցավ: Ես շնորհակալ եմ Դիարբեքիրյան մեծ գերդաստանին, Հովակիմյաններուն, բոլորիդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իշխանության ներքև: Այլևս այդ բոլոր փուշերը և փոշիները վերցուցած, կպասեմ ձեր բոլորիդ մասնակցությանը: Եվ կբավե, որ այլևս մենք շատ խոսինք Եկեղեցիի մասին: Շատ կխոսինք: Հիմա պետք է Եկեղեցի ըլլանք: Եկեղեցին պետք է լեցնենք:*

*Ես այստեղ ճանչցած եմ այնպիսի նվիրյալ անձնավորություններ, որ այս եկեղեցին և այս համայնքը պահած են: Առտու ես հիշեցի քանի մը անուններ, որոնք երկինքեն կնային մեզի: Այսօր որքան ուրախ եմ, որ այս սեղանին շուրջ ես կտեսնեմ այնքան անձեր, որոնք նվիրված են այս եկեղեցիին: Ես այս գաղութը ճանչցա իսկապես, երբ տիկին Մնդիկյանն էր, տիկին Իպիշյանն էր, Բամբակյաններ, Մանուկյաններ, Ալեքսանյաններ, Հյուսիսյաններ, Սրապյաններ և տակավին ուրիշներ, բոլորն ալ, այլևս անուններ չտանք, կհասկնաք ինչ կըսեմ: Այլ խոսքով, կտեսնեմ երիտասարդներ կան, կտեսնեմ այս երիտասարդները. այս միասնությունը աշխատեցեք ամուր պահել: Մեկ խոսքով եկեք շենացնենք այս գաղութը:*

*Սիրելի եղբայրներ և քույրեր, ես ձեզի կուզամ այսօր այն Հայաստանեն, որ մեր օրրանը եղած է այսքան դարերու ընթացքին: Այստեղ ես կողջունեմ ոչ միայն Միլանոյի մեջ ապրող հայերը, այլ նաև թե՛ Հռոմ և թե՛ այստեղ*

*եկած Հայերը: Հայեր եկած են Փարիզեն, Հայեր եկած են Անգլիայեն, Արժանթինեն, անոնցմե ոմանց մանկութենեն ես ճանչցած եմ: Եվ Հարցում մը կուտամ ինծի՝ ո՞ւր էինք, ո՞ւր եղանք: Ես կՀիշեմ իմ մանկությունը: Ամեն մեկը ձեզմե թող իր կենսագրությանը նայի՝ ո՞ւր էինք, ո՞ւր Հասանք: Խորհուրդ մը կա կյանքին մեջ:*

*Հենրիկ Սենկևիչը գիրք մը գրեց՝* «Յո՞ երթաս» *: Ես ալ, եթե գիրք մը գրելու ժամանակ տաք ինծի, պիտի ըսեմ* «Յո՞ երթաս, ժողովուրդ հայոց»*: Չգիտեմ, չեմ ալ կրնար գիտնալ, բայց մեկ բան գիտեմ, որ կչարժիս, դուն պիտի ճշտես ուղղությունդ:*

*Այսօր նույն օդը կշնչենք, նույն Հովը կչարժի, կզգա՞նք, թե ուր կտանի մեզ, կզգա՞նք, թե այդ Հովը Աստուծմե եկած Հովն է, որ մեզ ազատության նոր ուղի բացած է, բայց մենք պիտի կերտիչները ըլլանք մեր նոր կյանքին: Ճարտարապետով եկեղեցի չի շինվիր, ոչ ալ տուն կշինվի, ոչ ալ Հյուրանոց կշինվի: Ճարտարապետը կգծե: Աստված է ճարտարապետը կյանքին: Բայց մենք պետք է գիտնանք որմնադիր ըլլալ, ատաղձագործ ըլլալ, աշխատիլ կամքին Համաձայն ճարտարապետին: Եվ Ճարտարապետն այսօր Հայոց պատմության մեջ ազատության նոր շրջան մը բացած է և այդ ազատության շրջանին, ձեզմե շատ ավելի լավ գիտեմ, թե ինչ են մեր թերությունները, ինչ են մեր տկարությունները, ինչ են մեր պակասները Հայաստանին մեջ: Հոս նստելով դուք չեք կրնար գիտնալ: Ո՛չ ձեզ կմեղադրեմ, ո՛չ զիս կգովեմ: Աս է կյանքի բնական երևույթը: Բայց պետք է որ մենք, եթե նույնիսկ մեր մարմնին վրա վերքը տեսնենք, վերքը դարմանելու մասին մտածենք և ոչ թե վերքին մասին ուրախությամբ ճառենք: Եթե երբեք այսօր մենք թերություն կտեսնենք Հայաստանի մեջ, այդ թերությունը դարմանելու Համար պիտի խոսինք և ոչ թե այդ թերությամբ պիտի ուրախանանք, կամ պիտի գոՀանանք, կամ բան մը չընելու Համար Հոգեկան տրամադրություններ պիտի ստեղծենք:*

*Երբ որ Հայաստանի Հանրապետության նախագաՀը իր ձեռքը կդներ Աստվածաշունչին վրա և երդում կըներ և որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս ես կխոսեի, այն ատեն մեր ժողովուրդին և բոլոր Հրավիրյալ օտար դեսպաններուն և մեր պառլամենտի, մեր խորՀրդարանի անդամներուն ըսի՝ մեր երկիրը «մեղր ու կարագ» չէ: Սուրբ Գրքի խոսքն է այս մեկը: Կյանքը այնպես է, որ այն պայմանները, որոնք ստեղծված են մեր շուրջը, մեզ թույլ չեն տա, որ մենք կարենանք շատ շուտ վերականգնիլ, բայց պետք է ընենք մեր գերագույն ճիգը:*

*Պետությունը ինչ կընե, իր պարտավորությունն է: Բայց Եկեղեցին ինչ պիտի ընե, ատիկա իմ ու իմ եղբայրներուս և ձեր բոլորիդ գիտնալիքն է: Եկեղեցին այսօր պետք է որ մեր Հայաստանի ժողովուրդին մեջ քրիստոնեությունը կյանքի վերածե: Մանուկյան ընտանիքը Հայոց պատմությանը մեծագույն ծառայություն մը մատույց քսանչորս Հատոր գիրք տպեց Հայաստանի ճարտարապետությանը վերաբերող, աքանչելի Հատորներ: Դեռ անցյալ օր պատկերները տեսա, եկեղեցիները, տասներեքերրորդ դար, իններորդ դար, տասնմեկերորդ դար, յոթերորդ դար, ութերորդ դար: Լավ, եղեր են, բայց այսօր ո՞ւր են: Այսօր ի՞նչ են, ավերակ են: Հավատացեք, սիրտս կսեղմվի: ԿՀիանան օտարները. ի՜նչ գեղեցիկ կամարներ են, ի՜նչ ճարտարապետական ոճ է: Այո, մեր Հայրերը շիներ են, բայց այսօր աղոթք*

չկա, քարերը քանդված են, խոտ է գմբեթին վրան, ջուրը կհոսի մեջեն: Եթե այս է մեր փառքը, մեր հայրերու շինածովը մենք պիտի մխիթարվինք, թե՞ ատոնք պիտի նորոգենք, պիտի աշխուժացնենք, պիտի եկեղեցիի վերածենք, աղոթքը պետք է այնտեղ վերակենդանանա, որպեսզի Շնորհալիի «Առաւօտ լուսոյ»-ն երգվի, որպեսզի այնտեղ մեր շարականներու գետին մոտ շուշաններ ծաղկին, ինչպես կըսե Վահան Թեքեյան բանաստեղծը.

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ
Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հուր ու բոց,
Ու տօթակէզ ցերեկին՝ անտառ մըն է ըստուերոտ,
Ուր շուշաններ կը ծաղկին՝ Շարականի գետին մօտ:

Բանաստեղծի գրչին տակ կծաղկին, բայց կյանքին մեջ չեն ծաղկի: Շարական չկա, երգեցողություն չկա, երգեցող չկա, դպիր չկա, քահանա չկա, վարդապետ չկա: Քարն է, որ միայն կխոսի իր ավերակներու մեջ: Եվ մենք 1700-ամյակ կտոնենք: Երեկ գիշեր դուք մտիկ կընեիք կարդինալ Կասսիդիին ճառը «Կոլումբոս» հյուրանոցում: Տակավին իմ մտքիս մեջ երեկվան պես թարմ են բառերը Սրբազան Քահանայապետին՝ Հովհաննես-Պողոս Բ Պապին, որոնք 1700-ամյակին հանդեպ ինչ գովասանական խոսքեր ըրին: Եթե կեսը քաղաքավարություն էր, վստահ եմ, կեսը, եթե ոչ ավելին, ըմբռնում է, անկեղծություն է: Ես գացի, տաճարները տեսա Հռոմի, Լատերանի եկեղեցին տեսա, Սանտա Մարիա Մաջորեն տեսա, Սիքստինյան Մատուռը տեսա, գրադարանը տեսա, Սուրբ Պետրոսը քանի անգամ տեսա: Փառավոր է, շքեղ է, գեղեցիկ է: Հավատքին պատկերն է: Իսկ մեր ավերակը մեր ո՞ր հավատքին պատկերն է:

Ես ձեզի ըսի, հեշտ խոսքի Կաթողիկոս չեք ընտրած: Ես ձեզի միայն գովելու համար չեմ եկեր: Ծուռ նստինք ըսի, բայց շիտակ խոսինք: Եթե մեր պատկերն է այսօրվան մեր եկեղեցու պատկերը, ապա այդ պատկերով մենք հպարտություն չենք կրնար ունենալ: Երբ ես՝ ձեր Կաթողիկոսը, Ռումանիո քսան միլիոն քրիստոնյաներու պետն եղող Թեոկտիստ Պատրիարքը պիտի տանի և Խորվիրապի վանքը ցույց պիտի տա այն ավերակյալ վիճակին մեջ, այն պատերուն ճեղքվածքներովը, որոնք կան վաղվան վտանգը մեզի բերող, ասիկա ինչպե՞ս կրնա հանդուրժել Հայոց Կաթողիկոսը: Ատով պիտի հպարտանա՞ և իր ժողովուրդին անունով հպարտություն պիտի ներշնչե իրեն այցելող Ռումանիո Եկեղեցիին պետին:

Ես այսօր կուզեմ ձեզի այս մասը միայն ըսել, մեր ժողովուրդի տնտեսական, ընկերային, կենցաղային, սոցիալական կացություններու մասին երկարորեն չխոսիմ, բայց այս բոլորը ըլլալով հանդերձ, իմ մոտեցումս ձեզի հետ այսօրվան հացին պես կբաժնեմ: Իմ մոտեցումս այս է. բաժակին մեկ մասը լեցուն է, բայց մեծ մասը դատարկ է, պարապ է, և մենք պետք է զայն լեցնելու մասին մտածենք և իմ կոչս ամբողջ մեր ժողովուրդին, ոչ թե միայն Միլանոյի հայությանը, այլև Հայաստանի ժողովուրդին և արտասահմանյան երկրներում ապրողներուն այս է. — մեզի արտոնված չէ շռայլություն: Ուրիշ ժողովուրդները կրնան երթալ շռայլության: Շռայլությունը, այսինքն՝ անհրաժեշտեն, վայելուչեն, գեղեցիկեն անդին ցուցադրության համար եղած սին մսխումները Աստուծո աչքին ինձի համար ընդունելի չեն: Ես կրնա՞մ մոռնալ իմ մեծ մայրս: Եթե կտոր մը հաց իյնար գետին, վերցուր, պիտի ըսեր: Հացը Աստուծո բարիքն է, մի՛ մսխեր

*գայն: Եվ մենք այնքան ավելորդ բաներու «խունկ կծխենք», այնքան ավելորդ բաներուն համար. պետք է խելացի կերպով, ներդաշնակված ձևով, ծրագրված ձևով աշխատիլ բոլորս, և՛ շատ ունեցողը և՛ քիչ ունեցողը: Բոլորս կոչված ենք մեր բաժինը բերել յուրաքանչյուրս մեր չափով, մեր ձևով մեր մասնակցությունը բերելու հայության կյանքի վերականգնումի այս շրջանին: Այս է իմ պատգամը: Եթե երբեք մենք ունեցանք շատ մեծ բարերարներ մեր ազգային կյանքի մեջ, անհատներ, կազմակերպություններ, եկեք հիմա այնպես ընենք, որ բոլորս ալ բարերար դառնանք՝ ոչ անպայման խոշոր, մեծ, ցուցական երևույթներու երթալով: Ամեն մեկը թող իր բաժինը բերե և ըսե. այս տարի, Սուրբ Ծննդյան տոներուն համար փոխանակ գեղեցիկ, նոր, շողշողուն հագուստ մը առնելու, մեկ մետր ճամփա կառուցելուն պիտի նպաստեմ Արցախի մեջ: Բան մը ընենք, որ մնանք մեր Հայրենիքին մեջ, ըլլանք մեր Հայրենիքին հետ, և այդ Հայրենիքը մեզմով զորանա: Այս տարի կրնա ըլլալ, որ ամեն մեկուն համար մեկ նշանաբան ընտրվի՝ քար մը դրվի քարի մը վրա մեր հին եկեղեցիներու նորոգության մարզին մեջ: Ես երբ Գարսկաստան գացեր էի, Սուրբ Ստեփանոս եկեղեցին այցելեցի, Սուրբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցին սահմանին վրա է, Գարսկաստանի կողմը դեպի Ազերիստան կնայի, հին եկեղեցի, փառավոր եկեղեցի: Բացեք Միլանյան մատենաշարին մեկ գիրքը Սուրբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցիին, տեսեք քանդակները, խաչքարերը: Ամեն մեկ քարի վրա գրված է մեկ տող. «այս է հիշատակ Աստվածատուրին», մյուս քարի վրա «այս է հիշատակ Խաչատուրին», և այսպես ամբողջ պատը արձանագրություններով լեցուն, ամեն մեկը իր կնիքը դրեր է այդ քարին վրա: Հետևաբար, այս գիտակցությամբ շարժինք:*

*Կուզեմ, որ թարգմաններս ըլլաք դուք բոլոր այն հայերուն մոտ, որոնք ձեր բարեկամներն են, ազգականներն են և ըսեք, որ այս տարի, մյուս տարի եկեք մենք ալ զմեզ միախառնենք մեր Մայր Հայրենիքի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերանորոգման շարժումին, մասնավորաբար նաև կրթական-դաստիարակչական մարզի մեջ:*

***

*Այսօր ուրախ լուրեր ունիմ ձեզի փոխանցելիք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը 118 ժառանգավոր սաներ հաշվող Հոգևոր Ճեմարան ունի, Սևանի կղզիին մեջ ունի 60 հոգինոց ուրիշ հոգևոր դպրանոց և Գյումրիին մեջ ունի 40 հոգի հաշվող ուրիշ դպրանոց: Այսքան երիտասարդներ կընդառաջեն Աստուծո կոչին: Պետք ունինք անոնց հարկ եղած ուսումը տալու, որպեսզի կարենան ապագային այս եկեղեցիները շնչավորել, Աստուծո հոգիին թարգմանները ըլլալ: Շատ բան կա խոսելիք, շատ բան կա ընելիք, ես այս մեկ ու կես օրը ձեզի հետ կուզեմ ըլլալ, և որևէ մեկը, որ կուզե որևէ մեկ հարցի մասին տեղեկություն ունենալ, թող չքաշվի: Երբ որ ազգին և եկեղեցիին համար է, միշտ ձեզի հետ եմ, միշտ միասին ենք և միասին պիտի հառաջ երթանք: 15 դեկտեմբերը, այս օրը՝ կիրակի, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի պատմության մեջ պիտի արձանագրվի որպես «Միլանոյի օր»:*

*Հավարտ իր խոսքի, Գարեգին Ա Կաթողիկոսը Սուրբ Սահակ-Մեսրոպ շքանշանով պարգևատրեց հայ մշակույթի տարածմանը*

*և ծանոթացմանը, ինչպես նաև Միլանի հայոց համայնքին մշակութային մեծ նպաստ բերած 90-ամյա Հրանտ Փամբակյանին: Ի դեպ հայ ժողովրդի նվիրյալ զավակը պարգևատրվել է նաև Սուրբ Ներսես Շնորհալու շքանշանով դեռևս երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ձեռքով:*



Շքանշանի հանձնման պահին

### *ԱՅՑ ՄԻԼԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ*

*Դեկտեմբերի 16-ի առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Միլանի հռչակավոր Մայր Տաճար* (Duomo), *որի մուտքին Նորին Սրբությանը դիմավորեց Միլանի արքեպիսկոպոսը՝ կարդինալ Կառլո Մարիա Մարտինին:*

*Միլանի թեմը, որ աշխարհում ամենամեծն է, ունի շուրջ 5,5 միլիոն հավատացյալ, ինչպես նաև 3.000 հոգևոր սպասավորներ: Թեմն ունի նաև 1450 ծուխ, 400 մանկապարտեզ, դպրոց և համալսարան:*

*Մայր Տաճարում Վեհափառ Հորը դիմավորեցին նաև Միլանում ապրող և գործող Ռուս, Ղպտի, Ռումեն, Հաբեշ և մյուս քույր Եկեղեցիների հոգևոր հովիվները, ինչպես նաև այլ հարանվանությունների ներկայացուցիչներ:*

*Հանդիսավոր թափորի ուղեկցությամբ մուտք գործելով եկեղեցի՝ Վեհափառ Տերն իր շքախմբի հետ բարձրացավ Տաճարի Ավագ Խորան: Համատեղ աղոթասացությամբ Ամենակարող*

*Տիրոջը փառաբանելուց հետո, ներկաներին իրենց ողջույնի խոսքը հղեցին նախ կարդինալ Կառլո Մարիա Մարտինին և ապա Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառը:*



Վեհափառ Հայրապետը Կարդինալ Կառլո Մարիա Մարտինիի հետ մուտք է գործում Միլանի Մայր Տաճար

*Հավարտ երկուստեք ասված խոսքերի, իտալերեն և հայերեն լեզուներով հնչեց Տերունական աղոթքը: Հայերեն լեզվով «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» տաղի երգեցողության ընթացքում Հայ Եկեղեցու պատվիրակության ներկայացուցիչները և կարդինալը ողջագուրվեցին:*

*Անուհետև Սուրբ Աստվածածնին նվիրված խորանի առջև ներկաները երգեցին «Զանձառելի լուսոյ Մայր» շարականը:*

*Այստեղից Հայոց Առաքելական Եկեղեցու պատվիրակությունն առաջնորդվեց դեպի Մայր Տաճարի Ավագ խորանի տակ ամփոփված 16-րդ դարի կարդինալ Սուրբ Կառլո Բոռոմեոյի դամբարան: Սրբի բարեխոսությունը հայցելուց հետո, պատվիրակությունը բարձրացավ եկեղեցու առաջնորդարան, ուր առանձին մասնավոր 30 րոպեանոց կրուց տեղի ունեցավ Նորին Սրբության և Միլանի արքեպիսկոպոսի միջև: Ապա փոխանակվեցին հուշանվերներ:*

### *ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅ ՏՈՒՆ»*

*Կեսօրին, հյուրանոցի իր հարկաբաժնում միլանահայության ներկայացուցիչների հետ հանդիպումներ ունենալուց հետո,*

*Վեհափառ Հայրապետը երեկոյան ժամը 19.30-ին իր շքախմբով այցելեց Միլանի «Հայ Տուն», որ հավաքավայրն է ողջ հայության:*

*Մշակութային, ազգային և ընկերային այս կենտրոնը հիմնվել է 1953 թվականին:*

*Այստեղ Հայոց Վեհափառը հանդիպեց միլանահայության հետ, տվեց իր հայրական օրհնությունը և այսօր հայությանը հուզող հարցերին անդրադարձավ կրույց-դասախոսությամբ, ուր առանձնակի շեշտեց.*

*«Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան վարչություն Իտալիո Հայոց միության և շատ սիրելի ունկնդիրներ. Այսօր ես ոչ դասախոսություն մը տալու նպատակով եկած եմ այստեղ և ոչ ալ ճառ մը խոսելու նպատակով: Եկած եմ ձեզի հետ զրույցի նստելու, զրուցելու: Հետևաբար, իմ խոսքս պիտի ջանամ կարճ ընել և հետո լսելու նաև ձեզ՝ ըլլա հարցումի ձևով, ըլլա զանազան հեռանկարներու համար ձեր մտածումները ինձի փոխանցելու նախանձախնդրությամբ: Մեկ խոսքով, զրույցի վերածենք այս երեկոն և ոչ թե բանախոսության:*

*Ես կուզեի առաջին հերթին, իբրև մտածման սկիզբ, հարցում մը ուղղել, որ ես հաճախ ինքս ինձի կուղղեմ, այսօր ալ ձեզի կուղղեմ հավաքական ձևով: Աշխարհին մեջ մարդ էակին ամենեն բարձր արտահայտությունը այն է, երբ մարդը կարող կըլլա հարցնել ինք իրեն՝ ո՞վ եմ ես: Ինքնաճանաչումը, ինքզինքին հարազատ ըմբռնումը, ըլլա իբրև անհատ և ըլլա իբրև հավաքականության մեկ անդամ, ամենեն մեծ սկզբունքն է մարդկային կյանքի հաջողության և այդ կյանքի նպատակին իրագործման: Եթե բանանք Աստվածաշունչը այնտեղ կգտնենք հետևյալ խորիմաստ բառերը. «*Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» *(ԱՌԱԿ. Ա 1):*

*Առաջին տողերն են ասոնք, որոնք հայերեն գիրով գրված են պատմության մեջ: Երբ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գիրը գտավ և Եդեսիայեն եկավ՝ գիրը իր հետ բերելով, որպես փորձ, ուզեց Աստվածաշունչեն հատված մը թարգմանել, այդ հատվածը եղան այդ տողերը:*

*Աշխարհի ամենեն մեծ իմաստուններեն մեկը ճանչցված Սոկրատը, երբ տեսավ, որ հույն փիլիսոփաները՝ Հերակլիդեսը, Պյութագորասը և ուրիշներ, աստղերու մասին գաղափարներ կարտահայտեին, տիեզերքի կազմության մասին գաղափարներ կհայտնեին, դարձավ և օր մը ըսավ՝ «եկեք փիլիսոփայությունը աստղերեն բերենք, մարդոց կյանքին մեջ գործածենք: Փիլիսոփայությունը, իմաստության որոնումը, աստղերու ստուգության հետ կապված չէ: Ինքնաճանաչումի հետ կապված է: Դելֆիներ քաղաքի մեկ տաճարին վրա տող մը կարդացած էր Սոկրատը, այդ տողը ըրավ իր փիլիսոփայության նշանաբանը՝ «ՃԱՆԻՐ ԶՔԵԶ»:*

*Ձեզի պարզ օրինակ մը տամ: Երեխային կրակը ինչ է բացատրելը ավելորդ է: Տեսականորեն ի՞նչ պիտի ըսես. կրակը կվառե՞: Փոքրիկը ինչպես պիտի հասկնա: Բայց թող երկնցնե ձեռքը, այն ատեն կհասկնա և կքաշե ձեռքը, որովհետև զգայարանական ազդեցությունը իր մեջ կթարգմանվի իբրև չարիք մը և ոգին կը փախի: Տեսական ճանաչումը ուրիշ է, կյանքին մեջ ընդունված ճշմարտությունը ուրիշ է: Մեկը իրական՝*

պրակտիկ ճշմարտությունն է, մյուսը թեորիկ՝ տեսական ճշմարտությունն է: Եվ մենք այսօր ամենեն ավելի պետք ունինք իբրև ազգ, իբրև անհատ այդ իմաստությունը գտնելու, թե մենք ո՞վ ենք, ո՞ւր ենք, ի՞նչ ենք, ինչո՞ւ ենք ինչ-որ ենք և ինչո՞ւ չենք այն, ինչ-որ կուզենք ըլլալ:

Այսօր, եղբայրներ և քույրեր, մենք այդ հարցումը նոր ձևով կդնենք: Եթե ես իմ այժմ երկնաբնակ հայրիկիս հարցնեի, թե ո՞վ էր ինքը, ի՞նչ էր ինքը, տարբեր պատասխաններ պիտի տար ինձի, քանի որ կյանքի պայմանները այնպես էին բերած, որ ինքը Թուրքի յաթաղանը տեսած էր, կյանքին մեջը Նեղությունը զգացած էր, զրկվածությունը ցմրուր ապրած, անոթությունը՝ դառնորեն ճաշակած էր և իր մեջ իր ինքնության ըմբռնումը իր փորձառության տված տարրերով էր սնուցված: Երբ որ ես երիտասարդ վարդապետ էի, քսան տարեկան, եթե հարցնեին, թե ես ո՞վ եմ, այն ատեն ուրիշ ձևով կըմբռնեի ինքզինքս: Ո՛չ թե հակադիր, ո՛չ թե ընդդիմադիր ձևով այսօրվանին, բայց ուրիշ ձևով, որովհետև փորձառությանս դաշտը այս էր: Եվ այսօր, 45 տարիներ ետք, ուրիշ ձևով կըմբռնեմ: Ամեն մարդ այդ հարցումը կդնե մանավանդ Նոր տարվան առիթով: Պիտի ուզեմ, որ ամեն մեկն ալ մտածե, թե կյանքին այս դարձվածքին ինքը ո՞վ է և ի՞նչ է և ո՞ւր է:

Այսօր ես կուզեի ձեզի երկրորդ մտածում մը փոխանցել, այն է, որ մենք այսօր իբրև հայ, եթե ժամանակի Նշանները կարդալ գիտենք, եթե մեկը Նշանները, այսինքն, ինչ կանցնի-կդառնա աշխարհիս մեջ, ճիշտ չի կարդա, չի կրնար ճիշտ ուղղվածություն ունենալ կյանքին մեջ: Ինչ գեղեցիկ է, դարձյալ Ավետարանեն պիտի ըսեմ: «Ցորժամ Նորա ոստքն կակղասցին, և տերևն ցցուիցի, գիտէք, թէ մերձ է ամառն» (Մատթ. ԻԴ 32), թզենիին մասին է: Սառած կըլլա թզենին ձմեռ ատեն, բայց երբ որ կսկսի կակուղնալ և կզգաս, որ տերևը սկսեր է դուրս գալ, կգիտնաս, թե ամառ է: Այդպես ալ ժամանակի Նշանները եթե կարդալ գիտնանք, ըստ այնմ ուղղվածություն կունենանք: Ես կտեսնեմ, որ Նշանները կարդալու մեր այսօրվան դասը այն է, որ մենք շատ ավելի, շատ ավելի ուժեղ ազգ ենք այսօր, քան որևէ ատեն եղած ենք: Իմ հայոց պատմությունը կարդալու եզրակացությունը այս է: Աքանչելի պահեր ունեցած ենք մեր պատմության մեջ, բայց այսօր, 1996 տարվա ավարտին, այս դարու վերջավորության, երկրորդ հազարամյակի այս վերջին տասնամյակին, եթե Նստինք և հաշվենք, թե ո՞վ ենք, ո՞ւր ենք, ի՞նչ ենք, ես պիտի տամ ձեզի քանի մը տվյալ:

Այսօր մենք վերագտած ենք մեր թիվը և անցած ենք այն թիվը, քան ինչ որ էինք ջարդերեն առաջ: Ճիշտ է, ողբերգությունը եկավ, մեկ ու կես միլիոն զոհ տվինք, կտրվեցավ մեր մարմնի մեկ մասը, բայց մարդուն տեղ, մարմնին տեղ Նոր մարդ եկավ, փառք Աստծու: Մայր Հայաստանին և ուրիշ երկիրներուն մեջ աճեցանք մենք: Տեղ փոխեցինք, Նոր տեղ եղավ Բյուզանդիոնը, հայեր Նվաճվեցան, ուրիշ տեղ գացին, տեղ եղավ Լեհաստանը, ուր հայեր կորսվեցան, Եգիպտոս աքանչելի գաղութ մը ունեինք, փոխադրվեցավ: Օր մը ինձի պատահեցավ դեպք մը, այդ դեպքը ձեզի պատմեմ: 1963 թվականն էր, ասկե 33 տարիներ առաջ, ես ալ վարդապետ էի դեռ, գացեր էի Մոնրեալ, միջեկեղեցական մեծ ժողով մը կար, ես ալ այդ ժողովին կմասնակցեի: Հայերը փայտե եկեղեցի մը ունեին, փոքրիկ գաղութ մըն էր և ամեն ուրբաթ կերթայի, դասախոսություն կտայի և ամեն մեկ շրջանեն եկող հայերը այդ ուրբաթ օրը իրենց շրջանին

կերակուրը կպատրաստէին, և գաղութը միասին ընթրիք մը կընէր: Օրինակի համար օր մը եգիպտահայերը պատրաստեցին, օր մը լիբանանահայերը պատրաստեցին: Այսպէս ամէն մարդ կպատրաստէ իր տեղին կերակուրը: Զգացի, որ գաղութին մէջը որոշ տարակարծութիւններ, այլեայլումներ յառաջ եկած են: Ելայ. գրատախտակ բերել տըվի: Եվ ըսի՝ այս գրատախտակին վրա պիտի գրեմ բառեր՝ եգիպտահայ, տակը՝ յունահայ, տակը՝ տաճկահայ, տակը՝ ռուսահայ, տակը՝ լիբանանահայ, տակը՝ սուրիահայ և այսպէս և ուղղահայաց գիծ մը պիտի գծեմ: Կտեսնեք, որ այստեղ բառերը կփոխվին. մեկը կըսյա Եգիպտոս, մեկը՝ Հունաստան և այլն, բայց հոս մեկ բառ կմնա՝ հայ: Ձեր սիրտը ո՞ր կողմն է: Եվ հետո ըսի՝ հիմա պիտի գծեմ հորիզոնական գիծ մը և տակը պիտի գրեմ կանադահայ: Հայոց պատմության մեջ ե՞րբ կար կանադահայ, բառարանին մեջ ավելցավ: Այս տեղը ուրիշ անուն մը եկավ, բայց հայը հայ ըլլալեն չդադրեցավ:

Ուրեմն, մեր ինքնության մեջ երկու տարրեր կան. մեկը, ինչ որ բոլորիս կպատկանի ժառանգված մեր էության մեր հայրերեն, մեր պատմութենեն, մեր լինելութենեն, մյուսը այն, ինչ որ կյանքի պայմանները կբերեն: Այսօր կխոսեի բարեկամներուս հետ: Հիշեցի Եթովպիան: Ես եղեր եմ երեք անգամ: Ուր էինք և ուր ենք: Մեկ մասը կշարժի: Ատոնք պարագայականներն են սփյուռքին: Մնայունը Հայաստանն է: Ուր էինք. 1894–95 թվականներուն՝ Սասունի, Մուշի, Տարոնի մեջ սուլթան Համիդը երեք հարյուր հազար հայ ջարդեց. ապա 1909 թվականին պատահեցավ Ադանայի աղետը և հետո եղավ ջարդը: Արևելյան Հայաստանն ալ ոկիզբը պարսկական իշխանության ներքև, հետո ռուսական իշխանության ներքև խանություն մըն էր և հետո ազատագրության շարժումը տարածվեցավ հայության մեջ: Այդ պատերազմին Սարդարապատի կռիվեն ետքը կրցանք երկու տարվան անկախությունը ձեռք բերել: Հետո դեպքերը փոխվեցան: Հայաստանցի հայը ուրիշ պայմաններու տակ ապրեցավ իր կյանքը: Ուրեմն, մեր գոյության, մեր ինքնության արտաքին երեսները հաճախ կփոխվին: Ես այսօր համարձակ պիտի ըլլամ ըսելու, որ մեր հագուստները կփոխվին: Ըսել կուզեմ, փոփոխությունները արտաքին են, բայց մեր ինքնության մեջ է, որ նայինք այսօր մենք, իբրև Եկեղեցի: Փառք Աստուծո, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մեջ նոր-նոր, երիտասարդ, ճեմարանականներ կա՛ն: Ապա եթե երբեք հիշեք այն օրերը, երբ պարսկական խաները չէին թույլատրեր հայոց Կաթողիկոսներուն նույնիսկ Էջմիածին մնալ կամ Կաթողիկոսները Էջմիածին չէին մնար: Օր մը կերթային Սպահան, օր մը Կարին և կամ ուրիշ վայրեր: Հապա եթե հիշեք այն օրերը, երբ Կաթողիկոսի մը մարմնեն կտոր մը կտրեցին և իր բերանը դրին: Եթե հիշեք այն օրերը, ուր մեր պաշտելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մեջ Առաքել Դավրիժեցին կպատմե 17-րդ դարուն, կըսե մոխիր, թռչուններու ծիրտը կար խորանին վրա, Պատարագ չէր մատուցվեր, աշտանակ չկար, մոմ չկար. իսկ գիրքերը, մեր պատմական ձեռագիրները. փայտի կոճղերուն պես, փայտի կտորներու պես նետված էին փոշիներուն տակ 17-րդ դարու սկիզբ, 16-րդ դարու վերջ: Բացեք գիրքը և կարդացեք: Բայց փոխվեցավ: Եկան բարեկարգիչ դեմքեր Մովսես Տաթևացիին նման. հողը հանեց, փոշին մաքրեց, նորոգեց, տաճարները բարեկարգեց, նոր սերունդը եկավ: Գևորգյան ճեմարանը հիմնվեցավ 19-րդ դարուն: Ինչ մեծ դեմքեր տվավ. ինչպես Կոմիտասը և ուրիշները: Կյանքին

մեջ հարափոփոխ այս վիճակին մեջ մենք այսօր եթե զմեզ կբաղդատենք, այսօրվա մեր կացությամբ շատ ավելի լավ դրության մեջ ենք: Մի ուրիշ օրինակ, Կիլիկյան Աթոռը քանդվեցավ Կիլիկիո մեջ, Սիսը ամբողջությամբ, և այնպես, ծովեն դուրս նետված խեչերանքի պես ժողովուրդը դուրս դրվեց: Բայց աճավասիկ Անթիլիասի մեջ վերականգնեցավ, վերաաշխուժացավ, նոր շունչ մը առավ: Երուսաղեմը, Պոլիսը տկարացան ժամանակին, հիմա նոր աշխուժության մեջ են: Եվ եթե բաղդատեմ այդ շրջանին մեր եկեղեցականությունը և այսօր, շատ ավելի համալսարանական, շատ ավելի զարգացած եկեղեցականություն ունինք այսօր, քան ունեինք հին ատեն:

Վերջապես, ես կուզեմ այսօրվան մեր կացությանը անդրադառնալ: Հայաստանի մեջ մենք այսօր կապրինք իբրև ազգ մը և ազգին մեջի նեղությունները, տառապանքները հաճախ մեզ բոլորիս համար կդառնան մտահոգության առարկա, երբեմն քննադատություններու առարկա և շատ բնական են ասոնք: Եվ ես կուզեի անդրադառնալ այն իրողության, որ Հայաստան-Սփյուռք հարաբերությանը մեջ մենք պետք է որդեգրենք առողջ մոտեցման սկզբունքը:

Ես կյանքի հետևյալ սկզբունքին կհետևիմ. եթե մեկ ընտանիքի մասին կուզեմ գիտնալ, ընտանիքի պատասխանատուին կերթամ, եթե գործարանի մասին պիտի գիտնամ, կերթամ գործարանի պատասխանատուի մոտ: Մենք ալ շատ ավելի լավ գիտենք, քան բոլոր գրողները՝ ըլլա դրական կամ ժխտական երևույթները մեր հասարակաց կյանքին: Դրական կամ ժխտական: Մեր թերությունները մենք ենք իմանում: Հետևաբար պետք է մենք գիտնանք մեր ազգի պատասխանատվությունը ստանձնած հոգևոր կամ քաղաքական կամ պետական ղեկավարությանը հետ երկխոսություն ունենալ: Չեմ ըսեր անպայման, ամեն ինչ որ կըսեն, յուրացնել, բայց իրենց հետ խոսիլ, իրենց հետ բաժնել մեր մտածումները և ոչ թե կողմնակի արտահայտություններով գաղափար կազմենք, թե Հայաստանը այսպես է, Հայաստանը այնպես է, Էջմիածինը այսպես է, Էջմիածինը այնպես է: Ես կհավատամ, որ առողջ ազգերը, պետություն ունեցող ազգերը այս ձևով կմոտենան, և մենք այս մեթոդը եթե որդեգրենք, շատ բան կրնանք փոխադարձ հասկացողությամբ լուծել, քան միայն ունկնդրող դառնալ այս կամ այնպիսի պարագայական, երբեմն էլ մակերեսային երևույթներու և մեկնաբանություններու:

Երկրորդ՝ մենք այսօր պետք ունինք Հայաստանին մեջ մեր Եկեղեցին զորացնելու: Պարզ ձևով ըսեմ ձեզի, եթե Միլանոյի կամ Իտալիո բոլոր եկեղեցիները յոթանասուն տարի փակվին, եթե երբեք այս Իտալիո եկեղեցիներեն մեծ մասը սինեմայի /կինոթատրոնի/, թատրոնի վերածվին, եթե երբեք այս թեմին երեք հազար եկեղեցականությունը աքսորվի, եթե երբեք բոլոր հոգևոր ճեմարանները փակվին, հոգևորական պատրաստելու դպրոցները փակվին, եթե երբեք քրիստոնեական գրականություն մշակելու հնարավորությունները դադրին, (չեմ ուզեր տակավին երկարել), ի՞նչ կըլլա Իտալիան, ըսեք ինձի: Այդ վիճակեն, փառք Աստուծո, դուրս եկանք և պատիվ պիտի ընծայեմ անոնց, որոնք տոկացին: Եվ այստեղ հարգանք կընծայեմ անգամ մը ևս իմ երջանկահիշատակ նախորդին՝ Վազգեն Ա Կաթողիկոսին: Երեսունինը տարի Էջմիածնի ջահը վառ պահեց: Ճիշտ է, որ ժողովրդական գործունեության մեջ անկարելի եղավ իրեն տարածվիլ,

*որովհետև արդյունքը ոչինչ պիտի ըլլար, որովհետև չպիտի թողնեին: Բայց տոկաց, մնաց հավատքը: Հիմա ինչպես պատկերացնեմ ձեզի. հավատքի գիտակցությունը կա, հոգևոր կյանքի ծարավը կա, բայց դաստիարակություն, և ուսուցում է պետք, թե ինչ կնշանակե հավատքը կյանքին մեջ: Օրինակ բերեմ՝* աշխատանքը*: Աշխատանքը Ավետարանին, Սուրբ Գրքին ամենեն մեծ ուսմունքն է: Օրինակ կըսենք՝ Աստված, որ միայն օրհնություն և միայն բարիք է, բոլորին կը սիրի. Աստված երբ ուզեց մարդը անիծել, ըսավ, թե քու երեսիդ քրտինքովը հաց պիտի վաստակիս: Աստուծո անեծքն անգամ օրհնություն է: Եվ աշխատանքին, քու սեփական ուժերուդ, Աստծու տված կարողություններուդ օգտագործումը քու պատիվդ է: Այս գաղափարը, քրիստոնյա գաղափարը պետք է տարածենք մեր ժողովրդին մեջ, որն այսօր կապրի Հայաստանի մեջ:*

*Դուք ըսեք, երբ ձեզմե ոմանք թերևս կամ ձեր ծնողները ջարդերեն դուրս եկան, այս վիճակի մե՞ջ էին: Կյանքը այսպես է: Դժվարությունները մերն են: Եվ ես այստեղ գրեթե բանաստեղծության պես բան մը գրած էի ժամանակին, Ամերիկայի մեջ կխոսեի, եթե գտնեմ առիթ, կուզեի ձեզի միայն մեկ բան մը ըսել, մեկ հատված մը կարդալ:*

Սոգ լինի, թե ցուրտ՝
Իմ հայրենիքն է,
Լուսաշող, թե խավար՝
Իմ հայրենիքն է,
Առողջ, թե վիրավոր՝
Իմ հայրենիքն է,
Խաղաղ, թե խռով՝
Իմ հայրենիքն է,
Որքան էլ հին,
Բայց դարձյալ նոր՝
Իմ հայրենիքն է,
«Հանգիստ ջուր», կամ թե
«Կանաչ մարգագետին»
Իմ հայրենիքն է,
Ցավի մեջ է, թե ուրախության՝
Իմ հայրենիքն է,
Իսկ ավելի շատ՝
Դա հենց իմ մայրն է...

*Ինձի համար եղած են տեսակ մը ներշնչման աղբյուր ֆրանսիացի գրողի խոսքերը. «Ես Աստուծո զավակը չեմ, եթե եղբորս եղբայր չըլլամ»: Միմիայն միասնաբար մենք կարող ենք Աստուծո զավակները ըլլալ: Եթե Աստված կսիրես, որ չես տեսներ, բայց եղբայրդ չես կրնար սիրել, որ կտեսնես, այդ սերդ կեղծ է [illegible], ինչպես կըսե Հովհաննես Ավետարանիչը (Տե՛ս Ա Հովհ. Դ 20): Աստուծո սերը, Աստված-մարդ հարաբերությունը մարդ առ մարդ հարաբերությամբ է, որ կարտահայտվի: Եվ [illegible] մեր հրամայականը և առօր համար է, որ մենք կրնանք ըլլալ այնպես հաջող և այնպես Աստուծո հավատարիմ, մեր պատմությանը հավատարիմ, մեր*

*Հառաջիկայի տեսիլքին հավատարիմ, եթե կարենանք միասնական ձևով ըլլալ: Եվ անոր մեջն է մեր ուժը: Ատոր համար ես այս քանի մը խոհերը այս մեկ տարի և ութը ամսվան իմ կյանքես Հայաստանին մեջ անցկացնելեն ետքը այս խոհերը այսօր ձեզի հետ կբաժնեմ և կուզեմ, որ եթե ծանոթություններ կուզեք ունենալ մեր կացության մասին Հայաստանին մեջ, ըլլա Երևանի Արարատյան թեմին, ըլլա Շիրակի թեմին Լենինականի շրջանի աղետի մասին, ըլլա Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի մասին, կխնդրեմ, որ խոսակցինք ազատ, համարձակ»:*

*Տրված հարցերին պատասխանեցին թե՛ թեմակալ առաջնորդները և թե՛ Վեհափառ Հայրապետը:*

*Ի նշանավորումն այդ հանդիպման, Նորին Սուրբ Օծությունը «Հայ տանը» նվիրեց Մայր Աթոռի վերջին հրատարակություններն, այդ թվում նաև Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի հրատարակած 3 դասագրքերը: Իսկ բոլոր ներկաները, որպես հուշանվեր, ստացան Սրբալույս Մյուռոնի կաթսայի գունավոր մանրանկարը, ինչպես նաև գրքույկներ:*

*Վերջում, ի պատիվ Վեհափառ Հոր, տրվեց ընթրիք:*

## *ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԵՏԻԿ*

*Հաջորդ օրը, դեկտեմբերի 17-ի առավոտյան ժամը 8-ին, ավարտելով իր երկօրյա այցելությունը միլանահայ համայնքին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով Միլանից գնացքով մեկնեց Վենետիկ:*

*Նույն օրը, ժամը 12-ին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանեց Վենետիկի «Սանտա Լուչիա» կայարան, ուր նրան դիմավորեցին Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր Աթոռակալ Հայր Հովսեփ վրդ. Բեհեսնիլյանը, Մխիթարյան միաբանության հայրերն ու Մուրադ Ռաֆայելյան վարժարանի սաները: Վեհափառին ողջունելու նպատակով կայարան էին եկել նաև Վենետիկի Պատրիարքի ներկայացուցիչները:*

## *ՄԵԿՆՈՒՄ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ*

*Կայարանում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը պատկերող մսուրի առջև կարճատև աղոթքից հետո, պատմաժան հյուրերը հատուկ նավակներով առաջն[illegible] [illegible]վեցին Սուրբ Ղազար կղզի: Անցնելով Վենետ[illegible] [illegible]ւղի փողոց-ջրանցքներով՝ Հայ Առաքելական [illegible]ւրբ Եկեղեցու պատվիրակությունը վայելեց [illegible]աղաքի անկրկնելի գեղեցկությունը, ապա ուղղվեց Սուրբ Ղազար:*

*Ժամը 13-ին Հայոց Հայրապետն իր շքախմբով ժամանեց Սուրբ*

Ղազար կղզի, ուր նրանց դիմավորեցին Մխիթարյան միաբանության հայրերը, ինչպես նաև Ժառանգավորաց վարժարանի սաները:

Եկեղեցական թափորը «Հրաշափառ»-ով Նորին Սրբությանն առաջնորդեց դեպի վանք, այնուհետև դեպի եկեղեցի:

Ընդհանրական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետին բարիգալստյան գեղեցիկ խոսք ասաց Սուրբ Ղազար վանքի Մխիթարյան միաբանության ընդհանուր Աթոռակալ Հայր Հովսեփ վրդ. Բեհեանիյյանը:

«Բարի եկաք, Վեհափառ Տէր, Մխիթարեան Միաբանութեանս Մայրավանքը. մեզի բերելու, մեր այս սուգի օրերուն, լոյսի և յոյսի սփոփարար ճառագայթ մը: Բարի եկաք այս փոքրիկ Հայաստանը, որ ձեզ ուրախութեամբ կ'ընդունի իբրև գերագոյն գլուխը Հայաստանեայց մեր Սուրբ Եկեղեցիին և Հովուապետը՝ մեր Ազգին:

Մխիթարեան միաբաններուս մտքերուն ու սրտերուն մէջ դեռ վառ է ու ներկայ, իբր աւանդ Հիմնադիրէն, անվերապահ յարգանքն ու սէրը հանդէպ Անոր, որ մանաւանդ հայ քաղաքական իշխանութեան բարձումէն ետք, մարմնացնելով հայ ժողովուրդին իղձերն ու հաւատքը՝ դարեր շարունակ հանդիսացաւ առանց թագի մեր Վեհ Թագաւորն ու Սրբազնագոյն Քահանայապետը:

Բարի գալուստ Ձեզի յանուն Մխիթար Աբբահօր, որ իր հրատարակութիւններուն առաջին էջին վրայ իբրև տարեթիւ կը նշէր նաև Ամենայն Հայոցինը՝ որու օրով լոյս կը տեսնէր գործը: Վստահ ենք թէ այս պահուս Ան կը ցնծայ երկինքէն, ու իր աճիւնները հոս, Սուրբ Խորանին առջև՝ իր դամբարանին մէջ կը հրճուին:

Բարի եկաք յանուն մեր նախնի Հայրերուն՝ Ջամչեաններու, Աւետիքեաններու, Աւգերեաններու, Բագրատունիններու, Ալիշաններու և այլ բազում ծանօթ ու անծանօթ, կենդանի կամ հանգուցեալ նուիրեալ վանականներուն, որոնք երեք դար գրեթէ, իրարու փոխանցելով ջահը Աւետարանի լոյսին և Հայրենիքի սիրոյն, տքնեցան ու գործեցին Վարդանանց ու Ղեւոնդեանց գաղափարականով՝ «վասն կրօնից և վասն Հայրենեաց»: Ձեզ այսօր ցնծութեամբ կ'ողջունէ բովանդակ Ս. Ղազարը, ու ոսկի տառերով կ'արձանագրէ իր պատմութեան մէջ Ձեր Վեհափառ Հայրութեան մեծ բարեացակամութիւնը՝ որով կը պատուէք Մխիթար Աբբահօր տունն ու առաքելութիւնը: Վստահ ենք, թէ Դուք մեզ լաւագոյնս կը ճանչնաք, կը հասկնաք ու կը գնահատէք և եկած էք քաջալերելու՝ որպէսզի աննկուն շարունակենք այդ առաքելութիւնը՝ ի հոգևոր և մշակութային «լուսաւորութիւն ազգիս Հայկազնոյ»: Ձեր այդ քաջալերանքն է որ կը թելադրէ մեզի չեշտելու, անգամ մը ևս թէ բովանդակ աշխարհին բացուած այս չքնաղ քաղաքի ափերէն մենք կոչուած ենք, և գիտակից ենք այդ մեծ պարտականութեան, գործելու, և ի լուր աշխարհի վկայելու մեր անցեալի պատմութեան, մեր մարտիրոսներու սրբութեան, ներկայ ժամանակներու մեր ժողովուրդի ու պետութեան կենսունակութեան, մեր մշակոյթին ու արուեստին մեծութեան մասին:

Մինչ Վեհափառ մեր Հօր՝ մեր մէջ ներկայութեան առիթով, Աստուծոյ առջև խոնարհած գոհաբանական աղօթքը կը մատուցանենք. կը խնդրեմ

*ամէնքէդ պահ մը խոր լռութիւն՝ լսելու Մխիթարեան միաբանին խոնարհ աղօթքը, արձագանգը մեր շարականներուն, անոյշ մեղեդին՝ որ կը բարձրանայ Մեծ Սեբաստացիին շիրիմէն ու տաճարիս կամարներուն տակ անվերջ կը հնչէ. «Թագաւոր փառաց Աստուած Հոգիդ կենդանարար. ի շնորհաբաշխ աւուր ծննդեան Մարիամու, դստեր Դաւթի Թագաւորին, նորոգեա զկենդանութիւն մերոյ Թագաւորին: ...Շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, ... (և) Ի ցնծութեան աւուր լրման ուրախութեան Յովակիմայ և Աննայի, աղօթիւք սոցա լցո զպէտս կարեաց Հայաստանեայց Եկեղեցւոյ, զի օրհնեսցուք զքեզ Տէր այժմ և յաւիտեան»: Աղօթք որ կը դառնայ թափօր և պար՝ հրեշտակներուն հետ, անդաստան հայաստանեայց բոլոր սուրբերուն հետ, կը դառնայ երկինք բարձրացող երգ ու աղաղակ՝ կեցնելու բնութեան մութ ոյժերն անգամ, և իջեցնելու Ամենակալին օրհնութիւնները.-«Օրհնեսցի և պահպանեսցի և նախախնամեալ պահեսցի արևելեան կողմն աշխարհիս, և Հայրապետութիւն Հայոց, այս նշանաւս սուրբ խաչիւս և սուրբ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ, անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ...»: Աղօթք, արցունք, տքնութիւն դարէդար, այո, հայրենիքէն դուրս՝ բայց միշտ հայրենիքին համար:*

*Թող մեր Հայրապետն ալ, այժմ, Ս. Միածնի իջման խորանէն բերած օրհնութեամբ օրհնէ մեզ, և իջեցնէ Մխիթարի բոլոր զաւակներուն վրայ օրհնութիւնը Թադէի և Բարթողիմէոսի, մեր Ս. Լուսաւորչին, Սահակներուն, Մեսրոպներուն և Շնորհալիներուն՝ որոնց արժանացաւ ըլլալու յաջորդ, և օրհնեալ պատգամաբեր մեզի»:*

*Այնուհետև միաբանության իր փոխադարձ խոսքը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը.*

*«Սիրելի հայր Հովսեփ այսօրվան այս դժվար օրերուն Մխիթարյան միաբանության կյանքին գլխավոր ղեկը Ձեր ձեռքին մեջ ստանձնած Ձեր եղբայրներուն փափագով, սիրեցյալ, հարազատ, հոգեկից եղբայրներ Մխիթարյան ուխտի անդամներ և նաև սաներ, որ կպատրաստվիք Աստուծո, ազգի և մշակույթի ծառայությանը:*

*Այստեղ խորհրդավոր պահ մը կապրիմ և առ Աստված գոհության զգացումը այնպես կլեփի սրտես, ինչպես ալիքը ծովեն: Այս կամարներուն տակ էի 36 տարիներ առաջ: Այսպես ձմեռվան ցուրտ օր մը, հունվարին էր, երբև պարզ վարդապետ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո, երբ կվերադառնայի Անգլիայեն որպես ուսանող իմ տունս՝ Անթիլիաս և չուզեցի եվրոպական այս ափերեն Միջին Արևելք վերադառնալ առանց անցնելու Վենետիկեն: Վենետիկը մինչ այդ ինձի համար անուն մըն էր: Վենետիկը մինչ այդ ինձի համար գիրք էր: Բայց երբ գտնվեցա այստեղ և եղբայրական այն մթնոլորտը տեսա բոլոր միաբաններուն մոտ, ես բոլորովին տարբեր ձևով ըմբռնեցի՝ գոյութենական հարազատության մեջ ըմբռնեցի կյանքը, գործունեությունը, առաքելությունը Մխիթար Սեբաստացիի թողած կենդանի ժառանգին՝ Մխիթարյան միաբանության: Եվ որո՞ւ մտքեն կանցներ, հարց կուտամ ես ինձի, երբ կանդրադառնամ ատոր. «Ով Տեր, ինչպե՞ս պատահեցավ, որ տարիները սահեցան և երեսունվեցը տարիներ ետքը ես այստեղ կուգամ որպես Կաթողիկոսը Ամենայն Հայոց և Սայ[illegible]ն Պատրիարք»: Խորհուրդ խորին: Կյանքը ինքնին խորհուրդ է:*

*Եվ այսօր ծունկի կուգամ Հոգիիս մեջ այս տաճարեն ներս՝ փառք տալու Աստուծո, որ երեսունվեց տարիները իմ սիրո զգացումները առավել ես ամրացուցին Հանդեպ Վենետիկի Մխիթարյան միաբանության և այնպես եղավ որ, ինչ պաշտոնի վրա ալ որ գտնվեցա, վարդապետությանս օրեն մինչև Կաթողիկոսությունը Մեծի Տանն Կիլիկիո և այժմ մինչև ընդՀանրական Կաթողիկոսություն Ամենայն Հայոց, միշտ Վենետիկը ինձի Համար եղավ օրե օր առավել ևս գնաՀատվող և գնաՀատելի առաքելություն:*



Գարեգին Ա Վեհափառը Վենետիկի Ս. Ղազար կղզու եկեղեցում քարոզելու պահին

*Սիրելի եղբայրներս, այսօր ես կուգամ ձեզի մեր բոլորիս Հոգևոր ծննդավայրեն, երբև քրիստոնյա ազգ մեր Սուրբ ԲեթղեՀեմեն, Էջմիածնի Մայր Աթոռեն: Այսօր կուգամ ձեզի ես այնպիսի երկրե մը, որ շարունակական, անվերջ Հրջադարձություններու մեջեն անցնող երկիր մը եղավ և է դարերու ընթացքին և այսօր: Այդ նույն Հայաստանեն այստեղ եկավ երջանկաՀիշատակ Վազգեն Առաջին Կաթողիկոսը, մեր նախորդը ճիշտ քսանվեց տարիներ առաջ: Բայց եկավ ձեզի այնպիսի կացութենե մը, եկավ ձեզի այնպիսի վիճակե մը մեր ժողովուրդին, երբ մեր ժողովուրդը տերը չէր իր կամքին:*

Այսօր բոլորս միասին ծունկի գալով փառք տանք Աստուծո, որ տեսանք մենք, եղանք բախտավորները այն սերունդներուն, որոնք երազեցին, ճգնեցան, տառապեցան, պայքարեցան, երազեցին այս օրը տեսնել՝ Հայաստանը ազատ և անկախ մի ազգ, ուրիշ ազգերու ընտանիքին հետ, Միացյալ Ազգերու Կազմակերպության մեջ իր դիմագծով և մեր ինքնությունը առավել ևս հստակեցված, միջազգայնորեն, համաշխարհայնորեն ճանչցված:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ալ, Աստուծո օգնությամբ և մեր բոլոր հոգևորականներու նվիրումով, այսօր վերազարթոնքի, վերարթնության, վերաշինության ընթացքի մը մեջն է: Կուգամ ձեզի վերածաղկող Մայր Աթոռեն և վերստին ազատության շունչը ապրող և անկախորեն իր կյանքը տնօրինող ձեր ու իմ և բոլոր հայության Մայր Հայրենիքեն՝ Հայաստանեն:

Այստեղ ես կուզեի իմ սուգը, ավելի ճիշտ մասնակցությունը ձեր բոլորի սուգին բերել կենդանի բարբառով և անգամ մը ևս արտահայտել: Սխալած չեղա, կարծեմ, երբ ըսի իմ սուգը, որովհետև շատ մոտեն ճանչցած էի նորընտիր և այնքան վաղաժամ, վաղահաս մահվամբ այս աշխարհեն մեկնած հայր Սահակ Ճեմճեմյանը: Եվ երբ որ լուրը առի, կարծեք ինձի այնպես թվեցավ, որ ես ինձմե բարեկամներու իմ շրջանակես, հարազատներես մեկը կորսնցուցի: Այդ մտքով է, որ տնօրինեցի պարտն ու պատշաճը և ուզեցի, որ իր հոգին հիշվի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ: Խորան բարձրացա և Աստծուն փառք տվի նախ, որ իրեն նման անձ մը տված էր մեզի, մեր ազգին Մխիթարյան միաբանության: Այսօր մենք կաղոթենք ինչպես այն ատեն աղոթքներից իր հոգուն համար՝ հերանավետ կայանս երկնից:

Սիրելիներ, կյանքը պիտի քալե: Մահը կուգա, տագնապը կուգա և ասիկա մեր մարդկային գոյության բնական երևույթն է: Ձևերը, ժամանակներն են տարբեր: Բայց ես եկած եմ ձեզի այսօր ըսելու ամբողջ միաբանությանը՝ և՛ ներկա այստեղ, և՛ ցրվյալ ի ծագս աշխարհի, որ Հայոց Եկեղեցին ձեզի հետ է և՛ սուգի ժամանակ, և՛ ուրախության ժամանակ, և՛ տագնապի ժամանակ, և՛ բարգավաճության ժամանակ: Հետևաբար, եկած եմ զորակցությունս հայտնելու հանուն ամբողջ հայ ժողովրդի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և կուզեմ, որ գիտնաք, թե ամեն մեկ ստեղծագործական քայլ, որ կառնեք, մեզի համար իմաստ և արժեք ունեցող քայլ է:

Քիչ առաջ նստած այնտեղ կմտածեի. Վենետիկը ե՞րբ բացակա եղած է մեր կյանքեն, իմ անձնական կյանքեն: Ամեն անգամ, երբ պետք ունեցած եմ Սուրբի մը կյանքը ուսումնասիրելու, Ավգերյանին «Վարք Սրբոց»-ին տասներկու հատորներեն մեկը կամ մյուսն եմ բացեր: Երբ ուզեր եմ կամ Սյունյաց աշխարհի Սիսականի պատմությունը կամ Այրարատինը և Շիրակինը, բացեր եմ Ալիշանի տեղագրական հատորները: Երբ գացի Խորվիրապ, չգացած, Ալիշանը եկավ ինձի իր գիրքին մեջեն, Բագրատունիները եկան, եռամեծ վարդապետները Արարատի: Քովս է, հետս է Վենետիկը:

Վենետիկը կղզի չէ: Կղզի է միայն ու միայն աշխարհագրական չափանիշներով, մետրով չափվելիք տարածությամբ: Բայց Վենետիկը հոգևոր հոսանք մըն է, իմացական ճառագայթում մըն է և ատոր համար է, որ մեր ժողովուրդը կսիրե այս կղզին ոչ թե իբրև կղզի: Ասոր նման շատ ուրիշ կղզիներ կան ավելի գեղեցիկ: Բայց կսիրե, որովհետև ասկե հոգին Աստուծո,

*հոգին հայության, բոլոր ծառայողներու մեջեն կճառագայթե մեր ժողովուրդին մեջ: Այս է ինծի համար Վենետիկը: Եվ կուզեի, որ այս դժվար օրերուն զգաք եղբայրներս, զգաք, որ մեզ և մեր հոգևորականներու Մայր Աթոռի միաբանությանը փափագն է և մեր ճիգը պիտի ըլլա, ինչ որ մեր ձեռքեն կուգա, որ չեն մնա, փոթորիկեն չազդվի այս միաբանությունը: Մարդ չկա, որ փոթորիկի չհանդիպի: Ես ալ շատ տագնապներու մեջեն անցեր եմ որպես եկեղեցական: Բայց ընդհանրության շահը կա, ամբողջ միաբանության անունը, առաքելությունը, գործունեությունը, պատիվը, հայության բերելիք սպասը, բարիքը՝ ասոնք երբ կշռեն նժարին մեջ, այն ատեն ուրիշ տեղական, մասնավոր, ժամանակավոր, մանր նկատումներ թեթև կկշռեն կշեռքին մյուս նժարին: Ես եկած եմ կշեռքին այդ նժարը զորացնելու ձեր ամբողջ միաբանության համար, մաղթելու ի բոլոր սրտե, աղոթելու բոլորով սրտիվ վասն շինության, հոգևոր շինության, վասն բարեկարգության և վասն բարգավաճության Մխիթարյան միաբանության:*

*Վերջին մտածումս այս առաջին պահուն, ձեզի հետ աղոթքի նվիրական այս պահուն այն է, որ ո՛չ դուք այստեղ՝ Վենետիկի մեջ, և ո՛չ էլ Մենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մեջ խոսինք միայն անցյալի փառքերու մասին: Մենք պարտականություն ունինք այսօր ապրող մեր ժողովրդի հանդեպ, մենք պարտականություն ունինք գալոց սերունդներու հանդեպ: Մենք ունինք անելիք, առաքելություն: Ատոր համար իմ ամենեն սիրած տողերես մեկը, որ կարծեք թե ոչ թե գրչով գրեր եմ, այլ սրտի շարժումով գրեր եմ, այս է՝ «Էջմիածինը առաքելություն է, հուշարձան չէ»: Վենետիկը իր մշակութային, հոգևոր ծառայության մեջ առաքելություն է և հետևաբար այդ տեսիլքով հառաջ երթանք և կարենանք այս օրերուն մեջեն դուրս գալ՝ Մխիթարի անունը պայծառ պահելով և ընդհանուր կերպով մեր ազգին համար այս սքանչելի, այս բարեբեր օազիսը Եվրոպայի մեջ՝ հայկական օազիսը պտղաբեր ընծայելով:*

*Ով որ կուգա այստեղ Եվրոպա, կրնա տեսնել Հռոմ քաղաքը, կտեսնե Միլանո քաղաքը, կըրնա երթալ Փարիզը տեսնել, կրնա երթալ Լոնդոնը տեսնել, կրնա երթալ Բեռլինը տեսնել, չգիտեմ, ուրիշ եվրոպական քաղաքներ տեսնել, շքեղություններ տեսնել: Ես ալ վերջերս գացի և տեսա Հռոմի շքեղությունները, բայց «օտար, ամայի ճամփեքի վրա» ասիկա՝ Վենետիկը մեր հայկական օազիսն է: Կուզեմ, որ ջուր լեցնեք, կանաչ պահեք, առողջ պահեք, ոռոգեք: Ես եկած եմ կաթիլ մը ջուր ավելցնելու ձեր ու իմ մայր հողեն՝ Հայաստանեն, կաթիլ մը հավատքի շիթ ավելցնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն, որպեսզի կարենանք մենք քալել վասն ապագայիս ազգիս հայոց:*

*Բոլորդ ալ իմացաք, որ ես այստեղ կուգամ Հռոմի այցելութենես ետքը: Այն չորս օրերը, որ ապրեցանք Հռոմի մեջ, այն երեք անձնական հանդիպումները, որ ունեցանք Հռոմեական Կաթոլիկե մեծ Եկեղեցվո իմաստուն և նվիրյալ առաջնորդին՝ Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Պապին հետ և իր շուրջը եղող բոլոր պատասխանատու անձնավորությանց հետ, այդ օրերը մեզի համար եղան եղբայրության և գործակցության ճանապարհորդագնացությանը մեջ հառաջագնաց քայլ: Եվ ես խորը երջանկությամբ նկատեցի, թե որքան անկեղծ և խորունկ է սերը և հասկացողությունը Սրբազան Պապին՝ հանդեպ հայ ժողովուրդին և Հայաստանյայց*

*Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Եվ այսօր, երբ աշխարհը այսպես համաքրիստոնեական միության ձգտումին, շարժումի ընթացքին մեջն է, երբ նախկին դարերու վիճաբանական պահերը, մթնոլորտը, ոգին, մեթոդները կփոխարինվին նոր եղանակներով, երբ* պոլեմիկ *բառը փոխարինված է* դիալոգ *բառով, մենք՝ Հայ ժողովուրդի զավակներս, առավել ևս սերտացնենք մեր ներքին միությունը: Ես ձեզ կնկատեմ հարազատ եղբայրներ և հարազատ զավակներ: Ինչպես դուք այնքան գեղեցիկ կերպով նկարագրեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, կուզեմ, որ այս այցելությամբս անգամ մը ևս խորանա ձեր մեջ այդ համոզումը, որ Սուրբ Էջմիածինը ձերն է, կմնա ձեզի հետ, և որքան դուք սերտորեն առնչվիք հոգիով մեր Մայր Աթոռին հետ, այնքան բոլորովս մենք զորացած կըլլանք վասն փառաց Աստուծո, վասն շինության ազգիս Հայոց և վասն պայծառության Եկեղեցվույս Հայաստանյայց. հավիտյանս հավիտենից, ամեն»:*

Ապա ժամը 13.30-ին տրվեց վանական ճաշ, որին մասնակցում էին նաև Վենետիկի հայկական փոքրաթիվ համայնքի ներկայացուցիչները, որտեղ Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով վերստին դիմեց միաբանության տեղապահ Հ. Հովսեփ Վրդ. Բեհեսնիլյանը.

*«Վեհափառ Տէր,*

*Հարկ ու պարտականութիւնն ունիմ այս պահուս, յանուն Միաբանութեանս, կրկին Ձեզի յայտնելու մեր ուրախութիւնը, մեր ջերմ զգացումներն ու երախտագիտական մտածումները՝ որ Ձեր այցելութիւնը կը թելադրէ մեզի:*

*Ճանչցած ու օրին գնահատած էինք Ձեզ՝ դեռ վաթսունական թուականներուն, երբ տակաւին երիտասարդ բայց արդէն իսկ ակնառու դէմք՝ կը մասնակցէիք, իբր կաթողիկոսական դէտ՝ Վատիկանեան ժողովներուն:*

*Նոյն այդ օրերուն այս վանքն ալ հաճոյքն ունեցաւ ձեզ հիւրընկալելու: Եթէ, ինչպէս կը վկայէք Ձեր գրութիւններուն մէջ, վանքիս մէջ կեցութեան յիշատակը՝ Ուլուհօճեան մեր Աբբահօր ժպիտով ոսկեզօծ՝ մնաց ձեր մեջ քաղցր ու լուսալիր, ձեր ներկայութիւնը ևս վանականներուս մէջ թողուց խոր համակրանք, և նամանաւանդ գեղեցիկ նախազգացում մը՝ թէ նոր և արժանաւոր հովուապետ մը կը պատրաստէր Աստուած մեր ազգին համար:*

*Տարիներ անցան, և ուրախութեամբ հետևեցանք ձեր տարած գործունէութեան՝ Անթիլիասի վանքէն մինչև միջ-եկեղեցական հանդիպումներ, համալսարանական ամպիոններէն մինչև առաջնորդական գահեր: 1977 Մայիս 22-ին իրականութիւն դարձան մեր փափաքներն ու երազները՝ երբ դարձաք Աթոռակից Կաթողիկոս, ու շատ չանցած՝ պանծալի Տանն Կիլիկիոյ միակ Գահակալը:*

*Հիացումով դիտեցինք թէ ոչինչ կասեցուց Ձեր ժրաջան գործունէութիւնը, ոչ Լիբանանի քաղաքացիական պատերազմը և ոչ ալ նիւթական այլևայլ դժուարութիւններ: Դարձաք պահապան հրեշտակը մեր տառապող Լիբանանի հայութեան, դարձաք Հայաստանեայց Եկեղեցու սրբազան գիտութիւններու կրակն արծարծողը, հայեցի մեր դրականութեան մեկենասն*

ու առաջնորդը՝ անթիւ հրատարակութիւններով և հեղինակութիւններով: Բայց ամէն բանէ աւելի հանդիսացաք պաշտպանը Հայ Եկեղեցու միասնականութեան՝ առանց անտեսելու միութենական հարցերը՝ իբր աւետարանական հրամայական:

Եւ երբ Սուրբ Էջմիածնի առաքելական ու լուսաւորչանիստ Աթոռը մնաց թափուր, երջանկայիշատակ Վազգէն Ա- ի վախճանումով, որո՞ւ կրնայինք նայիլ, որո՞ւ համար կրնայինք աղօթել Մխիթարեաններս՝ եթէ ոչ Ձեր անձին: 1995-ի Ապրիլ 4-ին, երբ Ս. Էջմիածնի զանգերը կը ղօղանջէին աւետելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռին վրայ բարձրանալու Ձեր ընտրութիւնը, համայն Հայութեան հետ Մխիթարի զաւակներս ևս ցնծացինք ու հրճուանքով բարձրացուցինք գոհաբանական մեր աղօթքները: Կը հրճուէինք նաև մտաբերելով այն հսկայ առաքելութիւնը, որ Նախախնամութիւնը Ձեզի կը վստահէր՝ վերականգնելու համար հաւատքի ու կրօնի կիսակործան շէնքը՝ անաստուածութեան ամպիոններուն ճգած աւերակներուն վրայ: Դուք, արժանիներուն մէջէն ընտրուած ամէնէն արժանին, յարմարագոյններէն ամէնէն յարմարը և ամէնէն պատրաստուածը՝ Ս. Աւետարանի վերստին քարոզութեան ի Հայս՝ Թադէոսի և Բարթողիմէոսի հետքերով, Գրիգոր Լուսաւորչի և անոր արժանաւոր յաջորդներուն նուիրումով՝ Ձեր յարգարժան եպիսկոպոսներու և քահանաներու դասին օժանդակութեամբ անշուշտ: Խօսքերը անբաւարար են՝ կատարեալ լիովին արտայայտելու համար մեր իղձերն ու անկեղծ մաղթանքները:

Դեռ քանի մը օր առաջ, անգամ մը ևս հպարտ զգացինք մեզ՝ Ս. Պետրոս կատարած Ձեր պաշտօնական մուտքով, ուր եկած էիք երբեմն իբրև դէա, բայց այս անգամ իբրև Կաթողիկոս Ամենայն Հայոց: Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Քահանայապետին ու Հռոմի սրբավայրերուն Ձեր այցելութեամբ, անկասկած, կը շարունակէք միջազգային գետնի վրայ բարձր բռնել Հայաստանեայց մեր Եկեղեցիին վարկը՝ զայն դուրս բերելով կղզիացումէ ու նոր, յուսադրիչ ու լուսաւոր հորիզոններ բանալով իր առջև, ինչպէս նաև նոր էջ մը համամիութենական շարժումին մէջ, որ, կը մաղթենք, անարձագանգ չմնայ և պատուոյ տեղ մը ապահովէ մեր ազգին ու Եկեղեցիին:

Ցատկապէս, սակայն, կ'ուզեմ այս առիթով շեշտել միշտ ալ Մխիթար Աբբահօր տան հանդէպ Ձեր ցուցաբերած յատուկ գուրգուրանքն ու գնահատանքը: Իրար հետ տարիներով շփման մէջ, մանաւանդ Լիբանան, գիտենք թէ որքան հայրաբար հետաքրքրուած էք մեր վանքով, շարունակ քաջալեր հանդիսացած անոր յառաջադիմութեան ու անսասանութեան, և այդ՝ ոչ միայն սփոփարար անհրաժեշտ խօսքերով միայն, այլև ձեռք երկարելով՝ յատկապէս տագնապալի օրերու: Ձեր հայրական, հովուապետական միևնոյն վերաբերումն է նաև Հայրենիքին մէջ, ուր իրականացնելով մեր Հիմնադիրին երազը, մեր փոքր բայց հարազատ տունը ունեցանք՝ իբրև տաք օճախ հաւատքի ու մշակոյթի:

Այսօր, Վեհափառ Տէր, մեր պատուոյ հիւրն էք դուք՝ մեր այս անցքի օրերուն: Շնորհակալութիւն: Շնորհակալութիւն՝ որ եկած էք ոչ միայն մեր նորընտիր աբբահօր՝ Հ. Սահակ Ճեմճեմեանի մահուան սուգը մեր հետ

*բաժանելու և փարատելու, այլև, ինչպէս ըսինք, ապագայ գործունէութեան նոր եռանդ ու յոյսեր ներշնչելու: Ուրախ ենք որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը չէ մոռացած մեզ: Մխիթարեան միաբաններուս փափաքն է որ այս օրը, այս թուականը չմնայ միայն գեղեցիկ ապրում ու յիշատակ, այլ հանդիսանայ նոր, ամուր և հաստատուն հիմնաքարը աւելի սերտ և իրաւ գործակցութեան մը, գիրար քաջալերելով, գիրար ամբողջացնելով ի սպաս ու ի շահ մեր ժողովուրդին՝ որուն ծառաներն ու համահաւասար հարազատ զաւակներն ենք ամէնքս անխտիր:*

*Թող Ձեր այցելութիւնը հանդիսանայ երկնային ցօղ օրհնութեան, որպէսզի նորանոր կոչումներ ընձիւղին, աճին ու լրացնեն յաւիտենապէս մեկնողներուն ձգած բացը, որ Մեծ Սեբաստացիին ձեռակերտը մնայ պայծառ ու անսասան. մնան միշտ վառ խունկն ու մոմերը, հնչեն միշտ աղօթքներն ու շարականները և բարձրանալով երկինք՝ հայցեն անդադար մեր ժողովուրդին ու Հանրապետութեան համար հանգիստ ու բարօրութիւն, մեր Եկեղեցիին ու Ամենայն Հայոց իր Կաթողիկոսին համար առողջութիւն ու արեւշատ օրեր՝ շարունակելու համար անհամեմատօրէն բարձր երկնաւոր պաշտօնը:*

*Մինչ կը խնդրենք, Վեհափառ Տէր, որ ընդունիք մեր այս սրտաբուխ մաղթանքները, կ'ուզենք, նմանապէս, բարի գալուստ մաղթել ու եղբայրական ջերմ ողջոյններ յայտնել Ս. Էջմիածնի աստուածապահ ուխտի անդամներուն, որոնք ընկերանալով Ձեզի՝ մեզ կը պատուեն միայն ու կուրախացնեն:*

*Թող սիրոյ, եղբայրակցութեան ու գործակցութեան նոր կապեր միացնեն Ս. Էջմիածինն ու Ս. Ղազարը, ու Ադրիականէն Սեւան նոր ծիածան մը ծագի հայ երկնակամարին վրայ՝ իբրև գրաւական Աստծոյ գթալից օրհնութիւններուն, լաւագոյն ապագայի և սուրբ հաւատքի պայծառութեան:*

*Թող Միածին Որդին իջնէ միշտ օրհնելու Հայրապետական Աթոռը և Սեւանի Տիրամօր հովանին չպակսի երբեք Ս. Ղազարի վանքէն. եղիցի, եղիցի»:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

*Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը, իրեն ընկերակցողների հետ, մեկնեց Վենետիկ, ուր քաղաքի Պատրիարքարանում հանդիպեց Վենետիկի Պատրիարք կարդինալ Մարկո Չեին:*

*Շուրջ 30 րոպեանոց առանձնապրույցից հետո Պատրիարքարանի ընդունելությունների սրահում Վենետիկի Պատրիարքն ու Հայոց Հայրապետը երկուստեք ողջույնի խոսքեր փոխանակեցին:*

*Այնուհետև Նորին Սրբությունը ներկայացրեց իր շքախմբի անդամներին: Սրբազան Պատրիարքի կողմից պատվարժան հյուրերին հանձնվեցին հուշանվերներ: Իր հերթին հուշանվերներ հանձնեց նաև Վեհափառ Հայրապետը:*

*Ապա Պատրիարք կարդինալ Մարկո Չեի և Գարեգին Ա Վեհափառի գլխավորությամբ ներկաներն առաջնորդվեցին դեպի*

*Վենետիկի Սուրբ Մարկոս Մայր Եկեղեցի: Տաճարին ծանոթանալուց հետո, ներկաները համատեղ աղոթք հղեցին առ Բարձրյալը նախ Ավագ Խորանի, ապա Սուրբ Աստվածամոր Խորանի առջև:*

*Հավարտ կանոնական աղոթքի, Հայոց Հայրապետը շրջեց Սուրբ Մարկոսի հանրահայտ հրապարակում, իսկ ժամը 19-ին վերադարձավ Սուրբ Ղազար կղզի և մասնակցեց երեկոյան ժամերգությանը:*

*Ընթրիքից հետո Վանքի ընթերցասրահում տեղի ունեցավ ջերմիկ զրույց Հայոց Եկեղեցու պատվիրակության և Միխիթարյան միաբանության միջև:*

## ԱՅՑ ԴՈՋԵՐԻ ՊԱԼԱՏ

*Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Հայոց Հայրապետը իրեն ուղեկցող մեծահարգ պատվիրակության հետ այցելեց Վենետիկի Դոջերի Պալատ, ուր Նորին Սրբությանն ու իրեն ընկերակցողներին մեծ ուրախությամբ դիմավորեց թանգարանի տնօրենը և մանրամասն բացատրություններ տվեց Պալատի և նրա մեկը մյուսից գեղեցիկ սրահների մասին:*

*Հուզիչ էր մանավանդ այն պահը, երբ հայ պատվիրակությունը կանգ առավ միջնադարյան մեծադիր քարտեզի առջև, որի վրա խոշոր տառերով նշված էր պատմական Հայաստանը:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՐԱԴ-ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

*Ժամը 11.30-ին Նորին Սրբությունն իր շքախմբով այցելեց Մուրադ-Ռաֆայելյան վարժարան, ուր մեծ շուքով դիմավորվեց տնօրինության և ուսանողության կողմից:*

*Վարժարանի մեծ սրահում ուսանողները ներկայացրին գեղարվեստական փոքրիկ հայտագիր, հավարտ որի բարիգալստյան խոսք ասաց վարժարանի տեսուչ հ. Սամվել վրդ. Բաղդասարյանը:*

*«Վեհափառ Տէր.*

*Ձեր այցելութեամբ ոչ միայն կպատվէք մեզ, այլ անհունօրէն կերջանկացնէք:*

*Այս անակնկալ այցելութիւնը կարծէք աւելի երեւակայական արարք մը ըլլար, քան թէ թանձրացյալ իրականութիւն, թերեւս ճիշտ ասոր համար է, որ մեզ կգտնէք քիչ մը շփոթած, զարմացած և անպատրաստ:*

*Իսկապէս Ձեր գալստյան լուրը, դպրոցի աշակերտութեան կողմե, մեծ ուրախութեամբ և հրճվանքով ընդունվեցավ:*

*Թերեւս բառ կամ խոսք չկա՝ արտահայտելու մեր զգացած երջանկութիւնը: Ձեմ ուզեր կեղծ հռետորական արտահայտութիւններու մեջ իյնալու, սակայն չեմ ալ կրնար մեր երախտագիտական զգացումները, ուրախութիւնները խեղճ ու պարզ նախադասութիւններու մեջ ամփոփելու:*

*Ձեր անձը խորհրդանիշն է ազգային միասնականության, և մենք չէինք կրնար անտարբեր մնալ այս իրողության դիմաց:*

*Վեհափառը կուգա այցելելու Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը: Կարծենք Ձեր ներկայությամբ անգամ մը ևս կուգաք հիշեցնելու մեզի, թե ամենքնիս կանչված ենք՝ կերտելու լավագույն Հայրենիք մը՝ հիմնված քրիստոնեական, մարդկային և ազգային առողջ սկզբունքներու վրա, հարգելով զիրար, ամբողջացնելով զիրար, նպատակ ունենալով օգնել իրարու՝ հանուն լավագույն ապագայի մը:*

*Ինչպես ըսի, Ձեր անձը կխորհրդանշե և կվկայե հայ ազգը իր ամենաբարձր արժանիքներով, այն արժեքները, որ հայ ժողովուրդը իր դարավոր պատմության մեջ ապրած և որու հավատացած է, իր քրիստոնեական և ազգային սկզբունքներով պահպանած է ամեն դժվարություններու դեմ, ոչ միայն խոսքով կամ քարոզով, այլ ուղղակի ապրելով իր արյան գինով, գործնականորեն մարմնացնելով իր ունեցած տոհմային սկզբունքները, ապրելով որպես մարդ մարդոց մեջ և կրելով բոլոր դժվարությունները սիրով և սիրո համար:*

*Ձեր այցելությունը գերազանցորեն կարևոր էր, մեզի անդրադարձնելու համար որպես հայ ազգի զավակ, այն նպատակներուն վրա, որու կուզենք և կփափագինք հասնել, վերջապես խթան մըն է՝ քննելու մենք մեզի և նոր կորովով ու եռանդով ձգտելու միշտ լավագույնին: Վստահ եմ, որ մեր աշակերտները այսօր Ձեր դիմաց հպարտությամբ և սիրով իրենց հայկականության և քրիստոնեության քննությունը կանցնեն, կխոստանան ավելի եռանդով նվիրվելու իրենց նպատակներուն:*

*Վեհափառ Տեր.*

*Այն գաղափարականին համար, որ Դուք Ձեզ նվիրած եք և Ձեր կյանքի ընթացքին իրագործած, մեզ բոլորիս համար օրինակ կհանդիսանա, թե կյանքը, երբ կորովով և քաջությամբ դիմագրավված է՝ կարելի է զայն լավագույնս իրագործել, մեզ կխանդավառե և հույսով կլեցնե այս գաղափարը, մանավանդ կհավատանք, թե կյանքը մարդու չափի վրա շինված է, երբ խորապես և գիտակցաբար ապրված է:*

*Ուստի կընդունինք Ձեզ ձեռնբաց ոչ իբր պատվական հյուր, որու հարգանքի պարտականություն մը պիտի ունենայինք միայն, այլ որպես Հայր մը, որ իր տան և իր զավակներուն կուգա:*

*Կմաղթենք, որ այսօրվա այս քանի մը ժամերը, որ պիտի անցնեք այս հարկեն ներս, Ձեզի համար ըլլային նշանակալից և հիշատակելի, ինչպես որ են մեզ համար:*

*Ձեր հայրական գալուստը թող երջանկաբեր ու շնորհաբեր ըլլա բոլորիս համար:*

*Բարի եկաք, Վեհափառ Տեր»:*

*Ուսանողությանն ուղղված Ամենայն Հայոց Հայրապետի պատգամ-դասախոսությունն իրապես ոչ միայն հայրական խորհուրդ էր, այլև մանկավարժի տված ճշմարիտ խորհուրդ.*

*«Սիրելի հոգևոր եղբայրներ և շատ սիրելի, թանկագին ուսանողներ Մուրադ - Ռաֆայելյան վարժարանի.*

*Ահավասիկ իր ավարտին կհասնի իմ մեկ շաբաթվա այցելությունը*

*Իտալիա, առաջին հերթին ի Հռոմ, Վատիկան, Սրբազան Քահանայապետին, ապա Միլանոյի մեր հայ ժողովուրդի գաղութներուն և երրորդ՝ վերջին հանգրվանը Վենետիկի Մխիթարյան միաբանությանը ի Սուրբ Ղազար և անոր հետ սերտորեն և անքակտելիորեն կապված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանին: Առաջին անգամը չէ, որ ես կգտնվիմ այստեղ: Բայց առաջին անգամն է, որ կտեսնեմ ձեզ: Պատերը տեսեր էի, գեղեցիկ են, շքեղաշեն, պայծառակերպ, ճառագայթող, բայց ի՞նչ ընեմ պատերը:*



Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի սաներին հայրական իր պատգամն է խղում Գարեգին Ա Վեհափառը

*Պատերը կխոսին անցյալի փառքի մասին: Բայց ես պատերը ցուրտ, անհաղորդ, անհոգի կգտնեմ առանց այն անձերուն, որոնք կշնչավորեն, կյանք, ապրում կուտան, իմաստ կուտան այս ամբողջ շքեղություններուն նյութական և արվեստագործ: Ես նախքան իմ խոսքը ձեզի ուղղելը, կուզեմ գիտնալ, ես գիտնամ ո՞վ եք դուք: Անհավասիկ, տարբեր-տարբեր երկրներե եկած, սակայն մեծավ մասամբ մեր Մայր Հայրենիքեն: Տեսակ մը մանրանկար Հայաստան մըն է սա, հայրենիք մը: Եվ եկած եք հայր Սամվելի, նախապես հայր Վահանի հսկողության տակ, Մխիթարյան միաբանության հոգածության ներքև և կզարգանաք: Ի՞նչ կհասկնաք զարգանալ բառով. լեզու կսորվիք՝ մեկ, գիտություն կսորվիք՝ երկու, պատմություն կսորվիք՝ երեք, թվաբանություն կամ մաթեմաթիկս կսորվիք՝ չորս, հինգ և այլն:*

*Հիմա գործիք մը ելած է, անունն է քոմփյութեր: Պետք չունիք այդ բոլորը սորվելու: Կոճակը կսեղմեք, գիտությունը, ծանոթությունը մեջտեղ կելլեն: Զարգացումը ավելի է, քան ուսումը կամ գիտությունը: Զարգացումը մարդոց կյանքին իմաստավորում մըն է: Ժամանակ մը ունեինք, որ մեր*

*ձեռքը չէ, տրված է մեզի։ Մե՞նք ստեղծած ենք ժամանակը։ Ոչ։ Մենք ստեղծած ենք հողը։ Ոչ։ Այս բոլորը Աստուծո տուրքն է։ Կյանքն ալ Աստուծո տուրքն է մեզի։ Մեր գործն է այս մեզի տրվածը արժեցնել, ոչ թե փչացնել։ Բուն ուսումը, բուն գիտությունը անոր մեջ կկայանա, որ կարենաս քեզի տրված ժամանակը, կյանքը, աշխարհը այնպիսի գործերով արժեցնել, որ երջանկություն զգաս և երջանկություն ցանես։ Եթե այս չէ կյանքը, ուրեմն անիմաստ գոյություն մըն է, խոտ է։ Ուրիշ ի՞նչ է հապա։ Հետևաբար, այստեղ դուք նախ փառք տվեք Աստուծո, որ եկած եք և կվայելեք բոլոր տեսակի դյուրությունները, մեր հին սերունդը քիչ մը նախանձի, որ մենք այդ դյուրությունները չենք ունեցած։ Խնդիր չէ, դուք ավելին ունեցեք, մենք ուրախանանք։ Բայց արժեցուցեք ձեր ունեցածը, պատիվ ունեցեք, մարդ եղեք։ Պատիվ ունեցեք, այդ մարդուն մեջ հայուն կերպարը կերտեցեք։*

*Եթե երբեք մարդկությունը պաստառ մըն է, անոր մեջ ամեն մեկը իր դիմագիծը կգծե. ի՞նչ պիտի ըլլա ձե՛ր դիմագիծը այնտեղ։ Հյուսվածք մըն է կյանքը Աստուծո տված թելով Աստուծո տված պաստառին վրա, բայց կարողությունը, որ տված է մեզի, ի՞նչ տեսակ հյուսվածք մը պիտի ընենք մենք այդ Աստուծո տվածեն։ Այդ է մեր ընելիքը։ Աստված մեզի կարողություն է տվել, բայց մենք է, որ հաճախ չենք անդրադառնա՝ զգացական, քմահաճույքի, ուրիշ դյուրին, մակերեսային, աժան բաներով կզբաղենք մեր կյանքը և երբ որ կտեսնենք, որ կյանքը կուգա տեղ մը, ուր հաշիվ կուտանք մենք մեզի, թե բան մը ըրած չըլլանք, խղճի խայթ կզգանք։ Իսկ այն որ ինք իրեն համար, իր ընտանիքին համար, իր ազգին համար, մարդկության համար և այս բոլորին մեջեն Աստուծո համար կծառայե, երջանկագույն մահը կունենա, որ կյանքին դուռն է դեպի անմահական կյանք։ Այս է իմ հասկացողությունը մարդկային կյանքի և ուսման նպատակի մասին։*

*Այսօր, տեսեք, եկեր եք Հայաստանեն, եկեր եք Բուլգարիայեն, եկեր եք Լիբանանեն կամ ուրիշ երկիրեն։ Իտալիան սքանչելի երկիր մըն է, ուսման կենտրոն է։ Թե՛ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանին մեջ, թե՛ ձեզմե ոմանք համալսարանին մեջ կշարունակեք ձեր ուսումները։ Ձեր հայու անունը բարձր պահեցեք։ Ես ալ ձեզի պես օտար երկիր գացի։ Ամեն անգամ, երբ փողոցի մեջեն կքալեի, կարծեք թե մարդիկ ինձի կնայեին, «հայ է կանցնի», կըսեին, կարծես, ոչ թե այսինչ այսինչյանը։ Երբ որ կիրակին գար, եկեղեցիները կերթայի ոչ թե միայն անձնական աղոթքիս համար, ատիկա քոլեջի մեր մատուռին մեջն ալ կրնայի ընել և կընեի ամեն օր։ Բայց կերթայի երեք եկեղեցիներ և բոլորն ալ «այս հայ եկեղեցականը եկեղեցին սիրել գիտե», կըսեին։ Իմ մեկ անգլերեն գրքի մեջ հոդված մը գրած եմ, «Ինչպես եմ ես տեսնում երիտասարդությանը»։ Նիկոս Գազանձաքիսը համաշխարհային տարողությամբ մեծ գրող է։ Նա մի գիրք ունի, ուր իր կյանքին վերջավորության նկարագրում է Հունաստանը, Կրետե կղզին, որտեղ նա ծնել էր։ Նախ շատ գեղեցիկ գրական պատկեր մը կստեղծե։ Կըսե՝ երբ արևը իր ճառագայթները հագուստի փեշի նման կքաշե երեկոյին դեպի իրեն, ես ալ կյանքիս այս վերջին տարիներուն կյանքիս ճառագայթները քաշելով կկենտրոնացնեմ իմ մեջս և կըսե՝ ի՞նչ տեղեկագիր պիտի տամ Կրետեին։ Ինքը կրետացի է, Կրետե կղզիեն։ Կհիշե իր հայրը, հայրենասեր կրետացին, որ իրեն ըսած էր. «Միշտ պիտի շալկած ըլլաս Կրետեն ուսերուդ վրա»։ Կրետացիի պատիվը, հայրենիքին պատիվը, ազգության պատիվը մեծ բան է։*

*1700 տարիներեն ավելի՝ Առաքելական գարեն, իմ ըմբռնումով, քրիստոնեությունը մեր հայության կյանքին աղբյուրը կսեպվի: Բացեք ամբողջ գրվածները, շրջեցեք ամբողջ Հայաստանը, քրիստոնեական հավատքը այնտեղ իբրև վկայություն դրված է մեր վրա: Եվ երբ որ ես կգտնվեի Հռոմ, Սրբազան Քահանայապետին մոտ, երբ նստած դեմ-դիմաց երկուքս առանձին կխոսեինք, առանց ուրիշներու, այս մեծ պատասխանատվության տեր մեծահոգի մարդը, որ շուրջ ինը հարյուր միլիոն Կաթողիկեներուն պետն է, երբ ինձի հայությանը մասին կխոսեր հպարտությամբ, ես երջանիկ կզգայի ինձի: Եվ գիտե՞ք ուրկե կուգար իր գաղափարը՝ դպրոցեն, Լեհաստանի, Բոլոնիայի: Այնտեղ հայ դասընկերներ ունեցած է, հայկական ծագումով, բայց լեզուն կորցրած: Այնպիսի պարկեշտ մարդիկ էին, կըսե, լավագույն ընկերներս անոնք եղան: Եվ աշակերտներուն մեջեն ազգ մը կկարդար:*

*Եվ կուզեմ, որ այս հպարտությունը կյանքի վերածեք, ճիգի վերածեք և դյուրին, աժան, այսպես հովին հետ եկող, հոսանքին հետ գացող անձին պես ծառի տերև չըլլաք: Ըլլաք այնպիսի տոկուն մարդ, որ կարենաք բարձր գաղափարներու, մարդս մարդ դարձնող, ճշմարտորեն մարդ ընող և ոչ թե անմարդացնող, անասնացնող երևույթներուն հետևեն վազեք: Շատ կարող էի խոսիլ, բայց այսքանով պիտի բավականանամ: Միայն մեկ խոսք, որ պիտի այսօր գրեք, և ոչ թե թուղթի վրա գրեք. այլ սրտի վրա:* «Մտեք այս տունը ուսանելու համար, մեկնեցեք այս տունեն ծառայելու համար»՝ *ահա իմ բառերը ձեզ: Առանց ծառայության, ուսումը զարդ է: Շատ-շատ հաց մը շահելու միջոց է: Եթե մեկը գիտնական պիտի ըլլա, արվեստագետ պիտի ըլլա, դասախոս պիտի ըլլա, մտավորական պիտի ըլլա միայն հաց շահելու համար, ափսոս: Կրնար այդ հացը շահիլ և պարկեշտորեն շահիլ ատաղձագործ ըլլալով կամ նույնիսկ հավաքարար ըլլալով: Ուսումը միայն ապրուստ շահելու միջոց չէ, առաքելություն ունեցող ընթացք մըն է: Եվ այսօր, սիրելի սաներ, դուք ամենեն բախտավոր սերունդներեն մեկն եք, եթե գիտեք, եթե անդրադառնաք: Ինչո՞ւ կըսեմ ատիկա: Դուք այսօր զավակներն եք այնպիսի հայության, որ միայն զարկված չէ, միայն հալածված չէ, միայն ավերակված չէ:*

*Նախքան Քրիստոս 521 թվականին էր, որ* Արմենիա *բառը առաջին անգամ գրվեցավ Դարեհ թագավորին, արքայից արքային կողմե, իբրև նվաճված երկիր Բեհեստունի արձանագրությանը: 521 թվական, Նախքան Քրիստոս: Հետ Քրիստոսի, 1991-են ետքը* Հայաստան, Արմենիա *բառը գրվեցավ միջազգային պատմության մեջ, միջազգային կյանքի կենտրոն եղող Միացյալ Ազգերու սեղաններուն վրա: Եվ գացի, նստա այդ սեղանին առջև և ինքզինքս ուրիշ ազգերուն հետ ազգ զգացի:*

*Հետևաբար մենք միայն անցյալով չպիտի մխիթարվինք, մեր անցյալը միայն չգովենք, այլ պիտի ներկայացնենք: Պիտի երթաք, սիրելի տղաքս, պիտի երթաք, ինչ ուսում ալ ընեք, ձեր ազգի համար այդ ուսումը պիտի ընծայեք իբրև Նոր Հայաստանի վերակերտման զինվորներ»:*

*Հանդիսավոր մասից հետո, Վեհափառ Հայրապետը մոտիկից ծանոթացավ վարժարանին, ուսանողության առօրյային, նիստ ու կացին:*

*Վեհափառն այցելեց նախկին գրադարանի շենք, որն այսօր մշակութային կենտրոն է, ուր մատենաշարերով հրատարակվում են հայ ճարտարապետության և մշակույթի այլ բնագավառները ներկայացնող աշխատություններ: Այդ կենտրոնը Մանուկյան գերդաստանի անգնահատելի և մեծ ծառայությունն է հայ ժողովրդին:*

*Նորին Սրբությունն ի մասնավորի շնորհակալություն հայտնեց անվանի ճարտարապետ Ադրիանո Ալպագո Նովելլոյին՝ հայ ճարտարապետությունն ու մշակույթը ուսումնասիրելու և օտար ազգերին ներկայացնելու համար:*

*Օրվա երկրորդ կեսին, ժամը 13.30-ին, տեղի ազգայինների կողմից վարժարանի սրահում տրվեց պաշտոնական ճաշկերույթ:*

### ԱՅՑ ՎԵՆԵՏԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

*Կեսօրից հետո, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Վենետիկի քաղաքապետարան՝ այցելություն տալու քաղաքապետ պրոֆեսոր Մասսիմո Քաչչարիին:*

*«Քա Ֆարսետտի» պալատի քաղաքապետի աշխատասենյակում նախ տեղի ունեցավ մոտ 30 րոպեանոց առանձնազրույց, որից հետո պաշտոնական խոսքով մամուլի ներկայացուցիչներին և ներկա հասարակայնությանը ներկայացան քաղաքապետ պրոֆեսոր Մասսիմո Քաչչարին և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը:*

*Քաղաքապետը մասնավորապես շեշտեց հայ ժողովրդի ներդրումը Վենետիկի հոգևոր-մշակութային և հասարակական կյանքում և հույս հայտնեց, որ այդ ավանդույթը կշարունակի:*

### ՊՏՈՒՅՏ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ

*Երեկոյան ժամը 17.30-ին Հայոց Եկեղեցու պատվիրակությունը Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ վերադարձավ Սուրբ Ղազար:*

*Այստեղ Աթոռակալ Վարդապետը հյուրերին մանրամասն ծանոթացրեց վանքի հարուստ թանգարանին, ցույց տվեց լորդ Ջորջ Գորդոն Բայրոնի անձնական գրադարանն ու աշխատասենյակը, Այվազովսկու նկարների թանկարժեք հավաքածուն, անտիկ դարաշրջանի համաշխարհային արժեք ներկայացնող ցուցանմուշները, Մխիթարյան միաբանության հանրահայտ Մատենադարանը: Ամենայն Հայոց Հայրապետը իր գնահատանքի խոսքն ասաց միաբանության անդամներին, որ սիրով ու երկյուղածությամբ են պահում-պահպանում այս մեծարժեք վկայագրերը՝ փոխանցելով գալիք սերունդներին:*

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԺԱՌԱՆԳԱՎՈՐ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ

*Այնուհետև Հայոց Հայրապետը հանդիպեց Մխիթարյան միաբանության ժառանգավորաց վարժարանի սաների հետ,*

*ծանոթացավ դասավանդման մեթոդներին, ներկա պայմաններին, իսկ վերջում նրանց ուղղեց իր հայրական խրատ-պատգամը.*

*«Սիրելի Հոգևոր եղբայրներ, գործակիցներ, սաներ.*

*Առաքելական Եկեղեցվո կրթա-դաստիարակչական եզրաբանութեան մէջ կփիրենք գործածել,* ծառանգավոր սաներ *բառը՝ ժառանգի մը ստացողներն էք և ոչ թե նոր բան մը ստեղծողները: Այդ ժառանգին առաջին անունն է* քրիստոնեական հավատք, Ավետարան: *Բայց այդ ժառանգը մեզի չի գար անորոշ մեկ եղանակով, կուգա մեր Հայոց պատմության մեջեն: Տեսակ մը Քրիստոսի տիեզերական լույսը կանցնի Հայաստանի պրիսմակեն, մեր ժողովուրդի ապրումներուն, կյանքին հետ շաղախված եղանակով, որուն կըսենք* Հայկական Եկեղեցի *և որուն մեջեն քրիստոնյան կճառագայթե: Հայաստանին մեջ ալ ճառագայթած է և մինչև այսօր ալ կճառագայթե:*



Վեհափառ Հայրապետը Մխիթար աբբահոր գրասեղանի առջև՝ շրջապատված Մխիթարյան սաներով

*Այստեղ ես կուզեի հետևյալ երկու մտածումները ձեզի փոխանցել: Քիչ առաջ մեր սրբազան հայրերով, վարդապետ, քահանա հայրերով մենք գացինք և տեսանք հնությունները: Տեսանք, թե ինչպես Մխիթար Աբբահայրը կհագվեր, ինչպես կաշխատեր, ինչպես գիրքերը կհավաքեր, ինչպես գիրքեր կգրեր, ինչպես կհավաքեին, կպատրաստեին ձեռագիրները, ինչպես գուրգուրանքով, ապրումով կուսումնասիրեին: Եվ այսօր հպարտության կենտրոն մը դարձած է Վենետիկը ամբողջ հայ ժողովուրդին համար: Եթե ուսանողությունը չըլլա, Վենետիկը թանգարանի կվերածվի: Վենետիկը թանգարան ունի, բայց ինքը թանգարան չէ: Կյանքով լեցուն, մարդերով գործող կենտրոն մըն է հոգևոր, կրթական, մշակութային: Եվ ես կուզեմ, որ դուք, որ նոր սաներն եք, մեկ բան միայն ձեր մտքին մեջ*

*գետեղեք. ձեզմե առաջ այս տախտակներուն վրա, այս աթոռներուն վրա ուրիշ մարդիկ նստած են: Իրենք գացեր են, բայց իրենց գործը այստեղ կխոսի: Դուք որո՞ւն պիտի պատկանիք: Այդ սերունդին մեջ պիտի մտնե՞ք: Քիչ առաջ տեսանք նկար մը՝ Սարուխանի նկարը, ուր սերունդները Մխիթարյան վանք կուգան և իրենց կյանքեն յուղ կլեցնեն այն ջահին մեջ, որ կվառի:*

*Իմ փափագս է, որ վավերական ըլլաք. կեղծը չըլլաք և երբ գիտնաք, որ դուք եթե վավերական ըլլաք՝ հոգիի մարդիկ ըլլաք. այն ատեն է, որ դուք գձեզ արժեցուցած կըլլաք: Այսօր աշխարհը չէ այն աշխարհը. ինչ որ Մխիթար Աբբահոր կամ իր աշակերտներուն, ինչպես Ավգերյաններուն, Բագրատունիներուն, Ավետիքյաններուն, Ալիշաններուն, Ղազիկյաններուն և ուրիշներուն աշխարհը: Մեզի համար ալ նույն աշխարհը չէ: Բայց ի՞նչ կըլլա. աշխարհը կփոխվի, բայց մենք այդ աշխարհին դրական կողմերը առնելով, չենք կրնար գոհ երթալ ժխտական կողմերուն: Եվ դուք, ուրեմն, շարունակեցեք այն, ինչ որ մենք տեսանք մյուս սենյակներու մեջ, որպեսզի չունչ առնեն, այս առարկաները շունչ առնեն, Մխիթարյան ժառանգը երբ դուք ըլլաք. նոր չեփորահարներ, նոր սրնգահարներ կդառնաք. ձեր կյանքով, ոչ թե գիրով միայն, ոչ թե խոսքով, այլ գործով նաև:*

*Երկրորդ մտածումս այս է. Շնորհալի Հայրապետը, որ ամենեն խորիմաստ, ամենեն պայծառատես դեմքերեն մեկն է, միտքը գիրին հանձնող դեմքն է մեր եկեղեցական հայրերուն մեջ, անիկա տեղ մը պատկեր մը կուտա. մենք, կըսե, Աստուծո խոսքին փոխանցման խողովակն ենք, թե՞ սպունգն ենք: Խողովակին մեջեն կանցնի ջուրը, խողովակը ոեւէ մեկ ձևով չի ազդվի: Մենք խողովակ ենք, թե՞ սպունգ ենք: Սպունգին մեջեն նույն ջուրն է, բայց սպունգին հետ կնույնանա, կշաղախվի, կանձնանա: Ճշմարտությունը, Քրիստոսի հավատքը անձին հետ կմիաշաղախվի, կմիախառնվի: Եվ երբ անձին դպնաս, միայն հավատը կզգաս: Ոչ թե խողովակ է անձը, այլ սպունգ է: Նաև այդ տեսակետով է, որ կուզեմ դուք մտնենք ձեր գասերուն, ձեր պատասխանատու հայր սուրբին և ուրիշ ուսուցիչներու հետ: Այսօր եկա՞ծ էիք դուք Մուրադ-Ռաֆայելյան: Հոն ալ բավական խոսեցա ես ուսանողության: Կուզեմ, որ դուք ալ կարենաք այս դժվար օրերուն, երբ կորսնցուցիք, մենք ալ կորսնցուցինք, շատ սիրելի Նորընտիր Աբբահայրը, հայր Սահակ Ճեմճեմյանը: Այս օրերը դժվար օրեր են: Այս տան նախանձախնդրությունը թող ձեզ ուտե: Ավետարանի խոսքն է: Հետևաբար, կմաղթեմ ձեզի սրտանց առողջություն և գիտցեք այս տախտակները արժևորել ձեր հոգեկան լեցունությամբ»:*

## ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

*Դեկտեմբերի 19-ին, հինգշաբթի օրը, հրաժեշտ տալով Միխիթարյան միաբանության հոգևոր եղբայրներին, ինչպես նաև ավարտելով իր 10-օրյա պաշտոնական այցելությունը Վատիկան և Իտալիա, Ամենայն Հայոց Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:*

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ ԻՏԱԼԻԱՅԻՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԻՍ

*ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ*
*ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ*

ՎԱՏԻԿԱՆ

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,*

*Իտալիայեն մեկնելուց առաջ կուզեմ Ձերդ Սրբությանը հայտնել իմ խորը շնորհակալությունն ու գնահատանքը այն մեծ ազնվության համար, զոր այնքան սքանչելի և պերճախոս կերպով ցույց տվիք Մեզ և Մեզի ընկերացող պատվիրակության հանդեպ՝ Ձեզի և Հռոմի Կաթողիկե Եկեղեցուն տված եղբայրական այցելության առթիվ:*

*Հիրավի, մեր հանդիպումները, աղոթքի և զրույցներու մեջեն, մեծապես օգտակար եղան՝ հառաջ տանելու համար եղբայրական հարաբերությունները մեր երկու Եկեղեցիների միջև՝ ամբողջական միասնության վերստեղծման ճանապարհին:*

*Մենք շատ ուրախ ենք, որ միասնության նույն ոգին տեսանք Ձեր բոլոր գործակիցներուն մեջ, Վատիկանի այլազան բաժանմունքներում, հատկապես Քրիստոնեական Միության Զարգացման Հանձնաժողովի կողմե:*

*Կաղոթենք առ Բարձրյալն Աստված, որ Ձերդ Սրբությանը շնորհե մշտատև առողջություն, որպեսզի կարողանաք ավելի մեծ ծառայություն մատուցել Ձեր Եկեղեցուն և ընդհանուր մարդկությանը:*

*Եղբայրական սիրով՝*

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*19 դեկտեմբեր 1996 թ.*

## ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՎԱՏԻԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

## *ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ*

Փառք եւ գոհութիւն կ'ընծայենք Աստուծոյ, որ մեզի շնորհք ըրաւ եւ կարող դարձուց, որ կատարենք մի այնպիսի ուղեւորութիւն, որ մեր Եկեղեցու ներկայ ժամանակների եւ յատկապէս մեր Եկեղեցու փոխյարաբերական կեանքի շրջագծին մէջ պատմական կարեւոր նշանակութիւն ունեցող մի դէպք հանդիսացաւ:

Այսօր, երբ Աստուծոյ շնորհիւ վերադարձած ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, սրտի պարտք ենք զգում այս խորանի վրայ Աստծուն աղօթք մատուցելուց եւ փառք տալուց յետոյ մեր սրտի խօսքն ուղղելու մեր համայն հայ ժողովրդեան, որպէսզի նրանք ճիշտ իմանան այն, ինչ որ կատարուեց Մեր այցելութեան ընթացքում:

Նախ ցանկանում եմ ձեր բոլորին մէկ անգամ եւս բացայայտել այն ճշմարտութիւնը, անխախտելի, անառարկելի ճշմարտութիւնը, որ Քրիստոս մէկ Եկեղեցի հիմնեց, մէկ Աւետարան տուեց մարդկութեանը, մէկ ճշմարտութիւն քարոզեց: Եկեղեցու միութիւնը Աստուծոյ Որդւոյն տուրքն է մեզի, եւ ոչ թէ մեր գաղափարների, մեր մտածումների արդիւնքը: Յիսուս, երբ երկրի վրայ իր ապրած կեանքի վերջին օրերին առաքեալներն իր շուրջն էր բոլորել եւ նրանց իր տեսակ մը կտակն էր փոխանցում, վերջին խօսքն էր ասում, ինչպէս կարդում ենք Յովհաննու գրած Աւետարանի 17-րդ գլխի մէջ, ասաց. «*Սակայն միայն նրանց համար չէ, որ աղաչում եմ, այլեւ նրանց խօսքի միջոցով բոլոր ինձ հաւատացողների համար, որպէսզի ամէնքը մի լինեն. ինչպէս դու, Հա՛յր, իմ մէջ, եւ ես՝ քո մէջ, որպէսզի նրանք էլ մեր մէջ լինեն, եւ որպէսզի աշխարհն էլ հաւատայ, թէ դո՛ւ ուղարկեցիր ինձ*» (ՀՈՎՀ. ԺԷ 20-21): Եթէ Իր քարոզած ճշմարտութիւնը ամէն մի մարդ իր ուզածին պէս պիտի դաւանի եւ պիտի արտայայտի, այն ատեն Եկեղեցու միութիւնը՝ յԱստուած՝ ի Քրիստոս եւ ի Նրա հոգեւոր մարմինն եղող Եկեղեցին, կը խախտուի, ինչպէս պատահեց պատմութեան ընթացքին եւ նաեւ պատահում է այսօր, մեր մարդ էակներիս թերացումների հետեւանքով:

Եկեղեցիները դարեր շարունակ միշտ յարաբերութիւնների մէջ են եղել իրար հետ, կարենալ վերագտնելու համար այն միութիւնը, որով Քրիստոս Ինքը Իր կրօնքը հիմնեց այս աշխարհի վրայ: Այդ յարաբերութիւնները Եկեղեցիների միջեւ 20-րդ դարում առաւել յառաջագնացութիւն արձանագրեցին, եւ յատկապէս Երկրորդ Համաշխարհային պատերազմից յետոյ մի նոր շարժում սկսուեց ամբողջ քրիստոնէական աշխարհում. – Փոխադարձաբար իրար մերձենալու եւ միասնաբար գտնելու, ապրելու, իրագործելու այն, ինչ որ Աստուած տուել էր մեզի՝ «**Միութիւն՝ ի հաւատս, միութիւն՝ յեղբայրութիւն, միութիւն՝ ի սէր, եւ միութիւն՝ ի ծառայութիւն**»:

Անհատասիկ այդ միասնական աղօթքով, միասնական ուսումնասիրութեամբ, միասնական գործերով արտայայտուող այդ շարժումը, կոչւում է այժմ էկումենական շարժում, այսինքն՝ միջեկեղեցական մերձեցման շարժում: Եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր գործօն մասնակցութիւնն է բերում այդ շարժումին, որ ամբողջ աշխարհով տարածուած ամենից յուսատու եւ յուսադրիչ երեւոյթներէն մէկն է քրիստոնէական արդի պատմութեան մէջ:

Մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին անդամ է բազում միջեկեղեցական կազմակերպութիւնների, ինչպէս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, ինչպէս Եվրոպայի Եկեղեցիների Խորհրդի: Նա դիտորդի յանգամանքով իր մասնակցութիւնն է բերել նաեւ Հռոմէական Կաթոլիկ Եկեղեցու այն մեծ ժողովին, որ կոչւում է Վատիկանի Երկրորդ Ժողով: Եւ այսպէս, մեր Եկեղեցին, որպէս ընդհանուր քրիստոնէութեան արտայայտիչը հայ ժողովրդի կեանքի մէջ, իր գործօն մասնակցութիւնն է բերում այս ընդհանուր համաքրիստոնէական շարժումին:

Քառորդ դար էր անցել այն օրից, երբ մեր երջանկայիշատակ նախորդը, Վազգէն Ա Վեհափառ Հայրապետը, այցելութիւն տուեց այսօրուան Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցու Պետի նախորդին՝ Պողոս Զ Պապին: Քսանհինգ տարիներ շարունակ յարաբերութիւններ մշակուեցին աստուածաբանական հարցերի շուրջը, խորհրդակցական ժողովներ գումարուեցին, փոխադարձ այլ տեսակի այցելութիւններ կատարուեցին եւ Մենք էլ, որ Մեր երիտասարդ տարիքից, վարդապետութեան օրերից, շատ մօտից հետեւել ենք եւ մասնակցել միջեկեղեցական այս շարժումին, մեր Եկեղեցու մասնակցութիւնը տիեզերական ընդհանուր այս շարժումին ուզեցինք արժէքաւորել՝ այցելութիւններ տալով այլազան Եկեղեցիների, ինչպէս Յունաց Տիեզերական Պատրիարքին, Ռուս Եկեղեցու, Վրաստանի Եկեղեցու, Ռումինիայի Եկեղեցու եւ այլ Եկեղեցիների պետերին եւ նրանց շարքին դեկտեմբերի 10-14-ը այցելութիւն տուինք Յովհաննէս-Պողոս Բ Պապին:

Մենք առիթներ ունեցանք միասին աղօթելու, միասին խորհրդակցելու, խօսակցելու, պաշտօնական հանդիպումներ ունենալու եւ նաեւ մեր խօսակցութիւնների եւ հանդիպումների աւարտին մի միասնական համատեղ Յայտարարութիւն անելու մեր երկու Եկեղեցիների ժողովուրդներին, որպէսզի նրանք հաղորդ դառնան մեր մտածումներին, մեր նպատակներին, մեր ձգտումներին եւ մեր ապրումներին:

Ահա թէ ինչու մենք մեր միասնական Յայտարարութեան մէջ յստակ կերպով, որպէս հիմնական ուղեգիծ, որդեգրեցինք համագործակցութեան ուղին մեր քրիստոնէական վկայութեան մէջ, ներկայ ժամանակներում: Մենք ուզեցինք, որ մեր ժողովուրդները գիտնան, թէ մեր Եկեղեցու հիմնադիր Յիսուս Քրիստոսի տուած շնորհքը մեր կողմից ընդառաջումի կարօտը ունի, այսինքն Աստուծոյ տուած միութեանը մենք ընդառաջելու պարտաւոր պատրաստ ենք: Այլապէս չենք կարող ասել, որ ճշմարիտ քրիստոնեայ ենք: Պատմութեան ընթացքում տեղի են ունեցել բազմաթիւ թիւրիմացութիւններ, տարակարծութիւններ, վէճեր, բանակռիւներ, պառակտումներ: Այս բոլորը մեր պատմութեան մաս է դարձել: Բայց երբեք չպէտք է կորսուի մեր գիտակցութեանը մէջ Եկեղեցու միութեան ապրումը, առանց որին քրիստոնէական Եկեղեցին կը կորցնի իր հաւատալիութիւնը հաւատացեալների մօտ, մասնաւորաբար ներկայ դարում:

Յատկապէս մենք ասեցինք այն, որ ինչ-ինչ վէճեր, որոնք տեղի են ունեցել մեր պատմութեան ընթացքում երկու Եկեղեցիների միջեւ՝ դաւանաբանական որոշ

հարցերի եւ յատկապէս Յիսուս Քրիստոսի անձի ըմբռնման մէջ. այս վէճերը այսօր կորցրել են իրենց այժմէականութիւնը, որովհետեւ մենք տեսնում ենք եւ փոխադարձ ուսումնասիրութիւնների, տեսակցութիւնների, խօսակցութիւնների որպէս եզրակացութիւն եկել ենք այն համոզման, ինչ որ արտայայտուել է սքանչելի կերպով, կարող եմ ասել՝ անկրկնելի յստակութեամբ, մեր Եկեղեցու ամենից սուրբ անձերից Ներսէս Շնորհալու կողմից, յատկապէս թէ՝ մենք ընդունում ենք զՔրիստոս որպէս կատարեալ Աստուած եւ կատարեալ Մարդ եւ երկու բնութիւնները, աստուածայինը եւ մարդկայինը չե՛ն իրարից անջատ, այլ միացեալ անշփոթաբար: Այս հիմնական ճշմարտութիւնն էր, որ վերահաստատեցինք մենք մեր միատեղ Յայտարարութեան մէջ: Եւ նաեւ ասացինք, թէ ուժ ենք տալու, քաջալերութիւն ենք ընձեռելու փոխադարձ հասկացողութեան ձգտող բոլոր խօսակցութիւններին մեր երկու Եկեղեցիների միջեւ յառաջիկայում:

Սա է ամենէն հիմնականը, որ այսօր աշխարհը իմանայ, մարդկութիւնը իմանայ, որ քրիստոնէական Եկեղեցիները այլեւս իրար հետ կռուելու փոխարէն իրար հետ գործակցելու, իրար հասկանալու ճանապարհին մէջ են մտել: Եթէ չենք մտել, կը նշանակի, որ աշխարհի ընդհանուր քրիստոնէական միութենական շարժումին մասնակից չենք:

Այս տեսակէտով ձեզ բոլորիդ պէտք է փոխանցենք այն ճշմարիտ, իսկական եւ անկեղծ համարումը, որ Յովհաննէս-Պօղոս Բ Պապը ունի մեր Եկեղեցու, մեր ժողովրդի եւ մեր Հայրենիքի նկատմամբ: Այն եղբայրական ընդունելութիւնը, որ ցոյց տուեց, այն հասկացողութեան ոգին, որ յայտնաբերեց, մեզ համար եղաւ ողջունելի մի վերաբերմունք, որի համար ես փառք եմ տալիս Աստծուն, որովհետեւ մեր միատեղ Յայտարարութեան մէջ յատուկ հոգածութիւն արտայայտուեց հայ ժողովրդի ներկայ ժամանակների կեանքին հանդէպ, մասնաւորապէս ողջունելով մեր ժողովրդի ազատութեան եւ անկախութեան վերատիրացման շքեղ իրականութիւնը, մեր անկախ հանրապետութեան ստեղծումը, ողջունելով նաեւ Արցախի մէջ մեր ժողովրդի կրած նեղութիւնն ու տառապանքը եւ սպասումը խաղաղութեան վերջնական հաստատման, եւ նաեւ ամբողջ սփիւռքի մեր հայութեան: Նաեւ յիշուեց Հայ Եկեղեցու 1700-ամեակի նշմանը Կաթոլիկ Եկեղեցու բերելիք մասնակցութիւնը եւ նպաստը, որպէսզի մեր Հայ Եկեղեցու 17 դարերի վկայութիւնը-ծառայութիւնը դառնայ համաշխարհային ճանաչման առարկայ եւ ոչ թէ մնայ մեր սեփական ազգային գոյութեան սահմանների մէջ սահմանափակուած:

Սիրելի՛ք,

Աշխարհն այսօր գտնւում է լուրջ հարցականների առջեւ՝ երկրորդ հազարամեակի վերջաւորութեան եւ երրորդ հազարամեակի սեմին: Այսօր քրիստոնէական Եկեղեցու համար դաւանաբանական վէճերը այնքան արժէք չունեն, ինչքան ժողովուրդի կեանքին մէջ յառաջ եկած այն թիւր մտածողութիւնները, այն սխալ հասկացողութիւնները, որոնք շեղում են մարդկային կեանքը աստուածային իր հունից, իր ճանապարհից: Նիւթապաշտական, ճարտարաշինական, մանաւանդ ճարտարարուեստական եւ այլ նուաճումներով յագեցած մեր այս աշխարհում, հոգին է կորսւում, հոգեկանն է աղարտւում, բարոյական սկզբունքները են ոտնահարւում: Ինչու՞ է յայտնուել մեզ Քրիստոս, որի ծնունդն ենք տօնելու մի քանի օրերից յետոյ: Եկել է մեր կեանքին համար:

Արդէն ժամանակն է վերջ դնելու է բանակռիւին, դրան ասում են «Պօլեմիկ» ("Polemiqu") օտար լեզուով. այսինքն՝ ամէն ինչ անես, որ դու ճիշտ լինես եւ միւսը

սխալ լինի, ամէն ինչ անես, որ դու արդար լինես եւ միւսը դատապարտես: Այս ոգին այլեւս տեղի է տալու երկխօսութեան, (դիալոգի "dialogue"), որով իրար հասկանանք, իրար մէջ Քրիստոսի տուած կրօնքը միասնաբար ապրենք եւ ոչ թէ՛ հակադրաբար իրարու: Այս է այսօրուան կարգախօսը ամբողջ քրիստոնէութեան, այլապէս ամբողջ քրիստոնէութիւնը կը կորցնի իր ազդեցութիւնը մարդկային կեանքին մէջ:

Ահա թէ ի՛նչ հեռանկարով եւ ի՛նչ շրջագծով մենք դիտեցինք մեր առաջիկայի գործակցութիւնը, եւ ես աննուանօրէն ուրախ եմ, որ մի այնպիսի չորս օրեր եղան այցելութեան այդ օրերը, որոնց մէջ մեր հայութիւնը, մեր Հայոց Եկեղեցին, իր իսկատիպ նկարագրին եւ իր հարազատ առաքելութեանը մէջ աւելի մօտից, ուղղակիօրէն, ճանաչուեց Հռոմեական Եկեղեցու ղեկավարների կողմից՝ գլխաւորութեամբ Յովհաննէս-Պօղոս Բ Պապին:

Հետեւաբար, մենք ողջունում ենք այս նոր ոգին եւ կոչ ենք անում մեր ամբողջ ժողովրդին, որ հաւատարիմ մնայ իր քրիստոնէական հաւատքին եւ շարունակի իր քրիստոնէական ծառայութիւնը ամբողջական առաքելութեանը մէջ քրիստոնէական Սուրբ Եկեղեցու:

***

Սիրելի՛ք,

Մենք նաեւ առիթ ունեցանք այս այցելութեան ընթացքում տեսնելու մեր ժողովրդին՝ թէ՛ Հռոմում եւ թէ՛ մանաւանդ Միլանոյ քաղաքում, ուր ունենք Ս. Քառասնից Մանկանց անունով կնքուած եկեղեցի: Եւ պիտի տեսնէիք դուք ժողովրդի կապուածութիւնը իր Եկեղեցուն: Այդ օտար երկրի մէջ նրանք իրենց քրտինքով, իրենց հաւատքով կառուցել են իրենց եկեղեցին, ամէն կիրակի պատարագ է մատուցւում եւ հայոց ժողովուրդը հաղորդւում է Հայ Եկեղեցու ամբողջ հոգեկան, իմացական, մշակութային ժառանգութեանը հետ:

Ապա մենք առիթը ունեցանք նաեւ գնալու Վենետիկ, Ս. Ղազարու Վանքը, Մխիթարեան Միաբանութեանը տուեցինք երկօրեայ այցելութիւն եւ մենք հիացումով նկատեցինք, թէ նրանք ինչպէս նուիրուել են մեր քրիստոնէական մշակոյթի ուսումնասիրութեան, ճանաչմանը եւ նրա ծանօթացմանը օտար ազգերին: Եւ Մեր հայրապետական աջակցութիւնը, օրհնութիւնը տուինք նրանց, յատկապէս աղօթելով նրանց երիտասարդ եւ վաղաժամ մահով իր մահկանացուն կնքած վանահօր, աբբահօր Սահակ Վրդ. Ճէմճէմեանի հոգւոյն համար՝ հոգեհանգիստ կատարելով եւ նաեւ Հայաստանից տանելով մի փոքրիկ խաչքար, որ Հայաստանը ներկայ լինի միշտ Ս. Ղազարու Վանքում:

***

Մենք կոչ ենք անում մեր ողջ ժողովրդին, մնալու հաւատարիմ իւր Եկեղեցուն, Հայրենիքին, եւ քրիստոնէական սիրոյ, միութեան եւ եղբայրութեան ոգով ու քրիստոնէական Եկեղեցիների առողջ շարժումների հետ հաղորդակցութեամբ մատուցելու մեր ծառայութիւնը ի փառս Բարձրեալն Աստուծոյ, ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ի շինութիւն ազգիս եւ հայրենիքի մերոյ եւ ի բարօրութիւն ողջ մարդկութեան. ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՏՐՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ "ՅԱՌԱՋ" ԹԵՐԹԻՆ

Իսկապէս պատմական օրեր եղան Մեր այցելութեան օրերը ի Հռոմ, ի Վատիկան: Մեր երեք անձնական հանդիպումները Նորին Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ Պապին սքանչելի առիթներ եղան անձամբ հաստատելու թէ որքան անկեղծօրէն և քաղցրօրէն հայութիւնը ընդհանրապէս և Հայց. Առաքելական Եկեղեցին լայն և ջերմ տեղ ունին իր սրտին, իր միտքին և իր փորձառութեանը մէջ:

Մեր պաշտօնական հանդիպումին ընթացքին, ճառերու փոխանակումէն ետք միասնական յայտարարութիւն մը կատարեցինք եղբայրական գործակցութեան ուղին ճանչնալով որպէս ամենէն հարազատ և արդիւնաբեր ճանապարհ միասնական ջանքերով ծառայելու Քրիստոսին, քրիստոնէական Եկեղեցիին, ընդհանուր մարդկութեան և մեր հայ ժողովուրդին թէ՛ մեր հայրենիքին, անկախ Հայաստանի և թէ արտասահմանի մէջ:

26 տարիներ էին անցեր Մեր երջանկայիշատակ նախորդին՝ Վազգէն Ա Կաթողիկոսի և Յովհաննէս-Պօղոս Բ Պապին նախորդին՝ երջանկայիշատակ Պօղոս Զ Պապին հանդիպումէն ասդին: Աշխարհի կացութիւնը, Հռոմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ վիճակը, յատկապէս Վատիկանի Բ Ժողովէն ասդին, հայ ժողովուրդի և մեր Հայաստան աշխարհի դրութիւնը հիմնական և դրական փոփոխութիւններու էին ենթարկուած: Այսօր չենք հոն և չենք այնպէս ինչպէս էինք 1970-ին: Աստուածաբանական խօսակցութիւններ տեղի ունեցած են անցնող երեք տասնամեակներու ընթացքին թէ՛ Հռոմէական Կաթողիկէ և թէ Բիւզանդական Օրթոտոքս Եկեղեցիներու հետ:

Բոլորս ալ եկած ենք այն եզրակացութեան, որ Քրիստոսի անձին ըմբռնումին մէջ *էական, հիմնական* տեսակէտով կը դաւանինք զՔրիստոս թէ կատարեալ Աստուած և թէ՛ կատարեալ մարդ, ոչ բաժանեալ, այլ միացեալ: Այս նոյն ըմբռնումն է ինչ որ ԺԲ. դարուն արտայայտուած է Ներսէս Շնորհալի Հայրապետին գրչով Յոյն Օրթոտոքս Եկեղեցւոյ (Բիւզանդիոն) հետ մշակուած աստուածաբանական խօսակցութիւններու և եկեղեցական յարաբերութիւններու ընթացքին: Պատմականօրէն ժառանգուած հին տարակարծութիւնները, ընդհանրապէս բանաձեւումներու (formulation-ի) հետ առնչուած տարբերութիւններ են, որոնք այսօր կորսնցուցած են իրենց այժմէականութիւնը:

Աշխարհի մէջ այսօր միջ-եկեղեցական համայնական աղօթքի, ուսումնասիրութեան և գործունէութեան շարժումը կը ծաւալի *էկիւմենիք* շարժում անունին տակ: Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Conseil Mondial des Eglises) շրջանակներուն մէջ ալ Հայց. Առաքելական Եկեղեցին նոյն գործակցութեան ոգիով կը մասնակցի ընդհանուր եկեղեցիներու կեանքին և միասնութեան ձգտող աշխատանքներուն:

Բնականօրէն դեռ չենք հասած այն ամբողջական հաջողութեան և միութեան, որ Քրիստոսով տրուած է բոլոր քրիստոնեաներուն: Դրական գործակցութեան, փոխադարձ սիրոյ և յարգանքի ճանապարհն է որ պիտի տանի մեզ բոլորս ցանկալի միութեան: Կան տակաւին տարակարծութիւններ զորս երկխօսութեան միջոցաւ պէտք է լուծենք յառաջիկային:

Մեր միասնական յայտարարութեան մէջ Սրբազան Պապին հետ մենք անդրադարձանք մեր հայ ժողովուրդին թէ՛ Հայաստանի Անկախ Հանրապետութեան, թէ՛ Արցախի և թէ՛ Սփիւռքի մէջ ապրող և այժմ վերանորոգութեան շարժումի մէջէն անցնող:

Յատուկ կերպով անդրադարձանք Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի նշման, ո՛չ թէ սոսկ հայութեան ծիրին մէջ, այլ համաքրիստոնէական մակարդակի վրայ համաշխարհային տարողութեամբ:

Մեր այս այցելութեամբ զգացինք, և կը հաւատանք որ գործակցութեան առաւել յուսատու շրջան մը բացուեցաւ երկու Եկեղեցիներու փոխյարաբերութեան պատմութեան մէջ, ինչ որ լուսաւոր հորիզոններ կրնայ բանալ և՝ պէ՛տք է բանայ մեր երկու եկեղեցիներու և ժողովուրդներու կեանքին մէջ:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍԸ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառը, Իտալիա կատարած պաշտոնական այցի ժամանակ, Կաթոլիկե Եկեղեցու Սրբազան Քահանայապետի՝ Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ ստորագրեցին համատեղ հայտարարություն, որի հատկապես քրիստոսաբանական պարբերությունը Հայաստանում և Սփյուռքում տեղիք տվեց զանազան մտահոգությունների: Այս կացությունը լուսաբանելու ակնկալությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրավիրեց մամլո ասուլիս, որը կայացավ դեկտեմբերի 23-ին:*

*Մամլո ասուլիսին ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արք. Ներսիսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը, Քրիստոնեության 1700-ամյակի համակարգող մարմնի ատենապետ Տ. Մեսրոպ արք. Աշճյանը: Ասուլիսը վարեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոզապալյանը:*

***

*Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն այս առիթով անդրադարձավ Հայ Առաքելական և Հռոմեական Կաթոլիկե Եկեղեցիների հարաբերություններին ու համագործակցությանը: Նա շեշտեց, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին չի հրաժարվում Կաթոլիկ Եկեղեցու հետ ունեցած դավանաբանական տարբերություններից:*

*Անդրադառնալով Սրբազան Պապի հետ ստորագրած իր հայտարարագրին, Նորին Սրբությունն ասաց հետևյալը.* «Մենք Քաղկեդոնի ժողովը այժմ ևս չենք ընդունիր: Սակայն, պատմականորեն ժառանգված տարակարծությունները պետք չէ արգելք հանդիսանան երկու Եկեղեցիներու միասնականության, ինչ որ բոլորովին ալ չի նշանակեր միատեսակություն: Միությունը Աստուծո հրամայականն է»: *Նաև ավելացրեց, որ այս միասնականության վերահաստատմանն է ուղղված ողջ աշխարհում սկիզբ առած էկումենիկ շարժումը, որի բաղկացուցիչ մասն է կազմում Հայոց Եկեղեցին ևս:*

*Համաձայն Վեհափառ Հայրապետի խոսքի, Հայ և Կաթողիկե եկեղեցիների միջև երկխոսությունը շարունակվում է, որը կնպաստի նաև նախատեսվող համատեղ կառույցի ստեղծմանը: Գարեգին Կաթողիկոսի խոսքերով, բազմաթիվ հարցերի, մասնավորապես քրիստոսաբանական խնդիրների շուրջ երկու եկեղեցիների միջև հաստատված է փոխադարձ մի ըմբռնում, բայց ոչ երբեք համաձայնություն:*

*Ըստ Նորին Սրբության, Վատիկանում տեղի ունեցած բանակցությունները, վերջում նաև հրապարակված համատեղ հայտարարությունը ոչ մի աղերս չունի Հայ եկեղեցու ինքնուրույնության պահպանման հարցի հետ: Անդրադառնալով Սրբազան Քահանայապետի հետ իր ունեցած հանդիպումներին, Վեհափառ Հայրապետը նկատել տվեց, թե այդ տեսակցությունները միտում ունեին ընդունել, որ երկու եկեղեցիների միջև քաղաքական, քրիստոսաբանական սահմանումների և այլ պատճառներով առկա լարվածություններն ու հակամարտությունները պատմական ծագում ունեն և չպետք է իշխող լինեն այսօրվա միջեկեղեցական հարաբերություններում և պետք է սրբագրվեն ապագա բանակցություններով:*

*Համենայնդեպս, Վեհափառ Հոր կարծիքով, Հայ Առաքելական և Հռոմեական Կաթողիկե եկեղեցիների միջև առկա են դավանաբանական և այլ բնույթի տարբերություններ: Օրինակ՝ Սուրբ Հոգու էության հարցում: Սակայն այս բոլորը էական չնկատելու համար Վատիկանի հանդիպումների ընթացքում արվել են կարևոր քայլեր: Մանավանդ, որ եկեղեցիների միություն չի նշանակում եկեղեցիների միանմանություն, և մյուս կողմից՝ եկեղեցիները չեն զբաղվում դարերից եկող վեճերով:*

## «ՄԵՆՔ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԸ ՉԵՆՔ ԸՆԴՈՒՆԵՐ...»

*Արտահայտվելով Հայ եկեղեցու դավանանքի մասին, Վեհափառ Հայրապետը հաստատեց, թե մեր եկեղեցին Հիսուս Քրիստոսին ընդունում է որպես կատարյալ մարդ և կատարյալ Աստված, բայց ո՛չ անջատ, այլ միացյալ՝ անխառն, անշփոթ:* **«Մեր Եկեղեցին միաբնակ է այն իմաստով, որ մենք Քրիստոսի մեջ միայն մեկ բնություն կճանչնանք՝ մարդկային և աստվածային միացյալ բնությունը: Մեր Եկեղեցու դավանանքի սխալ մեկնաբանության արդյունքն է, որ առ այսօր բազմաթիվ օտարներ մեզ կհամարեն մոնոֆիզիթ: Մինչդեռ Ներկայիս վատիկանյան հանդիպումներեն հետո մենք երկուստեք կհայտարարենք այն, ինչ որ Սուրբ Ներսես Շնորհալին հասկցած էր, բացատրած ու ձևակերպած»:**

*Պատասխանելով «ԻՏԱՌ–ՏԱՍՍ» գործակալության աշխատակցի հարցին՝ Գարեգին Ա Կաթողիկոսը շեշտեց, թե խոսել անգամ չի կարելի 451 թվականի Քաղկեդոնի ժողովն ընդունելու մասին: Այս հարցի շուրջ արտահայտվելով վճռականորեն, Վեհափառ Տերն ասաց.* «Ես ընդվզեցա, երբ իմացա միջազգային որոշ գործակալություններուն հաղորդումները, թե մենք իբրև փոխեր ենք մեր վերաբերումը Քաղկեդոնի նկատմամբ և վերցուցեր ենք 1500 տարուան մեր տարակարծությունը: Պետք է ըմբռնել, որ Քաղկեդոնը ստեղծված էր Բյուզանդական կայսեր կողմե քաղաքական նպատակներով, դավանանքի միջոցավ տիրապետելու համար Արևելյան Եկեղեցիներու և անոնց ժողովուրդներուն վրա»:

*Պատասխանելով «ԱԶԳ» օրաթերթի թղթակցի այն հարցին, թե Հայ Առաքելական և Հռոմի Կաթողիկե եկեղեցիների միջև տարակարծությունների հետզհետե սրբագրումը արդյոք տեղիք չի՞ տա Հայ Կաթողիկե Եկեղեցու վերացմանը, քանի որ վերջինս ստեղծվել է հենց այդ տարակարծությունների բերումով, Հայոց Հայրապետն ասաց հետևյալը.* «Ինչպես 1993 թվականին երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի հետ ստորագրած շրջաբերական նամակիս մեջ կըսվեր, թե մենք եղբայրական սիրով կողջունենք Հայ Կաթողիկե Եկեղեցին և կակնկալենք անոր համագործակցությունը Մայր Եկեղեցվո հետ, այնպես էլ այսօր կկարծեմ տարակարծությունները պետք է հարթվին փոխադարձ սրբագրումով: Եվ օր մը այն նախադրյալները, որոնք պատճառ դարձան Հայ Կաթողիկե Եկեղեցվո ստեղծման, կչնչվին»:

## «ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՂՂԱՓԱՌ Է ԵՎ ՊԻՏԻ ՄՆԱ ԱՅԴՊԵՍ...»

*«ԱԶԳ» օրաթերթի թղթակցի այն հարցին, թե ինչպե՞ս է մեկնաբանում Նորին Սրբությունը հետևյալ պարագան, որ Հայ Առաքելական եկեղեցին, դեռևս իր ներքին հարցերը չլուծած, այսքան լուրջ քայլեր է անում միջեկեղեցական հողի վրա, Վեհափառ Տերը լավատեսորեն արտահայտվեց՝ առանձնակի շեշտելով, թե Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ երկխոսությունը շարունակվում է, ինչպես նաև առկա է համագործակցությունը.* «1700-ամյակը պիտի տոնենք իբրև մեկ Եկեղեցի: Անթիլիասի միաբան Մեսրոպ արք. Աշճյանի ներկայությունը, որպես գործադիր մարմնի քարտուղար և համակարգող, կփաստե այս իրողությունը: Միաժամանակ միասնաբար կաշխատինք «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի մեջ:

Անշուշտ, որոշ տարակարծություններ կան 1956–58 թվականներում հառաջ եկած տագնապին լուծման ուղիներում շուրջ և որոշ թեմերու առկա վիճակին կապակցությամբ: Ասոնց հարթումը կրնա քիչ մը ժամանակ պահանջել թերևս»:

*Պատասխանելով մի այլ հարցի ևս, Վեհափառը ժխտեց Վատիկանի հետ փոխադարձ զիջումների գնալու գաղափարը և ավելացրեց, որ մեր եկեղեցին ուղղափառ է ու պիտի մնա այդպիսին: Հարցը չի վերաբերվում զիջումներին, այլ անցյալի սխալներին, տարըմբռնումների սրբագրմանը:*

*Մամլո ասուլիսի վերջում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայտարարեց, որ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին երբեք չի շեղվի մեր նախնյաց Սուրբ հավատից ու դավանանքից:*

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանի ցավակցական հեռագիրը Նորին Սրբություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Նորայր արք. Պողարյանի մահվան առթիվ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ARMENIAN PATRIARCHATE

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

***Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ***

*Վեհափառ Տէր,*

*Խոր վշտով Ձերդ Վեհափառութեան կը հաղորդենք, թէ Սուրբ Էջմիածնայ եւ Ս. Աթոռոյս բազմամեայ Միաբան Գերաշնորհ Տ. Նորայր Արքեպս. Պողարեան ի Տէր հանգեաւ Դեկտեմբերի 19-ին, գիշերուան ժամը Տասը ու կէսին:*

*Վերջին օծման կարգը եւ թաղման արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ օր 21 Դեկտեմբեր 1996-ին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:*

*Տէրը լուսաւորէ բազմավաստակ պաշտօնէին հոգին եւ Ձերդ Վեհափառութեան պարգեւէ երկար ու քաջառողջ կեանք:*

*Խորին վշտակցութեամբ,*
*Խոնարհաբար՝*

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ**
**ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ**

**20 Դեկտեմբերի 1996**

Նորին Սրբություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխան ցավակցական հեռագիրը Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանին

**ԳԵՐԱՇՆՈՐՀ**
**Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ**
**ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ**

***ԵՐՈՒՍԱՂԷՄ***

*Սիրելի Սրբազան Եղբայր,*

*Սրտի խոր վշտով այսօր իմացանք Ձեր նամակէն Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան բազմավաստակ եւ հաւատարմագոյն անդամներէն Տ. Նորայր Արքեպիսկոպոս Պօղարեանի վախճանման տխուր լուրը:*

*Իր մահով Հայց. Եկեղեցին եւ հայ դպրութիւնը կը կորսնցնեն Քրիստոսի Եկեղեցւոյն, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ հայագիտութեան երախտարժան դէմք մը, որուն վաստակը վստահաբար պիտի նուաճէ իր մահը եւ դառնայ ներշնչման եւ սնուցման աղբիւր նոր սերունդներուն համար:*

*Ն. Ծովական անունով յաճախ իր յօդուածները ստորագրած եւ իր գիրքերը մակագրած Նորայր Սրբազանը երբէք պիտի չմոռացուի հայ հոգիին, հայ տաղանդին, հայ հաւատքին, հայ մշակոյթին սէրն ու հաղորդութիւնը ունեցող սերունդներուն կողմէ:*

*Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միաբանութեամբ եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդով եւ հաւատացեալ ժողովուրդով կը բաժնէ Ձեր եւ Միաբանութեանդ վիշտը: Կաղօթենք առ Բարեգութ Աստուած, որ իր բարի եւ յոգնաշխատ հոգին ընդունի երկնային երանական խաղաղութեան մէջ: Թող բարձրեալն Աստուած նոր սպասաւորներ յարուցանէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեանդ առաքելութեան անդաստանին մէջ:*

*Կիրակի, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ յատուկ հոգեհանգստեան արարողութիւն պիտի կատարուի ընդ Մեր նախագահութեամբ իր հոգւոյ խաղաղութեան համար:*

*Եղբայրական սիրոյ ողջունիւ և վշտակցութեամբ,*
*Աղօթարար*

**ԳԱՐԵԳԻՆ Ա**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

*20 Դեկտեմբեր 1996*

# ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՎԻՐՅԱԼԸ

*Գիտնական հոգևորականներ կան, ովքեր իրենց նվիրումով և գործունեությամբ դառնում են հարազատ միաբանության ժամանակի գիտական-իմացական կյանքի խորհրդանիշը և իրենց երկրային կյանքի ավարտով փակում միաբանության պատմության որոշակի ժամանակահատվածն ընդգրկող մեկ կարևոր էջը:*

*Վենետիկի Մխիթարյան միաբանության համար եթե բոլոր ժամանակներում անանց խորհրդանիշներ դարձան Մխիթար Սեբաստացին և Ղևոնդ Ալիշանը, ապա մեր օրերում միաբանության գիտական գործունեությունը համակարգող և վերջերս կյանքից այնքան անժամանակ հեռացած Սահակ Ճեմճեմյանը, Վիեննայի Մխիթարյանների համար այսպիսի մեկ կաևոր էջ փակվեց հայագիտության վերջին կենդանի հսկաներից Ներսես Ակինյանի մահվամբ, իսկ Երուսաղեմի Հայոց միաբանության համար նման կորուստ դարձավ ավագագույն հայ եպիսկոպոս երջանկահիշատակ Նորայր արք. Պողարյանի մահը:*

*Նորայր արք. Պողարյանը ծնվել է 1904 թ. Այնթապում: Հայոց Մեծ Եղեռնից հետո ապաստանել է Սիրիայում, այնուհետև ուսանել Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի վարժարանում՝ աշակերտելով երջանկահիշատակ Եղիշե Պատրիարք Դուրյանին: 1928 թ. հուլիսի 22-ին՝ Պայծառակերպության տոնի օրը, ձեռնադրվելով կուսակրոն քահանա, այնուհետև մեկնում է Լոնդոն, ուր երկու տարի սովորելուց հետո, նորից վերադառնում Երուսաղեմ: Բացառությամբ 1935–40 թթ. ժամանակահատվածի, որի ընթացքում ղեկավարում է Անթիլիասի Դպրեվանքը, մնացյալ ողջ կյանքը անցկացնում է Երուսաղեմում ու Ալիշանի նման նվիրվում հայ ձեռագրային աշխարհին՝ 1949 թվականից մինչև 1990 թ. լինելով Ս. Հակոբյանց վանքի Ձեռագրատան պատասխանատու:*

*Ձեռագրերից նա հանեց և հրատարակեց հայ միջնադարյան մատենագրության մի շարք գոհարներ, որոնք մինչ այդ վրիպել էին հետազոտողների ուշադրությունից: Բնագրագիտությունից հետո նրա նախասիրած երկրորդ բնագավառը մատենագիտությունն էր: Ս. Հակոբյանց վանքի ձեռագրային հարուստ նյութի, հայկական ձեռագրերի մյուս պահոցների ցուցակների հիման վրա տարիների տևական ու տքնաջան աշխատանքով Նորայր Սրբազանը կազմեց և առանձին գրքերով հրատարակեց միջնադարյան հայ գրողների և ծաղկողների ու գրիչների գործերի մատենագիտությունը: Հայ ձեռագրային նյութի հարուստ իմացությունը հոգևորական գիտնականին հնարավորություն ընձեռեց հայոց միջնադարի տարբեր ժամանակահատվածներին վերաբերող մի շարք կարևոր պատմա-բանասիրական ճշգրտումներ կատարել:*

*Նորայր Սրբազանի բոլոր աշխատանքների պսակը, սակայն, դարձավ Գյուլբենկյան հաստատության հովանավորությամբ հրատարակված 11 հատորանոց «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» 4.000 ձեռագրերի լիակատար նկարագրությունն ընդգրկող կոթողային աշխատանքը, որի առաջին հատորը լույս տեսավ 1966 թ., իսկ վերջինը՝ 1991 թ.: Վերջին հատորի վերջին ձեռագրի նկարագրությունից հետո գործի ավարտման բերկրանքը ճաշակած բազմարդյուն հոգևորականը գրում է. «Փառք Քեզ Աստուած. փառք Քեզ, յաղագս ամենայնի Տէր, փառք Քեզ»:*

*Նորայր արք. Պողարյանի հիշատակը վառ կմնա նրա բոլոր եղբայրակիցների, աշակերտների, հարազատների և հայ ու օտար հայագետների սրտերում:*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Տխուր լուր ստացուեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնից:

Կեանքի 92-րդ տարում վախճանուեց Ս. Հակոբեանց Վանքի միաբան, անուանի ձայագէտ, գիտնական Նորայր արք. Պողարեանը:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս տխուր առիթով ցաւակցական ձեռագիր ղրկեց Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանին:

Իսկ դեկտեմբերի 22-ին, Մայր Տաճարում մատուցուող Ս. Պատարագից յետոյ, ի յիշատակ ձանգուցեալ Սրբազան Հօր, կատարուեց Հոգեհանգստեան պաշտօն:

Մինչ արարողութիւնը Նուիրեալ հոգեւորականի անձի եւ գործունէութեան մասին յուզիչ խօսք ասաց Նորին Սրբութիւն Գարեգին Ա Կաթողիկոսը.

«Այսօր, քիչ ետքը, կատարուելու է հոգեհանգստեան յատուկ արարողութիւն մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցու ամենէն նուիրեալ եւ սիրելի հոգեւորական սպասաւորներից Երուսաղէմի Պատրիարքութեան եօթանասուն տարիների միաբան Նորայր արքեպս. Պողարեանի հոգւոյն ձամար:

Երկու օր առաջ նա յառաջացեալ տարիքում մեկնեց այս տեսանելի աշխարհից՝ մի այնպիսի գեղեցիկ, ներշնչող եւ օրինակելի պատգամ և վաստակ թողնելով մեր երիտասարդ հոգեւորականներին եւ մեր ժողովրդի եկեղեցասէր եւ մշակութասէր զաւակներին: Նա եղաւ լուռ, տոկուն, յարատեւ աշխատող մի անձ, որ առաւել քան տասնմէկ ձսկայական ձատորներով պատրաստեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ձեռագրերի ցուցակը եւ ուրիշ բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ եղաւ ամէնէն ձաւատատր, իր ողջ գոյութեամբը, էութեամբը Հայաստանեայց Եկեղեցուն եւ ձայ մշակոյթին եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ժառանգութեան կապուած անձերից մէկը:

Նա յարգանք է վայելում ոչ թէ միայն ձայ գիտական շրջանակներում, այլ նաեւ ամբողջ աշխարհի ձայագիտական բոլոր այն շրջանակներում, որոնք ծանօթ են նրա գործին: Համեստ անձ էր, ձեռու մնաց շռայլ լոյսերից: Ձեռագրատան մի անկիւնում աչքերից լոյս սփռեց: Հայոց ձեռագրի միջից նոտրգիրի, բոլորգիրի, երկաթագիրի, մանրանկարների միջից դուրս բերեց լոյսեր մեր անցեալից՝ մեր ներկայի եւ մեր ապագայի ձամար: Մենք երբէք չենք կարող մոռանալ նրա անգնաձատելի վաստակը մեր Եկեղեցու եւ մշակոյթի պատմութեան մէջ:

Հետեւաբար քիչ ետքը ցանկանում եմ, որ բոլորդ էլ միանաք մեզի՝ ձոգեւորականներիս, եւ աղօթք անենք նրա ձոգւոյ խաղաղութեան ձամար եւ խնդրենք Աստուծուց, որ նրա ձոգին, աշխատութեան, մշակոյթի, գրականութեան, գիտութեան, Եկեղեցու, ձաւատքի տարածման նրա նախանձախնդրութիւնը փոխանցուի մեր ձոգեւոր ճեմարաններ, բոլո՛ր ճեմարանների սաներին եւ մեր բոլոր ձոգեւորականներին, յատկապէս մեր երիտասարդ ձոգեւորականներին, որոնք նրա մէջ պէտք է տեսնեն մի փարոս, որ լոյս կը տայ իր շուրջը: Նայիլ պէտք է՝ լոյսը տեսնելու ձամար»:

***ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***

# ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ԳՅՈՒՄՐԻ՝ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Դեկտեմբերի 7-ին Վեհափառ Հայրապետն ուղևորվեց Գյումրի՝ նախ իր հարգանքն ընծայելու 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժի զոհերի հիշատակին, ապա հուսադրելու, մխիթարելու և նոր աշխատանքների ու իրագործումների հավատքով ոգևորելու այդ շրջանի իր զավակներին: Այս առիթով Նորին Սրբությանն ընկերակցում էին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արք. Պոզապալյանը և Մայր Աթոռի միաբաններ Անուշավան աբղ. Ժամկոչյանն ու Գևորգ սրկ. Կյուրեղյանը:

Գյումրի քաղաքի մուտքին Հայոց Հայրապետին դիմավորելու էին եկել Շիրակի թեմի Առաջնորդ Գրիգորիս արքեպիս. Բունիաթյանը, Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը, Գյումրիի Հայ Կաթողիկե Եկեղեցու պետ Գերապայծառ Ներսես արքեպիս. Ներսիսյանը:

Վեհափառ Հայրապետը նախ այցելեց երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի անվան նոր կառուցվող դպրոց: Ապա Նորին Սրբությունն առաջնորդվեց դեպի Գյումրիի գերեզմանատուն:

Գերեզմանատանը Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ՀՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Արա Սահակյանը, Շիրակի մարզի մարզպետ Արարատ Գոմցյանը, Գյումրիի քաղաքապետ Միքայել Վարդանյանը, նախարարներ և պետական, պաշտոնական այլ անձինք և բազմահազար հավատացյալներ:

Նորին Սրբությունը ծաղկեպսակ զետեղեց զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարին և կատարեց հոգեհանգստյան արարողություն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը գերեզմանատնից ուղևորվեց Գյումրիի Յոթվերք Սուրբ Աստվածածին եկեղեցի, մասնակցելու Սուրբ Պատարագին: Հընթացս Սուրբ Պատարագի Նորին Սրբությունն իր հայրական մխիթարության խոսքն ուղղեց սրտախոց իր զավակներին՝ ասելով, որ *«վիշտը բնական է, բայց դրանով մարդ չի կարող ապրել և դրա տարապայման զորացումը մեր մեջ բնական չէ: Մեր մի՛տքը կա, մեր կյա՛նքը կա, մեր զավակնե՛րը կան, մեր Հայրենի՛քը կա, մեր կյանքը դեպի առաջ կերթա և միայն պատմական հիշողությամբ չի կարելի ապրել: Տեղին է ասված՝ «Կյանքը կարող ես հասկանալ ետ նայելով, բայց կյանքը չես կարող ապրել առանց առաջ նայելու»*:

Հավարտ Սրբազան Պատարագի Հայոց Հայրապետն այցելեց և օրհնեց նորաբաց Շախմատի Տունն ու նոր կառուցված բնակելի շենքերից մեկը:

Երեկոյան ժամը 17.00-ին Վեհափառ Հայրապետը, ավարտելով Գյումրիի իր աղետյալ, բայց վերականգնումի շունչով ապրող զավակներին կատարած հուսադրիչ և մխիթարական այցելությունը, վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԳՅՈՒՄՐԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի հոգևոր առաջնորդ սրբազան, հոգևոր եղբայրներ, մեծարգոյ փոխնախագահ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի, հարգարժան պարոն մարզպետ Շիրակայ մարզի, քաղաքապետ, նախարարական կազմի անդամներ, քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներ և շատ սիրելի ու թանկագին եղբայրներ և քոյրեր ի Քրիստոս և ի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի.

Հոգեկան խոր ապրումներով ես կանգնել եմ այժմ այս խորանի վրայ և յայտնում եմ ձեզ, որ ձեզ նայելուց առաջ, ձեզ դիտելուց առաջ ես գտնուեցի գերեզմանատնում՝ հոգեկան աչքերով դիտելու համար նրանց, ում մենք այլևս չենք կարող ֆիզիկական աչքերով տեսնել: Գնացի, խոնարհուեցի նրանց յիշատակին գերեզմանատնում: Գալիս եմ ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ անցնելով յիշատակի այն կոթողից, որ գերեզմանատունն է և որտեղ սակայն ես չեմ կարդում մահը, միտքս չեմ սևեռում, չեմ կենտրոնացնում մահուան վրայ, այլ մահուան հայելիի միջից ապրողների կեանքին ու գալիքին վրայ: Մեր անմահ բանաստեղծներից Պարոյր Սևակն ասել է. «Ողբամ մեռելոց» և ապա աւելացրել է՝ «Կոչեմ ապրողաց»:

Այսօր, երբ ես եկել եմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ձեզ եմ բերում մեր Եկեղեցու հոգևոր կենտրոնի և անով ներկայացուած մեր ամբողջ հայ ժողովրդի և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ արտասահմանում, մեր ժողովուրդի սէրը և զօրակցութիւնը: Եկել եմ ձեզ մխիթարելու, ինչպէս ասում է ժողովուրդը: Մխիթարութիւն բառը գրաբար իր իմաստով նշանակում է քաջալերութիւն, ոչ թէ սփոփանք, ոչ թէ կրաւորական մի հոգեվիճակ, այլ սրտապնդող, գոտեպնդող ոյժ: Սուրբ Հոգին «Մխիթարիչ» է կոչուել: Նա, որ կը զօրացնի մեզ, նա, որ ոյժ կը տայ մեզ: Եկել եմ այդ մխիթարութիւնը գրաբարեան հասկացողութեամբ մեր Սուրբ Հայրերի դասական լեզուով հասկացուած իմաստով բերելու ձեզ, զօրացնելու, զօրաւիգ կանգնելու, աջակից դառնալու ձեր բոլոր այն ջանքերին, որոնք սևեռուում են դէպի կեանք և դէպի ապագայ:

Երբ ես մտածում էի, թէ Աստուածաշունչ Մատեանից ինչ խօսքի վրայ կարող եմ ձեր ուշադրութիւնը բևեռել, որպէսզի այդ խօսքի վրայ մտածէք և՝ մտածումի, խորհրդածութեան միջից՝ նոր ոյժ ստանաք, կեանքի իմաստը առաւել պայծառ հասկանաք, ընտրեցի Մատթէոսի Աւետարանի այն հատուածը, որտեղ մի սքանչելի, աննախընթաց և խորապէս թելադրական պատկեր է ներկայացնում Աւետարանիչը: Ասում է, թե երբ մարդիկ և ազգեր մի օր ներկայանան դատաւորին, թագաւորին, թագաւորը նրանց միջից ոմանց պիտի ընտրի և իր աջ կողմը նստեցնի և ուրիշներին պիտի ընտրի և իր ձախ կողմը պիտի նստեցնի: Դա խորհրդանշական կէրպով ցոյց է տալիս արդարներին և մեղաւորներին: Թագաւորը դառնում է աջ կողմում եղողներին և ասում է. «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ

*զարքայութիւնն» («Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը, որովհետև,- աւելացնում է,- քաղցած էի, եւ ինձ ջուր տուիք՝ խմելու. օտար էի, եւ ինձ ձեր մէջ առաք, մերկ էի, եւ ինձ հագցրիք, հիւանդ էի, եւ ինձ տեսնելու եկաք, բանտում էի, եւ ինձ այցի եկաք») (ՄԱՏԹ. ԻԵ 34-36): Եւ այդ մարդիկ դառնում են և թագաւորին ասում են. «Տէ՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք. կամ՝ ծարաւ եւ ջուր տուեցինք. ե՞րբ տեսանք քեզ օտար եւ մեր մէջ առանք, կամ՝ մերկ եւ հագցրինք. ե՞րբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ ու եկանք քեզ այցի» (ՄԱՏԹ. ԻԵ 37-39): Այն ատէն պատասխան կ'ուտայ թագաւորն և կ'ասի նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ՝ ի՛նձ համար արեցիք» (ՄԱՏԹ. ԻԵ 40-41):*

*Աստծու սէրը միայն այն ատեն տեսանելի կը դառնայ, երբ այն մարդոց ծառայութեան միջից կ'արտայայտուի: Եւ Աւետարանն ուրիշ տեղում ասում է. «Եթէ մէկն ասի. թէ սիրում է Աստծուն, եւ ատի իր եղբօրը, որին տեսնում է, ինչպէ՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա ՀՈՎՀ. Դ 20): «Եթէ դու ասում ես, թէ Աստծուն սիրում ես, Աստծուն, որ չես կարող տեսնել, և սակայն չես կարող քո եղբօրը սիրել, որին տեսնում ես, քո սէրը կեղծ է», որովհետև ճշմարիտ սէրը Աստծու հանդէպ՝ կ'անցնի՝ մարդկանց հանդէպ ցոյց տրուած սիրոյն մէջէն:*

*Այսօր եկել եմ ձեզ, որպէսզի մեր բոլորի մտածումները և՛ այս Եօթվէրք Ս. Աստուածածին եկեղեցում, և՛ Հայաստանի բոլոր կողմերում, և՛ արտասահմանի մեր ողջ հայութեան ուշադրութիւնը սեւեռելու այն ճշմարտութեան վրայ, որ սէրը արժէք ունի, երբ կեանքով կը թարգմանուի, սէրը իմաստ ունի, երբ խաչով կ'արտայայտուի, սէրն իր գերագոյն իմաստին կը հասնի, երբ գործով կը պսակուի: Յիսուս սիրեց և՛ խաչուե՛ց: Աստուած սիրեց և՛ մա՛րդ դարձաւ, մեզ պէս եղաւ, մեր վէրքերը դարմանեց, մեզի բերաւ ճշմարտութիւնը: Դուք Գիւմրիում և երկրաշարժից տուժած այլ շրջաններում ոչ թէ Եօթվէրք ունէք, այլ՝ եօթանասուն անգամ եօթը վէրք ունէք: Աւետարանական բառերից եմ վերցրել այս բառերը՝ «եօթանասուն անգամ եօթը», որը Աստուածաշնչական արտայայտութիւն է և կը նշանակի անհուն, անչափելի թիւ: Բայց վէրքերն եղել են, վէրքերը գալիս են ոչ թէ մնալու մեր մէջ, այլ դարմանուելու մեզանով: Մարդու արժանիքը վէրք ստանալը կամ չստանալը չէ: Մարդ չի կարող մարդ լինել և չվիրաւորուել: Դա անկարելի է, հրեշտակ չենք: Բայց մարդու արժէքը այն ատէն կը յայտնուի, երբ վէրքի տակ նա չի ընկճուի, այլ վէրքը դարմանելու կամքով կը գօտեպնդուի: Ոչ թէ մեղք չգործելն է մարդու արժանիքը, ոչ ոք կայ անմեղանչական, մարդը ինքն իր բնութեամբ իսկ մեղանչական է, բայց մարդու արժէքը մեղքից վեր կանգնելն է, յաղթելն է նրան և ոչ թէ յաղթուիլը նրանով:*

*Եթէ մեր պատմութեան վէրքերը բանանք, ոչ մի պատմաբան կարող է բացատրել, թէ մենք վէրքերից ինչպէս չմեռանք: Ի՞նչ վէրքեր է ստացել Հայաստանը: Պատմութիւնը բացէք, էջերը պրպտեցէք: Մեր պատմիչներից շատերը ողբասացներ են եղել: «Ողբամ զքեզ, Հայոց Աշխարհ»,- գրել են, մեր ցաւն են երգել, մեր տառապանքն են երգել:*

*Եթէ մի մարդ տրամաբանօրէն նայի, չի կարող ըմբռնել, որ այդ ժողովուրդը կարող էր ապրել: Ապրեցի՛նք, ապրո՛ւմ ենք և էլի պիտի՛ ապրենք, որովհետև վերականգնումի, յարութեան հաւատ ունենք, որով չենք ընկճուի ցաւի տակ: Ընկճուիլը մարդու անվայել է, քրիստոնեայ մարդու և հայ մարդու: Ուրիշ տեղ ասել եմ, կարծում եմ նաև այս տաճարում էլ ասել եմ, բայց էլի կրկնելու մէջ անպատեհութիւն չեմ տեսնի, որ հայութիւն և յուսահատութիւն այնպէս են իրար հետ, ինչպէս ջուրը և կրակը, չեն կարող ներդաշնակուել: Հայ լինել և յուսահատուել կեղծ հայ լինել կը նշանակի: Հայի կեանքի փիլիսոփայութիւնը եղել է տառապանքը յաղթելու, վէրքը դարմանելու, աւերակը վերաշինելու քաղաքականութիւնը, ամբողջ հոգեբանութիւնը և կենսափիլիսոփա-յութիւնը:*

*Այո՛, ցաւը, վիշտը մարդկային են և բնական: Այսօր, երբ ես գերեզմանատուն մտայ, տեսայ հայ մայրեր, տեսայ հայ քոյրեր, որոնք իրենց գլուխը դրել էին քարերի վրայ և լաց էին լինում: Դա բնական է: Մարդկային լինել և չյուզուել, մանաւանդ այդպիսի կորուստների, աղէտի առաջ, դա անբնական պիտի լինէր: Բայց եղբայրներ և քոյրեր, յուզումը, վիշտը մի մասն է մարդու հոգեխառնութեանը: Դրանով մարդ չի կարող ապրել: Բնական է վիշտը: Դրա տարապայման աստիճան զօրացումը մեր մէջ՝ բանական չէ: Մեր մի՛տքը կայ, մեր կեա՛նքը կայ, մեր զաւակնե՛րը կան, մեր հայրենի՛քը կայ: Մեր կեանքը դէպի առաջ կ'երթայ. պատմական յիշողութեամբը միայն կարելի չէ կեանք ապրիլ: Մի շատ մեծ գիտնական փիլիսոփայ մարդ ասել է մի տեղ. «*Կեանքը կարող ես հասկնալ ետ նայելով, բայց կեանքը չես կարող ապրել առանց առաջ նայելու*»: Կեանքին իմաստը կը հասկնաս պատմութիւնը կարդալով, բայց կեանքը չես կարող ապրել միայն պատմութիւնը յիշելով: Մեր առաջ կան պարտաւորութիւններ: Աստուած տուել է մեզ այս կեանքը որպէս գերագոյն բարիք: Ինչո՞ւ համար ենք ցաւում, երբ կեանք է կորսւում: Որովհետև գերագոյնը մեր եղածին և ունեցածին՝ մեր կեանքն է: Մի անգամ մի զօրավար, երբ մի քաղաք էր պաշտպանում, երբ թշնամու բանակը պարիսպները խորտակեց և ներս խուժեց, քաղաքի բոլոր զինուորները սպանուեցին, զօրավարն ասեց. «վերջին զէնքս ունեմ, վերջին զէնքովս եմ կռուելու՝* կեանքովս*»: Եւ կեանքը տուեց, գերագոյն զէնքը մարդուն, Աստծու տուած զէնքը: Պէտք է գուրգուրանք կեանքի վրայ: Այսօր ես այս բեմից ողջ աշխարհի մեր ժողովրդին, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, որպէս հոգևոր հայր ամենեցուն, պարտք եմ զգում կոչ անել, որ վեր դասեն բոլոր տեսակի մտածումներից, բոլոր տեսակի հաշիւներից հայութեան, հայրենիքի և հայրենիքի այս տուժուած բաժնին՝ Գիւմրիի շրջանին վերականգնումը: Դա պէտք է լինի պատի՛ւը մեր հայութեան: Դա ոչ թէ միայն պարտք է, այլ պատիւ է նաև: Աշխարհում օտար ազգերին պիտի ասենք, «մենք մեր տունը վերա-շինեցինք»: Եթէ չպիտի կարենանք աւերակները վերաշինել, ո՞ւր է մեր հայութիւնը, ո՞ւր է մեր մարդկութիւնը:*

*Կեանքին կառչած մնացէք, ձեր երեխաների հոգսը ձեր կեանքին հետ շաղախեցէք. գիւմրեցիներից բացի, կոչ եմ անում ձեր բոլոր եղբայր-ներին և առանց տարբերութեան հայաստանցի կամ արտասահմանցի,*

*նա, որ իր մէջ հայի արիւն է կրում, նա, որ այդ հաւատքն է հայութեան իր մէջ զգում, նա, որ հայութեան ապրումն է իր մէջ ծաղկեցնում, թող վաւերական հայ լինի այսօր և իր պարտքը կատարի հանդէպ Գիւմրիի և այս տարածաշրջանի մեր ժողովրդի կարիքներին: Եկէք, եղբայրներ և քոյրեր, մենք լինենք իրատես և նաև յառաջատես:*

*Եկէք լծուինք աշխատանքի, ծրագրեալ գործունէութեան: Ես այստեղ, և այս առիթով պարտք եմ համարում իմ գնահատանքը յայտնել մեր պետութեան, որ իր հոգածութեան առարկան է դարձրել Շիրակի մարզը: Շնորհակալութիւններս յայտնում եմ բոլոր այն Եկեղեցիներին, բոլոր այն բարեսիրական հաստատութիւններին, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, Համաշխարհային Դրամատան ղեկավարութեանը, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին և բոլոր տեսակի կազմակերպութիւններին, բարեսիրական, առողջապահական, շինարարական, կրթական, մշակութային և այլ մարզերում բոլո՛ր կազմակերպութիւններին, առանց խտրութեան, մեծ ու փոքր, որոնք բերել են և էլի շարունակում են բերել իրենց բաժինը: Միշտ է, ցաւը մեծ է, վէրքը խորն է և միջոցները ամբողջականօրէն բաւարար չեն արագօրէն ամբողջ վէրքը դարմանելու, բայց դարմանումի ընթացքն է կարևորը, դարմանումի ընթացքին տրուած կարևորութիւնը, շեշտաւորումն է կարևորը:*

*Ես այսօր փառք եմ տալիս Աստծուն կատարուած գործի համար և պարտք եմ դնում մեզ բոլորիս վրայ, որ շարունակենք այդ պարտքը կատարել պատուով և դուրս գալ այս աղէտից հայի՛ նման, պայծառ ճակատով, խաղաղ հոգով, առ Աստուած հաւատարմութեան և դէպի մեր ապագան և մեր գալիք սերունդներին պարտաւորութեան զգացողութեամբ:*

*Որևէ մէկը աշխարհումս եթէ այսօր Գիւմրիի մէջ բարիք անի, Աստուած իրեն պիտի դառնայ և պիտի ասի, Աւետարանի բառերի հետևողութեամբ, թէ հիւանդ էի, և դուք եկաք ինձ այցելութեան, ծարաւ էի և ջուր տուիք ինձ, անօթի էի և հաց տուիք ինձ, տուներ քանդուել էր և տուն տուիք ինձ (ՀՄՄՏ. ՄԱՏԹ. ԻԵ 42-43): Նա, որ Գիւմրիին կ'օգնի այդ վէրքը դարմանելու համար, Աստծուն ծառայած կը լինի, հայութեան ծառայած կը լինի և դատաստանի օրը Աստուած իրեն պիտի ասի. «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (ՄԱՏԹ. ԻԵ 34) յաւիտեանս յաւիտենից, ամէն:*

***

Հաջորդ օրը, կիրակի, Ս. Էջմիածնում մատուցված Ս. Պատարագի ընթացքում և հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը խոսեց հետևյալ քարոզը՝ վերստին նվիրված վերաշինության նույն գաղափարին:

*Հավատացեալ և սիրեցեալ ժողովուրդ Աստուծոյ,*

*Այսօր մենք սրտի պարտք զգացինք Մայր Աթոռի Միածնաէջ այս տաճարի կամարների ներքոյ, մեր մտքում, մեր հոգում վերակենդանացնել յիշատակը այն տասնեակ հազարներով հայ եղբայրների և*

քոյրերի, որոնք սրանից ութ տարի առաջ մեզ նման ապրում, շնչում էին այս երկնքի ներքոյ և ի վերայ երկրի և յանկարծ երկրաշարժի անսպասելի, անակնկալ և տարերային ցնցումով մեկնեցին այս աշխարհից դէպի իրենց յաւիտենական կեանքը:

Երեկ, եօթ դեկտեմբերի, իբրև հոգևոր հայր մեր զաւակների, գնացի Գիւմրի, եղայ երկրաշարժի զոհերի հարազատների հետ, գնացի գերեզմանատուն, սգացողների հետ եղայ Եօթվէրք Սուրբ Աստուածածին Եկեղեցում, աղօթք մատուցեցինք հոգեհանգստեան արարողութեան միջից դէպի Երկնային Հայրը մեր ամենագութ՝ խնդրելով նրանից, որ ննջեցեալների հոգիները երկնքի մէջ նրանաւէտ բերկրանքի արժանի անի: Մեր խօսքն ուղղեցինք ապրող ժողովրդին իրենց մտքի սլաքը, ուշքի, կեանքի և գործի ուղղութիւնը դէպի կեանք հրաւիրելով և ոչ թէ միայն մահը յիշելով: Ապա գնացինք և տեսանք այն նոր բնակարանները, որոնք կառուցւում են՝ իրենց տները կորցրած և այժմ տնազուրկ մեր ժողովրդի զաւակների համար:

Այսօր, կիրակի, Սուրբ Պատարագի ընթացքում մենք այս Սրբազան Խորանի վրայ ենք զետեղում ձեր բոլորի, մեր ողջ հայ ժողովրդի աղօթքը և հայցում ենք Աստծուց ասելով. «Ո՜վ Տէր, ընդունիր նրանց հոգիները Քո խաղաղութեան մէջ, տուր զօրութիւն ապրողներին, յոյս ներշնչիր նրանց, կեանքի ուժ, ընկճուելու դիմաց՝ տոկունութեան առաքինութիւն, որպէսզի բոլորս միասնաբար կարողանանք յաղթել մահուան, մեր Երկնաւոր Վարդապետ Յիսուս Քրիստոսի Յարութեան յաղթանակի զօրութեամբ»:

Այսօր այս Սուրբ Խորանի վրայ Սուրբ Պատարագի նշխարի և Քրիստոսի արեան վերածուող գինու մէջ մենք դնում ենք նրանց յիշատակը, որ այն մտնի, կենդանի կերպով ապրի մեր ապրող ժողովրդի գիտակցութեան մէջ թէ՛ այստեղ՝ Հայաստանում, թէ՛ արտասահմանում, բոլոր այն անկիւններում, որտեղ հայ է ապրում:

Սիրելիք, երեկ իմ նայուածքը ննջեցեալներին էր ուղղուած, իսկ այժմ իմ հոգեկան մտաւոր հայեացքն ուղղում եմ ձեզ և՛ այստեղ Մայր Տաճարում ներկայ, և՛ նրանց, որոնց մէջ այս Մայր Տաճարն ապրում է, նրանց, ովքեր Սուրբ Էջմիածինը ճանաչում են իբրև իրենց ծննդավայրը, որտեղ էլ որ ապրեն՝ Միջին Արևելքից մինչև Մայրագոյն Արևելք, մինչև Հնդկաստան, Աւստրալիա, Եվրոպայից մինչև Հիւսիսային և Հարաւային Ամերիկաները, որտեղ էլ հայ ապրի, նրանց հոգու մէջ Էջմիածինը կ՚ապրի: Նրա՛նց եմ ուղղում իմ խօսքը, Հայաստանի տարածքում, Արցախում, թէ արտասահմանում: Աղէտը եկաւ: Այն խափանելը մեր մարդկային կարողութիւնից և զօրութիւնից վեր էր: Մահուան դիմաց չկայ ոչ մի մարդկային ույժ, որ կարողանա արգելք լինել: Մահը բոլորինն է: Մարդ չկայ, որ մահուան չհանդի: Մահը գալիս է տարիների գումարի և ծանրութեան պատճառով: Մեր ֆիզիկականը բնութեան օրենքով քայքայւում է: Մահը գալիս է վթարով, անժամանակ, հիւանդութեամբ, նաև գալիս է երկրաշարժով և բնական ուրիշ աղէտներով: Մահը մահ է, ինչ էլ ուզենանք ասել նրա չարիք լինելու մասին: Դա մեր մարդկային

*գոյութեանը անբաժանելիօրէն շաղախուած է: Բայց մեզ համար կարևորը մահը չէ, այլ՝ կեա՛նքը. Աստծու տուած կեանքը, որ երբեմն մենք մեր ձեռքերով աղարտում ենք, փչացնում: Փոխանակ Աստծոյ տուած կեանքը երջանկութեան աղբիւրի վերածելու, չարիքի ենք վերածում այսպիսի վերաբերումներով, որոնք Աստծոյ կամքին, տիեզերքի ստեղծագործութեան նպատակին հետ չեն ներդաշնակւում: Մահը մի դաս է, մահը մի յուշարար է, որ մեզ սովորեցնում է կեանքի արժէքը: Ամէն անգամ, երբ գտնւում եմ մի դագաղի առաջ, մի գերեզմանատան մէջ, ես չեմ մտածում երբէք մահուան մասին: Այդ դագաղից, գերեզմաններից ես կյանքի դասն եմ քաղում: Հարց եմ տալիս՝ ինչպէ՞ս եմ ես կեանքն արժևորելու, ինչպէ՞ս եմ կեանքն ապրելու, որ երբ մահը գայ, մահը ինք յաղթուի, մեր գործերով յաղթուի և սուգի տեղ մահը դառնայ մեզ համար անուցիչ մի աղբիւր կեանքի գեղեցկագոյն իմաստի իրագործման հանդէպ մեր պարտաւորութեան մասին:*

*Գիւմրիի, Սպիտակի, Վանաձորի, Նալբանդի և Հայաստանի այլ քաղաքներում և գիւղերում պատահած երկրաշարժի ալաքը մենք ետ չենք կարող դարձնել: Փչացումը, աւերակումը մահ է, բայց մենք կոչուել ենք իբրև ապրող մարդիկ՝ լինի դա Սպիտակում, Վանաձորում, Գիւմրիում կամ որևէ մի տեղ, այսպէս ասած երկրաշարժի գօտում կամ Հայաստանի որևէ մասում, Երևանից մինչև չորս կողմերը մեր Հայաստան աշխարհի, Արցախում կամ սփիւռքում, մենք կոչուել ենք աւերակը վերաշինելու, մահուանը մեր կեանքով յաղթելու: Դա մեր հայի ճակատի գիրն է: Ուրիշները քանդել են: Մեր Հայաստան աշխարհը կարծէք օտար զաւթիչների համար յատուկ ախորժակ ունէր, ձգողականութիւն ունէր: Բացէք մեր պատմութեան էջերը: Որքա՛ն արիւն ու աւերածութիւն կայ այնտեղ: Բայց մի քիչ խորը նայէք. մենք միշտ աւերակի միջից նոր կեանք ենք դուրս բերել: Մենք չենք քանդել, ուրիշների քանդածն ենք վերաշինել: Դա է եղել մեր հայութեան ճակատագիրը և պատիւը: Մի մեծ բիւզանդագէտ, որ լավ է ուսումնասիրել Բիւզանդիոնի պատմութիւնը, նաև հայ ժողովրդի պատմութիւնը, գրել է. «Հայերը շինարարների ազգ են»* (a nation of builders)*:*

*Այսօր եղբայրներ, մենք գտնւում ենք ոչ թէ մահուան դիմաց, այլ մեր հայ ազգի և նոր պետութեան՝ ազատ ու անկախ Հայաստանի մեր առաջ դրած պարտաւորութեան դիմաց: Առանց պարտքի ու պատասխանատուութեան գիտակցութեան, որևէ մարդ մարդ չէ: Պատասխանատուութիւն չունեցող մարդը Աստծու ստեղծած պատկերից շատ հեռու է: Այսօր ինչ է մեր պարտքը: Մեր պարտքն է մեր կեանքը վերստին կառուցել, վերակերտել մեր նոր Հայաստանը: Դրական, կառուցողական հոգեբանութեամբ պէտք է շարժուենք: Այդ հոգեբանութեամբ է պէտք մտնենք այս ութերորդ տարեդարձի առիթով մեր պարտաւորութեան՝ հանդէպ Գիւմրիի շրջանի հայ ժողովրդին:*

*Այս սուրբ բեմից այսօր ես սրտի պարտք եմ զգում անձնապէս և պարտաւորութեան գծով որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց*

*շնորհակալութիւն, երախտագիտութիւն յայտնել բոլոր նրանց, ովքեր մեզ իրենց մասնակցութիւնը ընձեռեցին, օժանդակութիւնը բերեցին վեր կանգնելու աներածութեան այն վիճակից, որ ութ տարիներ առաջ պարզուեց մեր Հայաստան աշխարհում, բոլոր պետութիւններին, անխտիր, բոլոր Եկեղեցիներին, միջեկեղեցական կազմակերպութիւններին, բարեսիրական, միջազգային կամ ազգային կամ հայկական հաստատութիւններին, որոնց բարի գործերը մենք տեսանք կատարուած աղէտի գօտում: Մենք այնտեղ յատուկ կերպով տեսանք այն վերաշինութեան աշխատանքը, որ առաջ է տարւում Համաշխարհային Դրամատան /բանկի/ և «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի կողմից: Հազարաւոր տներ, գործատեղիներ վերաշինուած են և դրա համար փառք ենք տալիս Աստծուն: Դա բաժակի լեցուն մասն է: Բայց բաժակի աւելի լայն բաժինը դեռ դատարկ է: Եթէ մենք երկու հազար թուականի' երկրորդ հազարամեակի փակումին, մեր երկիրը այդ աւերակ վիճակի մէջ պիտի ներկայացնենք Աստծուն և մարդկութեանը, դա հայութեանը պատիւ չի բերի: Աւերակեալ երկիր չպէտք է ներկայացնենք: Եւ դա բոլորի'ս պարտքն է, ուր էլ որ գտնուենք: 2001 թուականին մեր Եկեղեցու 1700-ամեակը երբ պիտի նշենք, եթէ անցեալի հազարաւոր տարիներին խունկ պիտի ծխենք, գովենք մեր հայրերի շինածները, չբաւականանանք այդ բոլորով, այլ վերաշինենք մեր այսօրուայ աւերակեալ տները և եկեղեցիները, յատկապէս երկրաշարժից տուժած մեր բնաշխարհը հայկական:*

*Այս սուրբ բեմից կոչ եմ ուղղում համայն հայ ժողովրդին' ասելով.- զգացական վիճակն անցաւ, ութ տարիներն անցան: Յիշում եմ այն օրը, դեկտեմբերին, երբ այս բեմից ես խօսում էի, իմ աչքերը արցունքով էին լցուած, երբ այս Աթոռին նստած էր աւելի արցունք արտաքերած երջանկայիշատակ Վազգէն Ա-ն: Զգացական ժամանակն անցաւ: Այժմ մտքով, բանական լուրջ մտածողութեամբ, ուսումնասիրական աշխատանքով պէտք է լծուենք վերաշինութեան գործին մեր ժողովրդին առիթ և միջոց տալով, որ ինքն իր ձեռքով վերականգնի իր կեանքը:*

*Եթէ մի անձ գետին ընկնի, ձեռք ենք մեկնում, վեր կանգնեցնում, բայց եթէ նա մեզ չօգնի, մենք չենք կարող վեր կանգնեցնել, եթէ միայն մե՛ր ուժերին վստահի, նա չի կարող վերականգնել: Պէտք է ժողովուրդն ինքը իր կեանքի միջից ինք իրեն վերականգնի: Ուրիշների օժանդակումը, հայ, թէ օտար եղբայրների, պիտի նրա վերականգնմանը մաս կազմի, բայց այդ վերականգնման ընթացքի հիգին չի կարող փոխարինել: Դա պէտք է լինի մեր գործելակերպի ընդհանուր ուղղութիւնը: Այնպիսի աշխատանքներ տանենք այնտեղ, որ տուժած մեր եղբայրներն ու քոյրերը իրենք կարողանան դառնալ ինքնագործ, ինքնաբաւ, ինքնիշխան և ոչ թէ միշտ ուրիշի մատուցածին ապաւինեն և ցուպով քայլեն: Դա առողջութիւն չէ: Առողջութիւնն այն է, երբ մի անձ, մի ազգ իր միջից է զգում իր կեանքի ույժը: Մենք ողջունում ենք բոլոր այն ծրագրերը, որոնք մեր պետութիւնը և միջազգային ընկերութիւնը և բոլոր քոյր քրիստոնեայ Եկեղեցիները շարունակում են կատարել վերականգնումի այս*

*ընթացքում: Մենք գնահատում ենք յատկապէս մեր Եկեղեցու բոլոր թեմերի բերած օժանդակութիւնը՝ Հիւսիսային և Հարաւային Ամերիկայից մինչև Աւստրալիա, Եվրոպայից մինչև Միջին և Մայրագոյն Արևելք:*

*Այսօր այս բեմից ուզում եմ ողջունել ներկայութիւնը մեր մէջ Սուրիոյ հայութեան ամենից կենսունակ գաղութից՝ Հալէպից եկած առաջնորդ սրբազանին և աշխարհական պատուիրակութեանը, որոնք եկել են Գիւմրի և բերում են իրենց օժանդակութիւնը բնակարաններ վերակառուցելու աշխատանքին, ինչպէս արել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բոլոր թեմերը: Ես ողջունում եմ նրանց աջակցութիւնը և հանձնարարում եմ Առաջնորդ Սուրէն Սրբազանին, որ երբ վերադառնա ինքը Հալէպ, ժողովրդին դառնայ և լինի թարգմանը մեր սիրոյն, մեր շնորհակալութեան և մեր գնահատանքին:*

*Եղբայրներ և քոյրեր, եկէք հիմայ բոլորս ամփոփուենք, և երբ քիչ ետքը, հոգեհանգիստ մատուցուի, մեզնից իւրաքանչիւրը մտածի և ինք իրեն ասի. ի՞նչ կարող եմ անել, որ իմ եղբայրը ինձ նման և ինձնից աւելի լաւը լինի: Ի՞նչ կարող եմ անել ես, որ ես դառնամ այս ազգին բաժին ընծայելիք անձ և ոչ թէ ազգից բաժին ստանալիք անձ: Ի՞նչ կարող եմ անել, որ իմ ներդրումը կատարեմ իմ ազգի կեանքին և ոչ թէ ես ընդունեմ իմ ազգին բարիքը և դառնամ մի տեսակ շարունակական ընդունող ուրիշի օգնութեան: Ի՞նչ անեմ, որ ես ինձ օգնեմ և ինձ օգնելով, իմ եղբօրը և քրոջը օգնեմ, լինի դա Գիւմրիում, լինի դա Արցախում կամ որևէ մի տեղ մեր մայր հայրենիքում և ողջ հայութեան շրջանում: Եկէք նորոգուենք հոգիով, փոխուենք հոգիով, ուժեղանանք, թիւրեղանանք հոգիով և Աստծուն նայենք Գիւմրիի աղէտից ութ տարիներ ետքը և ասենք. Ո՜վ Տէր, խնայիր մեր երկրին նման աղէտներից, խնայիր որևէ մէկ ժողովրդի աշխարհումս նման աղէտներից, օրհնիր մեզ, որ կեանքի՛ն նայենք և մահուան այցելութիւնից զերծ մնանք ու, կեանքով լեցուելով, նայենք դէպի քեզ, յաւիտեանս յաւիտենից, ամէն:*

*ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ*
*Պատմական գիտությունների դոկտոր*

# ՊԱՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ ՎԱՂ ԵՎ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

## (առաջին շփումներից մինչև 1198 թ. եկեղեցական միության հաստատումը)

(P. Halfter, Das Papsttum und die Armenier im frühen und hohen Mittelalter: von den ersten Kontakten bis zur Fixierung der Kirchenunion im Jahre 1198) / von Peter Halfter. - Köln; Weimar; Wien; Böhlau Verlag, 1996, 350 S.[Porschungen zur Kaiser- und Papstgeschichte des Mittelalters, Beihefte zu J.F.Böhmer, Regesta Imperii 15])

*Հայոց եկեղեցու և Հռոմի Պապության բազմակողմանի փոխհարաբերությունների ուսումնասիրությունն ունի գրեթե երեք ու կես հարյուրամյակի պատմություն[1]: Ի դարում պրպտումներն այս բնագավառում նոր որակ ստացան, հայտնաբերվեցին բազմաթիվ նոր վավերագրեր, գիտական տարբեր դպրոցներ Հռոմի հետ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը հարստացրեցին նոր մոտեցումներով ու լուծումներով: Դեռևս դարասկզբին հիսուսյան հայր*

[1] Պատմաքննասիրական և աստվածաբանական բազմակողմանի ուսումնասիրության հիմքերը դրել է Թեաթինյան կրոնավոր Կղեմես Գալանոսը «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» հտ. 1-2, (Հռոմ, 1650-1658) երկլեզու (հայերեն-լատիներեն) ուսումնասիրության մեջ: Այդ գրքի բոլոր հնատիպ հրատարակությունների նկարագրությունը տե՛ս Ն.Ա.Ոսկանյան, Ք.Ա.Կորկոտյան, Ա.Մ.Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 32-34, 37-38, 110-112:

*Ֆրանսուա Թուռնեբիզը[2] և հատկապես Կ.Պոլսի Պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն[3] ընդհանրացրեցին Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրության ձեռքբերումները՝ մի շարք սկզբունքային հարցերում ցուցաբերելով հակադիր մոտեցումներ: Այնուհետև ուսումնասիրությունը ծավալվեց ավելի մասնավոր խնդիրների շուրջ: Եվ ահա Ի դարավերջին կրկին բարեբախտությունն ունեցանք ականատես լինելու մի նոր աշխատության ծննդի, որի հեղինակը փորձել է ընդհանրացնել եվրոպալեզու հայագիտության և եվրոպական միջնադարագիտության նվաճումներն այս բնագավառում՝ քննության նյութ դարձնելով Հայոց Եկեղեցու փոխհարաբերությունները Հռոմի Պապության հետ 1198 թ. տեղի ունեցած երկու Եկեղեցիների միության բանակցությունների և գերմանական Շտաուֆեր կայսրերի կողմից Կիլիկյան Հայաստանի թագավորությունը ճանաչելու լույսի ներքո[4]:*

*Աշխատանքը բաղկացած է առաջաբանից, երեք մասից, օգտագործված հապավումների, սկզբնաղբյուրների, գրականության և հատուկ անունների ցանկերից: Այն, իբրև դոկտորական ավարտաճառ, 1993 թ. ներկայացվել է Թյուբինգենի Էբերհարդտ-Կարլս-Համալսարանին և հեղինակին բերել ակնկալված կոչումը:*

*Առաջաբանում հեղինակը բարձր է գնահատում այս թեմային վերաբերող հայերենով պահպանված վավերագրագիտական նյութը, որի ավելի մասնագիտական հետազոտությունը թողնում է ապագային[5]: Պ. Հալֆտերն անդրադառնում է նաև իրեն հետաքրքրող թեմային վերաբերող սկզբնաղբյուրների և հետազոտությունների եվրոպալեզու կարևորագույն հրատարակություններին՝ մասնավորապես գնահատելով այն աշխատությունները, որոնք Հայոց Եկեղեցու փոխհարաբերությունները Հռոմի հետ դիտարկել են երկու կողմերի քաղաքական շահերի ետնախորքի վրա[6]:*

*Մենագրության ներածական մասում (էջ 17-84) հեղինակն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեության տարածման ճանապարհներին,*

---

2 Fr.Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris [1910].

3 Մ.Օրմանյան, Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հտ. Ա-Գ, Կ.Պոլիս-Երուսաղէմ, 1912–1927:

4 Հեղինակը գիտական աշխարհին ծանոթ է նաև Die Staufer und Armenien, տե՛ս Von Schwaben bis Jerusalem. Facetten staufischer Geschichte, hg.o.Lorenz S.u.Schmidt U., Sigmaringen 1995 (=Veröffentlichungen des Armenischen Instituts Nr. 61), S.188-208 հետազոտությամբ, որի մեջ արծարծված խնդիրները լայնորեն մեկնաբանվել են գրախոսվող մենագրությունում:

5 Պետք է նշել, որ Պ. Հալֆտերը թեպետ լեզվական խոչընդոտի պատճառով ուղղակիորեն չի օգտվում հայերեն հրապարակումներից և սկզբնաղբյուրներից, սակայն իր բարեկամ Անդրեա Շմիդտի և հրապարակված եվրոպալեզու թարգմանությունների միջոցով, բավական հաջող, փորձում է հաղթահարել այդ բացը:

6 Հեղինակը բարձր է գնահատում ժամանակակից ուսումնասիրողներ Գ. Վինկլերի, Ջ. Տրաձեի, Բ. Համիլտոնի, Վ. Մալեչեկի աշխատանքները:

*ինքնագլուխ ազգային (Ավտոկեֆալ) Եկեղեցու ձևավորման պատմական հանգամանքներին և, հիմնվելով եվրոպալեզու գրականության[7] և Հռոմեական կայսրությունում քաղաքական իրադարձությունների տրամաբանական վերլուծության վրա, Հայաստանի քրիստոնեացումը թվագրում է 311/12 թ.: Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի քաղաքական պայքարի մթնոլորտում լուսաբանում է Հայոց Եկեղեցու անցած պատմական ճանապարհի որոշ առանձնահատկություններ, անդրադառնում Պահլավունի և Աղբիանոսյան տների հակամարտությանը, Հայոց գրերի գյուտին, առաջին աստվածաբանական վեճերին, քրիստոնեության պաշտպանության համար Ե դարում Հայաստանում բռնկված ապստամբություններին[8], բյուզանդա-արաբական պատերազմներին և Է դարի հայ-հունական եկեղեցական փոխհարաբերություններին: Գ. Հալֆտերն ամբողջ ենթավերնագիր է նվիրում վաղ շրջանում Հռոմ քաղաքի և նրա հոգևոր առաջնորդության նկատմամբ Հայոց Եկեղեցու ունեցած վերաբերմունքին: Քննարկելով Տիեզերական Եկեղեցու վերաբերյալ Հայոց մատենագրության պատկերացումները, հեղինակն անդրադառնում է մինչև ԺԱ դարը ստեղծված պատմական երկերի և Դաշանց թղթի փոխազդեցությանը և խաչակրաց արշավանքների դարաշրջանում այդ փաստաթղթի նշանակությանը:*

*Աշխատության երկրորդ՝ հիմնական մասում հեղինակն ուսումնասիրում է Թ-ԺԲ դարերում Հռոմի Պապության հետ Հայոց Եկեղեցու փոխհարաբերությունները՝ մասնավորապես անդրադառնալով Նիկողայոս Ա (858-867), Բենեդիկտոս Է (974-983) և Գրիգոր Է (1073-1085) Պապերի ժամանակաշրջանում Հռոմի դիվանատանը պահպանված վավերագրերին և պատմական սկզբնաղբյուրների վկայություններին: Դեռևս ԺԹ դարի 60-ական թթ. բյուզանդագետ և Եկեղեցու պատմաբան Հովսեփ Հերգենռյոտերը, հիմնվելով Նիկողայոս Ա-ի ժամանակներից հասած վավերագրերի վրա, ենթադրում էր, որ վերջինիս պապության տարիներին արդեն ուղղակի փոխհարաբերություններ են հաստատվել Հռոմի և Հայոց Եկեղեցու միջև[9], իսկ 1925 թ. Էռնեստ Պերելսը հրապարակում է այս Պապի կողմից քրիստոնյա ոմն իշխանի ուղղված՝ հատվածաբար պահպանված մի նամակ[10],*

---

7 Աշխատության մեջ, ցավոք, չեն օգտագործված հայերենով գրված մի շարք կարևոր ուսումնասիրություններ, ինչպես օրինակ՝ Մ. Օրմանյանի, Ն. Ակինյանի, Հ. Ոսկյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Կոգյանի, Հ. Անասյանի, Գ. Անանյանի, Ն. Տեր-Ներսիսյանի, Լ. Խաչիկյանի, Անապատականի, Ե. Քասունու, Թոռ. Վարդանյանի և այլոց աշխատությունները:

8 Տարօրինակ է, որ հեղինակը չի անդրադառնում Զ դարի կեսերին տեղի ունեցած Կարմիր Վարդանի ապստամբությանը և այդ իրադարձության նշանակությանը Հայոց Եկեղեցու պատմության համար:

9 Տե՛ս J.Hergenröter, Photius, Patriarch von Konstantinopel, Bd.I, Regensburg 1867, S.496f.

10 Բացակայում են թղթի սկզբի և վերջի բանաձևերը: Մինչ այս, նամակի հասցեատեր է համարվել բյուզանդական կայսր Միքայել Գ-ը (842-867), իսկ հետագայում՝ նոր դարձի

որի հասցեատեր է համարում Հայոց իշխանին[11]: Անդրադառնալով այս վավերագրի և նույն դարաշրջանի հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների վավերագրերի հաղորդած տեղեկություններին, Գ. Հալֆտերը եկել է այն եզրակացության, որ պապական նամակը Հայոց իշխան Աշոտ Բագրատունուն է ուղարկվել 861 թ., Շիրակավանի ժողովի նախօրյակին[12]: Սակայն մեզ թվում է, որ Աշոտ Ա իշխանաց իշխանին նամակի հասցեատեր հայտարարելուց առաջ, պետք է ավելի ծանրակշիռ փաստարկներ բերվեն: Թեպետ Նիկողայոս Ա-ի թղթում թվարկված շեղումները համապատասխանում են Փոտի կողմից Հայոց Եկեղեցուն ներկայացված մեղադրանքներին, այնուամենայնիվ դա լիակատար փաստարկ չի կարող համարվել Աշոտ Ա-ին այդ նամակի հասցեատեր համարելու համար:

Գ. Հալֆտերը Հռոմի հետ Հայոց Եկեղեցու մերձեցման կարևոր հանգրվան է համարում 981 թ. Լատերանի ժողովին հայ վանական Սիմեոնի մասնակցության փաստը: Անդրադառնալով ԺԱ դարի առաջին կեսի Հայոց Եկեղեցու պատմությանը, հեղինակը թյուրիմացաբար Հայոց Կաթողիկոսների շարքում հիշատակում է նաև Գագիկ Անեցուն (1054-1060)՝ ակներևաբար նկատի ունենալով Անիի վերջին Բագրատունի թագավորին (էջ 112, 357):

Գ. Հալֆտերն իր շարադրանքում անդրադառնում է նաև Կղեմես Գալանոսի ժամանակներից շրջանառության մեջ դրված Գրիգոր է Պապի և Գրիգոր Բ Վկայասեր Կաթողիկոսի փոխհարաբերություններին՝ եզրակացնելով, որ Հայոց Կաթողիկոսը, դաշնակցելով Հռոմին, ցանկացել է հակադրվել բյուզանդական Եկեղեցուն (էջ 120): Այս եզրակացության հիմնական

---

եկած Բուլղարիայի տիրակալը. տե՛ս J.Dujzev, Die Responsa Nicolai I.Papae ad consulta Bulgarorum als Quelle für die bulgarische Geschichte, Festschrift zur Peier des 200-jährigen Bestandes des Haus-, Hof-, und Staatsarcjvs, Bd.I, Wien 1949, S.349-361; նույնի, Medioevo Byzantino-Slavo, Bd.I: Saggi di Storia Politica e Storia e Letteratura Culturale, Roma 1965 (=Raccolta di Studi e Testi), S. 125-48:

11 Nicolae I. Papae Epistolae, ed. E.Perels, Monumenta Germaniae Historica, Epistolae VI, Berlin 1925, Nr.99 (հղումը ըստ Հալֆտերի): Այս նամակին հայագիտության մեջ առաջին անգամ մանրամասնորեն անդրադարձել է Վենետիկի մխիթարյան Հ. Պողոս Անանյանը՝ հրապարակելով նաև իր կատարած հայերեն թարգմանությունը: Տե՛ս Պ. Անանեան, Զաքարիա Հայոց կաթողիկոսի և Աշոտ իշխանաց իշխանի թղթակցութիւնը Փոտ պատրիարքի և Նիկողայոս Ա պապի հետ, Վենետիկ, 1992, էջ 80-93 (Հայագիտական մատենաշար «Բաղմավէպ», 35): Ցավոք, Գ. Հալֆտերին անծանոթ է այս հրապարակումը:

12 Հ. Պ. Անանյանն ենթադրում է, որ այս թուղթը պատասխանն է Շիրակավանի ժողովից հետո Հայոց իշխանի Հռոմ ուղարկած նամակի: Ըստ նրա, Նիկողայոս Ա պապի՝ մեզ հետաքրքրող թուղթը Հայաստան պետք է հասած լինի մոտավորապես 865 թ. (տե՛ս Պ. Անանեան, Զաքարիա Հայոց կաթողիկոսի և Հայոց իշխանաց իշխանի թղթակցութիւնը, էջ 83):

*կավանը Թազարշի խնդրի շուրջ երկու Եկեղեցիների միևնույն տեսակետն է: Հեղինակին իրավամբ անհավանական է թվում, սկսած Մատթեոս Ուռհայեցուց, հայ մատենագրության մեջ ավանդված այն վկայությունը, որ Գրիգոր Բ Վկայասերը այցելել է Հռոմ: Գ. Հալֆտերը նաև զարգացնում է այն միտքը, որ Պահլավունյաց տոհմի Կաթողիկոսներն իրենց նպատակն են համարում Հռոմի հետ Դ դարի դաշինքը վերահաստատելու խնդիրը՝ շրաջանառության մեջ դնելով «Դաշանց թուղթը»:*

*Գրքում հեղինակն ընդարձակարար անդրադառնում է Հռոմի Պապական Եկեղեցու քաղաքական ծրագրերին, և երկու Եկեղեցիների փոխհարաբերությունններն ուսումնասիրվում են այդ ետնախորքի վրա: Պատմական իրադարձությունների ելևէջները ավելի վառ ու նրբագեղ են դառնում, երբ Գ. Հալֆտերը թևակոխում է խաչակրաց ռազմարշավների դարաշրջան: «Խաչակիրները և տեղական հայ իշխանները» ենթավերնագրում ավելի են որոշակիացվում կողմերի նպատակները: Այստեղ, իմ կարծիքով, փոքր-ինչ գերագնահատվում է, առաջին խաչակրաց ռազմարշավից հետո, եվրոպական մշակույթի ազդեցությունը հայկական իշխանական տների վրա: Հեղինակը փորձում է ցույց տալ, թե Ա խաչակրաց ռազմարշավից հետո Արևելքում լատին Եկեղեցու եպիսկոպոսական և պատրիարքական Աթոռների հիմնումը որքան նպաստավոր ազդեցություն է ունեցել Հայոց Եկեղեցու հետ փոխհարաբերությունների մերձեցման խնդրում: Հեղինակն իրավացիորեն երկրորդական չի համարում Բյուզանդական կայսրությանը հակադրվելու կողմերի միտումը: Սակայն, իրադրությունն ավելի շոշափելի դարձնելու համար, կարելի էր նաև անդրադառնալ Եդեսիան, Անտիոքը և Հյուսիսային Ասորիքը խաչակիրներին հանձնելու հայ ազնվականության և բնակչության ձգտմանը և խաչակիրների առաջնորդների նկատմամբ ունեցած հուսախաբությանը, քանի որ նրանք դավադրաբար սպանում են Եդեսիայի իշխան Թորոսին: Հեղինակն ամենևին չի ծավալվում այն իրողության շուրջ, որ խաչակիրները փաստորեն իրենց օժանդակած բնակչությանը խաբելով. են տեր դարձել Ուռհային՝ ստեղծելով Եդեսիայի լատին կոմսությունը: Նա չի անդրադառնում նաև ԺԲ դարում Դաշտային Կիլիկիայի համար Ռուբինյան իշխանական տան և խաչակիրների մղած պայքարին*[13]*:*

*Գ. Հալֆտերը ուսումնասիրելով իրեն հասու ողջ նյութը, եկել է այն համոզման, որ Հայոց և Հռոմի Եկեղեցիների փոխհարաբերությունների մերձեցումը միշտ ուղիղ համեմատական է բյուզանդական Եկեղեցու հետ նրանց փոխհարաբերությունների վատացմանը: Այդպիսի մի իրադարձություն էր ստեղծվել նաև 1136-8 թթ. Հովհաննես Բ Կոմնենոսի Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք կատարած ռազմարշավի ընթացքում*[14]*, երբ բյու-*

---

13 Այդ մասին տե՛ս Ա. Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թթ., Երևան, 1988, էջ 80-97, 164-190:

14 Գ. Հալֆտերը չի անդրադարձել ռազմարշավի շուրջ գրված ծովածավալ գրականությանը և, հետևելով այդ հարցին կողմնակիորեն անդրադարձած Ա. Տեր-Միքելյանի, Ս. Տեր-Ներսեսյանի, Բ. Համիլտոնի և Կլ. Մութաֆյանի աշխատանքներին, Բյուզանդական

*զանգական կայսրը իր իշխանությունն էր պարտադրում նաև Անտիոքի պատրիարքական Աթոռին՝ ստիպելով այն վերադարձնել Հունական Եկեղեցու տնօրինությանը: Այս տարիներին Հռոմի իրավասությունից փորձում է դուրս գալ նաև Անտիոքի լատին Պատրիարք Ռալֆ Դոմֆրոնտը՝ փորձելով իր հավակնությունները հիմնավորել այն ավանդույթի վրա, որ Անտիոքի Աթոռը դիտվում է որպես Պետրոս առաքյալի առաջին նստավայր*[15]*, և դրանով իսկ հակադրվել է Հռոմի Պապի իշխանությանը: Ըմբոստ Պատրիարքի նկրտումներին վերջ դնելու միտումով, Հռոմի Պապ Իննոկենտիոս Բ-ը Արևելք է ուղարկում Օստիայի կարդինալ-արքեպիսկոպոս Ալբերիկին, որը 1140 թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 2-ին հրավիրած ժողովում պաշտոնանկ արեց Ռալֆ Դոմֆրոնտին: Միաժամանակ Ալբերիկ Օստիացին, ըստ Գ. Հալֆտերի, իր հրավիրած ժողովների մասնակիցն է դարձնում նաև Հայոց Կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունուն և նրա եղբայր Ներսես Շնորհալուն: Այս դրույթը հիմնավորելու համար Գ. Հալֆտերը վկայակոչում է նաև Վիլհելմ Աուրացու մինչ այս շրջանառության մեջ չմտած ուղղակի վկայությունը*[16]*, անդրադառնում Ալբերիկ Օստիացու Երուսաղեմում հրավիրած ժողովին, որին Հայոց Կաթողիկոսի մասնակցությունն անկասկած է համարում*[17]*: Գրքի հեղինակը մանրամասնաբար քննարկում է նաև Իննոկենտիոս Բ Պապի՝ Գրիգոր Գ Պահլավունուն գրած նամակը, որը պահպանվել է միայն հայերեն բնագրով: Հետևելով Գ. Ամատունուն, Գ. Հալֆտերն այդ նամակը թվագրում է 1141 թ. սեպտեմբերի 25-ով և վավերագրի հայերեն թարգմանության հեղինակ է համարում Ներսես Լամբրոնացուն: Իհարկե, հայտնի է, որ Տարսոնի արքեպիսկոպոսն այդ թուղթը ներմուծել է իր ժողովածուի մեջ, սակայն նույն հաջողությամբ կարելի էր նաև ենթադրել, թե վավերագրի թարգմանիչը Ներսես*

---

ռազմարշավը թվագրում է 1137 թ.: Այս իրադարձության թվագրության մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Ա. Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը..., Երևան, 1988, էջ 102-113:

15 B.Hamilton, Ralph of Domront, Patriarch of Antioch (1135-1140), տե՛ս Notlingham Medieval Studies 29 (1984), S.10; R.Hiestand, Ein neuer Bericht uber das Konzil von Antiochia, տե՛ս Annuarium Historiae Conciliorum 19(1987), S.329-335 (տե՛ս հղումը ըստ Գ.Հալֆտերի):

16 Guillaume de Tyr, Chronique, éd.R.B.C.Huygens, Identification des sources historiques et déterminations des dates par H.M.Mayer et G.Rösch, Tvrnholti 1986 (=Corpus Christianorum. Continuatio Mediaeualis, LXIII), S.245:

17 Ի տարբերություն Գ. Հալֆտերի, Ժ. Դեդեյանն Անտիոքում հրավիրված ժողովը թվագրում է 1139 թ. նոյեմբերի 30-ով, իսկ Երուսաղեմինը՝ 1140 թ. ապրիլով (տե՛ս G.Dédéyan, Le rôle complémentaire des fréres Pahlawuni Grégor III, catholicos, et saint Nersès Snorhali, coadjuteur, dans le rapprochement avec les latins, à l'époque de la chute d'Edesse(v.1139-1150), REArm, N.S.XXIII(1992), p.241):

*Շնորհալին է՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ պապական թղթում նրա մասին խոսվում է իբրև լատիներեն լեզվի հմուտ գիտակի*[18]*:*

*Հռոմի հետ Հայոց կաթողիկոսարանի վարած բանակցությունների հաջորդ փուլը թվագրվում է 1145 թ. նոյեմբերով: Այս բանակցությունների շարժիչ հանգամանքների մեջ ևս, ըստ Գ. Հալֆտերի, քիչ դեր չի կատարել հայ-բյուզանդական հակամարտությունը, որում Հռոմի Պապ Եվգենիոս Գ-ն իր համար ընտրել էր հաշտարար դատավորի դերը: Բաղարջի հարցը մնում էր Հռոմի և Հայոց Եկեղեցիների մերձեցման կարևորագույն կետ: Հետաքրքիր է, որ այսուհետև Հայոց Եկեղեցին ավելի հաճախ է հիշատակվում պապական վավերագրերում*[19]*: ԺԲ դարի 60-70-ական թվականներին հայ-բյուզանդական եկեղեցական միութենական բանակցությունների անարդյունք-ելքից հետո, Բյուզանդական կայսրությունում կրկին հալածանքներ են սկսում Հայոց Եկեղեցու դեմ, և Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը 1184 թ. իբրև դեսպանագնաց Հռոմ է ուղարկում Փիլիպպուպոլսի (այժմ՝ Պլովդիվ) արքեպիսկոպոս Գրիգորին*[20]*: Մեզ է հասել այդ դեսպանագնացությունից հետո Գրիգոր եպիսկոպոսի Հռոմից բերած Լուկիոս Գ-ի թուղթը, որը պահպանվել է միայն Ներսես Լամբրոնացու հայերեն թարգմանությամբ: Ելնելով այս վավերագրերի բովանդակությունից և այն համեմատելով Գրիգոր Է և Իննոկենտիոս Բ Պապերից հասած նամակների հետ, Գ. Հալֆտերը եզրակացնում է, որ այս շրջանում հայ-հռոմեական փոխհարաբերությունները նոր որակ են ստանում. Հռոմի Պապ Լուկիոս Գ-ը Հայոց Եկեղեցին վերցնում է իր հովանու ներքո, Կաթողիկոսին անվանում իր եղբայրը՝ ուղարկելով նրան պալիում և միթրա: Այս ավանդույթը շարունակվում է, և հետագա Կաթողիկոսները ևս ստանում են իշխանության նույնանման նշաններ: Լուկիոս Գ-ի նամակում Հռոմի Եկեղեցու պահանջները մնում են նույնը՝ ա) պատարագի գինուն ջուր խառնել, բ) Սբ. Ծնունդը տոնել դեկտեմբերի 25-ին*[21]*: Լուկիոս Գ-ը Հռոմկլա է ուղարկում նաև Հռոմի Եկեղեցու ծիսարանը՝ առաջարկելով Հայոց Եկեղեցու տոնացույցն ու ծեսը հարմարեցնել Հռոմեականին: Լատին ծիսարանի թարգմանությունը Ներսես Լամբրոնացու կողմից իբրպես նոր քայլ էր հայ-*

---

18 ՄՄ-1026, թղ. 230բ, հմմտ. Ա. Տէր-Միքելեան, Միջին դարերի կաթուղիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, «Արարատ», 1893, էջ 137-138:

19 G.Morin, Le Discour d'Ouverture du Concile Général de Latran (1179) et l'Oeuvre littéraire de Maitre Rufin, éveque d'Assise, տե՛ս Mémoire della Pontifica Accademia Romana di Archeologia, Bd.II(1928), S.120, ծան. 54 (հղումը ըստ Գ. Հալֆտերի):

20 Այս փոխհարաբերություններում Փիլիպպուպոլսի դերի մասին տե՛ս Ա. Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Երևան, 1995, էջ 206-221:

21 Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Հռոմի Եկեղեցին մինչև ԺԲ դարի վերջը որևէ հավատաբանական գիջում չի պահանջում՝ Հայոց Եկեղեցու դավանանքը անվանելով ուղղափառ:

հռոմեական փոխհարաբերություններում, քանի որ այդ բնագիրն այնուհետև լայնորեն օգտագործվում է ԺԳ դարում շրջանառության մեջ մտած և հայագիտությանը հայտնի Սսի Մաշտոցում: Լուկիոս Գ Պապի իշխանության տարիներին հայ-հռոմեական եկեղեցական բանակցությունների արձագանքները ԺԳ դարի հայ մատենագրության մեջ, հատկապես Վարդան Արևելցու մոտ, Պ. Հալֆտերը դիտում է «Դաշանց թղթի» ազդեցության արդյունք: Ըստ այդ միտումի, Հայոց Կաթողիկոսներն արդեն ԺԲ դարի վերջից ձգտում են գլխավորել արևելյան մյուս եկեղեցիները՝ օգտագործելով Հռոմի Եկեղեցու հեղինակությունը: Անշուշտ, ուշագրավ է նաև Պ. Հալֆտերի այն պնդումը, որ Գրիգոր Թ Պապը 1238 թ. փորձել է «Դաշանց թուղթը» օգտագործել Ֆրիդրիխ Բ-ի դեմ իր պայքարում[22]:

Հայոց Եկեղեցու հեղինակությունը Հռոմի Եկեղեցու աչքում հետզհետե բարձրանում է Գ խաչակրաց ռազմարշավի նախօրեին: Արդեն Կղեմես Գ-ի համար Կիլիկյան Հայաստանը դիտվում է Հռոմի և խաչակրության հիմնական դաշնակիցը: Հռոմի հետ փոխհարաբերությունները թևակոխում են մի այնպիսի դարաշրջան, երբ մասնատված խաչակրաց իշխանությունները թուլանում էին՝ կորցնելով տարածքներ, իսկ Ռուբինյան հայկական իշխանությունը օրեցօր հզորանում էր: 1187 թ. հուլիսի 4-ին Սալահ ադ-Դինը Հատինի ճակատամարտում պարտության մատնեց Երուսաղեմի թագավորությանը և նվաճեց Արևելքում խաչակրաց պետությունների տարածքների մեծ մասը: Հռոմի պապության աչքում մուսուլմանական աշխարհի դեմ պայքարի առաջամարտիկը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանությունը և Հայոց բանակը, որի ռազմական հաջողությունների մասին հարգանքով են խոսում դարաշրջանի սկզբնաղբյուրները[23]: Այս առումով ուշագրավ է Կղեմես Գ-ի՝ Հայոց Կաթողիկոսին և Լևոն իշխանին հասցեագրած նամակները, որոնց մեջ Պապը կոչ է անում աջակցել Գ խաչակրաց ռազմարշավին: Այս նամակները հայերեն է թարգմանել Ներսես Լամբրոնացին և Լատին Մաշտոցի հետ միասին զետեղել վերոհիշյալ ժողովածուի մեջ: Պ. Հալֆտերն այս վավերագրերը թվագրում է 1189 թ. մայիսի 29-ով:

Գրքի այս մասում քննարկվում են նաև Կիլիկիայի Ռուբինյան իշխանության և Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունները ոչ միայն լատին Արևմուտքի և խաչակիրների հետ, այլ նաև մուսուլմանական Արևելքի պետությունների հետ: Հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի և Հյուսիսային Հայաստանի՝ եկեղեցական միության նկատմամբ

---

22 Այս կապակցությամբ Պ. Հալֆտերը հղում է հետևյալ հետազոտությունը. R.Hiestand, Die Integration der Maroniten in die römische Kirche. Zum ältesten Zeugnis päpstlichen Kanzlei (12.Jahrhundert), տե՛ս Orientalia Christiana Periodica, 54 (1988) S.139-141.

23 Der-Nersessian, The Kingdom S.644; Wilhelm Tyrensis Chronicon(=Corpus Christianorum. Continuatio Medievalis, Bd.LXIII), 12,18, S.568, տող 11:

ունեցած հակամետ քաղաքական դիրքին: Այստեղ Գ. Հալֆտերը հարցը չատ է պարզեցրել՝ բացարձակեցնելով ԺԲ դարի Բ կեսին կաթոլիկ եկեղեցու և արևմտաեվրոպական մշակույթի ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում ու դրան հակառակ՝ մուսուլմանկան բարքերի փոխառումը Հյուսիսային Հայաստանում: Այս դարաշրջանում բախվում էին Հայոց եկեղեցու ներսում ձևավորված երկու համազոր ուղղություններ, որոնք Հայոց եկեղեցու և մշակույթի ինքնության ապահովման համար տարբեր դեղատոմսեր էին առաջարկում: «Ձորագետցիները», որոնք բնակվում էին զուտ հայկական միջավայրում, սակայն վրաց պետության հովանու ներքո, դեմ էին ամեն կարգի ծեսա-դավանական զիջման, իսկ «կիլիկեցիները», ապրելով արևելաքրիստոնյա տարբեր ժողովուրդների միջավայրում, Հայոց ազգային և մշակութային վերելքը կապում էին Կիլիկիայում հաստատված այլ եկեղեցիների և քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ հաստատվելիք կապերի հետ՝ աջակցելով նրանց հետ մերձենալուն:

Գ. Հալֆտերը, հիմնվելով Ներսես Լամբրոնացու «Ատենաբանության» և Լևոն Բ իշխանին ուղղված նամակի տեղեկությունների վրա, Հայոց եկեղեցում Տարսոնի եպիսկոպոսի կատարած բարենորոգումների մասին վկայությունները համարում է ծիսական տարբերությունների վերացում Հռոմի պապական եկեղեցու նմանողությամբ: Նման պնդումը, իմ կարծիքով, չի համապատասխանում պատմական իրականությանը: Բանն այն է, որ և՛ «Ատենաբանութեան» մեջ, և՛ Լևոն Բ իշխանին ուղղված թղթում հիմնականում խոսվում է Հայոց եկեղեցու և հույն-օրթոդոքս եկեղեցու փոխհարաբերությունների մասին: Այդ տեսանկյունից կասկածելի է նենթակա նաև Գ. Հալֆտերի այն պնդումը, որ «Ատենաբանութիւնն» ընթերցվել է ոչ միայն 1178 թ. ապրիլին տեղի ունեցած Հռոմկլայի ժողովում[24], այլ նաև 1196 թ. Հռոմի եկեղեցու հետ միություն կնքելու նպատակով հրավիրված Տարսոնի ժողովում[25]: Խնդիրն այն է, որ Ներսես Լամբրոնացու «Ատենաբանությունն» ամբողջովին հարմարեցված է հույների պահանջած ինը կետերին: Այս հանգամանքը հատկապես ակնհայտ է, երբ անդրադառնում ենք բաղարջի խնդրի նկատմամբ Ներսես

---

24 Գ. Հալֆտերը, հետևելով ԺԹ դարում հայագիտության մեջ ընդունված թվագրությանը, որն անցել է նաև եվրոպական միջնադարագիտություն, Հռոմկլայի ժողովի տարեթիվ է համարում 1179 թ.: Իմ ուսումնասիրության մեջ, բերելով պահպանված վկայությունները, այդ ժողովը թվագրում եմ 1178 թ. ապրիլի երկրորդ տասնօրյակով (տե՛ս Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165–1178), Երևան, 1995, էջ 183–185):

25 Դեռևս դարասկզբին հայտնի էր Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւնը» որպես Տարսոնի ժողովում ընթերցված վավերագիր: Սակայն Հ. Ն. Ակինյանը կարողացավ համոզիչ կերպով ապացուցել, որ այդ վավերագրի մինչ այդ շրջանառության մեջ եղած վերնագիրը ուշ ժամանակների խմբագրություն է, իսկ 1205 թ. այս երկի ընդօրինակության վերնագրում Տարսոնի ժողովի մասին որևէ ակնարկ չկա (տե՛ս Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1955, էջ 188–197):

*Լամբրոնացու մոտեցմանը[26]: Պետք էր նաև ընդգծել, որ մինչև ԺԲ դարի վերջը Հռոմի պապությունը Հայոց եկեղեցու հավատաբանությունը համարում է ուղղափառ և դավանաբանական զիջումներ չի պահանջում:*

*Կղեմես Գ-ի խաչակրաց նախաձեռնությունները բազմակողմանի էին, սակայն պապական կուրիայի հետաքրքրությունը Հայոց Եկեղեցու նկատմամբ ավելի է ուժեղանում Իննոկենտիոս Գ Պապի իշխանության տարիներին (1198–1216): Մեզ է հասել այս Պապի թղթակցությունը Լևոն Ա թագավորի, Գրիգոր Զ Ապիրատի և Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսի հետ: Պ. Հալֆտերը քննարկում է այդ ժամանակաշրջանի պապական վավերագրերը և անդրադառնում Լևոնի թագադրության ժամանակին ու հանգամանքներին (էջ 189–245): Պ. Հալֆտերը Լևոնի թագադրությունը Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելսբախի ձեռքով թվագրում է 1198 թ. հունվարի 6-ով, անդրադառնում Կիլիկիայի և Անտիոքի հակամարտությանը ԺԲ դարի վերջին[27] և ցույց տալիս, որ Կոնրադ Վիտելսբախը հանդես է եկել երկու կողմերի միջև միջնորդի դերում[28]: 1197 թ. դեկտեմբերին Հայոց Եկեղեցու և Հռոմի միջև կնքված միությունից հետո, 1198 թ. հունվարի 6-ին, Մայնցի արքեպիսկոպոսն Անտիոքում թագավոր է օծում Լևոնին (էջ 234): Ականատես լատին պատմիչներն ու մեզ հասած վավերագրերը Հայոց թագավորի թագադրումը համարում են Կաթոլիկ Եկեղեցու փառավոր հաղթանակը (էջ 243–245): Հռոմի Պապին ուղարկված Կաթողիկոսի հավատարմագիրը, ըստ Պ. Հալֆտերի, Լևոնի թագադրության և եկեղեցիների միության կարևոր վավերագիր է: Այն թարգմանվել է հայերենից լատիներենի[29]: Պ. Հալֆտերն այդ երդմնագիրը թվագրում է 1198 թ. փետրվարով, երբ Հայոց Կաթողիկոսը չգիտեր Կոելեստին Գ-ից հետո պապական Աթոռը զբաղեցնող հոգևորականի անունը (էջ 251): Կոնրադի և պապական կուրիայի նպատակն էր, ամրացնելով Կիլիկիայի պետությունը՝ հենակետ ստեղծել Երուսաղեմը գրավելու համար (էջ 257): Զափազանց հետաքրքիր է Պ. Հալֆտերի այն պնդումը, որ Կոնրադ Վիտելսբախը Լևոնին թագավոր է օծել ոչ թե Հռոմի Պապի, այլ՝ Գերմանական կայսրության անունից[30]: Քննարկելով վավերագրերը, Պ. Հալֆտերը եկել է այն եզրակացության, որ պապության և Կիլիկիայի*

---

26 Հայերեն բնագիրը իտալերեն թարգմանությամբ տե՛ս Orazione Sinodale di S.Nierses Lambronense arcivesco di Tarso in Cilicia / Recata in Lingua Italiana dall'Armena ed illustrata con annotazioni dal P.Pasquale Aucher, Venezia 1812, p. 130-131.

27 Cahen, La Syrie S.591-595.

28 Arnoldi Chronica Slavorum S.212; Die Register Innocenz' III.2. Pontificatsjahr, Nr.242(252) S.465-47; Fontes CICO II, App.I Nr.7 S.560.

29 Die register Innocenz' III. 2. Pontificatsjahr S. 404-406.

30 Liber iurum reipuplicae Genuensis ed. E.Ricotti, Bd.I, Augustae Taurinorum 1854 (=Historiae Patriae Monumenta, Tom.VII), S. 468 f.

*թագավորության միջև չէին կարող լինել վասալական փոխհարաբերություններ: Կիլիկիայի Թագավորը կայսեր ստորական էր (էջ 265-269)[31]:*

*Գ. Հալֆտերը, վերլուծելով ԺԲ դարի Բ կեսի հայ-հռոմեական բանակցությունների տրամաբանությունը, փոխհարաբերությունների առաջին քայլ է համարում Լուկիուս Գ-ի և Գրիգոր Դ-ի բանակցությունները, որոնք Վարդան պատմագիրը համարում է Սեղբեստրոսի և Գրիգոր Լուսավորչի դաշինքի վերահաստատում: Հաջորդ քայլ է դիտվում Կոելեստին Գ-ի և Լևոն Բ իշխանի փոխհարաբերությունները, երբ Պապի կողմից թագավորության ճանաչման դիմաց եկեղեցիների միության դաշինք է կայացել: Բուն Հայաստանում շարժում է սկսվում միության դեմ, որը 1113 թվականից ղեկավարում են Աղթամարի Կաթողիկոսները, իսկ 1193 թ.՝ Հաղբատ ու Սանահին վանքերը՝ Բարսեղ Անեցու ղեկավարությամբ[32]: Իկոնիայի սուլթանությունը 1198 թ. միջամտում է Հայոց եկեղեցու ներքին գործերին՝ հակաթոռ Կաթողիկոս դարձնելով Անանիային[33]: Ըստ Գ. Հալֆտերի, արդեն ԺԳ դարի առաջին կեսին Հայոց եկեղեցին Հռոմի հանդեպ 1198 թ. վերցրած իր պարտականությունները չէր կատարում[34]:*

*Երբ 1226 թ. Հեթումյաններն անցան իշխանության գլուխ, եկեղեցական միությունը դեռևս դիտվում էր արտաքին քաղաքական որոշում[35]: ԺԳ դարի կեսերից Հռոմի պարտադրանքով Հայոց եկեղեցական ժողովներում քննարկման են դրվում մի շարք դավանաբանական հարցեր: 1243 թ. Կոստանդին Ա Կաթողիկոսը հրավիրում է Սսի եկեղեցական ժողովը, իսկ 1251 թ. քննարկում Իննոկենտիոս Դ-ի պարտադրած* «filioque»*-ի խնդիրը: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ վերջին հարցի քննարկման ժամանակ անցել է Վանական վարդապետի ձեռնադրումը, որը համապատասխանում է Շիրակավանի ժողովի որոշմանը: Հեղինակի ուշադրությունը չի գրավել նաև այն փաստը, որ ԺԳ դարի Կիլիկյան աստվածաբանների մի նշանակալի մասը (Վարդան Արևելցի, Մխիթար Տաշրացի և ուրիշներ) ծագումով Հյուսիսային Հայաստանից էին և փորձում էին անցկացնել Հյուսիսային Հայաստանի ծիսա-դավանաբանական տեսակետները:*

---

31 Եվրոպայում վասալական հարաբերությունների մասին տե՛ս S.Hauser, Staufische Lehnspolitik am Ende des 12.Jahrhunderts, Tuhingen 1986; LScheiding-Wulkopf, Lehnsrechtliche Beziehungen der frankisch-deutschen Könige zu anderen Staaten vom 9.bis zum Ende des 12.Jahrbunderts, Marburg 1948(=Marburger Studien zur alteren deutschen Geschichte hg.von E.Stengel, II. Reihe 9. Stük), S.93; H.Mitteis, Der Staat des hohen Mittelalters, 11. univeränderte Auflage, Darmstadt 1986, S.173.

32 Tournebize, Histoire S.235f.; Hamilton, The Armenian Church S.64; Cuneo, Zarian, Uluhogian, Thierry N und M., Ani, S. 77.

33 Berberian, La Patriarcat arménien du Sultanat de Roum, տե՛ս REArm.,N.S.3(1966), S.239.

34 Հմմտ. նաև Cannuyer C., Les Arméniens dans l'Historia Orientalis de Jacques de Vitry, տե՛ս REArm., N.S.17(1983), S.197-199

35 Sempad, Shronik S.648; Hamilton, The Armenian Church, S.78.

*ԺԳ դարի 40-ական թվականներից Մերձավոր Արևելքում կարևոր դեր են սկսում խաղալ մոնղոլները, որոնց հետ Կիլիկիան ԺԳ դարի 40-ական թթ. դաշինք հաստատեց: Եվրոպան փորձեց օգտվել այդ իրադարձությունից: 1248 թ. Լյուդովիկոս Թ-ն, հասնելով Կիպրոս, ընդունեց ժամանած հայկական դեսպանությանը: Հիշարժան է, որ այդ բանակցություններին մասնակցել են նաև Անտիոքցիները: 1260 թ. Այն Ղալութի ճակատամարտից հետո, երբ մամլուկները հաղթանակի հասան, մոնղոլների հետ կապված հույսերը ի դերև ելան:*

*Հիշյալ ճակատամարտից մեկ տարի անց Աքքա է գալիս պապական նվիրակ Թովմաս Լենտինացին, որի հետ հանդիպեցին Կիլիկիայի թագավորի դեսպանը և կաթողիկոսական նվիրակ Մխիթար Սկեռացին (Տաշրացի)[36]: Այս բանակցություններում քննարկվում էր Հռոմի Եկեղեցու առաջնության հարցը. այստեղ Մխիթար Սկեռացին հիմնավորում էր Հայոց Եկեղեցու առաքելականության դրույթը: 1260 թ. Ալեքսանդր Դ Պապը եվրոպական տերություններին կրկին կոչ է անում օգնության հասնել Արևելքի քրիստոնյաներին[37]: Մխիթար Սկեռացու երկից երևում է, որ քաղաքական իրավիճակը ազդել է Հայոց Եկեղեցու դիրքի վրա: Լիոնի Բ ժողովին հայերը ներկայացուցիչ չեն ուղարկում, սակայն փոխհարաբերությունները բավական սերտ են գերմանական վանական կարգերի հետ: Հռոմը և Կիլիկիան միասնական ուժերով են հանդես գալիս մամլուկների դեմ: Հայերը Մառիի կիրճում պարտություն են կրում և ստիպված պայմանագիր կնքում մամլուկների հետ:*

*Արղունի ժամանակ շարունակվում էր հայ-մոնղոլական դաշինքը[38]: Ստեփան Դ Կաթողիկոսը (1290-1293) նամակ է գրում Պապին, և Հռոմկլայում տեղի է ունենում միության եկեղեցական ժողով[39]: 1291 թ. Աքքայի անկումով և Արղուն խանի մահով փոխվում է իրադրությունը: 1292 թ. գարնանը Հռոմկլան գրավում են մամլուկները: 1307 թ. տեղի է ունենում Սսի միութենական ժողովը[40], որն իր ողջ հույսը կապում էր արդեն լատին Եվրոպայի հետ: Ուղղափառ են հայտարարվում առաջին յոթ Տիեզերական ժողովները, պատարագի ժամանակ պարտադիր է համարվում ջրախառն գինին:*

---

[36] RHC, Doc.Arm.,Bd.I, S.689-698. Այս դեսպանագնացության աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Ա. Բոզոյան, Մխիթար վարդապետ Տաշրացին (Սկեռացին)՝ Հայոց Եկեղեցու Նվիրապետական կառույցի պաշտպան, Գանձասար, Ե (1994), էջ 137-157, Զ (1996), էջ 403-420:

[37] Menko, Chronicon Werumensium, MG SS XXIII, S. 547-549; A.Potthast, Regesta Pontificum Romanorum...,Bd.I, Nr.17964.

[38] Weiers, Die Mongolen im Iran S.317-322.

[39] Tournebize S. 300-301; Bundy, Armenian Relations S.28; Petit, Art."Arménie.Conciles"Sp.1391; RHC, Doc.Arm., Bd.I, S. 553-555 Z.138-227.

[40] D.D.Bundy, The Council of Sis, in: Laga/Munitz/Van Rompay, After Chalcedon, S. 51; Hamilton, The Armenian Church S. 85; Balgy, Historia doctrinae S.301-312.

*Ավանդապահները ընդդիմանում էին լատինների հետ միությանը: 1309 թ. ավանդապահները Սսում հրավիրում են հակադիր եկեղեցական ժողով: Սակայն 1316 թ. Ադանայի և 1342 թ. Սսի ժողովները կրկնեցին 1307 թ. ընդունված որոշումները: Պայքար ծավալվեց երկու կուսակցությունների միջև[41]: Ըստ Հալֆտերի, լատինասերները (կամ ունիթորները) կարծում էին, թե եկեղեցական միությամբ հնարավոր կլինի ռազմական մեծ օգնություն ստանալ Արևմուտքից:*

*Ճակատագրի ծաղրով երկու կուսակցությունների պայքարը թուլացրեց Կիլիկիայի թագավորությանը: Ունիթորները հաստատվեցին Նախիջևանում և սկսեցին զբաղվել լայն գրական գործունեությամբ[42]: Նրանց երկերում ավանդապահները սկզբում մեղադրվում էին 19 ծիսադավանաբանական սխալներում: Ներսես Պալիանենցի Ավինյոն այցելությունից հետո, շրջանառության մեջ դրվեցին Բենեդիկտոս ԺԲ Պապի՝ հայերին ներկայացրած 117 մեղադրանքները[43]: Դրությունն ավելի օրհասական դարձավ, երբ քաղաքական իշխանությունն իրենց ձեռքը վերցրեցին Լուսինյանները: Սսում հաստատված Հայոց կաթողիկոսարանը փորձում էր Մեսրոպ Ա Կաթողիկոսի (1359–1372) իշխանության տարիներին վերականգնել Հայոց Եկեղեցու հեղինակությունը:*

*Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության մեջ Գ. Հալֆտերը, հետևելով իր նախորդներին, առանձնացնում է մի շարք առանցքային հանգրվաններ: Մլեհի ժամանակ Կիլիկիայի հայկական պետությունն իր նպատակներին հասնելու համար ընտրեց Հալեպի կառավարիչ Նուր ադ-Դինի հովանավորությունը, սակայն այդ քաղաքականությունը ավարտվեց ձախողումով[44]: Այս հանգամանքն արդեն իսկ վկայում է այն մասին, որ Կիլիկիայի հայկական պետությունն արդեն ԺԲ դարում մի կողմից նպատակ ուներ պահպանել երկրի տարածքները մուսուլմանական շրջապատման մեջ, իսկ մյուս կողմից՝ մշակութային ամբողջականությունը, որը վտանգվում էր խաչակիր քրիստոնյաների կողմից: Ըստ Գ. Հալֆտերի, 6.01.1198-ի թագադրումով հայկական թագավորությունը՝ չմտավ խաչակրաց Արևելքի պետությունների կազմի մեջ: Մոնղոլների հետ դաշինքը նոր հեռանկարներ բաց արեց Կիլիկիայի*

---

41 Այդ երկու կուսակցությունների մասին տե՛ս D.D.Bundy, The Anonymous Life of Georg Skewrac'i in Erewan 8356. A Study in Medieval Armenian Historiography and History, in: REArm.,N.S.18(1984), S.497f, ders., Hetums La Flore Des Estoires De la Terre D'Orient. A Study in Medieval Armenian Historiography and Propaganda, in: REArm.N.S.20(1986/ 87), S. 223-235.

42 M.Oudenrijn, Uniteurs et Dominicains d'Arménie, Oriens Christianus, 40(1956), S.94-112; 42(1958), S.110-133; 43(1959), S.110-119; 45(1961), S.95-108; 46(1962), S.99-116; Petrowicz, I Fratres Unitores S.309-347.

43 Winkler, The political Influance S.120-124; Balgy, Historia doctrinae S.81-86; Հմմտ. նաև Ց. Անասեան, Հայոց մոլորական համարուած գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի, տե՛ս նույնի՝ Մանր երկեր, Լոս Անջելես 1987, էջ 303-306:

44 Mutafian, La Cilicie S.400-402; Der-Nersessian, The Kingdom S.642f.

*Հայոց թագավորության առջև, սակայն փառավոր ժամանակներն ավարտվեցին 1266 թ. սուլթան Բեյբարսի ներխուժումով, որից հետո Կիլիկիան սկսեց կենաց-մահու կռիվ մղել սեփական անկախության համար: Հեղինակին հետաքրքրող հարցերից մեկն էլ այն է. թե Հայոց պետությունը որքանո՞վ էր ձուլվել լատին Արևելքի պետությունների հետ, քանի որ մոնղոլների ժամանակ Կիլիկիայի հայկական պետությունը, ճանաչելով վերջիններիս գերագահությունը, ցանկանում էր մոտեցնել քրիստոնեական Արևելքի և Արևմուտքի շահերը:*

*Եկեղեցու միության հարցում Հայոց Եկեղեցին չէր ցանկանում ընդունել Հռոմի գերագահությունը, չնայած վերջինս արդեն ԺԲ դարի վերջից փորձում էր իր կառուցվածքի մեջ մտցնել Հայոց եկեղեցական կազմակերպությունը: Պապության՝ նման քաղաքականությունն անընդունելի էր ոչ միայն Եկեղեցու, այլ նաև Կիլիկիայի հայկական պետության համար: Հայոց Եկեղեցին Հռոմի հետ դիվանագիտական փոխհարաբերությունների ընթացքում փորձում էր սեփական ինքնությունը ապահովել Անտիոքի պատրիարքության իրավասությունների ձեռք բերման ճանապարհով: Նման ակնկալիքներով կարելի է բացատրել նաև ԺԲ դարի վերջի[45] և ԺԳ դարի սկզբի Կիլիկիայի հայկական իշխանության երկարատև պատերազմները Անտիոքի գահի համար խաչակրաց նույնանուն դքսության դեմ: Չափազանց կարևոր է հեղինակի այն եզրակացությունը. որ 1198 թ. Հայոց թագավորությունը ճանաչվել է ոչ թե Հռոմի պապության, այլ Գերմանական կայսրության սարրակա:*

*Հռոմի հետ Հայոց Եկեղեցու փոխհարաբերություններն ավելի շոշափելի դարձնելու համար արժեր նաև գրքի վերջում բերել Հռոմի Պապերի և Հայոց Կաթողիկոսների գահակալման ցանկերը, պահպանված վավերագրերի համառոտ նկարագրությունները: Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը նաև քարտեզագրեր ուսումնասիրված նյութը:*

*Մատնանշված ցանկությունները և դիտողությունները, սակայն, չեն նսեմացնում կատարված մանրակրկիտ աշխատանքի արժեքը. այն կարևոր քայլ է Հայոց Եկեղեցու և Հռոմի պապության բազմադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում և կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ այդ փոխհարաբերությունների հետագա ուսումնասիրության ասպարեզում: Ցանկանք հեղինակին նորանոր աշխատություններ:*

45 Արդեն ԺԲ դարի 70-ական թվականներին Անտիոքի պատրիարքության նկատմամբ Հայոց եկեղեցին հավակնություններ է ներկայացնում Բյուզանդական կայսրությանը: Այդ մասին ավելի հանգամանալի տե՛ս Ա. Ա. Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Երևան, 1995, էջ 192-205:

*ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆ*

# ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ ՀԵԹՈՒՄ ՊԱՅԼԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Հեթումի Աւետարանը ձեռագիր մըն է՝ ընդօրինակուած 1293: Ուսումնական թուականներուն Հոգշ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեանը տեղեկացուց, թէ Նիւ Եորք խումբ մը պարսկաստանցի հրեաներ հայերէն ձեռագիրներ բերած են և առաջարկած վաճառքի: Նիւ Եորք գտայ այդ անձերը և գնեցի ձեռագիրները: Անոնցմէ մին էր Հեթումի Աւետարանը: Անոր վերջին էջին վարի մասին գրուած էր հետևեալը.

*Յիշեցէք և զիս, որ տեսի և համբուրեցի զայս սուրբ Աւետարանս ես անպիտանս, անարժանս, Տրդատ Վարդապետ Պալեան Թալասցի, Առաջնորդ Վանահայր Ս. Կարապետի հրաշալի վանուցն Կեսարիոյ:*

*– 1891 Յունիս ամսոյ 1–*

*– Ի թուին Հայոց ՌՅԽ (1891)*

*Տրդատ Վրդ. Պալեան*

Տրդատ Վրդ.ի հեղինակած Ս. Կարապետ և Ս. Դանիէլ վանքերու ձեռագրաց ցուցակին մէջ փնտռեցի, բայց չգտայ Աւետարանիս նկարագրութիւնը: Պարզ էր, որ ձեռագիրը կապ չունէր յիշեալ վանքերուն հետ:

Առանց թուականի յիշատակարան մը արձանագրած էր այնտեղ, թէ Աւետարանը գտնուած է Կիպրոս.

*Յիշատակարան է այս սուրբ եկեղեցիս անուամբ սուրբ Աստուածածին փոքր եկեղեցին հայերուն Կիպրաւսեայ և սուրբ Աւետարան գնեցի ի արդար վաստակոց ես՝ փոքր, ենազանդ, սուտ անվամբ պարոն Գրիգորն և իմ ծնողացն և իմ տղոցն:*

Հեթումը, որ ստացողը եղած է ձեռագիր Աւետարանին և հեղինակը անոր երկար յիշատակարանին, իբրև պատմագիր ծանօթ Հեթում Պայլն է: Կը հրատարակենք այստեղ շատ հետաքրքրական յիշատակարանը.

Յոքնական և անթուելի, բազմապատկեալ բիւրաւոր բարեաց բազմածաւալ և պարունական, երանաւէտ և երկնաւոր շնորհի ընդունակ և ունակական գիրքս այս աստուածունակ և գերադրական ի յարմարութենէ իւրին, և յաւետաւորական ձայնէն և ի գերահրաշ գործոյն առընկալեալ զանունադրականն կոչումն որ ասի Աւետարան: Յիրին բնութենէ բանաւորապէս եդեալ զի յաւէտ և յաւե[ր]ժական և յարածիգ կենաց և բարեաց յաւիտենականաց, զոր ընկալաւ բնութիւնս՝ է պատմող: Եւ ի ձայնին զաւրութենէ զի աւետեաց և ուրախական

խնդութեանց, և անտրամական կենաց վայելչութենէ է հնչող, զիջումն Աստուծոյ յերկիր և զելս մարդկան յերկինս աւետարանէ, զհաղորդակից և զհամարձակիցն լինել հրեշտակաց և մարդկայինս սեռի ճառէ զերկնային առաքինութիւնս՝ յերկրի տնկեալ մերոյն Յիսուսի մեզ ծանուցանէ։ Իսկ ի գործոյն զի ասաուածագործ և աստուածարար և անմահական բարեաց է հրատարակող զոր բանին Աստուծոյ մարդանալովն ընկալաք։ Եւ զաւրինակացն նկարագրութեան զճշմարտութիւնն ի կատարումն հասեալ տեսաք աւետարանական վարդապետութեամբ լուսաւորեալք, որք են նշանք հրաշից և բանք աստուածախաւս վարդապետութեան, և գործք սքանչելեաց աստուածութեանն Քրիստոսի, նոր աշխարհի ստեղծագործութիւն և մարդկային բնութեանս նորոգութիւն, զոր ուսուցանէ մեզ աւետարանականս վարդապետութիւն։

Զի զառ ի չորից նիւթոց շինեալ աշխարհս զգալի և յանցաւորութեամբ նախաստեղծիցն եղծեալ յապականութիւն, չորիւք աւետարանչաւքս ճարտարապետաւքս աշխարհի աւետարանական վարդապետութեամբս բժշկեալ և կանգնեալ զաստուածաշէն տուն աշխարհիս և զաստուածաբնակ տաճարս կենդանի զգործ ձեռինն Աստուծոյ զմարդ, զոր խոտորեալն ի բնութենէս բանսարկուն իբր չորիւք եղջիւրաւք սեռական ախտիւքն հարեալ, ցրուեաց և կործանեաց ըստ տեսանող մարգարէին, եկեալ չորս հիւսունքս և արուեստաւորքս հոգիընկալ մեծահանճար իմաստութեամբ վերստին շինեցին զկրկին աշխարհիս տուն զանբանականն և զբանաւորս։

Եւ որ ի յերկինս երկնից յաթոռ չորեքկերպեան ի քառադէմ կենդանիս նստեալ հանգչէր, զոր ետես մարգարէն մարդ և առիւծ, եզն և արծիւ, ի թագաւորական կենդանիսն թագաւորն թագաւորաց բազմեալ, զնոյն կերպարանս և զդէմս և զձև աթոռոյ յերկրի պատրաստէր։ Զչորք թիւ աւետարանչացս աստուածութեանն փառաց աթոռ և բարձաւղ և ի տիպ երնաւորացն յերկրի հանգուցանող։ Որք և չորեքկերպեան աթոռ զանձնաւորական մասունս մեր յաւրինեցին, զանասնականն մասն յերկնաւորսն և ի հրեշտակականն փոխելով։ Եւ յաւետարանին քարոզացն համապատութիւն զի որ յաթոռ աստուածութեանն դէմք մարդոյն է ի մեզ բանականն և յաւետարանիչսն նշանակ Մատթէոսի, զբանն մեր փոխեալ ի հրեշտակացն նմանութիւն և զխաւսս յաւետարանչացն յարդիւնականութիւն։ Իսկ դէմք առիւծուն ի մեզ սրտմտականն և յաւետարանիչսն Մարկոս, վասն համառաւտութեանն դարձուցանելով զսրտմտականն մեր ընդդէմ չարին և զարիանալն ի բարին։ Իսկ զուարակն առ մեզ ցանգականն, և յաւետարանիչսն Ղուկաս ողջախոհութեամբն ուղղել զցանգականն մեր ի հոգևորսն և յաստուածայինսն և ըստ նմանութեանն Քրիստոսի և եզինն պարարակի, զենուլ 'զանդամս մեր երկրաւոր։ Իսկ ըստ արծւոյն ձևոյ, որ յաթոռն Աստուծոյ և ի մեզ արդարութեան զուգահաւասարութիւն և ճշմարտութեան գիտութիւնն, որովք արծուարար թևովք վերաբերիմք յերկինս, ըստ աւետարանչին Յովհաննու որոտալով ի բարձանց։

Սոքա են և ճշմարիտ գետքն եդեմարուխ զոր առաջին արարչութեան պատմողն գծագրեաց աղբիւր ելեալ յեդեմայ ոռոգելով զդրախտն և անտի ի չորս բաժանել գնացս գետոց յոռոգումն տնկոց և ի զովացումն կենդանեաց։ Իսկ ըստ նորս արարչութեանս, աղբիւր

տեառն յանսահման ծովէ ծնեալ ի հաւրէ՝ անժամանակ: Ըստ մարգարէին ի քէն է Տէր աղբիւր կենաց, և դրախտ աստուածատունկ կոյսն ամենաշնորհ, ուստի ել Տէրն ժամանակաւոր ծննդեամբ՝ ոռոգելով զբանաւոր տունկս նորոյ դրախտի, զառաքեալսն և զքարոզիչս բանին: Եւ բաժանեալ ի չորս գետոց գնացս՝ ի չորս աւետարանիչսն աստուածաքարոզ, որք արբուցին զտիեզերս յանմահական ջրոյն, որով զտապ ջերմութեանն զովացուցին և զբոց մեղացն շիջուցին և յաշխարհի զվինեակ ընթացից գետոցս հաւատովք և գործովք ծաղկեցուցին և զհոգւոյս մերո մասունս դրախտ աստուածային յարդարեցին, զի առաջին գետն Փիսոն թարգմանի բերան հրոյ, և յաւետարանիչսն Մատթէոս, երգ կենաց, լուսաւորեաց յաշխարհիս կողմանս գարևելս և ի մասունս հոգւոյն զբանականն, որ է արևելք, և լոյս ի բնութիւնս մարդկան, ուր և իմաստութեան տունկք բուսանին, և փայլեն ծնեալք ի խոհականէն:

Երկրորդ գետն Գեհոն թարգմանի լանջք, յորում և ի մեզ բունեալ է սրտմտութիւնն: Իսկ յաւետարանիչսն Մարկոս, բղխեալ զաւետարանն յԱղեքսանդրիա, ուր և գետս ընթանա և ի մեզ իբր անդ քաջասնունդ բուրէ ծաղիկ արիական քաջութեանն, ի սրտին դրախտի:

Երրորդ գետն Տիգրիս գնա ի Միջագետս, և ցանգութիւնն, որ ի մեզ ի մէջ և յորովայն և յաւետարանիչսն Ղուկաս, աւետարանեալ ի Հռովմ և յԻտալիա, և ողջախոհութիւն որ ի մեզ, վայրենացեալ ախտիցն ընդդիմանա:

Գետն չորրորդ Եփրատէս, որ և Արածանի, և ի մեզ արդարութիւնն և յաւետարանիչսն Յովհաննէս քարոզեաց յԱսիա և հոգւոյն վտակաւք զտիեզերս ոռոգեալ և արդարութիւնն զաստուածային կամսն ի բոլոր մասունս հոգւոյն տարածեալ:

Սոքա են չորք կառքն մարգարէահրաշ, յորս բազմագունի ձիքն լծեալ էին, որ են աշակերտք Աւետարանին հոգւոյն պարգևաւք, ի զանազան ներկուածս գունոց գեղեցկացեալ, որովք կառավարեաց քաջ հեծեալն ընդ տիեզերս, որ և ինքեանք կառք եղեն և ի բանաւոր նիւթոց մարդկութեանս կառք աստուածութեանն կազմեցին և զգոյն որակաց ձիոցն ի մեզ խորհրդաբար տպաւորեցին երանգս, ընդ կարմրութեան գունոցն զամաւք պսակառանացն ի մեզ տնկեցին, որովք խոտորիմք ի վատթարէն, և հրամանք ի սէրն Աստուծոյ ջերմացուցեալք ի գործս բարիս: Եւ ըստ սևատեսակ ձիոցն զաստուածաւանդ խորհուրդն ծածուկ և թաքուն ունել մեզ աւանդեցին և որպէս զձիսն սպիտակափայլ ծերունական իմաստիցն իմացուցին և ըստ բազմանկար կիտուածոյ խայտիցն զանազան հանճարով ճոխանալ ուսուցին տեսական և գործնական երկասիրութեամբն, յորում բարձրանա Աստուածն բան:

Աստանաւր ի կատարումն հասեալ լինի խորհուրդ չորից չափոց մանանային, զոր յոսկի սափորն էարկ Մովսէս հրամանաւն աստուածային: Իսկ աւետարանական վարդապետութեամբս անձինք մեր ոսկիացան հրով հոգւոյն հալոցաւ զտեալ և փոխանակ Մովսէսի Աստուածն մարգարէից չորք չափով աւետարանչացս զմանանայն կենաց յանձինս մեր արկեալ:

Ի չորս թիւ ընդունակ անաւթոց. յոգի և ի մարմին յանցաւոր կեանս և յապագային, զկարգ և զչափ սոցա գիտելով: Եւ զի առաջին յաւետարանսն կարգելոց էր Մատթէոսին, նոյն և այս խորհուրդ մարգարէիւք նկարագրեցաւ և ի նահապետսն տպաւորեցաւ և ի բնութիւնս կարգադրեցաւ. զի յաթոռսն չորեքկերպեան չորից կենդանեացն դէմք էին. վեցտասան, և չորք չորք յամենայն կողմանս ընթանային: Զի աւետարանիչքն սուրբ ի չորս կողմանս տիեզերաց քարոզեցին, յորս և աւետարանք նոցա տարածեցան: Եւ որպէս անդ յամենայն կողմանս մարդն յառաջանայր, նմանապէս և Մատթէոս ի կարգ դրութեան աւետարանացն առաջին կարգէր: Ցուցանի այս խորհուրդ և ի սանդուխքն Յակովբա աւծեալ արձանն ի խոնարհ առկայացեալ և ի գլուխն Տէր հաստատեալ: Այսպէս և Մատթէոս յաստուածութեան անուանէն սկսանի և Յովհաննէս զաստուածութիւնն աւետարանէ: Եւ սանդուխքն ի մէջ երկուցն՝ Մարկոս և Ղուկաս, որք և զմարդիկ յերկիրս հանեալ բարձրացուցին և զհրեշտակս իջանել առ մեզ միջնորդեցին: Այլ և սանդուխք մարդեղութիւնն յերկրի հաստատեալ և աստուածութիւնն ի գլուխն երևեալ. զի որպէս սանդղաւքն ի բարձունս ելանեն, այսպէս և Քրիստոսիւ առ հայր ելանեմք և մարդկութեամբն յաստուածային գիտութիւնն հասանեմք: Նմանապէս և ի բանաւոր մարդկային բնութեանս մասունս հոգւոյ առաջին է բանականն, և ապա այլն ըստ կարգի դասեալ և թուեալ: Նմանապէս և յաւետարանս Մատթէոս:

Այլ և չորք են աւետարանիչքն, զի Քրիստոս զոր աւետարանեցին, Աստուած էր և մարդ. երեքն ըստ աւրինացն վկայք մարդեղութեան նորա, իսկ Յովհաննէս ընդ երիցն վկայ անճառելի և անժամանակ աստուածութեանն նորա:

Արդ այս բիւրապատիկ բարեաց և խորհրդոց անճառից և գիտութեանց գերազանց և իմաստութեանց երկնային, պարագրաւղ աւետարանի ցանգացող եղէ Հեթում, որդի Աւշինի՝ եղբաւր Հեթմոյ Հայոց թագաւորի, որ և ես՝ Հեթում շնորհաւք ողորմութեանն Աստուծոյ տէր Կոռիկաւսոյ և Մարիաւնին, Պռնառոյ, Անամուռին և Կուպային և այլոց ամրոցացն, որ առ կողմամբքն Սավրիո և գաւառաց բերդիցն, ստացա զսուրբ Աւետարանս և փափագեալ սրտի բաղձանաւք ետու գրել զսա իմոյ իսկ հրովարտակաց դպրի Վասլի, որ երբեմն սարակաւագ լեալ՝ և այժմ ծառայէ ինձ միամտութեամբ և մտերմարար սիրով:

Զոր և պարտ է յայտնել զառիթ և զպատճառ գրելոյ սորին: Զի ի ժամանակս վերջին յորում ժամանեալ հասաք մեք ցաւէր աշխարհ ամենայն իբրև զայր ծերացեալ և ի վերջս կենաց հասեալ, որ ի նուազեալ զաւրութեան անդամոցն և ի պակասմանէ զգայարանացն հեծէ և ցաւի: Այսպէս ծերացեալ աշխարհի, նուազեաց ամենայն ազդումն բարւոյ. և յաճախեալ բազմացան բորբոքումն չարեաց, և տապեալ տառապէր տխրեալ տիեզերաց մասունք անդամոց:

Եւ որպէս կին ի ծննդական երկունս եասեալ յառաջ բերել զմանուկն ի լոյս երկիր, կսկծելի և սրագոյն ցաւոց հասեալ, փութացուցանեն զծնունդ մանկանն, այսպէս և աշխարհս այս, յորում ծնաք և սնաք և ունի զմեզ ընդ ինքեամբ իբրև մայր զմանուկ ի փորի կենաւք և մահուամբ, զի ծնցի ի հանդերձեալ աշխարհն: Եւ արդ, ցաւէ և երկնէ և

տագնապի մինչև ծնանի: Այլ և ծփի ծովանմանև ալեկոծէ զմարդիկ, որք ի նաւ մարմնոյս ունին զգանձս հոգւոյ և նեպին ի նաւահանգիստն վերին: Արդ, յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ իբրև զծեր և երկնէր որպէս զմայր և ծփէր որպէս զծով: Եւ առաւել ևս ազգ քրիստոնէից և եկեղեցի Քրիստոսի ամբոխեալ խռովէր իբրև ի հողմոց շնչմանէ յանաւրինացն յարուցմանէ, որով և երկիրս Հայոց, որ ի նահանգիս Կիլիկիոյ, որում տիրէին քրիստոսապսակ թագաւորք, սերեալք ի յՌուբինեանց զարմէ, և իշխանք գաւառատէրք ի նոցունց ազգակցութենէ, սաստիկ և անհնարին նեղութեամբ վշտանայր յեգիպտական ազգէն, ի գազանամիտ և գոռոզարարու սուլտանացն, որք տիրէին անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և աւերեալ ջնջեցին զծովեզերեա աշխարհն, յորում բնակեալ էին արիական ազգն Ֆռանգաց, զմեծն Անտիոք, զզարմանահրաշն և զգեղեցկաշէնն, որ ընդ տէրութեամբ բրնծին, զոր կործանեալ ի հիմանց, աւերեաց ֆնտուխտար սուլթանն, որ անուանէր մելիք Տահր, ի թուին ՉԺԷ (1268), յաւուր շաբաթու, ի ծաղկազարդին, և զԳ (3) պարսպեանն Տրապալիս, զոր առ Ալֆի սուլտանն մելիք Մնսուր ի թուին ՉԼԸ (1289), և զփառաւորն Պտղոմիդէ, որ նա ինքն Աքայ, որ էր տուն իշխանութեան Դամփլուն և Ոսպէթալին և այլոց անուանաւոր իշխանաց շինեալ բարձրագոյն պրնաւք և հաստահիմ պարսպաւք և գեղեցկայարմար տանարաւք, զոր կործանեալ տապալեաց անաւրէն որդին Ափլէ, մելիք Աշրաֆն ի թուին ՉԽ (1291), ի մայիս ԺԸ (18): Որ և սաստագոյն քան զայլ գոռոզսն գոռայր. իբրև զամպ կարկտածին ի վերայ մերո աշխարհիս և ծանրացոյց առաւել սաստկութեամբ զպահանջումն հարկին և զեզերային գաւառսն մեր բոլոր սահմանաւք ի ձեռն սրիկայից արանց արարացւոց և թուրքաց գերէր միշտ և աւերէր և անընակ առնէր և, ըստ բաբելացւոց բռնաւորին, ձևացեալ երկնահաս ծառոյն, որ այնքան բարձրացեալ նա մինչ յերկնանմանն Երուսաղէմ քաղաքն Աստուծոյ հասեալ առ զնա և գերեաց զսպաս սրբութեան տաճարին Աստուծոյ: Նմանապէս և սա այնքան նեղութեամբն Աստուծոյ և յանախութեամբ մերոցն մեղաց զաւրացեալ մինչ զի առ զաթոռ հայրապետութեանն Հայոց զԿլայն հռոմայական, յորում էր և աջ մերոյ սրբոյ Լուսաւորչին, և առաքելական և մարտիրոսական նշխարք և սրբութիւնք անթիւ և կտակարանք աստուածային գրոց գանձեալ բազմութեամբ, զոր և անհուն զաւրաւք և բազմաձեռն պատերազմողաւք և նորագործ մեքենաից հնարարութեամբ պատեալ պաշարեաց սղարեալ բաքանաւք ի վերուստ. և քարափոր ծակամտաւք նաղմելով նեղեալ ի ներքուստ, առ զաստուածաշէնն զայն և զհրաշալի դղեակն վայելչագեղ ի թուին ՉԽԱ (1292) յունիս ԻԸ (28), գերեաց զտէրն և զհայրն մեր հոգևոր զկաթողիկոսն ամենայն Հայոց զտէր Ստեփանոս. եպիսկոպոսաւք. և վարդապետաւք. քահանայիւք և անհամար քրիստոնէիւք: Եւ սպառեալ զազգն քրիստոնէից և բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապանոյն տաճարին՝ զուրացողսն Քրիստոսի: Եւ եղև այն սուգ մեծ ամենայն եկեղեցեաց, մանաւանդ ազգին Հայոց, որք կրեցին զկսկիծն ողորմելի և զաղէտն աշխարհանաց:

Արդ, զի յայսմ ժամանակի այսպիսի նեղութիւնք ժամանեալ հասեալ ունէր զեկեղեցի Քրիստոսի և զի որպէս ասացաք յառաջ քան զայս,

ՉԼԸ (1289) թուին, եղև աւերումն Տրապաւլսո յԱլֆէ: Եւ վասն այսորիկ յաճախեաց ահ և երկիւղ ի վերայ ամենայն քաղաքաց ծովեզերեայց:

Վասն որո և ես Հեթում, մտախոհ եղեալ գտանել տեղի ամրոցի և ապաստանի զգուշանալ յանաւրինացն սրոյ մերոցն քրիստոնէից և անընչացեալ ցանկացա գեղեցկադիր այսմ կղզոյս որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս և յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք և մեծ փափագանաւք և վասն բնակչացն մխիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղաւթանաց զսուրբ եկեղեցիս, որ ի մէջ գեղեցկաշէն ամրոցի բերդիս, յորում և ի պէտս լուսաւորութեան հոգւոց որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին և Աւետարան Քրիստոսի պիտոյ էր այսմ դրախտի եկեղեցւոյ, զոր և ետու գրել ի լուսաւորութիւն հոգւոց ի տաճարս յայս աղաւթողաց և յիշատակ բարեաց ինձ և իմոցն յապագայս ժամանակաց և փրկութիւն հոգւոյ իմոյ ի հանդերձեալ կեանսն յարդարադատ ահեղ ատենին Քրիստոսի: Եւ եղև աւարտումն գրութեան սորա ի թուին ՉԽԲ (1293), ի ժամանակի, յորում ունէր զաթոռ թագաւորութեան երկրիս Հայոց աւրինապահ և առաքինասէր և եկեղեցազարդ պարոնն ամենայն Հայոց Հեթում՝ որդի Լևոնի բարեպաշտի, որ մխիթարութիւն էր մեզ ի վշտաբեր ժամանակիս սրբասնունդ եղբարբք իւրով:

Արդ, ես Հեթում, մեղուցեալ ծառայ Քրիստոսի, աղաչեմ և աղերսեմ և պաղատիմ սիրովն Քրիստոսի առ սուրբ եկեղեցիս յիշել զիս բարեմիտ կամաւք և զսիրելի որակսն իմ՝ զանդրանիկն Աւշին և զԿոստանդին և զԼևոն և զքոյրս սոցա զՌիթա և զամուսին իմ զՋապլուն և ողորմութիւն հայցել ի Քրիստոսէ մեզ և թողութիւն յանցանաց մեզ և ծնաւղաց մերոց և եղբարց և համայնց զարմից, զի և ձեզ ողորմեսցի ամենառատ պարգևաց տուողն Աստուած, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց:

Աղաչեմ և ես անիմաստ այրս և թերավարժս յուսումն գրչութեան Վասիլ գրող սորա և կազմող յիշել ի մեղաց թողութիւն զիս և զծնողսն իմ և զեղբարս:

Այլ և զհոգևոր եղբայրն իմ զշնորհաներկ գրիչն Վասիլ, մականուն Երկինք, որ զանազան երանգաւք և ոսկիազաւծ ծաղկաւք զարդարեաց զսա, մի մոռանայք յաղաւթից:

*Գրիգոր Բրուտեան*

# ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՆԱԽԱՀԱՅԿԵԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ

*Շարքիս նախորդ յօդուածները վերաբերել են հայկական միջնադարեան եւ նախաքրիստոնէական տարբեր օրացոյցների, որոնք բոլորն էլ, իրենց հիմնադրման եւ կիրառութեան ժամանակով յաջորդում են Հայկ Նահապետի աւանդական գործունէութեանը: Արդ փորձենք տեսնել, թէ ինչ է մեզ հասել դրան նախորդող ժամանակների օրացոյցների մասին:*

*Արդի (հայ) տոմարագիտական գրականութեան մէջ օրացոյցը ընդհանրապէս քննութեան է առնուած միայն իբր ժամանակաչափութեան միջոց, ժամանակը չափելու գործիք: Եւ, բնականաբար, օրացոյցի կառուցուածքն էլ քննուել է գերազանցապէս ա՛յդ տեսանկիւնից:*

*Օրացոյցի քննութիւնները վերաբերել են հիմնականում օրացոյցի ժամանակային կառուցուածքին, օրացուցային միաւորների տեւողութիւններին, դրանց ներդաշնակեցմանը իրար եւ բնական ժամանակահատուածների տեւողութիւնների հետ եւն:*

*Անշուշտ, անժխտելի է, որ օրացոյցը ժամանակի տեւական հատուածները չափելու կոչուած ինքնատիպ գործիք է, բայց՝ ո՛չ միայն այդքանը: Օրացոյցը նաեւ (նախ եւ առաջ) հաւատի, կրօնի հետ կապուած երեւոյթ է, բաղկացուցիչ մասն է կրօնի: Կոչուած է նախ եւ առաջ կրօնական պէտքեր հոգալու: Եւ անկասկած, հարկ է օրացոյցը, դրա կառուցուածքը քննելուց, այն դիտել նաեւ ա՛յդ տեսանկիւնից:*

*Հայոց օրացոյցներին վերաբերող այդպիսի քննութիւն տակաւին արուած չէ (գոնէ ինձ յայտնի չէ): Միակ նման փորձը (որ յայտնի է ինձ) ներկայացուած է իբրեւ վերջնական եզրակացութիւն, առանց համապատասխան տոմարագիտական քնութեան*[1] *:*

*Այստեղ կը փորձենք մեզ հասած կանգուն տուեալների հիման վրայ քննութեան առնել Հայոց Հայկեան եւ Նախահայկեան օրացոյցների կառուցուածքը, դիտելով դրանք նախ եւ առաջ, որպէս կրօնի, հաւատքի, աշխարհայեացքի հետ կապուած իրողութիւններ:*

---

[1] Տե՛ս Ա. Շահնազարեան, Է Արար, «Առագաստ», Երեւան, 1992, էջ 9–11:

Նախքան քննութիւնն սկսելը ճշդենք, թէ ինչ ենք հասկանում Հայկեան օրացոյց եւ Նախահայկեան օրացոյց անունների տակ: Հայկեան օրացոյց անունով կը կոչենք Հայկ նահապետի անուան հետ կապուած օրացոյցը, որի ամիսները (ըստ աւանդութեան) կոչուել են Հայկի զաւակների անուններով եւ հիմնումն էլ վերագրուել է հէնց Հայկին: Բնականաբար, սրան նախորդած օրացոյցն էլ կ'անուանենք Նախահայկեան:

Գալով նրան, թէ ինչպէս են իրար յարաբերում Հայոց Հայկեան, Նախահայկեան եւ Բուն օրացոյցները, կը փորձենք պարզել առաջին երկուսի կառուցուածքը հասկանալուց յետոյ յօդուածիս երրորդ հատուածում:

Արդ փորձենք հասկանալ Հայոց հնագոյն օրացոյցների կառուցուածքը:

## ա. Հայկի զաւակները

Ինչպէս քաջ յայտնի է, միջնադարեան աղբիւրներով մեզ է հասել Հայոց օրացոյցի աւանդական կառուցուածքը. 12 × 30 + 5 = 365 օր, այսինքն, 12 ամիս 30 -ական օրով եւ վերջում էլ 5 յաւելեալ օրեր, բոլորը միասին՝ 365 օր: Հայկական օրացոյցի այսպիսի կառուցուածքը երբեւէ չի վիճարկուել: Կառուցուածքին ինչ-որ կերպ աղերսուող միակ տարակարծութիւնը վերաբերել է նրան, թէ այս կառուցուածքով օրացոյցը ինչ որ կերպ կայունացուե՞լ է նահանջի օր մուծելու միջոցով, թէ՞ ոչ: Նաեւ, մեզ չի աւանդուել ոեւէ վկայութիւն, որ վերեբերէր այս օրացոյցի կառուցուածքում երբեւէ փոփոխութիւններ կատարուած լինելուն:

Այդուհանդերձ, մեզ հասած, բոլորիս քաջ յայտնի մատենագրական տեղեկութիւնների մէջ կան այնպիսիք, որոնք անուղղակիօրէն, բայց հաստատապէս վկայում են, որ հայկական օրացոյցը նախապէս ունեցել է մեզ աւանդուածից բոլորովին տարբեր կառուցուածք:

Ի՞նչ տուեալներ մենք ունենք այս օրացոյցի կառուցուածքին վերաբերող: Միջնադարեան մի շարք հեղինակներ պատմում են, որ Հայոց օրացոյցի ամիսները կոչուել են Հայկ Նահապետի զաւակների անուններով: Այսպէս են վկայում Անանիա Շիրակունի (Շիրակացին), Յովհաննէս Սարկաւագը, Յովհաննէս Վանականը, Գրիգոր Տաթեւացին եւ այլք[2]:

Առաջին հայեացքից թւում է, թէ ամեն ինչ պարզ է ու մեկին, եւ այստեղ նոր ոչինչ չկայ: Սակայն պարզւում է, որ այս «անմեղ» եւ

---

[2] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ Տոմար, Երեւան, 1940, էջ 76-77, Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի Մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 224, Լ. Խաչիկեան, Յաղագս Տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, Մատենադարանի գիտ. նիւթերի ժողովածու, թիւ 1, 1941, էջ 160, Գրիգոր Տաթեւացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս 1729, էջ 200:

*յաճախ մերժելի դիտուած պատմութիւնները բաւական կարեւոր տեղեկութիւններ են պարունակում Հայոց հնաւանդ օրացոյցի նախնական կառուցուածքի մասին:*

*Ըստ Ա. Շիրակունու, «...Հայկ ումն անուն աղեղնաւոր հսկայ՝ յազգէ Յաբեթի որդւոյ Նոյի, եկեալ ի Բաբիլոնէ՝ տիրեաց Հայոց, ... Նոյնպէս որդւոց եւ դստերաց իւրոց եդ անուանս, կոր առեալ Հայոց կանուանս ուստերաց եւ դստերաց նորա եդին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն եւ կաւակացն. եւ են այսոքիկ: Նաւասարդի. Հոռի. Սահմի. եւ Մահեկի. Արեգ եւ Մարերի դստերք էին Հայկին: Տրէ. Քաղոց. Արաց. եւ Հրոտից, որդիք էին Հայկին: Իսկ Մարգաց եւ Հարաւանց, կոր այժմ Ահկի կոչեն, այս ի գործոց անուանուեցան, կի ընդ այն ժամանակս ամառնային էին սոքա[3]»: Շիրակացու այս տեղին բազմաթիւ ուսումնասիրողների կողմից բազմիցս վկայաբերուել է տարբեր առիթներով, բայց ուշադրութեան չի արժանացել մի «տարօրինակ» մանրուք: Այստեղ «տարօրինակն այն է, որ տարուայ 12 ամիսներից միայն 10-ն են կոչուած Հայկի կաւակների անուններով, իսկ միւս 2-ը անուանուել են «ի գործոց»: Նոյնն է վկայում եւ Յովհաննէս Սարկաւագը: Ըստ այս հեղինակի էլ, Հայոց ամիսները կոչուել են Հայկի կաւակների անուններով. միայն թէ Սարկաւագ վարդապետը ոչինչ չի ասում նրանց թուերի մասին:*

*Աւելի լրիւ են Յովհաննէս Վանական վարդապետի տեղեկութիւնները. «Իսկ Հայոցս է ի վերայ որդոց Հայկին, ըստ տասն ծննդոցն, հինգ արու՝ Նաւասարդն, Հոռի, Սահմի, երեք դուստր՝ Մարի եւ այլն, եւ երկու ի վերայ եղանակացդ...[4]»: Յովհաննէս Վանականը ուղղակի նշում է, որ Հայկի կաւակները միայն 10-ն են, եւ երկու ամիս էլ անուանակոչուել են «ի վերայ եղանակացդ»:*

*Նախ նշենք, որ Ա. Շիրակունու եւ Յ. Վանականի աղբիւրներն այս հարցում իրարից տարբեր են եղել: Իրօք, Շիրակունին նշում է Հայկի 6 դուստր եւ 4 որդի, իսկ Վանականը նշում է, թէ եղել է 5 որդի եւ 3 դուստր: Յովհ. Վանականի թուերից ոչ մէկն էլ չի համընկնում Շիրակացու տուած թուերին: Բացի այդ, այստեղ կայ նաեւ անյայտ աղաւաղում: Այսպէս. Վանական վարդապետը նախ նշում է, թէ Հայկի կաւակները 10-ն են, ապա տալիս է 5 որդի եւ 3 դուստր, որ անում է միայն 5 + 3 = 8 կաւակ: Հնարաւոր է, որ այս 5-ը նախապէս եղած լինի 7 (Է-Ե գրչական շփոթութիւն, որ շատ հաւանական է): 5-ի տեղ 7 (Է) կարդալու դէպքում իրօք, կաւակների թիւը կը դառնայ 10: Եթէ ընդունենք այս ուղղումը, Վանական վարդապետի մօտ կը դառնայ 7 որդի եւ 3 դուստր: Այսպէս, թէ անպէս, Վանականի տուած՝ Հայկի որդիների եւ դուստրերի թուերը (սխալ, թէ ուղղեալ) չեն համընկնում Շիրակունու տուած թուերին:*

---

3 Անանիա Շիրակունի, նշ. աշխ., էջ 76–77:

4 Լ. Խաչիկեան, նշ. աշխ. էջ 160:

*Տարբեր են անեւ այս երկու հեղինակների տուած անունները Հայկի ուստրերի եւ դուստրերի համար: Ըստ Շիրակունու, Հայկի որդիներն են Տրէ, Քաղոց, Արաց եւ Հրոտից (4, 5, 6-րդ եւ 12-րդ), իսկ Վանականը Հայկի որդիներ է համարում Նաւասարդի, Հոռի, Սահմի (1, 2, 3-րդ): Դուստրերի համար էլ Շիրակունին նշում է Նաւասարդի, Հոռի, Սահմի, Մեհեկի, Արեգ, Մարերի (1, 2, 3, 7, 8, 10-րդ), մինչդեռ Վանականը նշում է դուստրերից միայն մէկին՝ Մարերի (10-րդ):*

*Բնական է, եթէ այս երկու հեղինակները միեւնոյն աղբիւրից օգտուած լինէին, նրանց գրածներն իրարից այսքան շատ չէին տարբերուի: Այնպէս որ, կարող ենք իրաւամբ համարել, որ այս հարցում ունենք երկու իրարից անկախ աղբիւրներ:*

*Ամենայն հաւանականութեամբ, Յովհ. Վանականի տեղեկութիւնների հետ նոյն աղբիւրից են սկիզբ առնում նաեւ Գրիգոր Տաթեւացու յայտնած տեղեկութիւններն այս մասին: Ըստ Տաթեւացու էլ Հայկի զաւակները 10-ն են, 7 որդի եւ 3 դուստր, ընդ որում, որդիներն են Նաւասարդի, Հոռի, Սահմի եւ այլն (բոլորին չի նշում, սակայն ամբողջ գրածից երեւում է, որ պիտի լինեն 1-ից 7-րդը), իսկ դուստրերն են Արեգի, Ահկի, Մարերի (8, 9, 10-րդ): Եւ վերջին երկու ամսն էլ (11, 12-րդ)՝ ի վերայ եղանակացդ[5]:*

*Ընդհանուրը այս երկու տարբեր աղբիւրների տուեալներում այն է, որ ըստ երկուսի էլ Հայկի զաւակների թիւը 10 է եւ ըստ երկուսի էլ ամիսներից երկուսը անուանակոչուել են այլ կերպ (ի գործոց, կամ ի վերայ եղանակաց): Ընդհանուր է նաեւ Մարերի ամսուայ սեռը այս երկու աղբիւրներում էլ: Ըստ երկուսի էլ, Մարերի ամիսը Հայկի դուստրն է:*

*Այսպիսով, կասկածից դուրս է մնում միայն Հայկի զաւակների ընդհանուր թիւը՝ 10: Իսկ, թէ քանիսը եւ որոնք են նրա որդիները եւ որոնք՝ դուստրերը, այս աղբիւրների տուեալներով որոշել անկարելի է: Որդիներ/դուստրեր յարաբերութիւնը մի դէպքում 4:6 է (Շիրակունի), միւս դէպքում՝ 7:3 (Վանական, Տաթեւացի):*

---

5 Գրիգոր Տաթեւացի, նշ. աշխ., էջ 200: Նկատենք, որ ի տարբերութիւն «Հարցմանց գրքի», «Քարոզութեան գրքի» Ձմեռան հատորում Տաթեւացին տալիս է այսպէս. «Այսպէս եւ ամսիք Հայոց՝ Է՛ կոչեցեալ ի վերայ Հայկին ծննդոց. Է(7): Զորսն արու. Նաւասարդի, Հոռի, Սահմի, Տրէ: Եւ այլ երեքն դուստր. Արեգի, Ահեկի, Մարերի: Եւ Բ(2) ամիսքն ի վերայ եղանակացդ է. Մարգաց եւ Հրոտից» (Գիրք Քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կոստանդնուպօլիս, 1740, էջ 12): Այստեղ, թերեւս, առկայ է աղաւաղում: Հեղինակը թուարկում է միայն 7 ամիս Հայկի զարմից եւ 2 ամիս էլ՝ ի վերայ եղանակացդ: Ընդամենը լինում է 9 ամիս, եւ 3 ամիս պակաս է, որ 12-ը լրանայ: Հաւանական է, այստեղ շարադրանքից որոշ հատուած դուրս է մնացել: 7-ը Հայկի ոչ թէ բոլոր զաւակների թիւն է, այլ միայն որդիների (ըստ Գր. Տաթեւացու): Եւ իրօք, որդիների անունները թուարկուած են Նաւասարդից Տրէ (1-ից 4-րդ), ապա բաց են թողնուած 5, 6, 7-րդ ամիսները (Քաղոց, Արաց, Մեհեկի) եւ ապա դուստրերի անունների թուարկումը տալիս է 8-րդից 10-րդ (Արեգի, Ահկի, Մարերի): Ուրեմն, եթէ այս աղաւաղումը չլինէր (բաց թողնուած 3 ամիսները կցենք որդիների շարքին), կը լինէին 10 զաւակ, 7 որդի եւ 3 դուստր, որ լրիւ ներդաշնակ է «Հարցմանց գրքում» նոյն հեղինակի տուած պատկերին:

Այս հարցը պարզելու համար դիմենք Հայկի մասին ամենից շատ եւ մանրամասն պատմող հեղինակներին, որ են Մովսէս Խորենացին եւ Սեբէոսի «Պատմութեան» Անանուն սկզբնաւորողը:

Խորենացին (գոնէ մեզ հասած տարբերակով) ոչ մի տեղ չի նշում Հայկի զաւակների քանակը: Բայց Հայկի որդիներից յիշատակում է միայն երեքին՝ Արամանեակին, Խոռին եւ Մանաւազին: «Իսկ նորա (Արամանեկայ - Գ. Բ.) թողեալ զերկուս յեղբարց իւրոց զԽոռ եւ զՄանաւազ ամենայն աղխիւ իւրեանց...[6]»: Մի այլ տեղ էլ Խորենացին դարձեալ ակնարկում է Հայկի որդոց քանակի մասին, բայց աւելի անորոշ. «Եւ տեսեալ Հայկին... կարգէ զԱրամանեակ երկու եղբարբք ընդ աջմէ եւ զԿադմոս եւ զայլս երկու յորդւոց իւրոց ի ձախմէ» (Խոր., Ա. ԺԱ. էջ 38): Այս հատուածից էլ կարող է ստացուել Հայկի որդիների թիւը 5 (3-ը աջից եւ 2-ը Կադմոսի հետ՝ ձախից): Սակայն այս տեղին այնքան էլ յստակ չէ: Տարօրինակ է, որ ձախ թեւում Կադմոսը, որ Հայկի թոռն է, նշւում է յանուանէ, մինչդեռ նրա հետ նոյն թեւում կարգուած Հայկի երկու որդիները չեն նշւում: Հնարաւոր է, այստեղ որդի բառը կիրառուած է ոչ սովորական, ուղղակի իմաստով (այլ գուցէ իբր թոռ, կամ պարզապէս իբր զարմ), եւ կամ շարադրանքում տեղ է գտել ինչ որ աղաւաղում: Ամեն դէպքում, Խորենացու մօտ Հայկի երեք որդիները իրենց անուններով ստոյգ յայտնի են, իսկ դրանից աւելին թէական է:

Խորենացու յայտնածները մեծապէս լրացնում է Սեբէոսի Անանունը: Այս հեղինակն էլ տեղեկութիւն է յայտնում Հայկի դուստրերի մասին: Թէպէտ նա ոչ մէկին (դուստրերից) յանուանէ չի նշում, սակայն երկու անգամ յստակ յայտնում է Հայկի դուստրերի թիւը՝ 7: «Առնու Հայկն զԱրամենեակ եւ զԿադմոս զորդի իւր եւ զորդիս նոցա եւ զորդիս եւթանեցունց դստերաց իւրոց...[7]» (ընդգծումը - Գ. Բ.): «Եւ եղեւ յետ մահուանն Հայկայ առ Արամենակ զորդիս իւր եւ զդստերս իւր եւ զարս նոցա, եւ զքորս եւթանեսին եւ զարս նոցա, զուստերս եւ զդուստերս նոցա...»[8] (ընդգծ. Գ. Բ.):

Մէջբերուած երկու հատուածներում էլ Անանունը շատ յստակ նշում է, որ Հայկի դուստրերը (Արամենակի քոյրերը) 7-ն են: Այս 7-ը շատ լաւ ներդաշնակում է Խորենացու տաուած՝ Հայկի որդիների 3 թուի հետ (ուշագրաւ է, որ երկուսն էլ նոյն՝ Մարաբասեան աղբիւրն են վկայակոչում): 3 որդի եւ 7 դուստր միասին լինում են 10 զաւակ, ճիշդ այն, ինչ տալիս են Անանիա Շիրակունին, Յովհաննէս Վանականը եւ Գրիգոր Տաթեւացին: Այս կերպով կարելի է Հայկի զաւակների թուերը այս հինգ հեղինակների մօտ համարել իրար համաձայնեցուած. 3 որդի եւ 7 դուստր, բոլորը միասին՝ 10 զաւակ:

Այս 3/7 յարաբերութիւնը առկայ է նաեւ Յ. Վանականի եւ Գր. Տաթեւացու յայտնածներում, միայն թէ այս հեղինակները տալիս են

---

[6] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց. Տփղիս. 1913. գիրք Ա, գլ. ԺԲ, էջ 38:
[7] Պատմութիւն Սեբէոսի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 49:
[8] Անդ. էջ 50:

*ըստ սեռերի հակառակ յարաբերութիւնը՝ 7/3 (դուստր/որդի): Սակայն տեղին է նկատել, որ թէպէտ Վանականի թուարկման մէջ Հայկի որդիների թիւը նշուած է 5 (որ գուցէ ուղղելի լինի՝ 7), սակայն շարադրանքում նա նշում է միայն 3 որդի (ամիս)՝ Նաւասարդի, Հոռի, Սահմի, որով կարելի է մտածել, թէ նրա օգտագործած աղբիւրում փոխս են գցուած եղել Հայկի որդիների եւ դուստրերի թուերը (բայց ոչ անունները):*

*Գուցէ կարելի է ենթադրել նաեւ, որ Ա. Շիրակացու տուած 4/6 (որդի/դուստր) յարաբերութեան մէջ եւս կարող էր 4-ի փոխարէն 3 եղած լինել (Գ — Դ շփոթութիւն):*

*Հայկի որդիների եւ դուստրերի թուերը ճշդելիս առաւել արժանահաւատ (կարեւոր) են առաւել հին աղբիւրները, որ են Խորենացին, (Սեբէոսի) Անանունը, թէպէտ այս Անանունի ժամանակի հարցը այնքան էլ յստակ չէ, ու նաեւ Շիրակացին: Այս հեղինակներից առաջին երկուսը Հայկի եւ նրա կարմերի մասին ամենածաւալուն տեղեկութիւն յայտնողներն են ու նրանց տուած տեղեկութիւնները ե՛ւ ինքնահամաձայնեցուած են, ե՛ւ էլ լաւ ներդաշնակում են այս խնդրին աղերսուող այլ տուեալներին:*

*Այսպիսով, այս հինգ հեղինակների տուեալների համադրմամբ բաւական մեծ յունալիութեամբ ստանում ենք, որ Հայկի զաւակները եղել են 10-ը, որից 3-ը՝ որդի եւ 7-ը՝ դուստր: Նշենք, որ բնաւ պէտք չէ այս թուերին վերաբերուել այնպէս, ինչպէս պյսօրուայ մեր կենցաղն արտայայտող թուերին ենք վերաբերւում: Չմոռանանք, որ Հայկը կանոնականացուած կերպար է (Արարիչ, Հայր Աստուած)*[9] *եւ ըստ այդմ, անպայման պիտի կանոնականացուած-որոշուած լինեն նաեւ նրան (նրա ընտանիքին, զաւակներին եւ այլ բաներին) վերաբերող թուերը: Այնպէս որ, այս թուերն ունեն ոչ այնքան ստոյգ պատմական անձի ընտանիքը նկարագրելու, որքան որ այդ սրբացուած-կանոնականացուած կարեւորագոյն կերպարը լրացնելու, ամբողջացնելու իմաստ:*

*Տեղին է աստ նկատել նաեւ, որ Հայկի որդիների համար մեր գտած 3 թիւը նաեւ շատ բնական ու տրամաբանական է, եթէ նկատի առնենք, թէ ինչ կերպար է Հայկը եղել: Իրօք, ինչպէս ժամանակին ցոյց է տրուել*[10]*, Հայկը եղել է նշանակը, կուգահեռը Հայր Աստուծոյ, Արարչի, գերագոյն թագաւորի: Եւ Հայկի երեք որդի ունենալը լրիւ կուգահեռ է հայկական (եւ ոչ միայն հայկական) հրաշապատում հէքեաթների՝ համարեա կանոնականացուած դրուածքին, ըստ որի թագաւորը ունենում է անպայման 3 որդի, որոնցից ամենափոքրն էլ հէնց լինում է փրկութիւնը բերողը: Այս պատկերացումը, ըստ որի թագաւորի որդիների թիւը անպայման 3 է, ընդհանուր է շատ ազգերի*

[9] Այս մասին տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց օրացոյցն ու երկնային լուսատուները, «Էջմիածին», 1995 թ., Ա, էջ 47-60:

[10] Անդ:

*մօտ եւ գալիս է շատ վաղուց: Աւանդական պատմութեան այս նոյն՝ կանոնականացուած դրուածքը կարելի է տեսնել Հայերի հարեւան եւ ոչ հարեւան, մօտ ու հեռու ապրող շատ ազգերի մշակոյթում (Յոյներ, Սկիւթներ, Կովկասեան ժողովուրդներ եւ այլք):*

*Ըստ այս՝ շատ ընդհանուր պատկերացման, Հայկի որդիների 3 լինելը աւելի քան բնական է: Այս նոյնը՝ 3 որդի ունենալը առկայ է նաեւ Սասնայ Ծռեր դիւցազներգում: Այստեղ էլ Սասնայ Տան հիմնադիր Սանասարը (որ փաստօրէն բոլորի հայրն է) ունենում է 3 որդի՝ Վերգո, Օհան եւ Միհեր, որոնցից փոքրը՝ Միհերը, դառնում է փրկարար, շարունակում է հօր գործը, թագաւորում Սասունում եւ ժառանգորդ-սերունդ տալիս: Իսկ Միհերի (Առիւծ Միհերի) հայր Սանասարը (ըստ տուեալ առնչութեան) իրօք զուգահեռն է Հօր, Թագաւորի: Նա հայրն է Սասնայ Տան, այսինքն, Հայր է Ջոջանց տան բոլոր աւագ ու կրտսեր անդամների համար: Սանասարը նաեւ ուղղակի կապ ունի Հայկի հետ: Այսպէս. Սանասարը մէկն է (աւագը, գլխաւորը)* **Երկուորեակ** *եղբայրներից: Երկուորեակներն էլ երկնքում ներկայացուած են մի մեծ ու պայծառ համաստեղութեամբ, որ Կենդանաշրջանի մաս է: Եւ, ինչպէս յայտնի է, Երկուորեակներ (Երկաւորք) կենդանակերպն էլ երկնքում կից է Հայկն աստեղատանը, գտնւում է Հայկի վերեւում (դէպի հիւսիս, հիւսիս-արեւելք):*

*Հայկի 3 որդի ունենալուն համահունչ է եւ այն, որ Հայկն աստեղատան մէջտեղի 3 պայծառ աստղերը, որ շարուած են մի գծի վրայ (գօտին) Հայոց մօտ, ի թիւս այլ անունների, յայտնի են նաեւ* **«երեք թագաւոր»** *անունով, որ կարող է նշանակել նաեւ թագաւորի 3 որդիները, 3 արքայազունները*[11]*:*

*Ինչ վերաբերում է Հայկի դուստրերի 7 թուին, անշուշտ, սա եւս պատահական չէ: Նախ յիշենք, որ 7 թիւը ընդհանրապէս կապուած է Հայկի (Հայր Աստուծոյ) հետ*[12]*: Հայկն աստեղատունը պարունակում է հէնց 7 պայծառ աստղեր: Բացի այդ, Հայկն (Orion) աստեղատան կերպաւորած Օրիոն յունական հերոսը (ըստ տարբեր պատմութիւնների) կապ ունի համանուն աստեղատան մօտ գտնուող Բոյլք*

---

11 Առանձին եւ մեծ հարց է.թէ ինչո՞ւ Հայկի (թագաւորի) որդիների թիւը հէնց 3 է: Դրան այստեղ չենք անդրադառնայ, քանի որ դա շատ է դուրս այս քննութեան նիւթից: Միայն նշենք, որ այս 3 թիւը որդիների համար բնաւ պատահական չէ: Դա կապւում է պաշտամունքին եւ հաւատքին վերաբերող շատ այլ դրսեւորումների հետ: Դրանցից, թերեւս, ամենացայտունը 3 թուի կապն է Յիսուսի հետ,, որ ըստ աւետարանական պատմութեան, մկրտուեց, սկսաւ գործել 30 տարեկանում, գործեց մինչեւ խաչելութիւնը 3 տարի, 33 տարեկանում խաչուեց, մատնութեան գինն էլ 30 արծաթ էր, հոգին տալուց առաջ էլ 3 ժամ Արեւը խաւարեց, 9-րդ (3 × 3) ժամին հոգին աւանդեց, 3 օր մնաց թաղուած եւ 3-րդ օրը յարութիւն առաւ: Կարելի է սրանց կցել եւ այն, որ Աբրահամից մինչեւ Յիսուս 3×14 սերունդ է (ու նաեւ այն, որ Յիսուսի անունն էլ հայերէնում Յ տառով է սկսւում, իսկ Յ տառի թուային արժէքն է 300 եւ տառի գծապատկերն էլ համընկնում է 3 թուանշանին): Այս ըն[illegible]ան չեն, զի իր կրած խորհուրդներով Յիսուսն էլ նոյնանում է թագաւորի (Հօր) փոքր որդու (3-րդ որդու) հետ, որ բերում է փրկութիւնը:

12 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ. էջ 57:

(Pleiades) *աստղախմբի հետ: Իսկ այս վերջինս, իր հերթին, ընկալուած է եղել իբր մի խումբ՝ բաղկացած հէնց 7* **քոյրերից** *(թէպէտ՝ ո՛չ Հայկի դուստրերից), որոնց իբր հետապնդել է որսորդ Օրիոնը (Հայկը): Եւ Բոյլքն էլ, ինչպէս նշուեց, Հայկն աստեղատանը մօտ է, մի փոքր դրանից դէպի հիւսիս-արեւմուտք, Ցուլ կենդանակերպի մէջ: Ի դէպ, հնում 7 քոյրեր են համարուել նաեւ Բոյլքի եւ Հայկի միջեւ գտնուող Հիադներ (Hyades) աստղախումբը: Թէպէտ նոր շրջանում այստեղ նշել են վեց, կամ հինգ (կամ աւելի պակաս) աստղ, սակայն հնագոյն շրջանում սրանք էլ համարուել են 7 աստղ - 7 քոյրեր*[13]*: Բոյլքի 7 աստղերի պէս սրանք էլ համարուել են տիտան Ատլասի դուստրերը:*

*Տեսնում ենք, որ երկնքի քարտէզի վրայ եւս, Հայկին կից ունենք հէնց 7* **քոյրեր** *(դեռ նոյնիսկ՝ ոչ թէ մէկ, այլ երկու խումբ): Եւ սա էլ իր հերթին, ներդաշնակ է Հայկի 7 դուստր ունենալուն:*

*Ինչպէս տեսնում ենք, Հայկի զաւակների թուի, ըստ սեռերի դրանց յարաբերութեան մասին մեր գտած պատկերը լիովին ներդաշնակ է երկնքի քարտէզի վրայ արտայայտուած իրողութիւններին ու նաեւ ժողովրդական հնագոյն պատկերացումներին, որով կարող ենք լիովին արժանահաւատ համարել Հայկի որդիների եւ դուստրերի 3:7 թուերը:*

*Հայկի զաւակներին վերաբերող հարցերն, անշուշտ, այսքանով չեն սահմանափակւում: Յաջորդ բնական հարցն է, թէ օրացոյցի ամիսներից որո՞նք են համապատասխանել Հայկի որդիներին եւ որո՞նք՝ դուստրերին: Ինչպէս տեսանք, միջնադարեան աղբիւրների տուեալներն այս մասին հրապարակերժ են: Այլ ուղղակի տուեալներ այս մասին չունենք: Ուրեմն, այս հարցին կարելի փորձել պատասխանել միայն կողմնակի դատողութիւններով: Հիմք ընդունելով Հայկի 3 որդիների անունները, որ մեզ է աւանդել Խորենացին, կարելի է կատարել ամսանունների հետ դրանց նոյնացման այսպիսի փորձ:*

*Քանի որ Հայկի (Հայր Աստծու) որդին արեգակնային աստուած է*[14]*, ապա պիտի սպասել, որ Հայկի երեք որդիներն էլ խորհրդանշեն Արեւի երեք տարբեր դիրքերը. այն է՝ արեւածագին (ծագող, ծնուող Արեգակ), միջօրէին (այրող, հուր Արեգակ), եւ մայրամուտին (մեռնող Արեգակ, Լուսին): Այսինքն, պիտի Հայկի երեք որդիները համապատասխանեն այս «երեք Արեգակներին»: Տարիքային առումով մեծ որդին պիտի լինի մայր մտնող Արեւը, միջնեկը՝ միջօրէի Արեւը, իսկ կրտսերը՝ ծագող Արեւը:*

*Խորենացու մօտ Արամանեակը յիշատակւում է միւս երկու որդիներից առանձին (ինչպէս որ հէքեաթներում է կրտսեր որդին առանձնանում-ջոկւում աւագ ու միջնեկ որդիներից): Իսկ միւս երկու որդիները յիշւում են Խոռ, Մանաւազ կարգով: Ուրեմն, կարող ենք*

---

[13] Richard Hinckly Allen, Star Names and Their Meanings, New York, London, Leipzig, Paris, 1899 / p. 387/:

[14] Այս մասին տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց Տօմարի որոշ հարցերի մասին. Հին Հայոց գլխաւոր տօնը. «Էջմիածին». 1995, Ժ-ԺԲ, էջ 130-153:

*մտածել, որ Հայկի որդիներն էլ ըստ աւագութեան կարգի լինեն (մեծից փոքր) Մանաւայ, Խոռ, Արամանեակ: Ըստ այսմ, Մանաւայը պիտի համապատասխանի մայր մտնող Արեւին, պիտի կապուած լինի Արեւի մեռնելու, թաղուելու, Անդրաշխարհում լինելու գաղափարին: Եւ իրօք, Մանաւայ անունը (որ կապուած է, կամ նոյնական է Մենուաս անուան հետ), աղերսւում է փոքրասիական Մեն լուսնային աստծու անուանը: Իսկ Լուսինն էլ, գիտենք, որ կապուած է Անդրաշխարհի հետ: Փաստօրէն, Լուսինը հէնց Անդրաշխարհի Արեւն է, այսինքն՝ Արեւը, որ գտնւում է Անդրաշխարհում: Այսինքն, Մանաւայ անունը «Լուսին» իմաստի հետ կապուած լինելը նշանակում է, որ Մանաւայը Հայկի աւագ որդին է, չուգահեռը, նշանակը մայր մտնող Արեւի: Ի դէպ, սրան համահնչուն է եւ սկանդինաւեան Mani լուսնային աստուածը, որ Արեւի եղբայրն է:*

*Հայկի միջնեկ որդին, ըստ այս պատկերացման, պիտի լինի Խոռը: Սա էլ պիտի կապուած լինի միջօրէի Արեւի, այրող, փայլող, կիզող Արեւի հետ: Հր. Աճառեանը Խոռ անուան ծագումը տալիս է անյայտ*[15]*, սակայն սրան շատ մօտ Խորէն անունը, ըստ նոյն հեղինակի ստուգաբանւում է, իբր պարսկական փոխառութիւն, կազմուած xōr «Արեգակ» արմատից*[16]*: Կարելի է սրան կցել նաեւ հայ. Խար «այրել, դաղել» արմատը, որի միւս ձեւն է Խոր*[17]*: Իմաստի առումով սա լրիւ համապատասխանում է միջօրէի այրող, կիզող Խորովող Արեւին: Այնպէս որ, Խոռը իր անունով շատ յարմար է միջօրէի Արեւ լինելուն, որով եւ՝ Հայկի միջնեկ որդուն:*

*Քանի որ 3 որդիներից 2-ը արդէն նոյնացրինք, բնականաբար, կրտսեր որդին էլ պիտի լինի Արամանեակը (Արամենակը): Այս անունը ստուգաբանուած չէ, բայց սրա հետ կապուած անցքերը վկայում են, որ իրօք, Արամանեակը Հայկի կրտսեր որդին է: Այսպէս, ըստ աւանդութեան, Հայկը իր ժառանգութիւնը (իշխանութիւնը) թողեց Արամանեակին, իսկ սրան չուգահեռ՝ հէքեաթներում (նաեւ՝ դիցավէպում) հէնց կրտսեր որդին է, որ ժառանգում է հօր գահը*[18]*: Բացի այդ, Հայկի պաշտամունքը եւ տօնը (Նաւասարդը) կապուած է եղել հէնց առաւօտեայ հետ. Առաւօտ ժամին ծագող Հայկի աստղին յաջորդել է Արեւի ծագումը*[19]*: Այսինքն՝ ծագող Արեգակը ամենասերտ կերպով է կապուած Հայկին (նրա գլխաւոր տօնին), որով եւ բնական է, որ Հայկի ժառանգորդ Արամանեակը լինի հէնց ծագող Արեգակը:*

---

15 Հր. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հ. Բ, Երեւան, 1944 (էջ 528):

16 Անդ, էջ 543:

17 Հր. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հ. Բ, Երեւան, 1975 (էջ 338):

18 Ի դէպ, դեռ հիմա էլ սովորութիւն կայ հայ ընտանիքներում, ըստ որի հօրենական տունը ժառանգութիւն է մնում կրտսեր որդուն: Իսկ աւագ որդիները ամուսնանալով, հայրական տնից գնում են, առանձին տուն-տեղ դնում:

19 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

*Այսպիսով, տեսնում ենք, որ Հայկի 3 որդիների ընկալումը, որպէս Արեւի երեք դիրքեր (երեք Արեւներ) համապատասխանում է նրանց անունների իմաստներին եւ նրանց մասին մեզ աւանդուածին:*

*Հիմք ընդունելով Հայկի որդիների այս դասակարգումը, կարող ենք նրանց համապատասխանող ամիսները բաշխել հետեւեալ կերպ:*

*Հայկի աւագ որդուն՝ Մանաւազին համապատասխանում է մայր մտնող, մահացող Արեւը, եւ նա պիտի կապուած լինի Անդրաշխարհի հետ: Ուրեմն, նրան կարելի է նոյնացնել Անդրաշխարհի հետ կապուած ոեւէ խորհուրդ նշանակող անուն ունեցող ամսուայ հետ: Ըստ իս, այդպիսիք են Սահմի եւ Մեհեկան ամիսները: Սրանցից առաջինը՝* Սահմի, *ստուգաբանւում է իբր իրանականից փոխառեալ* սահմ *«վախ, սարսափ, երկիւղ» բառի սեռական հոլովը*[20]*: Ըստ այդմ, սա շատ յարմար է Անդրաշխարհի հետ կապուած լինելու համար:*

*Միւսը՝ Մեհեկան (Մեհեկի) ամսի անունն է, որ ստուգաբանւում է իբր փոխառութիւն իրանական* *mihrakān *հոմանիշից, որն էլ ծագում է պահլաւական* Mihr *դիցանունից*[21]*: Սա բառիս լեզուաբանական - գիտական ստուգաբանութիւնն է, իսկ աւանդական ստուգաբանութիւնը այս անունը կապում է* մահ *բառի հետ*[22]*: Թէպէտ արդի լեզուաբանական գիտութիւնը իրաւամբ չի ընդունում այս ստուգաբանութիւնը, այդուհանդերձ հարկ է նկատել, որ աւանդական ստուգաբանութիւնը ինքը որոշակի աշխարհայեացքի, որոշակի աւանդական մտեցման արտայայտութիւնն է, եւ ինչքան էլ բռնազբօս լինի մեկնութիւնը, էլի պէտք չէ անտեսել դրա տակ եղած աշխարհայեացքը: Այնպէս որ, Մեհեկան ամիսն էլ կարող է կապուած լինել մահուան գաղափարի հետ*[23] *եւ ըստ այդմ, սա եւս կարող է լինել Հայկի աւագ որդի Մանաւազին ձօնուած ամիսը:*

*Հայկի միջնեկ որդուն՝ Խոռին համապատասխանում է միջօրէի այրող, կիզող Արեւը: Հայկի այս որդուն համապատասխանող ամիսը պարզելուն կարող է օգնել մի մատենագրական վկայութիւն: Ըստ հ. Ղ. Ալիշանի, Յովհաննէս Երզնկացու անուամբ մի տօնապատճառում գրուած է. «Այր ոմն զՄատրան ամիս՝ ի Հոռի փոխարկեաց, որդւոյն իւրոյ Խոռէն կոչելով...»*[24]*: Այստեղ պատմւում է, թէ մի ոմն այր, նախապէս Մատրան կոչուող ամիսը իր* Խոռ *որդու անունով վերանուանել է* Հոռի*: Այսինքն, Հոռի ամիսը նախապէս կոչուել է*

---

[20] Էդ. Աղայեան, Ակնարկներ Հայոց Տոմարների Պատմութեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986 (էջ 60):

[21] Հր. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հ. Գ, Երեւան, 1977, էջ 296-297 նաեւ՝ Էդ. Աղայեան, նշ. աշխ., էջ 65-66:

[22] Տե՛ս օր.՝ Լ. Խաչիկեան, նշ. աշխ. (Վանական Վարդապետ), էջ 160:

[23] Կան այլ փաստեր եւս, որ վկայում են Մեհեկան ամսուայ այսպիսի դիրքը, սակայն դրանց շարադրումը (առաւել եւս՝ քննութիւնը) մեծ տեղ կը գրաւեին եւ քանի որ դա դուրս է այս քննութեան խնդրից, դրանց այստեղ չենք անդրադառնայ, կը սահմանափակուենք միայն նշելով այդ մասին (իսկ քննութիւնը կը մնայ այլ առիթի):

[24] Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895 (էջ 140):

*Մատրան եւ վերանուանուել է յանուն Խոռի: Այս Խոռ անունը համընկնում է Հայկի միջնեկ որդու անուանը: Համընկնում է նաեւ Հայկի եւ այդ ոմն այրի՝ ամիսներին անուն դնելու արարքը: Այնպէս որ, լիովին հիմք ունենք եզրակացնելու, որ սոյն աղբիւրում յիշատակուած ոմն այրը հէնց Հայկն է, եւ յիշեալ Խոռն էլ հէնց Հայկի որդի Խոռն է: Եւ ըստ այս աղբիւրի, Հոռի ամսանունը պիտի համարենք Հայկի որդի Խոռի անունից յառաջացած: Սրա օգտին է նաեւ այս ամսուայ անուան եւ Հայկի Խոռ որդու անունների ստուգութիւնը:*

*Գալով Հայկի կրտսեր որդի Արամանեակին, սրա հարցը եւս համեմատաբար պարզ է: Կրտսեր որդուն համապատասխանում է ծագող Արեգակը, ուստի եւ նա կապուած է առաւօտեայ, արեւածագի հետ: Բացի այդ, այս որդին նաեւ Հայկի ժառանգորդն է, նրա տեղը զբաղեցնողը: Ըստ այդմ, Հայկի կրտսեր որդին պիտի կապուած լինի Տարեմուտի, տարուայ սկզբի ամսի հետ: Ուրեմն, Հայկի կրտսեր որդին էլ պիտի համապատասխանի Նաւասարդի ամսին:*

*Անշուշտ, հնարաւոր է առաջարկել ամիսների եւ Հայկի որդիների համապատասխանեցման այլ տարբերակներ եւս, սակայն նկատի առնելով վերը քննութեան առնուած տուեալները, առաւել հաւանական է թւում աստ առաջարկուած պատկերը: Ուրեմն, կարող ենք ասել, որ ամենայն հաւանականութեամբ, Հայկի կրտսեր որդի Արամանեակին ձօնուած է եղել առաջին՝ Նաւասարդի ամիսը, միջնեկ որդի Խոռին՝ երկրորդ՝ Հոռի ամիսը, իսկ աւագ որդի Մանաւազին՝ Մեհեկան (կամ Սահմի) ամիսը:*

*Հայկի դուստրերի եւ ամիսների համապատասխանութեան հարցը քննելու համար արդ բաւարար տուեալներ չունենք, ուստի այդ հարցին այստեղ չենք անդրադառնայ:*

## Բ. Հայկական օրացոյց եւ Հռոմէական օրացոյց

*Փորձենք հասկանալ, թէ ինչ է նշանակում Հայկի կաւակների այսպիսի թուային կազմը, որն է դրա օրացուցային իմաստը: Սա հասկանալու համար յիշենք, որ Հայոց օրացոյցը կարգաւորուել է Հայկն աստեղատնով: Այս աստեղատան գլխաւոր, առաջնորդ աստղը՝ Հայկին արեւելեան ուսը Հայաստանի տարածքից տարուայ մէջ 70 օր եղել է անտեսանելի*[25]*: Այսինքն, 70 օր Հայկը բացակայել է երկնքից (իմա՛ աշխարհից) եւ եղել է հորիզոնից վար, այսինքն, Անդրաշխարհում: Արդ, եթէ տարուայ 365 օրերից հանենք 70 օրերը, որոնց*

---

25 Տարուայ մէջ որոշ ժամանակ աստղի չերեւալը հետեւանք է Արեւի շուրջ Երկրի տարեկան պտոյտի եւ այն բանի, որ հասարակածի ու խաւարածի հարթութիւնները իրար նկատմամբ 23,5 աստիճան անկեան տակ են: Դրա հետեւանքով տուեալ վայրից դիտողի համար տուեալ աստղը տարուայ մէջ որոշ ժամանակ հորիզոնից վեր կը լինի միայն ցերեկային ժամերին, ուստի եւ՝ չի երեւայ (գիշերը կը լինի հորիզոնից վար):

ընթացքում Հայկը երկնքում չի երեւում (աշխարհից բացակայում է), կը ստանանք 365 - 70 = 295 օր: Իսկ 295 օրը մեծ ճշդութեամբ համընկնում է լուսնային 10 ամսուայ տեւողութեանը (իւրաքանչիւրը 29.5 օրից). 29.5 × 10 = 295 օր: Այսինքն, կարելի է մտածել, որ Հայկի պաւակների անուններով կոչուել են այն ամիսները, որոնց ընթացքում գիշերային երկնքում երեւացել է Հայկը (նրա գլխաւոր աստղը): Աւելին, սա նշանակում է նաեւ, թէ տարի է համարուել միայն այն ժամանակահատուածը, որի ընթացքում Հայկը երեւացել է երկնքում, իսկ այն ժամանակամիջոցը, երբ Հայկը երկնքում չի դիտուել (եղել է Անդրաշխարհում), համարուել է տարուց դուրս: Ինչպէս որ օրացոյցի առաջնորդ Հայկը 70 օր եղել է այս աշխարհից դուրս, այնպէս էլ դրան համապատասխան ժամանակահատուածը համարուել է կեանքի սովորական ժամանակից՝ տարուց դուրս: Ի դէպ, այս կերպ լիովին բացատրելի են դառնում նաեւ այն պանսպան արգելքները, որ Հայոց մօտ եղել են Նաւասարդին նախորդող շրջանում[26]: Նաւասարդին (տօնին) նախորդող շրջանը համընկնում է Հայկի աստղի չերեւալու շրջանին, ուրեմն եւ պիտի համարուէր տարուց դուրս, եւ բնական է, որ տարուայ մէջ չմտնող օրերին էլ արգելուած պիտի լինէր որոշ (կարեւոր) գործեր անելը, ինչպէս՝ օրինակ՝ ամուսնութիւնը: Ընդհանրապէս, ռեւէ գործողութեան վրայ եղած արգելքը, եթէ դա ժամանակաւոր է, նշանակում է, որ այն կապուած է հիմնականում տուեալ ժամանակահատուածի մասին եղած պատկերացման հետ: Եւ այս առումով լիովին բնական է, որ տարուց դուրս համարուող ժամանակահատուածը լինէր գերապանցապէս արգելքների շրջան: Հնում Հայոց Նաւասարդին նախորդող ժամանակաշրջանը ինչ որ կերպ տարուց դուրս համարուած լինելուն ի հաստատումն կարելի է վկայակոչել բազմաթիւ ժողովրդական ծէսերը, սովորութիւնները, հաւատալիքները, որոնց մի մասը հասել է նոյնիսկ մինչեւ մեր օրերը[27]: Սրան է վերաբերում (սրա վերապրուկն է) եւ այն, որ միջնադարեան հայ տոմարագէտները տարուայ 12 ամիսներից յետոյ աւելացուած 5 օրերը (Աւելիք) համարել են տարուց դուրս՝ արարչութեան օրեր:

Այս նոյնի մի այլ վկայութիւն է եւ այն, որ Ա. Շիրակունին «Ի գործոց» անուանակոչուած երկու ամիսներից մէկը համարում է Մարգաց ամիսը: Միեւնոյն ժամանակ, Մարգացը Հայոց ամիսների շարքում 11-րդն է, այսինքն, նախավերջինը, որով դա ամիսների շարքում իր զբաղեցրած տեղով ընկնում է 10-ամսեայ տարուց յետոյ: Բացի այդ, Հայոց 12-րդ ամսուայ անունը՝ Հրոտից, ըստ ընդունուած տեսակէտի, ստուգաբանւում է իբր իրանական փոխառութիւն: Ըստ Աճառեանի, դա ծագել է պահլաւերէն fravartikan - «աւելեաց» բառից[28]:

---

[26] Այս արգելքների մասին տե՛ս Գր. Բրուտեան, «Էջմիածին» 1995, Ժ-ԺԲ, էջ 130-153:

[27] Տե՛ս նոյն տեղում:

[28] Հր. Աճառեան, Հայերէն Արմատական Բառարան, հ. Գ, էջ 137:

*Այսինքն, 12-րդ տեղում դրուած ամսի անունը նշանակել է տարուց յետոյ աւելացուած ժամանակը (որն, ի դէպ, նուիրուած է եղել մեռելոց յիշատակին): Այսինքն, Հայոց օրացոյցի վերջին երկու ամիսները կապուած են տարուց (10 ամիսներից) յետոյ աւելացուած ժամանակի գաղափարին: Եւ սա նշանակում է, որ իրօք, նախապէս հայկական հնագոյն օրացոյցը եղել է հէնց 10 ամսից, իսկ երկու ամիս էլ (ամենայն հաւանականութեամբ՝ Մարգաց եւ Հրոտից) աւելացուել են յետոյ (տարուց դուրս համարուած 60–70 օրերը ամիսների բաժանելու եւ ապա տարուն կցելու միջոցով): Ի դէպ, այս նոյն կարգի երեւոյթ մեզ յայտնի է նաեւ միջնադարեան հայկական օրացոյցից: Այստեղ էլ, համեմատաբար վաղ շրջանի տոմարական աշխատութիւններում (Ա. Շիրակունի, Յ. Սարկաւագ եւն) տարուայ 12 ամիսներից յետոյ դրուած աւելեաց օրերը (Աւելիք) չեն դիտւում տարուայ կազմում, այնինչ, ուշ շրջանից ունենք օրինակներ, երբ դրանք համարւում են առանձին ամիս (5-օրեայ) եւ այդպէս է արդէն մերօրեայ հայ տոմարագէտների մեծամասնութեան աշխատութիւններում: Այսինքն, ժամանակի ընթացքում մոռացուել է այդ օրերը տարուց դուրս թողնելու բուն պատճառը, եւ ապա, ի հետեւանք գուտ ձեւական մօտեցման,, դրանք եւս սկսել են համարուել տարուայ կազմում:*

*Օրացոյցի այսպիսի կառուցուածքը վկայող այլ տուեալներ եւս կան, սահմանափակուենք, սակայն, այսքանով:*

*Որպէսզի հայկական հնագոյն օրացոյցի կառուցուածքի մասին այս պատկերացումը տարօրինակ չթուայ, անմիջապէս նկատենք, որ այսպիսի կառուցուածքը եզակի երեւոյթ չէ. սրան համանման կառուցուածք է ունեցել նաեւ հին Հռոմէական օրացոյցը (որի բարեփոխեալ տարբերակն էլ, ի դէպ, այսօր կիրառւում է աշխարհի մեծ մասում):*

*Ըստ արդի պատկերացումների, հին Հռոմէական օրացոյցն ունեցել է 10 ամիս.*

| | |
|---|---|
| *1. Մարտիուս,* | *6. Սեքստիլիս,* |
| *2. Ապրիլիս,* | *7. Սեպտեմբեր,* |
| *3. Մայուս,* | *8. Օկտոբեր,* |
| *4. Յունիուս,* | *9. Նովեմբեր,* |
| *5. Քուինտիլիս,* | *10. Դեցեմբեր:* |

*Կան վկայութիւններ (Վարրոն, Մակրոբիուս, Կենսորինուս եւն), համաձայն որոնց, հին Հռոմէական տարին ունեցել է 10 ամիս եւ պարունակել է 304 օր, որ արեւադարձային տարուց կարճ է 60 օրով*[29]*, իսկ 11-րդ եւ 12-րդ ամիսները՝ Փետրուարն ու Յունուարը տարուայ վերջում աւելացուել են –690 թ. Ն. Ք. Հռոմի տիրակալ Նումա Պոմպիլիուսի կողմից: Կայ նաեւ կարծիք, որ տակաւին նախքան Հռոմուլոսը*

[29] И. А. Климишин, Календарь и Хронология, "Наука", Москва, 1985, ст. 201, Տաեւ՝ Հ. Ս. Բադալեան, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970, էջ 154–160, եւն:

*Հռոմէական օրացոյցի տարին եղել է 10 ամսից, բայց ոչ թէ 304, այլ 365 1/4 օր տեւողութեամբ*[30]*: Յայտնի է նաեւ, որ հին Հռոմէացիները իմացել են ժամանակը աստղային երկնքի երեւոյթներին կուգադրելու կերպը: Ընդհանրապէս, Հռոմէական օրացոյցի նախնական վիճակի (կառուցուածքի) եւ դրա հետագայ փոփոխութիւնների մասին տուեալներն ու կարծիքները բազմաբնոյթ են եւ յաճախ՝ հակասական: Այս հարցում միասնական տեսակէտ չի եղել, սկսած անտիկ շրջանից եւ այդպէս է մինչեւ հիմա:*

*Արդ, Հռոմէական օրացոյցին առնչուող բազմաթիւ հին ու նոր տուեալներին աւելանում է նաեւ Հայկական եւ Հռոմէական հնագոյն օրացոյցների կառուցուածքում առկայ զարմանալի նմանութիւնը: Եւ այս նմանութիւնը կարող է օգնել այդ օրացոյցները մէկը միւսի միջոցով առաւել լաւ հասկանալուն:*

*Ըստ հին Հռոմէական օրացոյցի մասին մեզ հասած տեղեկութիւնների, սկզբնապէս, երբ օրացուցային տարին պարունակել է 10 ամիս, այդ ամիսների աւարտից յետոյ մինչեւ յաջորդ տարեմուտն ընկած (շուրջ երկամսեայ) ժամանակամիջոցը ամիսների բաժանուած չի եղել, այլ պարզապէս, այդ 10 ամիսներից յետոյ սպասել են մինչեւ գարնանամուտ, որ էլի սկսեն տարուայ ամիսների հաշիւը առաջին՝ Մարտ ամսից*[31]*, Մակրոբիուսն էլ յայտնում է, որ Նումա Պոմպիլիուսը այդ (տարուց դուրս) ժամանակամիջոցը բաժանում է երկու ամսի եւ կցում տարուան, ընդ որում, Փետրուար ամիսը դրւում է Յունուարից առաջ*[32]*: Իսկ յետոյ այս ամիսների տեղերը փոխւում են եւ տարեմուտն էլ Մարտի սկզբից տեղափոխւում է Յունուարի սկիզբը:*

*Այս երկու յաւելեալ ամիսների փոխատեղումը եւս յստակ բացատրութիւն չունի: Հիմք ընդունելով հայկական հնագոյն օրացոյցի հետ եղած նմանութիւնը, կարելի է մտածել, որ նախապէս տարուց դուրս համարուած ժամանակահատուածը երկու ամիսների բաժանելով, սկզբնապէս՝ Փետրուարը դրել են Յունուարից առաջ հետեւեալ նկատառումներով: Այդ (տարուց դուրս) ժամանակահատուածը վերաբերել է գլխաւոր պաշտուող էակի՝ գերագոյն աստծու՝ Անդրաշխարհում լինելուն, ուստի եւ այդ ժամանակահատուածի սկիզբը ձօնել են Անդրաշխարհի աստծուն (Ֆեբրուարիուսին), իսկ վերջը, որ միւս կողմից էլ յարում էր եկող տարուայ սկզբին (անցնում էր դէպի Նոր Տարին), ձօնել են տարեմուտի հովանաւոր աստծուն (դռների եւ ամէն տեսակ սկզբի աստուած Յանուսին), ու կոչել նրա անունով՝ Յանուար: Հետագայում, սակայն, ինչ-ինչ նկատառումներով (որ մեզ յայտնի չեն) տարեմուտը Մարտի սկզբից տեղափոխել են Դեկտեմբերի վերջին յաջորդող օրը (որը փաստօրէն համապատասխանել է դրանից առաջուայ՝ տարուց դուրս թողնուած ժամանակահատուածի սկզբին):*

---

30 Տե՛ս Նոյն տեղում:

31 Ի. Ա. Կլիմիշին, Նշ. աշխ., էջ 202:

32 Անդ:

*իսկ Դեկտեմբերից յետոյ դրուած էր Փետրուարը: Եւ որպէսզի տարեմուտը Անդրաշխարհին ձօնուած ամսով (Փետրուարով) չսկսուի, Յունուարը բերում են Փետրուարից առաջ: Ահա այս կերպ, տարեմուտը, որ նախապէս Մարտի սկզբին էր (դրան կից Յունուար ամսի վերջին), այս փոփոխութեամբ յայտնւում է Յունուարի սկզբում:*

*Այլ հարց է, թէ ինչու են Հռոմէացիք տարեմուտը Մարտի սկզբից տեղափոխում Դեկտեմբերի վերջին յաջորդող օրը: Այս հարցը, սակայն, դուրս է խնդրիս շրջանակներից եւ դրան այստեղ չենք անդրադառնայ:*

*Յայտնի է նաեւ, որ տարբեր ժամանակներ Հռոմէական օրացոյցում տարբեր ձեւերով փոփոխուել են նաեւ ամիսների պարունակած օրերի թուերը*[33]*:*

*Ուշագրաւ է, որ 10-ամսեայ տարուց յետոյ աւելացուած ամիսներից առաջինը՝ Փետրուարը ձօնուած է եղել Անդրաշխարհի աստուած* **Ֆեբրուարիուսին:** *Սա լրիւ համահնչուն է այն պատկերացման հետ, ըստ որի Հայոց հնագոյն օրացոյցում էլ տարուայ 10 ամիսներից յետոյ եղել է Հայկի Անդրաշխարհ մտնելու (շուրջ երկամսեայ) շրջանը: Հայերի մօտ էլ դրա վերապրուկները պահպանուել են սգատօն յիշեցնող տարբեր (հիմնականում՝ գարնանային) ծէսերով ու արգելքներով (Բակլախորան, ամուսնութեան արգելք, կաթնամթերքի արգելք, իրիկունները գործ անելու արգելք եւն):*

*Կարեւոր է, նաեւ, որ Հռոմէական օրացոյցում Նումա Պոմպիլիուսի աւելացրած երկրորդ ամիսը Փետրուարից յետոյ եղել է Յունուարը՝ ձօնուած Յանուս (*Janus*) աստծուն: Սա համարուել է դռների, ելքերի եւ մուտքերի, եւ ընդհանրապէս՝ ամէն տեսակ սկզբի աստուած: Աւանդաբար պատկերուել է 365 մատներով, բանալիներով եւ ետ ու առաջ նայող երկու դէմքով*[34]*: Եւ հէնց այս՝ ետ ու առաջ նայող (դռների) աստծուն ձօնուած ամսին էլ դրուած է եղել հին ու նոր տարիների միջեւ: Պատահական չէ, որ Յանուսը կոչուել է նաեւ* Janus Pater *– «Հայր Յանուս», եւ իր անունն էլ բղխեցւում է* ianіa *– «դուռ» բառից: Դատելով իր մի շարք յատկանիշներից, Յանուսը նախապէս պէտք է եղած լինի գերագոյն գլխաւոր տիեզերական աստուած, արարիչն ամենայն ինչի, Հայր աստուած: Այդ է յուշում եւ նրա «Հայր» յորջորջումը: Բացի այդ, նրա քուրմը եղել է հռոմէական բոլոր քրմերի գլխաւորը, Յանուսն ինքը կոչուել է «Աստուածների Աստուած» եւ «Բարի արարիչ», եւ բացի այդ, աստուածներին դիմելուց էլ նրա անունը տրուել է առաջինը:*

*Արդ տեսնում ենք, որ հռոմէական տարուայ սահմանագլխին դրուած ամիսը ձօնուած է եղել Հայր Յանուսին, իսկ ինչպէս ժամանակին ցոյց է տրուել*[35]*, Հայոց տարեմուտի տօնն էլ (Նաւասարդը) ձօնուած է եղել Հայր Աստծուն – Հայկին: Բացի այդ, Յանուսը լինելով*

---

[33] Տե՛ս Հ. Կլիմիշին, Նշ. աշխ., Հ. Թադալեան, Նշ. աշխ., եւն:

[34] Мифы Народов Мира, Т. 2, Москва, 1992, ст. 683-684.

[35] Տե՛ս Գր. Թրուտեան, «Էջմիածին», 1995, Ժ-ԺԲ, էջ 130-153:

*դոների աստուած, նրա հետ կապուած տարեմուտն էլ պիտի առնչուէր դռան գաղափարի հետ: Սրան կուգահեռ յիշենք, որ Հայոց Նաւասարդեան տօնի երկու հիմնական բեկորներն էլ՝ Համբարձումն ու Վարդավառը սերտօրէն աղերսւում են* **Միհրի դռան** *հետ: Ըստ աւանդութեան, տարին միայն երկու անգամ՝ Համբարձմանն ու Վարդաւառին է, որ* **բացւում է Միհրի դուռը:** *Դուռը բացուելը նշանակում է, որ հնարաւոր է դառնում այդ դռան մի կողմից միւսն անցնելը (կուգահեռը՝ հին տարուց դէպի նոր տարին անցնելը): Ըստ երեւոյթին, բոլորովին պատահական չէ, որ հէնց Միհրի դռան վրայ է արձանագրուած Վանի Արարատեան թագաւորութեան (պետական) դիցարանի աստուածների ցանկը՝ իրենց կոհաբերութիւններով հանդերձ: Պիտի մտածել, որ ամենայն հաւանականութեամբ հէնց այդ՝ Միհրի Դուռ կոչուած վայրում էլ կատարուել են տարեմուտի հետ կապուած ամենամեայ ինչ-ինչ արարողութիւններ, մեծ հանդիսութիւններ:*

*Հայկական եւ հին Հռոմէական օրացոյցների ընդհանրութիւնը այսքանով չի սահմանափակւում: Հետաքրքիր է, որ Հռոմէական (հին) օրացոյցում յատուկ անուններ ունեցել են միայն առաջին չորս ամիսները.* Martius, Aprilis, Maius, Junius*: Սրանց յաջորդող ամիսները պարզապէս կոչուել են իրենց հերթական համարներով (Մարտից հաշուած).* Quintilis – *«հինգերորդ»*, Sextilis – *«վեցերորդ»*, ... *եւն, մինչեւ* December – *«տասներորդ»:*

*Հռոմէական հին օրացոյցում նախնական 10 ամիսներից 6-ի անանուն (միայն հերթական համարով կոչուած) լինելը համեմատելի է Հայկց հնագոյն օրացոյցի (ստ քննարկուող) կառուցուածքին: Իրօք, այս երկուսի համադրումը յիշեցնում է մի հին (բաւական ընդհանուր) սովորութիւն, ըստ որի, աղջիկ զաւակներին յատուկ անուններ չեն տրուել, կամ էլ նրանց անուան վրայ արգելք է եղել, եւ աղջիկները կոչուել են իրենց հօր (կամ մօր, կամ եղբօր) անունով (իբր այսինչի աղջիկ, կամ այսինչի քոյր): Այս հնագոյն սովորութեան մնացորդ վերապրուկներ կարելի է դիտել, օրինակ, Ռուսների մէջ՝ ամուսինների կողմից իրենց կանանց յաճախ միայն հայրանունով դիմելու սովորութիւնը: Նոյն հնագոյն իրողութեանը պիտի կապել եւ հայերէնում շատ տարածուած իգական անձնանունները, որ կազմուած են հօր (կամ եղբօր) անունով, ինչպէս՝ Սահականոյշ, Տիգրանուհի, Սանդուխտ եւ այլն: Սրանց կարելի է կցել նաեւ* **ուհի,** *անոյշ, դուխտ վերջաւորութիւններով այլ անուններ եւս: (Ի դէպ, այս վերջաւորութիւններով անձնանունները անձնանուն էլ չեն սովորական իմաստով, այլ նշանակում են «այսինչի աղջիկ»): Ըստ Հր. Աճառեանի, Հայոց մէջ էլ սովորութիւն է եղել կնոջը իր հօր անունով կոչելու: «Հին Հայոց մէջ կնոջ անունը տալը ամօթ էր համարւում, եւ փոխանակ կնոջը իր սեփական անունով կոչելու, ասում էին «այսինչի աղջիկը»»[36]: Ես ինքս էլ ականատես եմ եղել, որ մեր օրերում էլ*

---

[36] **Հր. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հ. 5, էջ 342:**

*Սիւնիքի որոշ գիւղերում (նաեւ Հայաստանի այլ վայրերում) ամուսինը կնոջը կոչում է ոչ թէ անունով, այլ «աղջի», կամ «հարս» ձեւով, որ ըստ էութեան, դարձեալ նշանակում է կնոջ անունը չտալ (կամ անուն չունենալը):*

*Այս նոյն երեւոյթը գիտենք նաեւ պարսիկների մշակոյթից (Որմիզդուխտ - Որմիզդի աղջիկ, եւն): Նոյնը պիտի եղած լինի նաեւ յունական միջաւայրում, որի վերապրուկներ կարելի է դիտել* Pleiades *(«Պլեյոնէի դուստրեր» - մօր անունով) աստղանունը, նոյն կերպ եւ՝ Դանայուհիները (Դանայոսի դուստրերը - հօր անունով), Հիադներ* (Hyades) *աստղախմբի անունը (իրենց եղբօր՝ Հիասի, անունով)*[37], *Ներէուհիները՝ իրենց հօր անունից եւ այլն: Գուցէ սրան է առնչւում նաեւ Արաբների մօտ առկայ աւանդոյթը, ըստ որի կինը կոչուել է իր ծնուած անդրանիկ արու զաւակի անունով (իբր՝ այսինչի մայր):*

*Ի մի բերելով կանանց անուանակոչման մասին այս ամենը, կարող ենք մտածել, որ ըստ այս հինաւուրց սովորութեան (պատկերացման), Հայկի (Հայր Աստուծոյ) դուստրերը յատուկ անուններ չեն ունեցել, կամ էլ նրանց անունները եղել են արգելքի տակ: Եւ ըստ այսմ, Հայկի զաւակների անուններով կոչուած ամիսներից նրանք, որ անուանակոչուել են դուստրերի անուններով, չեն ստացել յատուկ անուններ, այլ կոչուել են միայն իրենց հերթական համարներով (ինչպէս գուցէեւ հէնց իրենք՝ դուստրերը): Այստեղ դժուարութիւն է յարուցում թերեւս այն, որ Հայկի դուստրերը 7-ն են, մինչդեռ Հռոմէական օրացոյցում ունենք 6 անանուն ամիս (եւ 3 որդու դիմաց էլ ունենք 4 անուանակիր ամիս): Սակայն այս դժուարութիւնը յաղթահարելի է, եթէ նկատի ունենանք, թէ ինչպիսի տեսակ-տեսակ փոփոխութիւնների է ենթարկուել Հռոմէական օրացոյցը մինչեւ մեզ յայտնի ժամանակները հասնելը (մուծուել են ամիսներ, փոխուել է ամիսների հերթականութիւնը, փոխուել է տարեմուտը, փոխուել են ամիսների պարունակած օրերի քանակներն ու նաեւ՝ անունները (Յուլիս, Օգոստոս) եւ այլն): Այս կարգի «երկրաշարժային» փոփոխութիւնների լոյսի տակ կարելի է լիովին հնարաւոր համարել, որ նախապէս անուն չունեցող (միայն հերթական թուահամարով կոչուող) ամիսներից մէկը ինչ որ ժամանակ վերանուանուէր եւ կոչուէր այդ ամսուայ հետ կապուած տօնին, խորհուրդին վերաբերող մի դիցական անունով (տեսնք. օրինակ՝* *Quartilis *անուն ունեցած ամիսը դառնար* Junius - *Յունիս): Ճիշդ է, այս մասին մեզ վկայութիւն չի հասել, այդուհանդերձ սրա հնարաւորութիւնը բացառուած չէ:*

*Ի դէպ, այս ամսուայ անունը՝* Junius, *ընդունուած է կապել Յունոն* (Juno) *դիցուհու անուան հետ: Այս դիցուհին համարուել է ամուսնութեան հովանաւորը: Այստեղ համեմատութեան համար յիշենք, որ Մայիս ամսին ե՛ւ հայկական սովորութեամբ, ե՛ւ էլ հռոմէական աւանդութեամբ ամուսնութիւններ չեն եղել, ու նաեւ այն, որ Յունիսին*

---

[37] Мифы Народов Мира, т. I, ст. 300.

*էլ ընկնում է Հայոց գլխաւոր տօնը՝ Նաւասարդը, որի ծէսերի շարքում առանձնայատուկ կարեւոր տեղ է ունեցել ծիսական ամուսնութիւնը*[38]*: Այսինքն, հոռմէական այս (չորրորդ) ամսուայ ե՛ւ անունը, ե՛ւ դիրքը, ե՛ւ էլ խորհուրդը ներդաշնակ են հին Հայոց օրացուցային պատկերացումների մասին մեր իմացածին:*

*Հռոմէական օրացոյցին շատ մօտիկ է եւ Էտրուսկների օրացոյցը: Թէպէտ Էտրուսկների եւ նրանց մշակոյթի մասին արդի պատկերացումները տակաւին ամբողջական չեն, եւ շատ հարցեր դեռ վէճի առարկայ են, այդուհանդերձ, որոշ բան պարզ է նաեւ հէնց նրանց օրացոյցի բնագաւառում: Ստոյգ յայտնի են էտրուսկեան ութ ամիսների անունները, ենթադրաբար (մեծ հաւանականութեամբ) յայտնի է եւս մի ամսի անուն: Բացի այդ, հիմք ընդունելով նրանց ժամանակային պատկերացումները եւ որոշ այլ բաներ, եկրակացւում է, որ Էտրուսկների տարին եւս, ինչպէս հռոմէականը, պարունակել է 10 ամիս*[39]*: Ի տարբերութիւն Հռոմէականի, Էտրուսկեան օրացոյցի բոլոր 10 ամիսներն էլ (գոնէ դրանցից 8-ը՝ հաստատ) ունեցել են յատուկ անուններ, որոնցից մի քանիսը որոշակիօրէն կապուած են եղել իրենց դիցարանի աստուածների անուններին: Միեւնոյն ժամանակ, օրինակ, Դըվերս ամսանունը փորձ է արուել բացատրելու իբր «ութերորդ»*[40]*:*

*Էտրուսկեան ստոյգ յայտնի ութ ամիսներն են.*

| | |
|---|---|
| Velcitanus *( Մարտ ),* | Traneus *(Յուլիս),* |
| Cabreas *( Ապրիլ ),* | Ermius *(Օգոստոս),* |
| Ampiles *( Մայիս ),* | Cellus *(Սեպտեմբեր),* |
| Aclius *( Յունիս ),* | Xosfer *(Հոկտեմբեր):* |

*Որոշ վերապահութեամբ սրանց կարելի է կցել նաեւ* Masan *ամսանունը, որ կապւում է փռիւգա-լիդիական* Men *ամսանուան եւ դրա հովանաւոր լուսնային աստծու անուան հետ: Այս ամսանունը նաեւ յուզահեռ է դրւում Արարատեան թագաւորութիւնից յայտնի* Menuas *(արքայական) անուան հետ*[41]*: Ի դէպ յիշենք, որ այս անունը կապւում է եւ Հայկի որդիներից՝* Մանաւազի *անուան հետ: Այս անունների կարմանալի նմանութիւնը նկատել է դեռ Հր. Աճառեանը, բայց այդ նմանութիւնը համարել է միայն պատահական*[42]*: Եւ Մանաւազ անունն էլ բացատրել է իբր «մէկ բազկով օժտուած ինչպէս*

---

38 Տե՛ս Գր. Թորոսեան, Նշ. աշխ.:

39 А. И. Немировский, Этруски. От Мифа к Истории, «Наука», Москва, 1983, ст. 185-190.

40 Նոյն, էջ 187:

41 Նոյն, էջ 186:

42 Հր. Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հ. 5, էջ 346:

*Ման» եւ անուան ծագումն էլ համարել է իրանական*[43]*: Այդուհանդերձ, Մանաւաy եւ Մենուա (Մենուաս) անունների կապը (եթէ ոչ՝ նոյնութիւնը) յուզել է այլ հետազօտողների եւս, եւ նոյնիսկ փորձ է արուել նոյնացնելու Հայկի որդի Մանաւազին եւ Արարատեան արքայ Մենուային*[44]*:*

*Ամեն դէպքում, եթէ ճիշդ է Էտրուսկեան օրացոյցում* Masan *ամսի մասին կարծիքը, ապա այս ամսանունը, ամենայն հաւանականութեամբ, պիտի կապուի Հայկի որդի Մանաւազի անուան հետ, որ խօսում է հայկական եւ էտրուսկեան օրացոյցների կապի մասին:*

*Այս երկու օրացոյցների նմանութեանը, դրանց կապին աւելի մեծ հաւաստիութիւն է տալիս հետեւեալ իրողութիւնը:*

*Յայտնի է, որ Էտրուսկները հին եւ նոր տարիների սահմանագլխին հանդիսաւորութեամբ կատարել են Նորտիա աստուածուհու տաճարում սրբազան պատին մեխ մեխելու ծէսը: Ճակատագրի աստուածուհու տաճարի պատին մեխ մեխելու այս հետաքրքիր ծէսը դեռեւս հնուց ունեցել է տարբեր մեկնաբանութիւններ: Համարուել է, որ դա եղել է իւրատեսակ տարեհաշուի ձեւ, եւ կամ, որ պատի վրայ մեխերի գլուխներից ազատ մնացած տարածութիւնը ցոյց է տուել Էտրուսկ ժողովրդին այս աշխարհում սահմանուած ժամանակը*[45] *եւ այլն: Զանց առնելով այս ուշագրաւ տոմարական ծէսի քննութիւնը, յիշենք, որ սրան զուգահեռ, հայերէնում էլ ունենք տակաւին մեր օրերում բաւական կիրառուող մի արտայայտութիւն. «պատը չոփ խրել» կամ «պատը մեխ մեխել»: Այսպէս են ասում նշելու, շեշտելու համար մի արտառոց, վաղուց ի վեր տեղի չունեցած եւ ցանկալի (դրական) իրադարձութիւն: Այստեղ իմ խնդիրը չէ, էտրուսկեան այս օրացուցային ծէսի բացատրութիւնը փնտռելը, սակայն հարկ է նկատել, որ սոյն ծէսը որոշակիօրէն աղերսւում է վերոբերեալ հայերէն արտայայտութեան հետ: Այսպէս. երբ նշւում է մի իրադարձութեան բացառիկ, արտակարգ լինելը, դա կարող է ընկալուել, իբր այնքան կարեւոր, այնքան բացառիկ եւ այնքան երկար սպասելի դէպք, ինչպէս Նոր Տարուայ գալն է: Բացի այդ, արտակարգ դէպքը, որի համար կիրառւում է յիշեալ արտայայտութիւնը, կարող է ընկալուել իբր սովորական ժամանակից դուրս ( նոյնն է ցոյց տալիս եւ արտակարգ բառը, իբր՝ դուրս կարգից, կարգաւորուած ժամանակից): Իսկ սովորական ժամանակից դուրս լինելը լաւ յամարում է 10-ամսեայ տարուց յետոյ եղած լինելուն եւ քանի որ 10-ամսեայ տարուց յետոյ եղած 60 (կամ 70) օրերը տարուայ մէջ չեն համարուել, եւ Ամանորն էլ ընկնում է այդ «արտատարեկան» օրերի վերջում, դրանց եւ գալիք տարուայ կցման կէտում փաստօրէն Ամանորն էլ (գոնէ իր մի մասով) դուրս է տարուց, դուրս է ժամանակից, որով եւ՝ Ամանորի ծէսն էլ (մեխ մեխելը) կապւում*

---

43 Նոյնը, հ. 3, էջ 198:

44 Մարտիրոս Գաւուքճեան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրէալ, 1982, էջ 87:

45 Ա. Ի. Նեմիրովսկի, Նշ. աշխ. էջ 187-188:

*է տարուց, տարեկան կարգից դուրս ժամանակի հետ: Ըստ այդմ, հայերէն յիշեալ արտայայտութիւնը սերտօրէն կապուած է Էտրուսկեան Ամանորի ծէսի հետ, որով եւ աւելի վստահելի է Էտրուսկեան օրացոյցի կապը Հայկական օրացոյցի հետ:*

*Հռոմէական եւ Էտրուսկեան օրացոյցների հետ Հայկական օրացոյցի այս ընդհանրութիւնները գուցէ կարող են տարօրինակ թուալ, եթէ նկատի առնենք աշխարհագրական շատ մեծ տարբերութիւնը, որ կայ Հայերի եւ այդ ժողովուրդների միջեւ: Էտրուսկների երկիրը գտնւում է Ապենինեան թերակղզու հիւսիս-արեւմտեան մասում, հիմնականում Առնո եւ Տեբեր գետերի միջեւ: Հռոմն էլ գտնւում է Տիբեր գետի ափին եւ մինչեւ Ն. Ք. 6-5-րդ դարերը բաւական երկար գտնուել է էտրուսկեան պետութեան կազմում: Եւ հռոմէա-էտրուսկեան մշակութային առնչութիւնները աւելի քան հասկանալի են: Դրանք յաւելեալ բացատրութեան կարիք չունեն:*

*Ինչ վերաբերում է հայ-էտրուսկեան ընդհանրութիւնը բացատրելուն, այս առթիւ ասենք, որ տակաւին Հերոդոտոսը Էտրուսկների (Տիրեններին) ծագումը դնում է Փոքր Ասիայից՝ նրանց համարելով նախկին Լիւդիացիների ( Հեր., 1, 94)[46]: Թէպէտ արդի պատմագիտութիւնը վերջնականապէս չի պարզել Էտրուսկների ծագման հարցը, այդուհանդերձ, բոլորն էլ համաձայն են, որ Էտրուսկները Ապենիններում եկուորներ են եւ եկել են, ամենայն հաւանականութեամբ, Փոքր Ասիայից[47]: Այնպէս որ, աստ քննարկուող Հայկական օրացոյցի, կամ դրա նախատիպի, կամ դրա մի տարբերակի հետ Էտրուսկները կարող էին ծանօթացած լինել նախքան Ապենիններ գաղթելը, երբ տակաւին Ասիայում էին: Սա շատ հաւանական է, քի, ինչպէս ցոյց է տալիս նրանց մշակոյթի ուսումնասիրութիւնը, այն սերտօրէն կապուած է փոքրասիականի հետ եւ էտրուսկեան դիցարանի շատ աստուածների պաշտամունքը (երբեմն՝ նաեւ անունները) գալիս են Փոքր Ասիայից[48]: Եւ բնական է, որտեղից գալիս է պաշտամունքը, այնտեղից էլ պիտի գայ նաեւ օրացոյցը, որպէս մասը կրօնի: Այսինքն, Հայ-Էտրուսկեան օրացուցային կապը լիովին բացատրելի է եւ բնական:*

*Գալով Հայ-Հռոմէական օրացուցային կապին, սա կարելի է փորձել բացատրել երկու կերպ. կամ միջնորդաւորուած, որպէս այդ կապը կրողներ, իրականացնողներ դիտելով Էտրուսկներին, եւ կամ էլ՝ ուղղակի: Առաջին դէպքում այդ կապի իրագործումը դիւրաւ պատկերացնելի է (Էտրուսկները Փոքր Ասիայից տարել են Ապենիններ եւ փոխանցել Հռոմէացիներին): Երկրորդ դէպքում, այս կարգի բացատրութիւն տակաւին յայտնի չէ, թէպէտ սա էլ չի բացառւում, եւ այս առումով, անշուշտ, նախընտրելի է առաջին տարբերակը (Էտրուսկների միջոցով): Չի բացառւում նաեւ այլ տարբերակի հնարաւորութիւնը:*

---

46 Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից. ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 49:

47 Ա. Ի. Նեմիրովսկի. Նշ. աշխ. էջ 7-61:

48 Անդ, էջ 190-217:

*Այսպէս, թէ այնպէս՝ Հայ-Հռոմէա-Էտրուսկեան օրացուցային ընդհանրութիւնը իրողութիւն է, եւ, ինչպէս տեսանք, այդ ընդհանրութեան շնորհիւ կարելի է դառնում այս օրացոյցներից իւրաքանչիւրի առաւել լրիւ ըմբռնումը:*

## գ. Հայոց հնագոյն (Նախահայկեան) օրացոյցի կառուցուածքը

*Արդ, հիմք ընդունելով հայկական հնագոյն օրացոյցի՝ նախապէս 10-ամսեայ լինելը, եւ մեր իմացածները Հռոմէական, Էտրուսկեան օրացոյցների եւ Հայկականի հետ դրանց առնչութիւնների (ընդհանրութիւնների) մասին, փորձենք ըստ կարելւոյն հասկանալ հայկական հնագոյն օրացոյցը:*

*Այս օրացոյցի մասին գիտենք, որ այն ունեցել է 10 ամիս, եւ բացի այդ էլ, մօտ 70 օր եղել է օրացոյցի առաջնորդ Հայկի Անդրաշխարհում լինելու շրջանը, որ դիտուել է տարուց դուրս: Գիտենք նաեւ, որ տարուայ ամիսներից 3-ը կոչուել են Հայկի 3 որդիների անուններով, իսկ 7-ը՝ դուստրերի: Ամիսներից դուրս մնացած ժամանակն էլ (կամ գոնէ դրա սկզբի մասը) նուիրուած է եղել Անդրաշխարհի հետ կապուած պաշտամունքին:*

*Միեւնոյն ժամանակ յայտնի է, որ արեգակնային տարին պարունակում է մօտ 365 օր, իսկ լուսնային տարին՝ 354 օր: Գիտենք նաեւ, որ Հայոց հնագոյն օրացոյցում եղել է Հայկի աստղի արեգակնային ամբարձման դիտումով որոշուող կայուն օր՝ գլխաւոր տօնի օրը ամառային արեւադարձից մէկ շաբաթ առաջ:*

*Եթէ տարուայ 365 օրերից հանենք Հայկի չերեւալու շրջանի 70 օրերը, կը ստանանք 295 օր, որ անում է լուսնային 10 ամիս: Շատ գայթակղիչ է, մտածել, որ օրացոյցի 10 ամիսները եղել են հէնց լուսնային, եւ մնացած 70 օրերն էլ եղել են հէնց տարուց դուրս մնացած օրերը: Սակայն այստեղ կայ լուրջ դժուարութիւն:*

*Բանն այն է, որ 29.5-օրանոց լուսնային ամիսներով առաջնորդուելու պարագայում (ասենք՝ յաջորդաբար 29 եւ 30-օրանոց ամիսներ հաշուելով), ամսամուտերը պիտի կապուեն Նորալուսնի օրերին (այլապէս անիմաստ է դառնում լուսնային 29.5-օրանոց ամիս կիրառելը): Միեւնոյն ժամանակ, Լուսնի փուլերն էլ տարեց-տարի փոխւում են աստղերով որոշուող կայուն օրերի նկատմամբ: Յայտնի է, որ Լուսնի փուլերը տարեկան մօտ 11 օր շեղւում են աստղագիտական կայուն օրերից (արեւադարձեր, գիշերահաւասարներ եւն): Իսկ հայկական այս հնագոյն օրացոյցում տարուայ 10 ամիսներից դուրս մնացած ժամանակահատուածը պիտի կապուած լինէր Հայկի չերեւալու շրջանին, այսինքն, որոշուած լինէր աստղագիտօրէն: Ուստի եւ անկարելի է լուսնային ամիսը կայուն կապել է այդ ժամանակահատուածի սկզբի*

ու վերջի հետ: Այսինքն, եթէ ընդունում ենք, որ օրացոյցում եղել են կայուն օրեր, ուրեմն պիտի հրաժարուենք լուսնային ամսից:

Միւս կողմից էլ, եթէ ամիսը ընդունում ենք ոչ լուսնային, ուրեմն պիտի ամսուայ տեւողութիւնը համարենք 30 օր, որով 10 ամիսը կը լինի 10 × 30 = 300 օր: Այս դէպքում էլ տարուց դուրս համարուած ժամանակահատուածը կը լինի 365 - 300 = 65 օր, որ 5 օրով կարճ է մեր ունեցած 70 օրերից:

Ինչպէ՞ս համաձայնեցնել այս ամենը: Այստեղ նշուած տուեալներով դահնարաւոր չէ: Հարկ է ունենալ գոնէ մի՛ կողմնակի տուեալ եւս: Եւ, որպէս այդպիսի կողմնակի, օժանդակ տուեալ, ըստ իս, կարելի է գործածել Մովսէս Խորենացու տուած մի թուական տեղեկութիւնը Հայկի մասին: Ըստ Խորենացու, Հայկի հետ Բաբելոնից Հայաստան եկողների թիւը եղել է 300 (Խոր., Ա. Ժ)[49]: Անշուշտ, կարող է տարօրինակ եւ անընդունելի թուալ այս աւանդական տուեալից տոմարական եզրակացութիւն անելը: Սակայն չմոռանանք, որ Հայկի կերպարը կանոնականացուած է, եւ ուրեմն, հիմք ունենք մտածելու, որ այս 300 թիւն էլ բնաւ պատահական չէ, եւ ցոյց է տալիս ոչ թէ (միայն) Հայկի հետեւորդների իսկական թիւը, այլ նշանակում է աւելին: Քանի որ Հայկն էլ օրացոյցի հիմնադիրն է (ժամանակի աստուած), բնական է, որ նրան վերաբերող այդ թիւն էլ կապուած լինի օրացոյցի հետ:

Իրօք, եթէ Հայկի պաւակները օրացոյցի ամիսներն են, ապա բնական է, որ Հայկի հետիններն էլ (ուղեկիցները), որ փաստօրէն նաեւ Հայկի պինուորներն են, լինեն օրացուցային տարուայ օրերը: Այսինքն, ըստ այս տուեալի, կ՛ունենանք, որ տարուայ օրերի թիւը 300 է: Այսինքն, Մովսէս Խորենացու այս տեղեկութիւնից կարող ենք եզրակացնել, որ հայկական հնագոյն օրացոյցի տարին պարունակել է 300 օր:

Ընդունելով այս ճշգրտումը, հայկական հնագոյն օրացուցային տարուայ համար, կ՛ունենանք այսպիսի պատկեր. 10×30=300 օր: Կը մնայ եւս 65 օր, որ լրանայ արեգակնային տարուայ 365 օրը: Այսինքն, 10 ամիս × 30 օր + 65 յաւելեալ օր = 365 օր: Ա՛յս դէպքում տարուայ 10 ամիսներից դուրս մնացած օրերի թիւը 5-ով պակաս է Հայկի չերեւալու շրջանի 70 օրերից:

Այս 5-օրեայ տարբերութիւնը հարթել կարելի է տարբեր կերպերով: Կարելի է, ասենք, ենթադրել, որ աստղի չերեւալու այս շրջանը տեւել է իրօք ոչ թէ 70, այլ միայն 65 օր. այսինքն, որ մեր արած հաշուարկը, որով ստացուել է այդ 70 օրը, կատարուել է 5 օրուայ սխալով: Անշուշտ, սա չի բացառում (այս կարգի խնդրի համար դա կարելի է լիովին բնական սխալ համարել): Բայց այս ենթադրութեանը դէմ է այն, որ այս 70 օրը ստացուել է պարզ հաշուարկի միջոցով: Ընդ որում, ստուգման ենթակայ են ե՛ւ այդ հաշուարկը, ե՛ւ էլ դրա հիմքում եղած ենթադրութիւնները՝ աստղի արեգակնային ամբարձման ու անկման

---

[49] Մովսէս Խորենացի, էջ 33:

դիտման պայմանների մասին: Ըստ այդմ, այդ կերպ ստացուած արդիւնքը (70 օրը) պէտք է համարել արժանահաւատ: Դրանից զատ, այդ ժամանակահատուածը հէնց 70 օր եղած լինելու օգտին է խօսում եւ այն, որ 70-ը, որպէս 7-ի տասնապատիկ, շատ աւելի լաւ է ներդաշնակւում Հայկի հետ կապուած խորհուրդներին:

Նշուած 5-օրեայ տարբերութեան մի այլ բացատրութիւն էլ կարող է լինել այն, որ այդ 70 օրերից 50-ը միաժամանակ հաշուել են ե՛ւ տարուայ 300 օրերի կազմում, ե՛ւ էլ տարուց դուրս համարուող 70 օրերի մէջ: Ասենք, օրինակ, 300 օրերից վերջին 5-ը (10-րդ ամսի վերջին 5 օրերը) համարուէին միաժամանակ ե՛ւ 10-րդ ամսի օրեր, ե՛ւ էլ 70-օրեայ ազատօնի օրեր:Միեւնոյն օրը տոմարական երկու տարբեր (յաջորդական) միաւորների միաժամանակ վերագրելու նախադէպ ունենք նաեւ այլ օրացոյցներում: Օրինակ, Հռոմէական օրացոյցում կիրառուել է 9-օրեայ «շաբաթ», որ սակայն բաղկացած է եղել ընդամէնը 8 օրից: Իննօրեակ – nundinae (noveni dies) կոչուող պարբերութիւնը միայն 8 օր է պարունակել, քանի որ պարբերութեան մէջ է համարուել նաեւ նախընթաց պարբերութեան վերջին օրը[50]:Հռոմէական օրացոյցում այս կարգի (նոյն միաւորը կրկնակի հաշուելու) այլ օրինակներ էլ կան: Այնպէս որ, այս երեւոյթը եզակի չէ, եւ ըստ այդմ, կարող ենք համարել, որ հայկական հնագոյն օրացոյցում էլ (տարեվերջի) 5 օրերը համարուել են միաժամանակ ե՛ւ տարուայ 10 ամիսների կազմում (300 օրերի մէջ), ե՛ւ էլ տարուց դուրս թողնուած 70 օրերի մէջ: Ի դէպ, հայկական միջնադարեան տոմարական գրուածքներում էլ յաճախ տարին համարւում է 365 օրեայ, եւ միեւնոյն ժամանակ, 12 ամիսներից յետոյ դրուած 5 յաւելեալ օրերն էլ (աւելիք) համարւում են տարուց դուրս, արպշութեան օրեր: Փաստօրէն, սա էլ նոյն մօտեցման, նոյն մտածողութեան դրսեւորումն է մեկ մօտիկ ժամանակներում:

Այսպիսի «ոչ ռացիոնալ» կառուցուածք օրացոյցը կարող էր ունենալ, անշուշտ, բնաւ ոչ կիրառական նկատառումներով: Ամենայն հաւանականութեամբ, օրացոյցի այսպիսի կառուցուածքը պիտի պատճառաբանուած լինէր օրացուցային տարբեր միաւորներում անպայման խիստ որոշակի թուով օրեր ունենալու ձգտումով, որն էլ, իր հերթին, պիտի գար կրօնական-պաշտամունքային նկատառումներից:

Կարելի է այս 5-օրեայ տարբերութիւնը բացատրելու համար առաջարկել այլ տարբերակներ եւս, որոնք, սակայն, սկզբունքօրէն չեն փոխի օրացոյցիս կառուցուածքը: Ուստի, սահմանափակուելով այսքանով, կարող ենք Հայոց այս հնագոյն օրացոյցի համար առաջարկել կառուցուածքի այսպիսի պատկեր:

Օրացուցային պարբերաշրջանը բաղկացած է եղել 365 օրից: Այդ պարբերութեան մի մասը՝ 300 օր տեւողութեամբ, համարուել է տարի, միւս մասը՝ 65 (70) օր տեւողութեամբ համարուել է տարուց դուրս:

---

50 Ի. Կլիմիշին, նշ. աշխ., էջ 198:

Տարին պարունակել է 10 ամիս 30-ական օր տեւողութեամբ: Այս 10 ամիսների վերջում, սկսած 10-րդ ամսի 26-րդ օրից, եղել է 70 օրերի մի ժամանակամիջոց, որ համարուել է տարուց դուրս. դա սկսուել է Հայկի գլխաւոր աստղի արեգակնային անկումով (արդի օրացոյցի հաշուարկով՝ Ապրիլի 5-ին)[51]: Այս 70-օրեայ միջոցը ձօնուած է եղել Անդրաշխարհի աստուածներին, դրանց պաշտամունքին. ըստ հաւատալիքի, այս ընթացքում Հայկը (Հայր Աստուածը) գտնուել է Անդրաշխարհում: Այս 70 օրերն աւարտուել են Հայկի գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումով (Յունիսի 14-ին, ըստ արդի օրացոյցի)[52]: Դրանով էլ սկսուել է Նոր Տարին: Տարին սկսուել է տօնական շաբաթով, որ տեւել է մինչեւ ամառային արեւադարձ եւ աւարտուել Արեւի տօնով հէնց արեւադարձի օրը: Փաստօրէն, բուն տարին հաշուել է 300 օր: Ըստ էութեան, գարունը, որպէս տարուայ եղանակ, չի մտել այս 300 օրերի մէջ: Բուն գարունից այսպիսի տարուայ կապւում է եղել միայն մարտի 21-Ապրիլի 5 հատուածը (15 օր) եւ մէկ էլ՝ Յունիսի 14-Յունիսի 22 հատուածը (7-8 օր), ընդամէնը՝ 22-23 օր: Ստացւում է, որ տարին պարունակել է միայն 3 եղանակ՝ Ամառ, Աշուն, Ձմեռ: Սա համահունչ է Սանահինից գտնուած գօտի-օրացոյցի ուսումնասիրութեան հիման վրայ արուած եզրակացութեանը:

Իրօք, ըստ դրա հետազօտողների, այդ գօտու վրայ արտացոլուած տարին պարունակել է միայն 3 եղանակ[53]: Այսինքն, տարին 3 եղանակի բաժանելը, որ ստանում ենք ըստ հայկական հնագոյն օրացոյցի քննութեան, վկայուած է նաեւ հնագիտական գտածոյով, որ վերաբերում է Ն. Ք. 2-րդ հազարամեակի վերջ - 1-ին հազարամեակի սկիզբին: Այս գօտու հետազօտողները փորձել են տարուայ երեք եղանակ ունենալը բացատրել միայն բնական, եղանակային պատճառներով[54]: Այստեղ ստանում ենք այդ նոյն երեւոյթի աշխարհայեացքային-կրօնական բացատրութիւնը, որ պէտք է աւելի առաջնային եղած լինի, եթէ նկատի առնենք խնդրոյ առարկայ երեւոյթի ժամանակը, եւ այդ ժամանակ կրօնի ունեցած բացառիկ դերը հասարակութեան կեանքում:

---

51 Նշենք, որ այս ամսաթիւը վերաբերում է ոչ մեր օրերին, այլ Հայոց հնագոյն օրացոյցի սկզբնաւորման, կիրառման ժամանակներին: Բանն այն է, որ դարերի ընթացքում աստղերի դիրքը երկնքում փոփոխւում է (ի հետեւանք դրանց սեփական շարժումների ու նաեւ Երկրի պտտման առանցքի դարաւոր գալարապտոյտի) և դա էլ բերում է նրան, որ աստղերի արեգակնային անկումների եւ ամբարձումների օրերը շատ դանդաղ տեղաշարժւում են արեւադարձային տարուայ մէջ (գարնանային գիշերահաւասարի, ամառային արեւադարձի եւն նկատմամբ): Այնպէս որ այսօր այդ աստղի ե՛ւ անկումը, ե՛ւ ամբարձումը տեղի են ունենում ոչ թէ այս նշուած օրերում, այլ բոլորովին տարբեր ժամանակ, որ կարելի է առանձին հաշուել եւ դիտելով որոշել:

52 Տե՛ս Նախորդ ծանօթագրութիւնը:

53 Բ. Թումանեան, Հ. Մնացականեան, Բրոնզէ դարի գօտի-օրացոյց, «Միտք», Երեւան, 1965, էջ 35, 41:

54 Անդ:

*Այս համընկումը եւս հիմք է տալիս արժանահաւատ համարելու հայկական հնագոյն օրացոյցի՝ վերն առաջարկուած կառուցուածքը:*

*Զուտ տոմարագիտական առումով կարեւոր է նաեւ այն հարցը, թէ ինչ կերպ է այս օրացոյցը ներդաշնակեցուել արեւադարձային տարուայ տեւողութեանը: Իրօք, օրացուցային (կանոնականացուած) տարին այստեղ տեւում է 365 օր, եւ մօտ 4 տարին մէկ պիտի յառաջանար մէկ օրեայ շեղում արեւադարձային տարուայ նկատմամբ (ու նաեւ՝ Հայկի աստղի արեգակնային ամբարձման եւ անկման օրերի նկատմամբ): Բնական է, տեւական ժամանակամիջոցներում այդ շեղումը պիտի նկատուէր եւ գիտակցուէր: Ուստի եւ պիտի առաջանար շտկելու խնդիր: Ընդհանրապէս, օրացոյցներում նման շտկումները արուել են նահանջի օր (~4 տարին մէկ), կամ նահանջի ամիս (~120 տարին մէկ) մուծելու միջոցով: Նահանջի ամիս մուծելը այս դէպքում պիտի բացառել, կի դա կը նշանակէր 120 տարիների ընթացքում անտեսել օրացոյցի եւ աստղի ծագման (եւ անկման) օրերի անհամապատասխանութիւնը, որ այդ ժամանակամիջոցում մեծանալով,պիտի հասնէր մէկ ամսի: Պաշտամունքային նկատառումներով, այսպիսի անհամաձայնութիւնը անընդունելի պիտի լինէր: Մնում է ընդունել օրական շտկումը: Այսինքն, պիտի մտածել, որ այս օրացոյցում մօտ 4 տարին մէկ անգամ պիտի տարուց դուրս համարուած 70-օրեայ շրջանը աւելանար մէկ օրով: Դա կարելի է պատկերացնել բաւական պարզ, առանց յատուկ նահանջի օրուայ սահմանման: Դրա համար բաւարար պիտի լինէր, որ տարին միշտ սկսուէր Հայկի գլխաւոր աստղի արեգակնային ամբարձումով, ամառնամուտից մէկ շաբաթ առաջ: Այդ դէպքում շտկումը կը լինէր ինքնաբերաբար եւ տարեմուտն էլ միշտ կը մնար իր տեղում:*

*Անշուշտ, սա ընդամենը վարկած է՝ հնարաւոր տարբերակներից մէկը: Հնարաւոր է նաեւ, որ եղած լինի այլ կերպ: Սակայն հայկական հնագոյն օրացոյցի սկզբունքային կառուցուածքը որակապէս չպիտի տարբերուի ստ առաջ քաշուած տարբերակից: Այստեղ, իհարկէ, կան նաեւ տակաւին բաց հարցեր: Օրինակ. ի՞նչ կերպ են իրարից տարբերուել Հայկի որդիներին եւ դուստրերին ձօնուած ամիսները: Այս հարցի պատասխանը առայժմ (եղած տուեալներով) ենթադրութիւններից այն կողմ չի կարող անցնել:*

*Հնարաւոր է, օրինակ, ենթադրել, որ Հայկի որդիներին ձօնուած ամիսները պարունակած լինեն մէկ-երկու օր աւելի, քան դուստրերին ձօնուած ամիսները: Էլի դառնալով Հռոմէական օրացոյցին, յիշենք, որ հնում այս օրացոյցում ամիսներն անցել են միայն կենտ թուով օրեր (զոյգ թուերը համարուել են դժբախտ): Եթէ ենթադրենք, որ դրա նման մի բան էլ եղած լինի հայկական օրացոյցի պարագայում, ապա կարող ենք առաջարկել, օրինակ, այսպիսի պատկեր: Տղաներին վերաբերող 3 ամիսները 31-ական օրից, իսկ աղջիկներին վերաբերողները՝ 29-ական օրից: Բոլորը միասին կը լինի $3\times31+7\times29=296$ օր (տարուայ 10 ամիսների համար), որ միայն մի օրով է տարբերւում 10 լուսնային ամսից եւ 4 օրով*

*էլ կարճ է 300 օրեայ տարուց: Ի դէպ, եթէ սրան աւելացնենք նաեւ 5 աւելեաց օրերը, որ գիտենք յանուանէ, կը ստանանք 301 օր:*

*Այս կարգի այլ տարբերակներ էլի կարելի է առաջարկել: Սակայն դրանցից ոեւէ մէկին նախապատուութիւն տալու համար լուրջ կռուաններ են պէտք, եւ կարիք կայ յատուկ քննութիւն կատարելու:*

*Աւելացնենք նաեւ, որ հայկական այս հնագոյն օրացոյցի (սկզբունքային) կառուցուածքի համար այս քննութեամբ ստացուած պատկերը մի աւելի լուրջ «դժուարութիւն» էլ ունի: Բանն այն է, որ ցարդ կատարուած բոլոր քննութիւնների ժամանակ ընդունուել է, որ Հայոց Բուն օրացոյցը եղել է 365-օրեայ շարժական տարիով, 12×30+5=365 կառուցուածքով: Եւ այս ընդունելութիւնն էլ արուել է ոչ կամայականօրէն, այլ ունեցել է միանգամայն լուրջ հիմնաւորում[55]: Միեւնոյն ժամանակ, Բուն օրացոյցի սկիզբը եւս գտնուել է, հիմք ընդունելով 365-օրեայ շարժուն տարին: Եւ այդ կերպ գտնուած (սկզբի) տարեթիւն էլ լաւ ներդաշնակւում է այլ աղբիւրներից, այլ դատողութիւններով ստացուած թուական եւ այլ տուեալներին: Այսինքն, ստացւում են արտաքուստ իրար խիստ հակասող պատկերներ՝ օրացոյցի կառուցուածքի համար, ընդ որում՝ երկուսն էլ հիմնաւորուած: Մի դէպքում, 365-օրեայ շարժուն տարի, միւս դէպքում՝ 300-օրեայ տարի եւ 65 (70) յաւելեալ օրեր պարունակող մի կայուն պարբերաշրջան, կապուած աստղերի դիտումների հետ:*

*Այս իրավիճակից դուրս գալու երկու ելք կայ. կամ մերժել օրացոյցի երկու տարբերակներից մէկն ու մէկը, եւ կամ ինչ որ կերպ դրանք իրար համաձայնեցնել:*

*Այս տարբերակներից եւ ոչ մէկը մերժելու համար բաւարար հիմք չունենք: Դրանք երկուսն էլ բաւական լաւ հիմնաւորուած են, եւ դրանցից իւրաքանչիւրի դէմ միակ ծանրակշիռ փաստարկը միւսի գոյութիւնն է: Այնպէս որ, ջանանք այս իրավիճակից ելք փնտռել, օրացոյցիս երկու տարբեր կառուցուածքները ինչ որ կերպ իրար համաձայնեցնելու միջոցով:*

*Այս երկու օրացուցային համակարգերն իրար համաձայնեցնելու ամենապարզ ու դիւրին կերպը դրանց միաժամանակեայ գոյութիւնը ընդունելն է: Ժամանակին հէնց այդպէս է ենթադրել հ. Ղ. Ալիշանը[56]: Անշուշտ, հ. Ալիշանը, նման ենթադրութիւն անելիս, ոչինչ չի իմացել Հայոց հնագոյն օրացոյցի կառուցուածքի մասին (որ վերը տեսանք), այլ իր եզրակացութեանը հանգել է բացառապէս կողմնակի դատողութիւններով:*

*Կարելի է ենթադրել նաեւ, որ այս տարբեր օրացոյցները (շարժական եւ անշարժ տարեմուտերով) գոյութիւն են ունեցել ոչ թէ միաժամանակ, այլ յաջորդել են իրար, այսինքն, նախ եղել է անշարժ*

---

55 Տե՛ս Գրիգոր Բրուտեան, Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Հայոց օրացոյցը մինչեւ Մեծ թուականը, «Էջմիածին», 1984, Ը, էջ 54-58:

56 Ղ. Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 84:

*տարեմուտով օրացոյցը, ապա ինչ որ ժամանակ անց ինչ-ինչ պատճառներով անցել են շարժական տարեմուտով համակարգին:*

*Այս երկու տարբերակներից մէկն ու մէկը որդեգրելը, անշուշտ, շատ դիւրին լուծում կը լինէր, սակայն այդ «լուծումներից» եւ ոչ մէկը անթերի չէ. իրենց մատչելիութեամբ գայթակղիչ լինելով հանդերձ, երկուսն էլ ունեն խոցելի տեղեր:*

*Դատենք այսպէս. 365-օրեայ շարժական տարի ՛ընդունելով, այդպիսի օրացոյցի եւ համապատասխան աստղագիտական երեւոյթի (հաշուարկի) համադրմամբ ստացուել է օրացոյցի սկզբնաւորման մի տարեթիւ ( Ն. Ք. 2341 թ.), որ ճիշդ է որակապէս. լաւ ներդաշնակում է այդ ժամանակաշրջանի վերաբերեալ մեր իմացածներին եւ Մ. Խորենացու պատմութեանը*[57]*: Իսկ դա նշանակում է, որ անառարկելի է դառնում 365-օրեայ շարժական տարիով օրացոյցի կիրառութիւնը, առնուազն Ն. Ք. 2341 թուից:*

*Այս պարագայում մնում է ընդունել, որ Հայոց հնագոյն օրացոյցի վերոշարադրեալ կառուցուածքը եղել է Ն. Ք. 2341 թուից առաջ (նախորդել է շարժական օրացոյցին) եւ կամ էլ, ինչ որ ժամանակ այն գոյատեւել է շարժական օրացոյցի հետ մէկտեղ, դրան զուգահեռ:*

*Երկու օրացոյցների միաժամանակեայ զուգահեռ գոյութիւնը դժուար բացատրելի է, առաւել եւս, որ, ինչպէս արդէն նշուել է, հայկական օրացոյցի ոեւէ արմատական փոփոխութեան մասին տեղեկութիւն չկայ (գոնէ մեզ չի հասել)*[58]*: Եթէ ինչ-որ ժամանակ իրար զուգահեռ եղած լինէին նշուած երկու օրացոյցները, եւ յետոյ, ինչ որ ժամանակից սկսած, դադարէր դրանցից մէկի գոյութիւնը, ապա մեծապէս սպասելի է, որ այդ մասին տեղեկութիւններ հասնէին մեզ: Մինչդեռ երկու օրացոյցների միաժամանակեայ կիրառութեան մասին վկայող թէ՛ ուղղակի, եւ թէ՛ անուղղակի ոեւէ տեղեկութիւն մեզ չի հասել: Որով եւ կարող ենք դա (երկու օրացոյցների միաժամանակեայ կիրառութիւնը) համարել շատ քիչ հաւանական:*

*Ուրեմն, պէտք հայկական այս հնագոյն օրացոյցի գոյութիւնը դնել մինչեւ Ն. Ք. 2341 թիւը, մինչեւ շարժուն տարեմուտով Բուն օրացոյցը: Սա կը նշանակի, որ հէնց նշուած թուին էլ կատարուել է անցում Հայոց հին օրացոյցից դէպի մեզ հասած՝ 365-օրեայ շարժուն տարիներով օրացոյցը: Սա շատ հաւանական է, եւ ահա թէ ինչու:*

*Աստ վերականգնված հայկական հնագոյն օրացոյցն իր կառուցուածքով այնքան էլ պարզ չէ: Այն կապուած է աստղերի դիտումների հետ, եւ կիրառելիս կարող էր դժուարութիւններ յարուցել: Բացի այդ, կապուած Հայկի գործունէութեան մասին մեզ աւանդուածի հետ, հիմք կայ մտածելու, որ այդ ժամանակ Հայաստանում տեղի են ունեցել պետական, կրօնական կարեւոր փոփոխութիւններ: Ուստի եւ*

---

57 Այս համապատասխանութիւնը առանձին քննութեան նիւթ է. եւ դրան այստեղ չենք անդրադառնայ: Դա կը մնայ մի այլ առիթի:

58 Տե՛ս Գր. Բրուտեան, նշ. աշխ.:

*բնական է, որ «Հայկ ումն անուն աղեղնաւոր հսկայ» գալով եւ տիրելով Հայաստանը, նաեւ փոխէր-պարզաեցնէր օրացոյցը. այսինքն, անցնէր 365-օրեայ շարժական տարիներով համակարգին: Եւ այս կերպ, լիովին բնական է նաեւ, որ Բուն օրացոյցի (365-օրեայ) կարգը սկզբնաւորուելով, դրա սկիզբը դրուէր հէնց այն օրուայ վրայ, որ դրան նախորդած օրացոյցում եղել էր տարուայ սկիզբը, գլխաւոր տօնի օրը: Այս կերպ բացատրւում է նաեւ այն, թէ ինչպէս է, որ առաջին ամիսը կրում է գլխաւոր տօնի անունը: Քանի որ նոր կարգով առաջին ամիսը դրուել է հէնց այդ տօնի օրը, բնական է, որ ամիսը վերանուանուէր, իր բուն անուանը յուգահեռ կոչուէր նաեւ տօնի անունով (իբր այդ տօնի ամիս):*

*Ինչպէս տեսնում ենք, Հայոց այս հնագոյն օրացոյցի այսպիսի (ժամանակային) յարաբերութիւնը Բուն օրացոյցին, ունի կարեւոր դրական կողմեր. դրանով բնականօրէն բացատրւում են օրացոյցային մի քանի իրողութիւններ, որոնց բացատրութիւնը այլ կերպ էապէս դժուար կը լինէր: Ըստ այդմ, հայկական հնագոյն օրացոյցի այսպիսի դիրքը պէտք է ընդունելի համարել:*

*Հայկական հնագոյն օրացոյցի կիրառութեան ժամանակի այսպիսի որոշումը ունի նաեւ հետեւեալ դժուարութիւնը: Ըստ մեր ունեցած մատենագիր աւանդական աղբիւրների, այս օրացոյցի հիմնումը վերագրւում է Հայկ նահապետին, ուստի եւ դրա կիրառութիւնն էլ պիտի լինի Հայկի ժամանակից սկսեալ, բայց ոչ երբեք դրանից առաջ: Իսկ Հայկի գործունէութիւնն էլ Ն. Ք. 2341 թ. շրջանում է: Այսինքն, մի կողմից ունենք, որ այս օրացոյցը պիտի կիրառուած լինի մինչեւ նշեալ թուականը, միւս կողմից էլ՝ պէտք է այդ կիրառութիւնը սկսուած լինի այդ նոյն թուականից յետոյ միայն:*

*Այս դժուարութիւնը կարելի է յաղթահարել, իրարից զատելով «Հայկ ումն» անձն ու Հայկի կերպարը, եւ ընդունելով, որ այս հնագոյն հայկական օրացոյցը հիմնուել է ոչ թէ «Հայկ ումն» անձի կողմից, այլ նրանից աւելի վաղ: Սա կը բացատրուի հետեւեալ կերպ:*

*Ինչպէս շարքիս նախորդ յօդուածներից մէկում տեսանք*[59]*, Հայկի կերպարը կանոնականացուած է եղել եւ խորհրդանշել է Հայր Աստծուն, Արարչին: Ըստ այդմ, Հայկի հիմնած օրացոյց կը նշանակի Հայր Աստուծոյ հիմնած օրացոյց, նրա կրօնի օրացոյց, Աստուածատուր ծրացոյց: Իսկ «Հայկ ումն անուն» անձի նոյնացումը Հայր Աստծու կերպարին կարող էր լինել նաեւ այդ օրացոյցի ստեղծումից բաւական յետոյ, այդ օրացոյցը փոփոխելու, այլ օրացոյցով փոխարինելու (նաեւ այլ իրադարձութիւնների) կապակցութեամբ: Այսինքն, կարող ենք մտածել, որ նախապէս եղել է տեղական կրօնական-աշխարհայեացքային պատկերացումների վրայ յեցած օրացոյց (Հայոց հնագոյն օրացոյցը), որն ըստ հաւատալիքի,* ստեղծուած է եղել *հէնց իր՝* Հայր Աստուծոյ կողմից, *իսկ հետագայում «Հայկ ումն անուն աղաղնաւոր*

---

59 Տե՛ս Գր. Բրուտեան, «Էջմիածին», 1995, թիւ Ա., էջ 47-60:

*հսկան» եւս նոյնացւում է Հայր Աստծուն (նրա կերպարին), եւ ահա այսպէս, Հայր Աստծու «ստեղծած» աստուածատուր օրացոյցը վերագրւում է աւելի ուշ ժամանակի:*

*Այս պատկերացման օգտին կարելի է վկայակոչել Յովհ. Սարկաւագի մի տեղեկութիւնը. «Այլ յառաջ քան զՄովսէս ո՛չ ուրեք էր գիտութիւն արուեստիս (տոմարի - Գ. Բ.), բայց միայն ի հայ ամսոցդ, որ էին յառաջ քան զՄովսէս, քանզի ասեն, թէ ի ձեռն հոգւոյն, որ ազդէր ի նահապետսն, Հայկն, առաջին նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց եւ զանուանս ուստերաց եւ դստերաց իւրոց ամսոցդ կոչեաց»[60]: Այստեղ Սարկաւագ վարդապետը պատմում է, որ «ասում են, թէ» Հայոց օրացոյցը կարգուել է «ի ձեռն հոգւոյն»: Այսինքն, այստեղ Հայոց օրացոյցի հիմնողը Հոգին է (իմա՛ Աստուած), որ ազդում է նահապետների, այդ թւում եւ՛ Հայկի վրայ, եւ վերջին միջոցով էլ կարգում է օրացոյցը: Սա կարելի է դիտել, իբր վերյուշը այն նախնական պատկերացման, համաձայն որի, այդ օրացոյցը, նախքան «Հայկ ումն անուն հսկայի» գալը, համարուել է Հայր Աստծու (Հայկի) կողմից հիմնուած, աստուածատուր:*

*Ի դէպ, սրան համահնչուն է եւ Խորենացու յայտնածը այն մասին, որ Հայկը, գալով Հայաստան, իր գործունէութիւնը դատարկ տեղում չի ծաւալել, այլ տեղում եղել են մարդիկ, որոնց նա հպատակեցրել է: Ահա, այս տեղում եղածներն էլ, մշակութային այլ իրողութիւնների հետ, ամենայն հաւանականութեամբ, պիտի ունեցած լինէին նաեւ ինչ որ օրացոյց: Հայկը, որ գալով ոչ թէ բնաջնջում կամ ստրկացնում է տեղում եղածներին, այլ ընդունում է նրանց հպատակութիւնը, պիտի ուրեմն, ընդունէր (եւ վերափոխէր) նաեւ նրանց տեղական մշակութային շատ իրողութիւնները, որոնց թւում, անշուշտ, եւ տոմարը: Այսինքն, ըստ մարաբասեան աղբիւրի, Մ. Խորենացու այս վկայութիւնը (Խոր. Ա, գլ. Ժ), թէպէտ ուղղակի տեղեկութիւն չի պարունակում օրացուցային՝ մեզ հետաքրքրող փոփոխութիւնների մասին, դրա հետ մէկտեղ, նաեւ չի բացառում նման իրադարձութիւնները, եւ աւելին. թոյլ է տալիս լիովին հնարաւոր դիտել իրադարձութիւնների նման ընթացքը: Ըստ այսմ, վերը քննարկուած հայկական հնագոյն օրացոյցը կիրառուել է Հայաստանում Ն. Ք. 2341 թուից առաջ եւ ըստ այդ ժամանակուայ պատկերացումների, եղել է* աստուածատուր, ստեղծուած Հայր Աստծու կողմից: *Հիմք ընդունելով սա, այս օրացոյցը կ'անուանենք* Նախահայկեան օրացոյց, *այդ կերպ նշելով, որ դա վերաբերում է Հայկ Նահապետի Հայաստան գալուն* նախորդող *ժամանակաշրջանին: Բնականաբար, Ն. Ք. 2341 թուից սկիզբ առնող Հայոց* Բուն *օրացոյցն էլ կարելի է կոչել* Հայկեան օրացոյց*:*

---

[60] Ա. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1956, էջ 224:

*Նկատենք նաեւ, որ Հայկ Նահապետի ժամանակ այս Նախահայկեան օրացոյցը ամենեւին էլ նորաստեղծ չի եղել, այլ ունեցել է բաւական տեւական անցեալ: Դրանով պիտի բացատրել այն, որ Հայկը, վերափոխելով-պարզեցնելով այդ հին օրացոյցը, չի փոխում դրա գլխաւոր տօնի դիրքը, այլ, իր հիմնած (Հայոց Բուն, Հայկեան) օրացոյցի շարժական ամսակարգն էլ սկսում է այդ նոյն տօնի օրից: Եւ տօնի դիրքն է անկախ է դարձնում ամսակարգից:*

*Անշուշտ, Նախահայկեան օրացոյցի հետ կապուած հարցերը այսքանով չեն սահմանափակւում: Կարեւոր է, օրինակ, թէ երբ է ստեղծուել այս աստուածապարգեւ օրացոյցը, ինչպիսին է եղել դրանից առաջուայ օրացոյցը եւ այլն:*

*Հիմնուելով Անանիա Շիրակունու մի վկայութեան վրայ, կարելի է մտածել, թէ սրանից առաջ Հայաստանում կիրառուել է լուսնաարեգակնային օրացոյց: Խօսելով ամսանունների մասին, Շիրակացին գրում է. «...սկսեալ յԱդամայ մինչեւ ի Մովսէս սգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգք. եւ ամսոցդ անուանք ոչ գոյր, բայց միայն սկառաջինն լուսինն սգարնան առաջին լուսին անուանէին, եւ սկնի՝ Բ. երրորդ լուսին, եւ .Գ. երրորդ, եւ .Դ. երրորդ, մինչեւ ց .ԲԺ. աներրորդն...»[61]: Այստեղ «ամենայն ազգք» ասելով, նկատի պիտի առնուած լինի նաեւ Հայոց ազգը: Այսինքն, ըստ այս տողերի հեղինակի, Հայերը եւս նախապէս գործածել են լուսնային ամիսներ: Սակայն, տարին այստեղ ենթադրւում է ոչ թէ լուսնային, այլ գոնէ՝ լուսնա-արեգակնային, գի խօսք կայ տարեմուտը անշարժ օրուայ (գարնանամուտի) հետ կապելու մասին: Այս կարգի օրացոյցներում միջինում 3 տարին մէկ պիտի մի յաւելեալ լուսնային ամիս մուծուէր տարեմուտի մեծ տեղափոխութիւններ թոյլ չտալու համար:*

*Անշուշտ, այս հնագոյն ժամանակների օրացոյցների մասին աւելի հիմնաւոր դատելու համար կարիք կայ մանրամասն քննելու այդ ժամանակների մշակոյթից մնացած ու մեզ հասած մասունքները (ժայռապատկերներ, հնագիտական գտածոներ եւն): Սա տեւական ժամանակ եւ մեծ ուժեր պահանջող հետազօտութիւն է, որ անհրաժեշտ նուազագոյն ծաւալով իսկ տակաւին արուած չէ (թէպէտ եղել են առանձին փորձեր): Այնպէս որ, առայժմ եղած տուեալների հիման վրայ հնարաւոր չէ աւելի ստոյգ եւ մանրամասն պատկերացում կազմել այդ հնագոյն ժամանակների օրացոյցի մասին եւ աստ ներկայացուած պատկերը կարելի է դիտել իբր այսօրուայ յայտնի տուեալների հիման վրայ հնարաւոր առաւել լրիւն ու ամբողջականը:*

---

61 Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն եւ Տոմար. «Հայպետհրատ», Երեւան, 1940, գլ. Խ Բ, էջ 76:

**_ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ_**
**_Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր_**

# ՀՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ ԻՄԱՍՏԱՍԵՐ

(«Գուգարքի ճարտարապետական դպրոցի գործիչները» շարքից)

Հովհան Օձնեցի կաթողիկոսը առավելապես հայտնի է իր կրոնադավանաբանական և գիտա-փիլիսոփայական գործունեությամբ, որի ստվերում մնացել է նրա շինարարական-բարենորոգչական գործունեությունը:

Հայ պատմագրության մեջ կան Օձնեցու կողմից կատարված շինարարական աշխատանքների վերաբերյալ հիշատակություններ[1]: Օձունի եկեղեցու հորինվածքի վերլուծության տվյալներով պատմիչների հիշատակությունը՝ Հովհան Օձնեցու կողմից հայրենի գյուղում «մեծ եկեղեցի» կառուցելու մասին, հավաստի չի ճանաչվում, բայց որ նա ուղղակիորեն, կապ է ունեցել գոյություն ունեցող եկեղեցու վերակառուցման կամ աչքի ընկնող նորոգման աշխատանքների հետ՝ դրանում ուսումնասիրողները միակարծիք են: Օձունի վերակառուցման աշխատանքները առաջին հերթին վերաբերում են աղոթասրահը երեք կողմից եզերող բաց սրահին, որը թեպետ ժամանակակից չէ եկեղեցուն /հավանական է համարվում, որ նախնականը եղել է փայտաշեն/, սակայն սերտորեն ներդաշնակում է նրան՝ մեծ չափով հարստացնելով ընդհանուր տեսքը: Արտաքին սրահի զգալի չափերը /մոտ 4 մ լայնություն և 76 մ ընդհանուր երկարություն/, նշանակալից ճարտարապետական հորինվածքը բնութագրում են այն որպես ժամանակի կարևոր շինարարական-ճարտարապետական իրողություն և վկայում նրա կառուցողի մեծ վարպետության և բարձր ճաշակի մասին:

Եկեղեցու նորոգման աշխատանքներից առավել վաղ շրջանում են կատարվել բաց խորանի ետևի պատի, գմբեթի թմբուկի, արևելյան և արևմտյան ճակատների կենտրոնական պատուհանների շրջանում կատարվածները, որոնք կարող են վերաբերել Օձնեցու ժամանակին:

Օձունի եկեղեցում մի շարք հնավանդ հորինվածքային հատկանիշների առկայությունը /արտաքին սրահ, բաց խորան, աղոթասրահի

---

1 Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց*, Եր., 1961, էջ 70: Վարդան, *Ճառ ի վերայ Յոհան Օձնեցւոյ ընդ խնդրոյ Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ*. *«Արարատ»*, *1888*, *բ. 10*, *էջ 584:*

երկայնական ձգվածություն և այլն/ ենթադրության տեղիք է տվել, թե այն ևս ունեցել է իր նախատիպը՝ նման եռանավ դահլիճներին, որը հետագայում վերակառուցվել է՝ ենթարկվելով գմբեթավորման /ինչպես Դվինի կաթողիկեն, Տեկորի տաճարը և այլն/՝ վերագրելով դա Հովհան Օձնեցուն: Հուշարձանի վրա նմանօրինակ վերակառուցման հետքերի բացակայությունը, գմբեթային համակարգի օրգանական կապը մյուս մասերի հետ, ծավալա-տարածական հորինվածքի կուռ և միասնական լինելն անհավանական են դարձնում Օձունի եկեղեցին հետագայում գմբեթավորված լինելու վերաբերյալ ենթադրությունը:



Օձունի եկեղեցին հարավ-արևմուտքից

Օձունից ոչ հեռու՝ Արդվի գյուղի հյուսիսարևմտյան մասում է գտնվում Հովհան Օձնեցու՝ «Սրբանեսի» /Սուրբ Հովհաննեսի/ վանքը՝ բաղկացած երկու միանավ, իրար կից թաղակապ ոչ մեծ դահլիճներից և առանձին կանգնած զանգակատնից: Հյուսիսային եկեղեցու բեմին կից, երկայնական առանցքից փոքր-ինչ շեղված դիրքով, գտնվում է քարարկղային սարկոֆագ՝ ծածկված երկլանջ սալով, որ վերագրվում է Հովեան Օձնեցուն:

Կից դահլիճների կառուցվածքային հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց սկզբնական վիճակով համաժամանակյա կառուցման արդյունք չեն: Հյուսիսային դահլիճի նախնական շինու-թյան մնացորդները /արևելյան պատի ստորին 2-3 շարք, ընդհանուր մուտքային բացվածքի բարավոր և եզրաքարեր/ իրենց հատկանշական

գծերով մատնում են նրա վաղ շրջանի պատկանելը: Ներսում քարարկղային սարկոֆագի գոյությունը, Հովհան Օձնեցու վերաբերյալ պատմիչների հիշատակությունները, սերնդե-սերունդ փոխանցվող ավանդությունները հավանական են դարձնում հյուսիսային դահլիճի նախնական շինության կառուցվելը Հովհան Օձնեցու կողմից: Ենթադրելի է, որ ներկայիս կառույցը բարձրացվել է գոյություն ունեցածի մնացորդների վրա:

Շինարարական-ճարտարապետական գործունեության դրսևորում և այդ ուղղությամբ ունեցած փորձը պետք է տեսնել Հովհան Օձնեցու կողմից պաշտամունքային կառույցների և դրանց բաղկացուցիչ մասերի խորհնվածքի ու տեղաբաշխման խնդիրների կարևորման մեջ /Դվինի 720 թ. ժողովում պատարագի սեղանի և մկրտության ավազանի կառուցման նյութի, դիրքի և տեղի վերաբերյալ ընդունված կանոններ, «Հիմնարկէք եկեղեցւոյ» և «Օրհնութիւն նորաշէն եկեղեցւոյ» ճառերում եկեղեցիների հիմնադրման, օրհնության, արարողակարգի, սովորույթների սրբագործման հարցերի քննություն և այլն/:

Մի չգրված օրենքով հայոց կաթողիկոսներից շատերն իրենց կրոնադավանաբանական, գիտա-մշակութային և այլ գործունեությունների հետ միասին զբաղվել են նաև շինարարական գործերով՝ նախագծել, նախաձեռնել, հովանավորել, խրախուսել կամ անձամբ ղեկավարել են շինարարական-բարենորոգչական աշխատանքները /Գրիգոր Լուսավորիչ, Մովսես Եղվարդեցի, Կոմիտաս Աղցեցի, Եզր Փառաժնակերտցի, Ներսես Տայեցի, Դավիթ Արամոնացի և ուրիշներ/[2]: Դրանցից շատերը շինարարական գործունեությունը ծավալել են հենց իրենց ծննդավայրում կամ կաթողիկոսանիստ վայրերում:

Հովհան Օձնեցու վերաբերյալ տեղեկությունները և նրա շինարարական գործունեության տվյալները միանգամայն հիմք են տալիս Հայաստանի վաղմիջնադարյան նշված շինարար կաթողիկոսների անվանաշարքը համալրելու ևս մեկով՝ 8-րդ դարի սկզբի կրոնա-մշակութային և ազգային նշանավոր գործիչ Հովհան Օձնեցի Իմաստասեր Կաթողիկոսի անվամբ, արժեքավորելու նրա ներդրումը Գուգարքի միջնադարյան ճարտարապետական դպրոցի կազմավորման գործում:

---

[2] Ա. Երեմյան, *Հայաստանի 5-7-րդ դդ. գմբեթավոր կառույցների նախագծման սկզբունքների մասին*, «Լրաբեր հաս. գիտ.», 1974, թ. 10: Մ. Հասրաթյան, *Վաղ միջնադարյան Հայաստանի ճարտարապետները*, «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թ. 2:



*ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

# ԴԵՊԻ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ*

*«Յուսացարուք ի Նա ամենայն ժողովք ժողովրդոց, սփռեցէք առաջի Նորա զսիրտս ձեր, զի Աստուած օգնական է մեր յաւիտեանս ժամանակաց»:*

Արևն արդեն բավականին ժամանակ էր, ինչ մայր էր մտել, երբ Ջառաքի-Խանի վանեցի ուխտավորների խումբը վերադարձավ Ս. Աստվածածին եկեղեցուց՝ հոգով անսահմանորեն փառավորված: Երբ խումբը մտավ Ջառաքի-Խան, բակում ոչ ոք չկար, բոլորը քաշվել էին իրենց տները: Երևի պատճառը օրվա քիչ թե շատ անհրապույր սառնությունն էր:

Մտնելով բակ, բոլորն իրենց քայլերն ուղղեցին դեպի Գրիգորենց բնակարան և կանգ առան մուտքի մոտ: Սաթենիկը ներս մտավ և վառեց էլեկտրական լամպը: Մեծ պատուհանից դուրս թափանցող էլեկտրական լամպի լույսի տակ բոլորի դեմքերին անթաքույց նշմարելի էր աներևակայելիորեն հաճելի հոգնություն:

Տղամարդիկ և երիտասարդները սայլի վրա եղած-չեղածը դատարկեցին և ներս տարան: Սայլը դատարկվելուց հետո, Ջադոն այն քաշեց իրենց տան մոտ, արձակեց ձիերը, նորից մեկական գարու տոպրակ կախեց նրանց վզից և ետ վերադարձավ: Այս ընթացքում Սաթենիկը և Նանիկը երկուական դույլ ջուր

* Վեցերորդ մասը տես 1996 թ. №№ Ժ-ԺԱ, էջ 131:

բերեցին, բոլորը, մեծ թե փոքր, լվացվեցին, մաքրվեցին, թոթափվեցին փոշուց ու հոգնությունից և համարյա թարմացած ու բարձր տրամադրությամբ տուն մտան:

Մինչ ուխտավորները օրվա իրենց թարմ տպավորությունների տակ զրուցում էին միմյանց հետ, Գրիգորը, բոլորի ուշադրությունը գրավելու համար, բարձրաձայն ասաց.

-Էսօր մեր ուրախություն էնքա՜ն մեծ ի, որ մենք՝ ես և Սաթեն, ձեզնե հեշտությամբ չենք պաժնվի: Ցուք էսօր առայժմ մեր հյուրն եք, պոլորիտ կհրավիրեմ սեղանի մոտ: Կնիկներ թող անցնեն ուրանց կործին: Մենք պիտի մեր էս աննոռանալի ուրախ օր շարունակենք: Աստված ինչպես մեր, էնպես էլ ձեր օջախներ թող պախի-պահպանի ուր ամենակարող Աջով:

Կանայք մանկահասակ երեխաներին տարան Նանիկենց տուն՝ քնեցնելու, իսկ պատանիները ու երիտասարդները մնացին:

Քառորդ ժամ էլ չէր անցել, երբ Գրիգորենց բնակարանում կրկին սեղան բացվեց: Բոլորը տեղավորվեցին սեղանի շուրջ: Բոլորի տրամադրությունը չափազանց բարձր էր, առավել ևս՝ Մարկոս աղայի և Ջարուհի-Ջարուխի: Նրանք ամբողջ հոգով ցնծում էին իրենց գերդաստանի յուրաքանչյուր ընտանիքի ամենափոքր իսկ ուրախ առիթից:

Ինչպես միշտ, Մարկոս աղան, որպես ավագ, վեր կացավ տեղից և դիմեց Գրիգորին.

-Իմ քյաղցր ախպեր Քիրիքյոր, թեև իրավունք քյոնն ի, փայց ես զի թույլ կուտամ ասելու, որ մեր սեղանին հրավիրենք և մասնակից անենք նաև Մարանդիզի Ավետիս:

-Ճիշտ կասի Մարկոս աղան, Մարանդիզի Ավետիս մեր մոտ և հարազատ հարևանն ի,- Մարկոս աղային լրացրեց Ջադոն:

Բոլորը միաձայն հավանություն տվեցին Մարկոս աղայի առաջարկին, բացի Գրիգորից և Սաթենիկից:

-Մարկոս աղա, ես կխասկնամ քե, փայց անհարմար ի, կարիք չկա, մկա ժամանակ չի,- իր առարկությունը հայտնեց Գրիգորը:

-Մարկոս աղան իրավացի ի, պետք ի հրավիրել Մարանդիզի Ավետիս: Էնի տուռ-տրկից հարևան ի, մեր ուրախություն նաև ինոր ուրախությունն ի,- ի պաշտպանություն Մարկոս աղայի, իր կարծիքը հայտնեց Վարդանը:

Վիճահարույց խնդիրը երկա՛ր քննարկվեց, բայց, վերջիվերջո, հաղթեց Մարկոս աղայի առաջարկը: Ջադոն դուրս գնաց: Քիչ անց ներս մտան Մարանդիզի Ավետիսը, Լուսինթագը և Ջադոն:

-Հրամեցեք, ներս իկեք և նստեք,- վեր կենալով տեղից և սեղանի մոտ հրավիրելով, նորեկներին դիմեց Գրիգորը:

Հենց այդ պահին երիտասարդ Վազգենը վեր կացավ տեղից՝ տեղը զիջելով նորեկներին, և դուրս գնաց: Նույն քայլին դիմեց նաև Խաչիկը: Երբ դուրս եկան բակ, Խաչիկը դիմեց Վազգենին.

-Տու շատ սխալ քայլ արիցիր: Երբ Մարանդիզենք ներս մտան, տու պիտի մնայիր և ոչ թե տուս կիր:

-Չեմ սիրի ինոր, շատ մեծամիտ և ինքնահավան մարդ ի,- չոր և կտրուկ եղավ պատասխանը:

Խոսքն ուղղված էր Մարանդիզի Ավետիսին:

Այդ խոսակցության ընթացքում տանից դուրս եկան Թաւ Անուշավանը և Հակոբը ու միացան նրանց: Երկար ժամանակ նրանք համոզում էին Վազգենին, որ ներս մտնի, և մեղմ ձևով մեղադրեցին նրան՝ ցուցադրաբար սենյակից դուրս գալու և այդ կերպ հյուրերին արհամարհելու համար:

-Էնի քյո ապաքա աներն ի, պիտի առայժմ հարմարվես և հարքես ինոր,- խրատական տոնով ասաց Անուշավանը:

-Էտ մարդին չեմ սիրի,- իր խոսքը կրկնեց Վազգենը:

-Ժողովրդական խոսք իմաստուն ի. էն ծեռ, որ չես կանա կտրե, պիտի պաքես և տնես ճակտիտ,- ասաց Խաչիկը:

-Ջվածեղի խաթեր՝ թավի պոչ կպաքեն,- Խաչիկի միտքը լրացրեց Հակոբը:

-Խա՛, Վազգեն, էրեկ իրիկուն ես լուրջ խոսիցի Վարդգեսի խետ,- ասաց Անուշավանը:

-Վարդգեսի՞, ի՞նչ Վարդգես,- հարցրեց Վազգենը:

-Քյո ապաքա բաջանաղի,- պարզաբանեց Անուշավանը:

Մինչ երիտասարդները զրուցում էին և համոզում Վազգենին վերադառնալ տուն՝ հյուրերի մոտ, այդ պահին Ջառաբի-Խանի բակ մտավ մի տղամարդ և քայլերն ուղղեց դեպի Մարանդիգենց տուն: Քանի որ Մարանդիգենց տուն գնալու համար եկվորը պետք է անցներ նրանց մոտով, ապա երբ նա մոտեցավ, տղաները նկատեցին, որ բակ մտնողը Վարդգեսն էր՝ Մարանդիգի Ավետիսի փեսան: Այդ պահին Հակոբն անսպասելիորեն անջատվեց խմբից, մոտեցավ նրան, քաղաքավարի կերպով թևանցուկ արեց, և երկուսով հեռացան խմբից: Հեռանալուց հետո, նրանք բակի անկյունում երկա՛ր զրուցեցին: Թեև չէր լսվում նրանց խոսակցության ձայնը, սակայն Վարդգեսի շարժումներից շատ պարզ կարելի էր կռահել, որ նրանք վիճաբանում են: Վարդգեսը անկանոն, չղագրգիռ շարժումներ էր անում, որից երևում էր նրա հոգեկան անհավասարակշիռ վիճակը, իսկ Հակոբը ձեռքերը դրել էր ետևը և, կարծես դիմացինին արհամարհելու համար, հանգիստ կեցվածք էր ընդունել, միայն թե պարզորոշ երևում էր, որ նա ամեն վայրկյան կարող է պայթյունավտանգ դառնալ:

Այսպես նրանք երկա՛ր «զրուցեցին»: Այնուհետև Վարդգեսը ներքին տագնապ արտահայտող ձեռքի շարժումով հեռացավ Հակոբից և մտավ Մարանդիգենց տուն: Հակոբն ակնդետ հետևում էր հեռացողին: Այնուհետև նա վերադարձավ խմբի մոտ և կտրուկ դիմեց Վազգենին.

-Էնի այլևս չի՛ համարցակվի խանքարել քե:

Փոքրիկ դադար տեղի ունեցավ, որից հետո Խաչիկի առաջարկությամբ բոլորը ներս մտան: Սեղանի գլխին նստած հավերժական թամադա Մարկոս աղան, նկատելով ներս մտնող երիտասարդներին, վեր կացավ տեղից և ոգևորված ասաց.

-Առանց երիտասարդների սեղան սեղան չի, ներս եկեք և տեղավորվեք:

Թեթևակի գինովցած Մնացականը, նկատելով Վազգենին երիտասարդների մեջ, հուզմունախառն ցնծությամբ վեր կացավ տեղից և հրավիրեց նրան իր մոտ: Վազգենը մոտեցավ և նստեց Մնացականի կողքին: Մնացականը համբուրեց նրան և դիմեց թամադային.

-Մարկոս աղա, որպես սեղանի իշխանավոր քեզնե թույլտվություն կխնդրեմ երգելու:

–Սիրո՛վ, Սաֆոյի Մնո, իմ քյաղցր ախպեր: Ծուտո՛նց ի, ինչ չենք լսե քյո քյաղցր ծեն,– գոհունակ տոնով ասաց Մարկոս աղան:

Սեղանակիցների շրջանում անասելի աշխուժություն տիրեց: Վաղու՜ց էր, ինչ նրանք չէին լսել Մնացականի քաղցրահունչ ձայնը: Եվ նա երգեց: Երգեց «Պաղ աղբյուրի մոտ» երգը: Այս երգը կարծես ձոն էր՝ ուղղված Վազգենին: Չէ՞ որ Վազգենը սիրահարված էր համեստ և սիրունիկ Աղավնիին՝ Մարանդիգի Ավետիսի կրտսեր դստերը: Սեղանակիցների մոտ ոգևորությունը հասնում էր իր գագաթնակետին, երբ կատարվում էր կրկներգի խմբերգային հատվածը: Այդ պահին սենյակի առաստաղը կարծես դղրդում էր:

Ցնծությունն առավել ակնառու էր Նանիկի և Սաթենիկի մոտ: Նրանք ողջ երգի ընթացքում հոնգուր-հոնգուր արտասվում էին, արտասվում էին ուրախությունից, որովհետև իրենց եղբայրը վերջապես վերագտել էր իրեն:

Երբ երգն ավարտվեց, Մարկոս աղան, այդ հավասարակշիռ մարդը, չկարողացավ զսպել իր հոգեկան բերկրալի խռովքը, վեր կացավ տեղից, մոտեցավ Մնացականին և ջերմագին ու արտասվախառն աչքերով համբուրեց նրան:

–Կեցցե՛ս, Սաֆոյի Մնո,– լսվեց բոլոր կողմերից:

Այս չափազանց ուրախառիթ պահին համարյա անտարբեր էր Մարանդիգի Ավետիսը: Նրա մոտ միայն ձևականորեն էր արտահայտվում ուրախությունը:

Մարկոս աղան երբ վերադարձավ իր տեղը, առանց նստելու վերցրեց գինու բաժակը և ասաց.

–Յուրաքանչյուր անցնող վայրկյան անհատի համար կտառնա քաղցր կամ տառը հիշողություն, իսկ ժողովրդի համար՝ պատմություն: Էս պահեն ես խարիր տոկոսով համոզված եմ, որ մեր էս փոքրիկ քերթաստան պիտի ապրի հավերժորեն: Ինոր կյլխեն ամեն չար ու փորցանք անցիր ի անտառնալիորեն: Մենք ամեն օր պիտի չոքենք և աղոթենք առ Աստված, որ Էնի Իուր ամենակարող Աջ անաչառ գթասրտությամբ զորավիգ տարցրեց մեզ: Կառաչարկեմ խմել մեր քերթաստանի մեծ ու փոքրի կենաց:

–Եվ տու՛ էլ, Մարկոս աղա, էլնես մեր հավերժական քերթաստանի հավերժական թամադան,– ասաց Գրիգորը:

Բոլորը վեր կացան տեղերից, ջերմագին ու սրտառուչ գրկախառնվեցին և խմեցին թամադայի առաջարկած կենացը:

–Ներողամիտ էլեք, Ավետիս, Լուսունթագ, որ մենք խմեցինք մեր քերթաստանի կենաց՝ անուշադրության մատնելով ծեր ներկայություն, ներող էլեք,– կարծես իրեն մեղավոր զգալով ասաց Մարկոս աղան:

–Ներողություն կխնդրեմ, Մարկոս աղա, միջամտելուս համար: Ես տարփերություն չեմ տնե մեր քերթաստանների մեջ: Ինոնք էրկուսն էլ ունեցիր են նու՛յն ճակատաքիր և նու՛յն տառապանքները են քյաշե: Ես փոլոր քախթականներին կհամարեմ մեկ քերթաստան,– ասաց Վարդանը:

–Կեցցե՛ս, Վարտան, իմ ախպեր, որ տու տարփերություն չես տնե մեր էս էրկու քերթաստաններու միջև: Եվ ես, թող ներողամիտ էլնի Ավետիս ախպեր, հույս ունեմ, որ էս էրկու ընտանիքների կապ ավելի պիտի սերտանա:

Այս վերջին արտահայտության վրա սեղանակիցների մոտ աշխուժությունն ավելի մեծացավ:

-Ես կառաջարկեմ խմել Ավետիսի և Լուսինթագի թանկագին կենաց,- իր խոսքը շարունակեց Մարկոս աղան: - Մենք տոտ-տրկից հարևան ենք: Մեր ուրախություն նաև ինո՛ւնց ուրախությունն ի: Տառապանքի և տխրության մասին այլևս մոռնանք: Աստված իրոք մեզ չթողեց անտեր, առավ Իր հովանու տակ և խասցուց մինչև էսօր:

Կրկին բոլորը վեր կացան տեղերից և սրտանց խմեցին Ավետիսի և Լուսինթագի կենացը: Բաժակները դատարկվելուց հետո, մի պահ լռություն տիրեց: Լռությունը խզեց Մարանդիզի Ավետիսը.

-Հարգելի թամադա, ես անկեղծ սրտով կհարգեմ փոլորիտ և իմ ու իմ կնոչ անունից շնորհակալություն կհայտնեմ՝ մեր կենաց խմելու համար: Մարկոս աղա, քո ակնարկ-ցանկություն առայժմ տեղին չի, էտ խնթիր թողնենք հետո:

Մարանդիզի Ավետիսը բաժակը դատարկելուց հետո նստեց: Նորից մի փոքր դադար տիրեց, որը խզեց Ջաղոն՝ երգելով «Քատիֆետեն քեսեսի» թուրքական երգը: Ջաղոյի երկնատուր ձայնը առինքնել էր բոլորին: Երբ երգը հասնում էր կրկներգի հատվածին, նորից սեղանակիցների ոգևորությունը հասնում էր իր գագաթնակետին: Նրանք, կարծես բոլորը մեկ ձայն դարձած, կատարում էին այս հատվածը խորազգաց սրտով և մեծ գնծություն ապրելով:

Անգերազանցելի էր նաև երգը, որը զարմանալիորեն և հաստատակամորեն մտել էր այս գերդաստանի խնջույքների երգացանկը: Այն կատարվում էր բացառապես խնջույքների հենց սկզբնամասում: Վանեցի այս գերդաստանի բոլոր հարկերի տակ կազմակերպվող խնջույքների սեղանի բացումը կարծես կատարվում էր հենց այս երկու երգերով՝ «Պաղ աղբյուրի մոտ» և «Քատիֆետեն քեսեսի», մեկը՝ հայկական, մյուսը՝ թուրքական: Երկրորդ երգի համար, սակայն, կասկածանքով կարելի է ասել թուրքական, որովհետև երգն այնքա՛ն էր հոգեհարազատ բոլորին, որ թվում էր, թե այն բուն հայկական է, և նրա խոսքի ու երաժշտության արմատները անառարկելիորեն գալիս են մեր ժողովրդի դարերի հարստություններից:

Ի միջի այլոց պետք է ասել, որ մինչև այս գերդաստանի վերջին վանեցու հրաժեշտ տալը աշխարհին, այս երկու երգերը դարձան նրանց ուրախության սեղանների զարդը:

Երբ երգն ավարտվեց, և բոլորը հանդարտվեցին, կրկին Մարկոս աղան վեր կացավ տեղից և խոսեց.

-Մեկ պան կուզեմ ասել: Կասեն՝ էն մարդ, որ ծաղիկ չի սիրե, էլնի տղամարդ թե կին, էնի մարդ համարվելու իրավունք չունի, էնի շատ չոր ու եսապաշտ մեկն ի: Մկա ես ինչպե՞ս ասեմ՝ ծաղիկ կսիրեմ, երբ իմ շուրջ հավաքվիր են աշխրքի ամենաքնքուշ, ամենահոտավետ քույնքույն ծաղիկներ:

Այստեղ Մարկոս աղան մի փոքր դադար տվեց և շարունակեց.

-Էտա տուք եք, իմ հարազատ, իմ քյաղցր քուրեր ու ախչիկներ: Տուք աշխրքի անքերազանցելի զարթն եք: Ես ոխչ էությամբ իմ կլլոխ կխոնարհեմ ծեր սրփության առաճ: Ես հատկապես իմ կլլոխ կխոնարհեմ վանեցի կնոջ ազնվության, խոնարհության և համեստության առաճ: Վանեցի կնոջ առաքինությունների մասին մեր ժողովուրդ ունի շա՛տ հետաքրքիր մեկ պատմություն. վանեցի կանայք հավաքվիր են մեկու տան մոտ և նստած կզրուցեն: Էտ ժամանակ ինոնց մոտով հպարտորեն կանցնի մի այլոր: Բոլորը ոտի կկայնեն և կխոնարհվեն ինոր: Էտ

պան նկատելով, մի օտարական ճամփորդ տղամարդ կմոտենա ինոնց և կխարցնի. «Ինչու՞ այդպես խոնարհվեցիք նրա առաջ, չէ՞ որ դա մի պարզ թռչուն էր, աքլոր»: «Այլո՛ր ի, խա՛, համա տղամա՛րդ ի», եղավ պատասխանը: Ահա ծեր արժանիքի ապացույց: Ես անկեղծ սրտով կխմեմ ծեր կենաց, կնիկներ և անչիկներ,- և դատարկելով բաժակը, գոհունակ սրտով նստեց:

Բոլոր տղամարդիկ ոտքի կանգնեցին և «Արժանավո՛ր կենաց» ցնծագին բացականչություններով խմեցին կանանց կենացը: Մարանդիզի Ավետիսը համարյա լուռ էր, բայց ստիպված պահի անհրաժեշտությունից, հոնքերը կիտած, կարծես որպես պարտականություն, վեր կացավ տեղից և միացավ տղամարդկանց, սակայն Լուսունթագը, ի հեճուկս իր ամուսնու՝ Մարանդիզի Ավետիսի, կանանց հետ միատեղ հոգեբուխ ցնծում էր:

⁂

Ուշ գիշեր էր, երբ Ս. Աստվածածին եկեղեցի ուխտագնացության ու մկրտության առնչությամբ Գրիգորենց հարկի տակ կազմակերպված խնջույքն ավարտվեց: Հյուրերը կամաց-կամաց հրաժեշտ տվեցին և հեռացան: Մարկոս աղան, Ջարուհի-Ջարուխը, Ջադոն և Նանիկը մնացին: Երիտասարդները և երեխաները գնացին Նանիկենց տուն քնելու: Վազգենն ու Քարմիլեն նույնպես հետևեցին նրանց: Տանը մնաց միայն նորածին Վարազդատը:

Երբ սենյակում մնացին միայն մեծերը, Մարկոս աղան դիմեց Գրիգորին.

-Լսիր եմ, որ քյո տղեն՝ Վազգեն, սիրահարված ի Մարանդիզի Ավետիսի աղջկան՝ Աղավնիին: Էնի սիրունատես և չափազանց համեստ անչիկ ի, ծեռաց պաց մի՛ թողնեք:

-Ես և Սաթեն անցյալ ամիս կնացինք ինոնց տուն, խոսք պացինք էտ մասին:

-Է՞, Մարանդիզի Ավետիս ի՞նչ ասաց,- վրա բերեց Մարկոս աղան:

-Էնի ուր համացայնություն չի տա, կասի՝ անչիկ անչափահաս ի,- պատասխանեց Գրիգորը:

-Մարանդիզի Ավետիս ճիշտ ի, փայց կարելի ի խոսքկապ անել,- մեջ մտավ Ջարուհի-Ջարուխը:

-Չեմ կիտի՛, կերևի էնի ընդհանրապես համացայն չի էտ ամուսնության,- ասաց Սաթենիկը:

-Կասեն, հիմնական խանգարող Ավետիսի փեսեն ի՝ Վարդգես,- Սաթենիկի միտքը լրացրեց Նանիկը:

-Էնի Մարանդիզի Ավետիսի զուռնի տակ կպարի, էնի Մարանդիզի Ավետիսի հլու-հնազանդ կամակատարն ի, խելո՛յներ,- ասաց Մարկոս աղան:

-Էսօր ես իմացա, որ մեր տղեկներ յուրց խոսիր են Վարդգեսի խետ: Էնի այլևս չի խառնվի էտ կործին, ծեռներ լվացե-քյաշվիր ի,- լուրջ տոնով ասաց Ջադոն:

-Խոսքկապի՛ էլ համացայն չի էտ անիրավ,- սրտնեղած ասաց Գրիգորը,- միայն մեյ պան կպնդի-կասի՝ էտ մասին առայժմ չխոսենք:

-Իսկ Վազգեն էրկու ոտ տրե մեյ սոլի մեջ՝ կպնդի ուր ասած, կասի՝ կա՛-չկա, մենակ Աղավնին ի,- հոգոց հանելով ասաց Սաթենիկը:

-Լուս պացվի, ես Մարանդիզի Ավետիսի խետ շատ քաղաքավարի կխոսեմ և կհամոզեմ խոսքկապի համար,- վճռապես ասաց Մարկոս աղան:

Այսպես երկար խոսեցին այդ թեմայի շուրջ, տվեցին-առան և ընդհանուր հայտարարի եկան՝ հիմք ընդունելով Մարկոս աղայի առաջարկը:

Լույսը բացվեց՝ բարին ավետելով աշխարհին:

***

Անցավ երկու տարի: Մարանդիցի Ավետիսը անզոր գտնվեց Վազգենի և Աղավնիի սիրո անհաղթահարելի պատնեշի առջև և վերջապես տվեց իր համաձայնությունը նրանց ամուսնության:

Գարնան առաջին օրերն էին: Թեև դեռևս ձյունը նոր-նոր էր սկսել հալվել, սակայն Ջառուբի-Խանն արդեն սկսել էր ազատ շունչ քաշել ցրտաշունչ ձմռան օրերից հետո: Մարդիկ հաճախակի էին դուրս ու ներս անում, օջախներ վառում դրսում...

Վազգենը մի քանի տարի էր, ինչ աշխատում էր մոտակա ջուլհականոցում, հաստոցները նորոգող վարպետի մոտ: Ինքն էլ համարյա տիրապետում էր այդ մասնագիտությանը: Վեց տարի դպրոցում սովորելուց հետո, թողել էր ուսումը և անցել աշխատանքի: Ժամանակները շարունակում էին մնալ խառնակ ու ծանր: Պետք էր աշխատել: Պետք էր աշխատել և վաստակել: Պետք էր աշխատել և վաստակել՝ նաև լիարժեք իրավունք ունենալու ամուսնության:

Հիմա էլ Վազգենը, կրկին երկու ոտքը դրած մեկ կոշիկի մեջ, ստիպում էր ծնողներին՝ մոտ օրերս իր ամուսնության հարցը լուծել: Ծնողները ամեն կերպ հորդորում էին, համոզում նրան՝ սպասել որոշ ժամանակ, մինչև անցնի Պահոց շրջանը, չէ՞ որ այդ շրջանում, եկեղեցու վարագույրները փակ լինելու ժամանակ, արգելված էր պսակադրության արարողությունը: Բայց Վազգենն իրենն էր պնդում: Երևի նա կասկածում էր իր ապագա աներոջ համաձայնության խոստմանը: Բայց այստեղ Վազգենն արդեն սխալվում էր: Թեև Մարանդիցի Ավետիսն անհրապույր մարդ էր շրջապատի համար, չոր, բայց կասկածել նրա հաստատակամության վրա՝ արդեն դա առնվազն անմտություն էր: Մարանդիցի Ավետիսը վերջնականորեն ասել էր իր խոսքը:

***

Վերջապես Վազգենն ու Աղավնին հասան իրենց համար այնքա՜ն երանելի և ըղձալի երազանքի իրականացմանը: Քանի որ, ինչպես ասացինք, Մեծ Պահոց շրջանն էր, և պսակադրության արարողությունն էլ արգելված էր եկեղեցում, ուստի Գրիգորը ստիպված մի քանի անգամ գնաց Ս. Սարգիս եկեղեցի, իր աղերսագին խնդրանքներով մի կերպ կարողացավ համոզել և համաձայնությունը ստանալ եկեղեցու ծիսակատար քահանայից՝ պսակադրության արարողությունը կատարել իր հարկի տակ: Այդպես էլ եղավ: Վազգենի և Աղավնիի պսակադրության արարողությունը տեղի ունեցավ Գրիգորի հարկի տակ, մարտ ամսվա առաջին տասնօրյակին: Քավորի պարտականությունը սիրով հանձն էր առել Վարդգեսը՝ Մարանդիցի Ավետիսի ավագ փեսան: Հարսանիքի ընթացքում ցնծում էին բոլորը: Այստեղ արդեն իր բարձր տրամադրությունը դրսևորեց և ողջ

ուրախության ընթացքին անկեղծորեն մասնակից եղավ Մարանդիզի Ավետիսը՝ այդ թվացյալ չոր ու անքարեհամբույր մարդը:

Հարսանիքին մասնակից էր համարյա ողջ Ջառաքի-Խանը՝ վանեցիների նորօրյա բնօրրանը: Նորից ուրախություն, երգ, պար, ցնծություն...

Հարսանիքի ողջ ընթացքը գերազանցորեն վարած թամադա Մարկոս աղան վերջում իմաստնագույն պատգամ տվեց նորապսակներին Մատթեոսի Ավետարանից.

«Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչխարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս»:

***

Երկու ամիս էլ դեռ չէր անցել Վազգենի և Աղավնիի ամուսնությունից, երբ Գրիգորենց ընտանիքում կրկին խառնաշփոթ աշխուժություն սկսվեց: Վազգենի երկարատև հորդորներից հետո, Գրիգորը ստիպված, թեև այդպես էլ պետք էր, որովհետև իրենց զբաղեցրած բնակարանն արդեն խիստ նեղվածք էր նրանց համար, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու մոտավորապես հարևանությամբ մի երկհարկանի աղյուսաշեն տուն գնեց և իր ընտանիքը տեղափոխեց այնտեղ: Տունը թեև մեծ էր, շա՜տ ու շատ սենյակներով, բայցևայնպես իրենց տրամադրության տակ էին միայն երկուսը: Մնացածները զբաղեցրել էին վարձու կենվորները: Թեև առուվաճառքի ժամանակ պայմանավորվածություն էր եղել կենվորների կողմից զբաղեցրած սենյակները շուտափույթ կերպով ազատելու մասին, բայց նրանք այդպես էլ մնացին և չհեռացան: Այս գործարքում Գրիգորը մեծ սխալ թույլ տվեց:

Կամովի թե անկամ, ուզենային թե չուզենային, միևնույն է, Գրիգորի ընտանիքն այդտեղ ապրեց շուրջ հինգ տարի և ականատես ու մասնակից եղավ բազմաթիվ ուրախառիթ պահերի:

*ՄԱԿԱՐ ԱՐԵՂԱՑ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ*

# ՆՈՐՕՐԵԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Դժուար է տալ որևէ ժողովուրդի անուն, որն իր մտաւորական դասուն յատուկ օր մը, և առաւել՝ ամբողջ ամիս մը նուիրած ըլլայ: Հայ ժողովուրդը իր դարաւոր գոյութեան ծիրին մէջ խորապէս և էութեան ողջ ընկալմամբ գիտակցած է, որ Երկնատու մարդկային կեանքը չի կրնար աննպատակ, միապաղաղ և անպտղաբեր ըլլալ, այլ ընդհակառակը, ան՝ Հայ ժողովուրդը ի սկզբանէ տիեզերապարուր կեանքին մէջ, մարդը նկատած է որպէս գլուխ գործոցը կոսմոսային այս հսկայածաւալ տնտեսութեան և ինք, որպէս մարդկային ցեղին կարևոր բևեռներէն մին՝ մշտապէս կեանքին մէջ նորանոր եզրեր որոնելու, այլև առաւելին՝ առաւել կեանքին հասնելու մաքրման մէջ տեսած է գոյութենականութեան բացարձակ արժէքը:

Արժէքը, ահաւասիկ իմաստը կեանքին... Սակայն իր գոյութեանը կրնայ տարբեր կենդանութիւն, արժէւորութիւն տալ ան, ով կը գիտակցի, թէ. «ամենայն չարիք մտանէ ի միտս մարդոյ յանուսումութենէ», այսինքն՝ պեղել, պրպտել, աշխատիլ, ուսումնասիրել, չզլանալ, հեռու մնալ մարդուն կեանքը կործանող երեք ահաւոր վիճակներէ՝ փառասիրութիւն, հեշտասիրութիւն և արծաթսիրութիւն: Ան, ով առաքինութեանց այս ամբողջ փունջը կարենայ ծառայեցնել ի պայծառացումն իր կեանքին, կը յաւերժանայ:

Այսպէս ապրեցան մեր ժողովուրդի գրաւոր գիտութեան առաջին սպասաւորները: Մտաւորականներ, որոնք Հայ ժողովուրդի շրթներուն մկրտուած են թարգմանիչ անունով և ոչ թէ հասարակ թարգմանիչներ, այլ Սուրբ թարգմանիչներ, որոնց անհատնելի և յաւիտենաճանաչ յիշատակութիւնն է, որ կը տօնենք այստեղ յայսմ երեկոյ, այս նուիրական յարկին տակ:

Եթէ կարդալու ըլլանք Հայ եկեղեցական օրացոյցը, պիտի տեսնենք, որ ան կը նշէ այսօր յիշատակուած օրը հետևեալ կերպով.

**Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Մեսրովպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն եւ Ներսիսի Կլայեցւոյն (Շնորհալւոյն):** Այսինքն՝ «*Սրբոց Թարգմանչաց*»-ը չի սահմանափակուիր մեր ժողովուրդի պատմութեան մէկ հատուածովը և կամ ինչ-որ որոշակի շրջանով, այլ ամէն անգամ, երբ մեր հայեացքը սևեռենք առ թարգմանիչ մեր վարդապետները, անոնց մէջ պարտինք տեսնել ոչ միայն Մաշտոցեան եռամեծար Հանճարը՝ Ա, Բ, Գ-ը, այլև Հայոց իմացական աշխարհի ամբողջական պատմութիւնը, սկսեալ Գողթան երգերէն, մինչև Տէր Զօրի սահմռկեցուցիչ աւազուտներուն վրայ իր զաւկին Տէրունապարգև Այբուբենը սորվեցնող մայրը և մինչև Վիկտոր Համբարձումեան, և այսպէս շարունակ: Ինչո՞ւ. որովհետև անոնցմէ իւրաքանչիւրը զմեզ թարգմանած է իւրովի և առանց քանքարաթաքոյցութեան: Զմեզ՝ Հայերուս ներկայացուցած է համաշխարհային մտքի զարգացման Բեմին վրայ, այնպիսի շքեղ վարպետութեամբ, իմացական այնպիսի իւրօրինակութեամբ, որ այսօրուայ դրութեամբ Հայ ժողովուրդը է՝ և պիտի մնայ մշտապէս տարբերը. գեղեցիկներուն մէջ՝ գեղեցիկը, հանճարներուն մէջ՝ հանճարը, շնորհալիներուն մէջ՝ շնորհալին:

Մեր ճակատագիրն անգամ առանձնական յատկութիւն մը ունի իր մէջ.

յատկապէս վերջին հարիւրամեակը՝ 20-րդ դարը, զորն հանդիսացաւ էն փոթորկոտը մերազնեայ հսկայական պատմութեան: Ես կը դժուարանամ տալ մեր ժողովուրդի պատմութենէն այնպիսի շրջան մը, որպիսին եղաւ մեզի համար արդէն աւարտաշեմին հասնող այս դարը, իր ճակատագրական մակընթացութիւններով և իր տեղատուութիւններով: Դարն սկսաւ մեզի համար բոլոր ժամանակներու մեծագոյն ոճրագործութեամբ՝ 1915 թուի մեր յիշողութեան մէջ յաւէտ գամուած եղեռնով, Սարդարապատեան Հերոսներու յաւերժապայծառ և Երկնահրաշ Յաղթանակով, Մայիս 28-եան սերմնացանով, որու պտուղները այսօր է, որ կը ճաշակենք: Եւ ապա 70-ամեայ ճահճային և հայոց հոգւոյ ծննդավայրը ընկնելու ոխակալութեամբ լեցուած հրէշով, 1988-ի ահաւոր և ջլատիչ երկրաշարժով, Սարդարապատեան շարունակութեամբ՝ Արցախեան Հերոսամարտով և վերջապէս ազատ և ինքնիշխան մեր հայրենիքով:

Ահաւասիկ 20-րդ դարը իր ընդհանուր համայնապատկերին մէջ մեր ժողովուրդին համար կ'ըլլայ մերթ սաւառնում և մերթ էջք... Եւ ի վերայ այդր ամենայնի, Հայոց Հանճարը նշոյլ մ'անգամ չկորսնցուց իր իմացական աշխարհի խորութենէն, ամրօրէն կառչած մնալով Լոյսին Իմանալի..... Մնաց և տակաւին պիտի շարունակէ մնալ ստեղծագործ, գեղեցկաշէն, իրաւաորոն և Աստուածա-ներշնչեալ ժողովուրդ:

Այսօր, երբ մենք ազգովին կը տօնակատարենք մեզ համար նշանակալից և սրբալոյս այս տօնը, չենք կրնար մոռնալ բոլոր անոնց, որոնք քար մը աւելցուցին Հայոց բազմադարեան մշակոյթի համալիրին վրայ... խունկ և աղօթք, այլև բիւր օրհնութիւն անոնց հանճարին: Այս անցեալը... այժմ դիտենք ապագան:

Որքան ուրախալի է, որ Հայոց ժողովուրդը յաջորդ դարը՝ 21-րդ դարը և յերջանիկ հակադրութիւն անցնող հարիւր տարուան, պիտի սկսի նոր ծնունդով, նոր յուսականութեամբ, մեր հաւատոյ պաշտօնական հռչակման 1700-ամեակով, այդ ալ թարգմանական աշխատանք մըն է, զոր նոր էջ մը պիտի բանայ մեր առջև: Ուստի մինչև նոր դարուն մուտքը, մենք իբրև զաւակները այս բազմաչարչար, բայց և մշտահանճար ժողովուրդին, արդեօք ընելիքներ չունի՞նք, որպէսզի Հայոց Մեծաց՝ մեր նախնեաց իղձը, ցանկութիւնը, երազը, յոյսը ի կատար ածուի. ի հարկէ ունինք և շատ են անոնք:

Ամէն անգամ, երբ մեր զաւակը դաստիարակենք հայրենաշունչ և հայրենազգա-տարար ոգով, նոր թարգմանիչ մը պիտի ըլլանք:

Ամէն անգամ, երբ հայ նորաբողբոջ սերունդը լիցքաւորենք մեր իրաւունքներու տիրացմամբ, այլև արդար վրէժի անվարան բազկով, անկասկած սուրբ թարգմանիչ մը պիտի ըլլանք, զի «Սահման քաջաց՝ զէնն իւրեանց»:

Ասոնք են նորօրեայ թարգմանիչին հիմնական մտահոգութիւնները, այսպէս կ'անմահանանք և կը շողացնենք յիշատակն ու նուիրական նպատակները մեր նախնեաց, այլապէս իրաւունքը չունինք կենալու Եռախորհուրդ Դրօշին ներքոյ, այլև երգելու.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մէկ անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի...

Ս. Թարգմանչաց 1996
Պաղտատ

Կարդացուած Ս. Թարգմանչաց տօնին
Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան մէջ

*ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ*

# ԳԻՐՔԸ՝ ՄԱՐԴՈՒ ՆՄԱՆ ՀԱՐԱՏԵՎՈՂ

*Մեզանից յուրաքանչյուրը դեռ մանկուց մտնելով գրքերի կախարդական աշխարհ, փնտրում է հոգեհարազատ գրքեր, որոնք ողջ կյանքում դառնում են մտերիմ ուղեկիցներ:*

*Եվ ահա, մեր եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնն ընթերցողի սեղանին դրեց այդպիսի ուղեկիցներ՝ կրոնի երեք դասագիրք՝ Զ, Է, Ը դասարանների համար, և վերահրատարակված երեք գիրք՝ Նոր Կտակարանի Ներածություն, Հայ Եկեղեցու Պատմության Ա հատորը /հեղինակ՝ Եզնիկ վրդ. Պետրոսյան/ և Անանիա եպս. Արաբաջյանի «Ինչու եմ սիրում Աստծուն» մանուկների համար գրված Ավետարանը:*

*Տասնամյակների ընդմիջումից հետո, այսօր, անկախ Հայաստանում հոգևոր գրքի հրատարակումը մեր ազգի ու երկրի վերածնության, նրա հոգևոր վերազարթոնքի ամենաակնառու իրողություններից է:*

*Երկյուղած զգացումով, բայց հիացումի ու պատասխանատվության գիտակցությամբ համարձակվում եմ գրիչ վերցնել և վերոհիշյալ գրքերի մասին իմ խոհերը հանձնել թղթին, որպես կրոնի ուսուցիչ:*

*Ծննդյան տոների նախաշեմին մանուկներին գեղեցիկ նվեր մատուցվեց՝ «Ինչու եմ սիրում Աստծուն» գրքի վերահրատարակությամբ:*

*Հեղինակը ընտրել է անմիջական պատումի ձևը, նրա խոսքը մտերմիկ զրույց է, որ գրավում է թե՛ մանուկներին և թե՛ մեծերին:*

*Գրքի հեղինակը պատմում է մատչելի լեզվով. «Մարդ», «Մեղք», «Հոգի», «Հրեշտակ» թեմաների միջոցով զարգացնում է երեխայի իմացությունը աշխարհի մասին, նրա համար պարզում շատ առեղծվածներ, իսկ Հիսուսի կյանքի դրվագները շարադրում այնպես, որ ստիպում է ոչ միայն ուշադիր լինել, այլև մասնակցել, դառնալ զրուցակից:*

*«Նոր Կտակարանի Ներածությունը» թեպետ նախատեսված է Հոգևոր Ճեմարանի ուսանողների համար, սակայն խիստ օգտակար է նաև կրոնի ուսուցիչներին:*

*Պարզաբանումներ, աղբյուրների ճշգրտումներ, լրացուցիչ տեղեկություններ չորս Ավետարանների, նրանց համատեսության խնդրի, Առաքելական նամակների, լեզվի վերաբերյալ:*

*Հայ Եկեղեցու պատմության Ա հատորի Գ հրատարակությունը վերանայված և սրբագրված է: Քաղկեդոնի ժողովը, Հայ Եկեղեցու կողմից նրա որոշումների չընդունելը ավելի հանգամանորեն է ներկայացված վերահրատարակված գրքում: Ճշտված են պատմական իրադարձությունների թվեր, դեպքեր և դրանք հագեցվել նոր փաստերով ու վավերագրերով:*

*Շարունակելով Կիլիկիո Աթոռի՝ կրոնի դասագիրք կազմելու ուսանելի*

ավանդները, ՔԴՔԿ-ը նպատակադրվեց իրականացնել ավագ խմբերի դասագրքեր կազմելու պատասխանատու, բայց ազգանվեր գործը:

Արարատյան Հայրապետական թեմի և «Գանձասար» հրատարակչության օժանդակությամբ տպագրված Բ-Ե դասարանների դասագրքերը ծանոթացնում են Հիսուսի կյանքին, գործած հրաշքներին, պատմած առակներին, ընդհանուր պատկերացում տալիս Ս. Երրորդության խորհրդի, հավատքի ու Աստվածային սիրո մասին՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:

Հաջորդ՝ Զ, Է, Ը դասարանների համար նախատեսված դասագրքերում նույն հարցերը բնականաբար արդեն ներկայացվում են ավելի հանգամանալի կերպով: Օրինակ՝ Զ դասարանի գրքում տեղ է հատկացված մի շատ կարևոր թեմայի, որի իմացությունը ոչ միայն երեխային կմերձեցնի Եկեղեցուն, այլև կօգնի չշեղվելու և հաստատապես մնալու Եկեղեցու զավակ ու որդեգիր: Դա «Եկեղեցի» թեման է, որտեղ ներկայացվում է Եկեղեցու նվիրապետական կարգը, արարողություններն ու ստեղծման պատմությունը:

Դաստիարակչական ուսանելի օրինակներ են առակների մեկնությունները: Իսկ ուսուցչի համար դրանք օգնող ազդակ են՝ մատաղ սերնդին ճիշտ կողմնորոշելու կյանքի բարդ ու դժվարին հարցերում:

Դասագրքի հեղինակը հասել է իր նպատակին. նրան հաջողվել է մեղքը, պատվիրանի խախտումը որպես հանցանք ներկայացնել այնպես, այն մակարդակով ու մատչելիությամբ, որ երեխայի մեջ առաջանա աստվածավախություն:

. Այդ դասագրքերը դպրոցահասակ պատանուն սովորեցնում են լինել ճշմարիտ քրիստոնյա, իսկ դա կեցվածք է, բարոյական նկարագիր: Նման գրքի ընթերցողն ու հետևողը հազիվ թե չընկալի նրանց ոգին, իսկ գրքի ոգին սերն է՝ քրիստոնեական կրոնի առանցքը: Այդ ոգին ընկալողը Աստծո զավակն է, Քրիստոսի որդեգիրը, քանզի ձգտում է իրականացնել Հիսուսի պատգամը՝ «Սիրեցէք զմիմեանս»:

Մատաղ սերնդի բարոյական դաստիարակությունն անհնար է իրականացնել, լուծել, երբ երեխան չհասկանա, թե ինչու չի կարելի ստել, գողանալ, սպանել: Ծնողին չհարգողը չի կարող այլոց հարգել: Մեր ազգին, հասարակությանը պետք է ծնողամեծար սերունդ, որ վաղը ինքը ուսուցանի հարգանք մատուցել: Այս և նման թեմաներին նվիրված դասագրույցները երեխայի առջև բացում են մի մեծ ու հետաքրքիր աշխարհ:

Հիսուսի հրաշքների ու բժշկությունների տրամաբանված նկարագիրը հավատ է ներշնչում պատանու և աղջկա հոգում, հավատ՝ Քրիստոսի աստվածային էության ու զորության հանդեպ:

Դասագրքերն ընթերցելուց հետո համոզվում ես, որ դրանք օգնում և մեծապես նպաստում են երեխայի հոգևոր-բարոյական կերտվածքին և անհրաժեշտ գիտելիքներ հաղորդում Աստվածաշնչի մասին:

Այս գիրքը ընթերցողներին տեղեկություններ է հաղորդում նաև առաքյալների, առաջին նահատակների, աշխարհում քրիստոնեության տարածման մասին:

*Հայոց աշխարհում դարձից հետո կյանքի վերելքի հզոր ալիքը ցույց տալու համար հեղինակները դիմել են 5-րդ դարի պատմագրության հարուստ գանձարանին: Հայ Եկեղեցու պատմությունից քաղած դրվագներով երեխային ուսուցանվում է սիրել իր հող հայրենին, և գրքում միաձուլված են կրոնասիրության ու հայրենասիրության գաղափարները. իսկ նման ոգով կազմավորվող սերունդը, անկասկած, պետք է որ ազգային-հոգևոր առողջ հոգեբանություն ունենա:*

*Եվ այս ամենը՝ պարզ շարադրանքով, առանց ոճավորումների, անպաճույճ լեզվով: Դասագրքերն իրենց ճաշակով կատարված ձևավորմամբ ու գեղարվեստական նկարազարդումներով դառնում են գրավիչ ու հետաքրքրական:*

*Իսկ յուրաքանչյուր դասին հաջորդող հարցադրումները, գործնական աշխատանքներն ու լրացուցիչ ընթերցանության նյութերը դասագրքի լիարժեքության վկայությունն են:*

*Գրքերում տեղ են գտել նաև որոշ վրիպակներ և մասնակի անստույգ փաստեր կամ տեղանուններ, որոնք, այնուամենայնիվ, չեն նվազեցնում դասագրքերի արժեքը:*

*Հոգևոր դասագրքի հրատարակումը մեր Եկեղեցու մի նոր հարության ու հարատևության վկայագիրն է, և ստեղծագործական ու գիտամանկավարժական նոր հաջողություններ մաղթենք հեղինակներին:*

*ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

# ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մեկ անգամ ևս պայծառակերպյալ ուրախություն ու բերկրանք ապրեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին 1996 թ. նոյեմբերի 24-ի կիրակի օրը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հընթացս մատուցվող Սուրբ և անմահ Պատարագի, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի և խարտավիլակությամբ Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանի, քահանայական սրբազան ձեռնադրություն և օծում ստացան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտ երեք շնորհալի սարկավագներ՝ Հարություն սրկ. Փիլավչյանը, Մուշեղ սրկ. Ժոռոյանը և Արմեն սրկ. Խալաթյանը:

### ԿՈՉՈՒՄ.

Նախընթաց օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, նախ «Լոյս զուարթ» շարականի երգեցողությամբ խնկարկվում է Մայր Տաճարը, ապա, իրենց խոնարհությունը դրսևորելով, «Նայեա և լուր» շարականի ուղեկցությամբ, երեք հանգրվաններով սարկավագները ծնկաչոք մոտենում են Սրբություն Սրբոց Իջման Սուրբ Սեղանին, որի առջև, գահին բազմած, ձեռնադրող սրբազան հայրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ներկայությամբ, կատարում է հավատի քննություն: Խոստովանահայրը ներկայացնում է ընծայացուներին և պատասխանում ձեռնադրող սրբազանի հարցերին:

Հանձնառության պահին սարկավագներն ուխտում են հետևել Տիրոջ ճշմարիտ պատգամներին և հնազանդվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին՝ նզովելով բոլոր տեսակի հերձվածողներին:

### ՕԾՈՒՄ.

Հաջորդ օրը Մայր Տաճարում մատուցվում է եպիսկոպոսական Սուրբ Պատարագ: Օրվա պատարագիչն է ձեռնադրող սրբազանը՝ գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոս Ներսիսյանը: Նորընծաները, «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականի երգեցողությամբ, խորին ակնածանքով մոտենում են Ավագ Խորանի աստիճաններին, ծնրադիր վեր բարձրանում և, դառնալով դեպի արևմուտք՝ հավատացյալները, «Աստուածային և Երկնային» շարականի երգեցողության ներքո վեր են բարձրացնում ձեռքերը՝ ի նշան աշխարհիկ կյանքից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքին:

Շարունակվում է շարականի երգեցողությունը: Նվիրյալները ծնկած մոտենում են ձեռնադրող սրբազանին: Սրբազան Հայրը, Ձեռնադրության Մաշտոցից ընթերցելով համապատասխան հատվածը, նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով սարկավագությունից կոչում է քահանայության: Հավատավոր ժողովուրդը, հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով և գոհունակությամբ ասում է. «Արժանի են»:

Նորընծաները շրջվում են դեպի Ավագ Խորան և ձեռնադրող սրբազան հայրը, ձեռքերը խաչաձև դնելով նրանցից յուրաքանչյուրի գլխին, ասում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժան լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել սեղանոց Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև սրբազան հայրը սարկավագական ուրարը, որ Քրիստոսի լծի խորհրդանիշն է, վերածում է քահանայական փորուրարի, և շուրջ բոլոր գետեղում է նրանց պարանոցներին:

Ապա և հասնում է Պատարագի ամենախորհրդավոր պահը: Վերաբերող հայր սուրբը Սրբարանից բերում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենդանի ու կենդանարար մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին պարունակող սկիհը: Պատարագիչը սկիհով օրհնում է հավատացյալ ժողովրդին: Որից հետո նորընծաները ստանում են քահանայական փիլոն և պատարագչի զգեստներ: Փիլոնի սև գույնը խորհրդանշում է ամբողջական հրաժարումն աշխարհիկ կյանքից:

Քահանայական թագի, գոտու և շուրջառի տվչությունը խորհրդանիշն է հոգևոր իշխանության:

Հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր բարձունքին: «Կենդանարար Աստված» շարականի ուղեկցությամբ վերաբերող հայր սուրբը Մկրտության Սուրբ Ավազանից դեպի Սուրբ Խորան է տանում Մյուռոնաթափ Աղավնին՝ լի կենարար Մյուռոնով, որը Սուրբ Հոգու խորհրդանիշն է:

«Առաքելո Աղաւնոյ» շարականի երգեցողությամբ սրբազան հայրը Սրբալույս Մյուռոնն Աղավնուց հեղում է թթնոցի մեջ՝ որպես խորհրդանիշ Սուրբ Հոգու էջքի:

Օծման սքանչելի պահին, Սրբալույս Մյուռոնի դրոշմամբ, Սուրբ Հոգու շնորհները են տրվում ընծայացուներին: Կատարվում է նոր անվան շնորհում՝ անվանակոչություն: Ձեռնադրող սրբազանը նորընծաների ճակատն ու ձեռքերն օծում է Սրբալույս Մյուռոնով և նրանց շնորհում նոր անուններ: Այսպես՝ Հարություն սարկավագը անվանակոչվում է Տ. ԲԱՐՍԵՂ, Մուշեղ սարկավագը՝ Տ. ՄԱԾՏՈՑ և Արմեն սարկավագը՝ Տ. ՆԵՐՍԵՀ:

Անվանակոչությունն ամփոփում է հետևյալ խորհուրդը. այս կերպ մեռնում է հին մարդը և ծնվում՝ նորը:

Հաջորդ արարողությամբ սրբազան հայրն աղոթքով օծյալներին է փոխանցում սկիհը, այսինքն՝ Պատարագելու և Ամենակարող Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը բաշխելու իրավունքը, որից հետո հրավիրում է նորաօծ քահանաներին՝ իրենց անդրանիկ օրհնությունը բաշխելու ժողովրդին:

Ապա սրբազան հայրը նրկաներին է դիմում օրվա խորհրդին պատշաճող գեղեցիկ քարոզով և շնորհավորանքի խոսքով՝ բարձր գնահատելով նրանց ինքնընծայումը:

Հավարտ ձեռնադրության, «Ողջոյն»-ի պահին, Վեհափառ Հայրապետը և մյուս հոգևորականները Սուրբ Խորան են բարձրանում և շնորհավորում նորընծաներին՝ համբուրելով նրանց նորաօծ և մյուռոնաբույր ձեռքերն ու ճակատները:

## ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ.

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է «Օրհնություն աբեղայի» կամ «Օրհնություն վեղարի» կարգը, որը կուսակրոնության խորհրդանիշն է, նաև նշանակում է, որ այս կերպ նորընծաները միանում են Մայր Աթոռի միաբանությանը՝ կատարելով իրենց սրբազան ուխտը: Վեղարի օրհնություն են ստանում չորս քահանաներ: Երեք նորընծաներին՝ Հայր Բարսեղին, Հայր Մաշտոցին և Հայր Ներսեսին, միանում է ևս մեկը՝ Եգիպտոսից ժամանած Տ. Գալուստ քհն. Դարբինյանը, որը իր երեցկնոջ մահվանից հետո ցանկացել էր դառնալ կուսակրոն քահանա, և Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Տ. Զավեն Արքեպս. Չինչինյանի տնօրինությամբ ու Վեհափառ Հայրապետի արտոնությամբ ստացավ վեղար:

Հանդիսավոր արարողությունից հետո նորընծաները ուղղվում են դեպի վեհարան, ուր Ամենայն Հայոց Հայրապետը իր հայրական օրհնությունն ու խրատներն է բաշխում նրանց, ցանկանում տեսնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր սպասավորների շարքում՝ որպես Աստծո և ժողովրդի հավատարիմ ծառաներ և «Մշակք առանց ամօթոյ»:

## Տ. ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱ ԽԱԼԱԹՅԱՆ

(Ավազանի անունով՝ Արմեն)



*Ծնվել է 1972 թվականին Թբիլիսիում, ծառայողի ընտանիքում:*

*1979 թվականին ընդունվել է տեղի թիվ 109 միջնակարգ դպրոց և ավարտել այն 1989-ին: Նույն թվականին էլ ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1995-ին ավարտել լրիվ դասընթացը:*

*1995 թվականի հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1995 թվականի հուլիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառը՝ «Գրիգոր Խլաթեցու կյանքն ու մատենագրական ժառանգությունը» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:*

*Որպես տնօրեն՝ պաշտոնավարել է Ալեք Մանուկյան Գանձատանը:*

*1996 թվականի նոյեմբերի 24-ին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրամանով և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

## Տ. ՄԱՇՏՈՑ ԱԲԵՂԱ ԺՈՌՈՅԱՆ

(Ավազանի անունով՝ Մուշեղ)

*Ծնվել է 1968 թ. հուլիսի 25-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում: 1975-85 թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1986-88 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի*

*Հոգևոր Ճեմարան և 1995 թ. ավարտել լրիվ դասընթացը: 1995 թ. հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1995 թ. հուլիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի կյանքն ու գրական վաստակը» թեմայով, և արժանացել «գերազանց» գնահատականի: 1996 թ. նոյեմբերի 24-ին, հրամանով Վեհափառ Հայրապետի և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*



## Տ. ԲԱՐՍԵՂ ԱԲԵՂԱ ՓԻԼԱՎՋՅԱՆ

(Ավազանի անունը՝ Հարություն)



*Ծնվել է 1971 թ. նոյեմբերի 29-ին Էջմիածին քաղաքում: 1978-89 թթ. սովորել է Էջմիածին քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1995 թ. ավարտել լրիվ դասընթացը: 1995 թ. հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել՝ «Հայ Եկեղեցին և սփյուռքահայության հայրենադարձությունը 1946-48 թթ.»: 1995-96 թթ. աշխատել է Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնում: 1996 թ. նոյեմբերի 24-ին, հրամանով Վեհափառ Հայրապետի և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:*

# ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱՎԱԳԻՆ
# ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈՒՅԹ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Ներշնչման աղբյուր են Քրիստոսահիմն Եկեղեցվո սրբերը և նահատակ մարտիկները, որոնց ամենամյա ոգեկոչումը կատարելով՝ զինվորյալ եկեղեցում հավատացյալները հաղորդակցվում են նրանց կյանքին և սրբազան առաքելությանը:

Քրիստոնեական Եկեղեցու առաջին նահատակի՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի հիշատակն էր տոնախմբում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դեկտեմբերի 24-ին՝ հանդիսավոր շքեղությամբ: Օրվա տոնի պատճառած ուրախությունն ու բերկրանքը, սակայն, կրկնապատկվում էին այն իրողությամբ, որ Հոգևոր Ճեմարանի V I լսարանի յոթ կիսասարկավագներ պետք է ստանային սարկավագության աստիճան:



Հրաժարման պահին

Սուրբ Պատարագը սկսվեց ժամը 10.30-ին: Պատարագիչն էր Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Ս. Պատարագի ընթացքում սուրբգրային ընթերցումներից առաջ ձեռնադրության կոչվածները սաղմոսների արտասանության ներքո ծնկաչոք բարձրացան Ս. Ստեփանոսի խորան: Ձեռնադրող սրբազան հոր՝ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի հանդիսապետությամբ և հոգեշնորհ Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանի խարտավիլակությամբ կատարված արարողության ընթացքում սպասավորության կոչվածները ունկնդրեցին սրբազան հոր ընթերցած աղոթքները, որոնցում «ահաւոր եւ սոսկալի» պաշտոնին ընծայվելու պատրաստվածություն ունեցած ընտրյալներին

սրբազան պատգամներ էին հնչում: Ապա ձեռնադրող սրբազան հայրը ձեռնադրյալներին հանձնեց սարկավագության աստիճան խորհրդանշող «զսուրբ ուրարն», «զԱւետարանն» և «զբուրվառն՝ ի բուրել հոտ անուշութեան»:

Հավարտ ձեռնադրության, նորընծաներին իր հորդորանքի և ծառայասիրության պատգամը հղեց օրվա պատարագիչ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ շնորհավորելով թե՛ նոր ձեռնադրվածներին և թե՛ ամբողջ միաբանությանը:

Պատարագի ավարտից հետո Մայր Աթոռի սարկավագաց դասը Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի և Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի գլխավորությամբ այցելեց Վեհարան, ուր Վեհափառ Հայրապետը շնորհավորեց և իր հովվապետական պատգամը տվեց նրանց, ապա բաժանեց հուշանվերներ:

Սարկավագական ձեռնադրություն ստացան.

***Հարություն սարկավագ Հարությունյանը*** ծնվել է 1975 թվականի սեպտեմբերի 9-ին Երևան քաղաքում: Սովորել է թիվ 164 միջնակարգ դպրոցում: Այն ավարտել է 1990 թվականին և նույն տարին ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Վարդան սարկավագ Հարությունյանը*** ծնվել է 1973 թվականի հոկտեմբերի 16-ին Էջմիածին քաղաքում: 1980 թվականին ընդունվել է թիվ 5 միջնակարգ դպրոցը: Այն ավարտել է 1990 թվականին և նույն տարին ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Վահան սարկավագ Զաքարյանը*** ծնվել է 1973 թվականին Երևան քաղաքում: 1979 թվականին ընդունվել է տեղի թիվ 52 միջնակարգ դպրոցը: Այնուհետև 8-րդ դասարանից ընդունվել է համար 10 Խրիմյան Հայրիկի անվան հայագիտական թեքումով դպրոցը, որն էլ ավարտել է 1990 թվականին : Նույն տարում ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1993 -94 թթ. ծառայել է հայկական բանակում: 1994 թվականից շարունակել է ուսումը Հոգևոր ճեմարանում: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Արարատ սարկավագ Գափոյանը*** ծնվել է Արարատի մարզի Ավշար գյուղում 1973 թվականի ապրիլի 14-ին: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում 1979-1990 թթ.: 1990 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Սամվել սարկավագ Սիմոնյանը*** ծնվել է 1976 թվականի մարտի 6-ին Էջմիածին քաղաքում: Սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Այն

ավարտել է 1990 թվականին և նույն տարին ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Լևոն սարկավագ Գրիգորյանը*** ծնվել է 1973 թվականի հոկտեմբերի 23-ին Բաքու քաղաքում: 1979 թվականին ընդունվել է Էջմիածնի թիվ 5 միջնակարգ դպրոցը և ավարտել 1990 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1992-94 թթ. ծառայել է հայկական բանակում: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***Արթուր սարկավագ Ղևոնդյանը*** ծնվել է 1972 թվականի հոկտեմբերի 12-ին Արտաշատ քաղաքում: 1979 թվականին ընդունվել է տեղի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը և ավարտել 1990 թվականին: Նույն տարում ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թվականի դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

***

Իսկ երեկոյան ժամը 19.00-ին Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ Ս. Ստեփանոսին նվիրված մեծարման հանդես-երեկո:

Երեկոն նախագահում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսը՝ մասնակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի, Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի, հոգևոր հայրերի և այլոց:

Սարկավագների պատրաստած գեղարվեստական գեղեցիկ ծրագրի ներկայացումը սկսվեց «Տերունական աղոթք»-ով, որին հաջորդեց Ճեմարանի քայլերգը: Ապա Արմեն սրկ. Խաչատրյանը Վեհափառի թույլտվությամբ հանդիսությունը բացված համարեց: Այնուհետև սարկավագները ունկնդիրներին բարձր դրամատիզմով մատուցեցին Ստեփանոս Նախավկայի կյանքի կարևորագույն դրվագները «Գործք առաքելոց» գրքից, որոնք մերթ ընդ մերթ ընդմիջվում էին Մ. Եկմալյանի «Ամեն Հայր Սուրբ» մեղեդու քաղցրահնչյուն ելևէջներով /հատվածները ընթերցեցին Հրանտ սրկ. Պետրոսյանը, Արարատ սրկ. Չոփուրյանը, Ադամ սրկ. Տոնիկյանը: Իսկ «Ամեն Հայր Սուրբ» մեղեդին մեներգեցին Արմեն սրկ. Մարկոսյանը, Արմեն սրկ. Խաչատրյանը, Հարություն սրկ. Կարապետյանը/:

Սարկավագներից երկուսը՝ Տիգրան սրկ. Գափոյանը և Հարություն սրկ. Սարիբեկյանը, բանախոսություններ էին պատրաստել օրվա տոնի կապակցությամբ: Բարեշնորհ սպասավորները իրենց բանախոսություններում ուշադրություն էին հրավիրել հատկապես սարկավագության դերի, նշանակության, գործունեության ոլորտների վրա, և արժեքավոր մատենագրական տեղեկություն-

ներով ցույց տվեցին մի քանի նշանավոր սարկավագների ներդրումները քրիստոնեության զարգացման պատմության մեջ: Ս. Ստեփանոսին ընծայված հարգանքի այս միջոցառումն ամբողջացավ, երբ սարկավագաց դասի կողմից կատարվեց Նախավկա սարկավագին ներբողված գեղեցկահյուս երգը՝ «Ստեփանոս քաղցրիկ տատրակ», որին հաջորդեց Արտակ սրկ. Լոռեցյանի ասմունքը /Սիամանթո, «Սուրբին աղոթքը» /. «Տէր ողորմեա»-ի շրթնային երգեցողության ներքո: Հանդիսության գեղարվեստական ծրագիրը փակեց Հարություն սրկ. Կարապետյանը՝ շվիով Կոմիտասի «Կաքավիկը» ներկայացնելով ներկաներին:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը և Հայրական խոսքը հղեց և՛ սարկավագներին, և՛ միաբաններին:

***ԱՐՄԵՆ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՆ ԺԱ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՍԱԼՎԱԴՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ

(24 նոյեմբեր–3 դեկտեմբեր 1996)

*Յուրաքանչյուր յոթ-ութ տարին մեկ անգամ, ԵՀԽ-ի ընդհանուր համագումարից առաջ, անդամ եկեղեցիների պատգամավորները և այլ հարանվանությունների ներկայացուցիչները ի մի են հավաքվում՝ քննարկելու առաքելության և ավետարանչության հետ կապված հարցերը, ներդաշնակելու իրենց ուժերը Ավետարանի տիեզերական քարոզչության գործում: Ըստ այդմ, Սալվադորի համաժողովը թվով տասնմեկերորդն էր՝ 1910 թվականի Էդինբուրգի Ա միսիոներական կոնգրեսից սկսյալ:*

*Նախորդ համաժողովից հետո, որը տեղի ունեցավ ԱՄՆ-ի Սան-Անտոնիո քաղաքում 1989-ին, աշխարհն ականատես եղավ արմատական փոփոխությունների ու տեղաշարժերի: Խորհրդային Միության քայքայումով և «երկաթե վարագույրի» խորտակմամբ աշխարհն իրեն գտավ մի նոր իրադրության առջև: Թվում էր, թե «խորհրդային սպառնալիքի» վերացումով չարիքը պետք է վերանար և պիտի սկսվեր համաշխարհային խաղաղության, բարգավաճման ու ներդաշնակության դարաշրջանը: Սակայն համաշխարհային հասարակությունը շուտով ցնցվեց ազգամիջյան պատերազմների թոհուբոհից, որոնք բռնկվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում: Արյունահեղությունները ուղեկցվեցին տնտեսական սուր ճգնաժամով: Տասնյակ հազարավոր մարդիկ հասան ծայրագույն աղքատության: Դրությունը շարունակեց մնալ լարված Աֆրիկայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի շատ երկրներում:*

*Ցնցումներից անմասն չմնացին նաև քրիստոնյա եկեղեցիները: Արևելյան Եվրոպայի պատմական ուղղափառ եկեղեցիները ֆիզիկապես անպատրաստ գտնվեցին նոր իրադրության առջև՝ չկարողանալով իրենց հոտին ապահովել անհրաժեշտ հոգևոր սնունդով: Օգտվելով առիթից, հազարավոր քարոզիչներ հեղեղեցին Արևելյան Եվրոպան՝ իրենց քարոզության համար պարարտ հող գտնելով այնտեղ: Սկսվեց մարդորսության մրցավազք, որն ուղեկցվեց փոխադարձ մեղադրանքներով ու այլամերժությամբ:*

*Մյուս կողմից, «երրորդ աշխարհի» երկրներում տարիների խուլ բողոքը, օտար միսիոներների կողմից բնիկ մշակույթների հանդեպ եղած արհամարհանքի դեմ, գնալով ավելի վճռական ու սիստեմատիկ բնույթ ստացավ: Էթնիկ գիտակցության ամրապնդման պայմաններում բնիկ ժողովուրդները սկսեցին ընդվզել իրենց պարտադրված ծիսական ու գաղափարական արտահայտչաձևերի դեմ:*

*Բոլոր այս իրողությունների գնահատման պայմաններում համաժողովը նշանաբան էր ընտրել՝ «Կոչված մեկ հույսի. Ավետարանը տարբեր մշակույթների մեջ»:*

*Ներկա էին ավելի քան 400 ներկայացուցիչներ աշխարհի գրեթե բոլոր երկրներից: Համաժողովն իր աշխատանքները սկսեց լիագումար նիստերով, որտեղ ներկայացվեցին քննարկման հիմնական ուղղություն-ները: Ապա համաժողովը բաժանվեց աշխատանքային չորս խմբերի, որոնց խորագրերն էին՝ ա) Վավերական վկայություն յուրաքանչյուր մշակույթի մեջ, բ) Ավետարանն ու ինքնությունը համայնքի մեջ, գ) Տեղական համայնքները բազմադավան հասարակություններում, և դ) Մեկ Ավետարան, տարբեր արտահայտություններ:*

*Յուրաքանչյուր խումբ իր հերթին բաժանվեց ենթախմբերի, որտեղ տեղի ունեցան աշխույժ քննարկումներ հրատապ հարցերի շուրջ: Ենթա-խմբերի պատրաստած բանաձևերը ներկայացվեցին խմբերի լիագումար նիստերին, իսկ խմբերի հաստատած փաստաթղթերը քննարկումներից հետո վավերացվեցին համաժողովի լիագումար նիստերում, որոնք աստվածաբանական հաստատումներ լինելու հավակնություն չունեն, այլ սոսկ եկեղեցիներին ուղղված հրավերներ են՝ ԻԱ դարի շեմին իրենց առաքելության մեջ: Համաժողովը հրապարակեց նաև կոչ՝ ուղղված ամենքին:*

*Մասնակիցները միահամուռ կերպով պաշտպանեցին Ավետարանի մշակութայնացման գաղափարը՝ դատապարտելով մշակույթների հանդեպ գերակայության դրսևորումները ու մարդորսության փորձերը:*

*Համաժողովի աշխատանքներին զուգահեռ տեղի ունեցան հանդիպում-ներ բնիկ ժողովուրդների, կանանց և երիտասարդության, ինչպես նաև տարբեր եկեղեցիների ու մշակույթների ներկայացուցիչների հետ: Համաժողովի ծրագրի մեջ տեղ էին գտել նաև Աստվածաշնչական ուսումնասիրությունները ու միասնական պաշտամունքի արարողու-թյունները: Առանձնապես հուզիչ և տպավորիչ էր ապաշխարության արարողությունը Սալվադորի հին նավահանգստում, որտեղ 400 տարի շարունակ վաճառքի էին հանվում Աֆրիկայից բերված ստրուկները:*

*Սույն համաժողովին, հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, մաս-նակցեցին Տ. Տաթև արք. Ղարիբյանը, Տ. Վիգեն եպս. Այքազյանը, Տ. Նարեկ ծ. վրդ. Ալեմեզյանը (Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչ) և Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:*

**ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ**

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ «ՎԱՆԵՎԱՆ» ԵԿԵՂԵՑԻ

*Դեկտեմբերի 16-ին, երկուշաբթի օրը, Մարտունիում տեղի ունեցավ բազմամարդ ուխտագնացություն դեպի 10-րդ դարում Մարիամ և Շապուհ Բագրատունիների կողմից կառուցված Վանեվան եկեղեցական համալիրը, որին մասնակցում էին Մարտունու «Վանեվան» նորաբաց համալսարանի ուսանողներն ու դասախոսները, Գեղարքունյաց թեմի հոգևոր առաջնորդ գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը, հայր սուրբեր, ինչպես նաև տարբեր բնակավայրերից եկած հավատացյալներ:*

*Թեմի առաջնորդին ու նրան ուղեկցող հոգևորականներին համալսարանի կոլեկտիվը դիմավորեց Մարտունի քաղաքի մուտքի մոտ, աղ ու հացով: Այնուհետև կրթօջախում տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն, որի ընթացքում սրբազան հայրը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի օրհնության խոսքը՝ ուղղված ուսանողությանը:*

*Սրբազանը միաժամանակ հանդիպման մասնակիցներին բաժանեց հոգևոր գրքեր, Էջմիածնի Մայր տաճարը պատկերող գունավոր լուսանկարներ, իսկ ավելի ուշ բոլորին առաջնորդեց դեպի հինավուրց սրբավայրը: Հետաքրքիր ու հիշարժան էր հատկապես ուխտագնացությունը Վանեվան, ուր, եկեղեցուն ծանոթանալուց հետո, ուխտի եկածները մասնակից դարձան համալսարանի ուսանողների՝ ազգին ու ժողովրդին ծառայելու երդման հանդիսավոր արարողությանը, ինչպես նաև մատաղի ու պսակադրության ծեսերին: Ուխտագնացությունը, օրհնության ու վանքում ուսանողների հանդիսավոր երդման արարողությունը կազմակերպել էին «Վանեվան» համալսարնի ռեկտորատը՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի հետ համատեղ: Այն Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունման 1700-ամյակի առիթով հայոց սրբավայրերն ուխտավորաբար այցելելու առաջին բազմամարդ միջոցառումն էր, որի կազմակերպական հոգսերն իր վրա էր վերցրել համալսարանի ղեկավարությունը:*

*Ասենք, որ «Վանեվան» համալսարանը բացվել է այս տարի: Նորաբաց հինգ ֆակուլտետներում սովորում են 120 ուսանողներ: Պետական արտոնագիր ունեցող այս կրթօջախը գործում է Գիտությունների Ազգային Ակադեմիայի և Հայոց փիլիսոփայական ակադեմիայի գիտական հովանավորությամբ և արդեն հասցրել է կապեր հաստատել Սոֆիայի, Սանկտ Պետերբուրգի տեխնիկական և Գերմանիայի Մանհայմ քաղաքի համալսարանների հետ, կատարել ուսանողների ու գիտաշխատողների առաջին փոխանակումները: Ռեկտոր Գագիկ Դավթյանի հավաստմամբ, հաստատությունը հետագայում կդառնա գիտա-կրթական համալիր՝ իր կազմում ունենալով նաև մանկապարտեզ ու գիմնազիա: Համալսարանում պզալի տեղ կհատկացվի նաև աստվածաբանական կրթությանը:*

**ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

***Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***
***Ձեռագրատան վարիչ***

# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
# ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

**№ 731**
**ՄԱՏԵԱՆ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 20: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1, բաղկացած 20 թերթից:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 20.5×17×0.2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հասարակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ վարդագույն հաստ թուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միայուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 3ա, 6ա, 8ա, 9ա, 11բ, 16ա և 20բ: - ՏՈՂԵՐԸ՝ 20: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ լատիներեն, ռուսերեն և հայերեն: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉՆԵՐԸ՝ Նուբար Միքայելյան և Հայկ Առաքելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1955 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Ձեռագիրը պարունակում է արտաքին և ներքին թեմերի և անհատ մարդկանց հասցեները: Դրսի թեմերից այստեղ կան 20 երկրների, իսկ ներքին թեմերից՝ 18 եկեղեցիների և թեմերի հասցեները:*

*ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*
*(Կազմի առաջին երեսի վրա գրված է)*
*Հասցեներ*
***1955:***
*Թ. 1ա.- Արտասահմանյան հայկական թեմերի հասցեներ:*
*Թ. 18բ.- Ներքին հասցեներ:*

---

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1996 թվականի №№ Ժ-ԺԱ-ից:

№ 732
## ՄԱՏԵԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 103: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 5, յուրաքանչյուրը 20-ական թերթից է բաղկացած, բացի առաջինից, որ 23 թերթ է: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 30×20.8×1.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստարակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ կանաչավուն հաստարակ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական հաստարակ կապույտ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ կան բազմաթիվ թղթեր: - ՏՈՂԵՐԸ՝ 31: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ լատիներեն, ռուսերեն և հայերեն: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Նուբար Միքայելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1956 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ձեռագիրը պարունակում է սփյուռքի և ներքին թեմերի և անհատ մարդկանց ու եկեղեցիների հասցեները: Դրսի թեմերից այստեղ կան 39 երկրների, իսկ ներքին թեմերից՝ 10 եկեղեցիների և թեմերի հասցեները:*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.- Արտասահմանի հայկական գաղութներ:*
*Գրեց՝ Նուբար Միքայելյան - 1956 թ.:*
*Թ. 2ա.- ՍՍՌՄ-ի ներքին թեմեր:*

№ 733
## ՄԱՏԵԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 150: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 15, յուրաքանչյուրը 10-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 36×23.5×2.8 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սև լաթակազմ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչ թուղթ, որի վրա բազում անգամ տպված է* ETERNA *բառը: - ՎԻՃԱԿԸ՝ անբավարար, կազմը պոկված է միջուկից: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ կան բազմաթիվ թղթեր: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ լատիներեն, ռուսերեն և հայերեն: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Նուբար Միքայելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1962 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 22 սեպտեմբերի 1984 թ.:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Մատյանը պարունակում է սփյուռքի և ներքին թեմերի, ինչպես նաև անհայտ մարդկանց ու եկեղեցիների հասցեները: Արտասահմանյան երկրներից այստեղ տրված են 49, իսկ ԽՍՀՄ հանրապետություններից՝ 10 տարբեր երկրների բազմահարյուր հասցեներ, որոնց հետ նամակագրություն է ունեցել Ս. Էջմիածնի Մայր Աթոռը: Հետաքրքրության համար ստորև տրվում է այդ երկրների այբբենական ցանկը:*

### *Ա. Արտասահմանյան երկրներ*

*Ալբանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Անգլիա, Ավստրալիա, Ավստրիա, Արգենտինա, Բելգիա, Բիրմա, Բուլղարիա, Բրազիլիա, Բրիտանական Արևելյան Աֆրիկա (Քենիա), Գերմանիա, Եգիպտոս, Եթովպիա, Թուրքիա, Իսպանիա, Իսրայել, Իտալիա, Իրան, Իրաք, Լեհաստան, Լիբանան, Լիբերիա, Կանադա, Կիպրոս, Ինդոնեզիա, Հարավային Աֆրիկա, Հարավսլավիա, Հնդկաստան, Հոլանդիա, Հորդանան, Հունաստան, Հունգարիա, Մարոկկո, Մեքսիկա, Նոր Զելանդիա, Շվեդիա, Շվեյցարիա, Չեխոսլովակիա, Չիլի, Չինաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սիերա Լեոնե, Սիրիա, Սուդան, Վենեսուելա, Ուրուգվայ և Ֆրանսիա:*

### *Բ. ՍՍՀՄ-ի ներքին հանրապետություններ և թեմեր*

*Ադրբեջան, Բելոռուսիա, Էստոնիա, Լատվիա, Հայաստան, Հյուսիսային Կովկաս, Ուզբեկստան, Ուկրաինա, Ռուսաստան և Վրաստան:*

**N° 734**
**ՄԱՏԵԱՆ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 150: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 15, յուրաքանչյուրը 10-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 35.8×23.7×2.7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սև լաթակազմ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչ թուղթ, որի վրա բազում անգամ տպված է* ETERNA *բառը: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ չորս սյունակ: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 13բ, 40ա-50ա, 80բ, 81ա, 137բ-150բ: - ՏՈՂԵՐԸ՝ 40: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Նուբար Միքայելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1961-63 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Սույն ձեռագիրը հանդիսանում է Մայր Աթոռի դիվանատան ստացած և առաքած նամակների մուտքի և ելքի մատյանը 1961-63 թթ.:*

**№ 795**
**ՄԱՏԵԱՆ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 150: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 15, յուրաքանչյուրը 10-ական թերթից:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 36×24×2.4 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ սև լաթակալմ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչ թուղթ, որի վրա բազում անգամ տպված է* ETERNA *բառը: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ չորս սյունակ - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 16բ, 17ա, 35ա, 81բ-82ա, 113բ-114ա, 140բ-150բ: - ՏՈՂԵՐԸ՝ 40: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉՆԵՐԸ՝ Նուբար Միքայելյան և Հայկ Առաքելյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1964-66 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Սույն ձեռագիրը հանդիսանում է Մայր Աթոռի դիվանատան ստացած և առաքած նամակների մուտքի և ելքի մատյանը 1964-66 թթ.:*

**№ 796**
**ՄԱՏԵԱՆ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 100: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 5, յուրաքանչյուրը 20-ական թերթից: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 30.4×21×1.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ հաստաբակ դեղնած թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կապտավուն թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ չորս սյունակ: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա, 23ա և 23բ: - ՏՈՂԵՐԸ՝ 29: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉՆԵՐԸ՝ Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (թթ. 1բ-22բ), Նուբար Միքայելյան (թթ. 24ա-44ա, 47բ-57բ, 59ա-100բ) և Եղիշե Վարդերեսյան (թթ. 44բ-47ա, 58ա-58բ): - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռի դիվանատուն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1955-60 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Սույն ձեռագիրը հանդիսանում է 1955-60 թթ. Մայր Աթոռի դիվանատնից ուղարկված նամակների ելից մատյանը:*

### № 797
### ՄԱՏԵԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 78: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 5, Ա և Ե՝ 15, իսկ Բ, Գ և Դ պրակները՝ 16-ական թերթից են: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 31×21.2×1.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ հասարակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ հինգ սյունակ: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա, 1բ, 21ա, 21բ, 37բ, 38ա, 49բ, 51ա, 52ա, 53ա, 54բ, 56ա-67ա, 73ա-78բ: - ՏՈՂԵՐԸ՝ 30: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ մատիտով գծված է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1945 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է Մայր Աթոռի արխիվից 22 սեպտեմբերի 1984 թ.:*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Մատյանը հանդիսանում է 1945 թ. Հին Վեհարանի գրադարանի գրքերի այբբենական ցուցակը:*

*Թ. 2ա.- Կրօնական և կրօնա-բարոյական և պատմական (գրքերի ցանկը- Ն.Մ.):*

*Թ. 22ա.- Կրօնա-պատմական (նույնը կրկնվում է հետագա էջերում բազում անգամ):*

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*(Կազմի առաջին երեսի վրա գրված է)*
*Մատեան*
*Վեհարանի գրադարանի*
*Ս. Էջմիածին*
*1945:*

### ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.- Մատեան*

*1. Ինվենտար երես 1-40*
*2. Այբբուբենական ցուցակ երես 41-150*
*(Կատալոգ):*

*Թ. 21ա.- Կատալոգ*
*կրոնա-պատմական գրքերի:*
*Թ. 27բ.- Կրոնա-պատմական:*
*Թ. 28բ.- Շարունակ(ություն) տես էջ 103:*
*Թ. 67ա.- Շակունակ(ություն)*
*Ինվենտար:*

**№ 738**
## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 186: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 9, յուրաքանչյուրը 20-ական թերթից:՝ - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 34.6×22×2.1 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած դիմացկուն թուղթ: - ԿԱԶՄԸ՝ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական կանաչավուն բարակ թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ, 12բ, 39ա-53բ, 78բ-186բ: - ՏՈՂԵՐԸ՝ 33: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉՆԵՐԸ՝ 1. Գեորգ Արք. Չորեքչյան (թթ. 2ա-11բ), 2. Ռուբեն Եպս. Դրամբյան (թթ. 13ա-21ա, 24ա-24բ, 35բ-38բ), 3. Եղիշե Վրդ. Հարությունյան (թթ. 21ա-24ա, 25ա-35բ) և 4. Հովհաննես Ազուլյան (թթ. 54ա-78ա): - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Գերագույն Հոգևոր խորհուրդ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1941-48 թթ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիր սույն մատյանը ստացվել է Մայր Աթոռի արխիվից 11 սեպտեմբերի 1984 թ.:*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Սույն ձեռագիրը հանդիսանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհրդի 1941-48 թթ. նիստերի արձանագրության մատյանը:*

*Թթ. 1ա-7ա.- (Նո. 10-16 նիստեր) 15 օգոստոսից - 20 նոյեմբեր 1941 թ.:*

*Թ. 7բ.- (Նո. 1 նիստ) 19 մարտի 1942 թ.:*

*Թթ. 8ա-11ա.- (Նո. 1-6 նիստեր) 10 հունվարից - 20 մայիսի 1943 թ.:*

*Թ. 11բ.- (1944 թ. և 1945-ի առաջին կեսի նիստերի արձանագրությունները չկան մատյանում):*

*Թթ. 13ա-18բ.- (Նո. 1-9 նիստեր) 20 հուլիսից - 15 դեկտեմբերի 1945 թ.:*

*Թթ. 19ա-38բ.- (Նո. 10-29 նիստեր) 10 հունվարից - 1 հունիսի 1946 թ.:*

*Թթ. 54ա-67բ.- (Նո. 1-13 նիստեր) 16 հունվարից - 18 հոկտեմբերի 1947 թ.:*

*Թթ. 68ա-78ա.- (Նո. 14-22 նիստեր) 27 օգոստոսից - 22 դեկտեմբերի 1948 թ.:*

*1941-3 թթ. նիստերին մասնակցել են Կաթողիկոսական տեղակալ Գեորգ Արք. Չորեքչյանը, Արսեն Արք. Ղլճյանը և բժիշկ Հայկ Եղիազարյանը:*

*1945 թ. Կաթողիկոսական ընտրությունից հետո Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը բաղկացած է հետևյալ անձերից.*

*Նախագահը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյան, իսկ անդամները՝ Ներսես Եպիսկոպոս Աբրահամյան, Ռուբեն Եպիսկոպոս Դրամբյան, Կարապետ Եպիսկոպոս Թումանյան, Ստեփան Մալխասյան, Երվանդ Շահազիզ, Ստեփան Կամսարական և Մինաս Մինասյան: Որպես քարտուղար մասնակցել է նաև Եղիշե Վարդապետ Հարությունյանը (6 օգոստոսի 1945 թվից մինչև 15 ապրիլի 1947 թ.):*

*Պատմական արժեքի ու հետաքրքրության համար ստորև տրվում են մատյանից քաղված հետևյալ նյութերը:*

*Թ. 1ա.- Արձ. № 10*

*15/VIII - 1941 թ.*

*Տարւոյս Յունիս 22-ին Խորհրդային Միութեան սահմանները ներխուժեցին գերմանական զօրքերը: Գեր/ագոյն/ Հոգ/ևոր/ Խ/որհուրդ/ը՝ նկատի առնելով. ա. որ Գերմանիան Խորհրդային իշխանութեան հետ միմեանց վրայ չյարձակուելու տասնամեայ պայմանագիր ունէր. բ. որ Խորհրդային իշխանութիւնը ճշտութեամբ կատարում էր առևտրական պայմանագիրը և առիթ տուած չէր դժգոհութեան. և գ. որ Գերմանիան, առանց պահանջներ ու դժգոհութիւն արտայայտելու և առանց նախազգուշացման՝ յարձակուեց մեր երկրի վրայ՝ գտաւ Գերմանական պետութեան վերոյիշեալ քայլը կուրկ իրաւական և բարոյական հիմունքներից՝ և որոշեց ըստ ամենայնի աջակցել հայրենական պատերազմին թէ բարոյապէս և թէ նիւթապէս: Եւ իբրև առաջին քայլ՝ հրահանգեց համամիութենական և արտասահմանի բոլոր թեմերին կատարել մաղթանքներ պատերազմի յաջողութեան համար և կարդալ եկեղեցիներում հայ ժողովրդին ուղղուած յորդորական ու քաջալերական «Կոչ»-ը:*

| | |
|---|---|
| *Նախագահ Գեր. Հոգ. Խ-ի՝* | *Գէորգ Արքեպս.* |
| *Անդամք Գ. Հ. Խ-ի՝* | *Արսէն Արքեպս.* |
| | *Բժ. Հ. Եղիազարեան:* |

*Թ. 8ա.- (Գեր. Հոգ. Խորհուրդը 1943 թ. հունվարի 10-ի իր նիստում որոշում է ընդունել հայրենական պատերազմի հաղթանակի համար կատարել կարևոր նվիրատվություն Հայ Եկեղեցու կողմից, որ նշվում է ստորև, առնված նույն թվականի № 1 նիստի արձանագրությունից):*

*(Գեր. Հոգ. Խորհ.ը) «իրաւունք և պարտք համարեց, որպէս հայ ժողովրդի կամքի և ցանկութեան արտայայտութիւն, առատ նուիրատուութեամբ աջակցել հայրենական պատերազմի յաջողութեան և որոշեց նուիրաբերել.*

*ա. Մի թանկարժէք ոսկէ խաչ իր ոսկէ շղթայով բրիլիանտներով զարդարուն (Երեմիա Արքեպս. Գալստեանի կայսերական թագադրութեան առթիւ պարգև տրուած).*

*բ. Վեղարի երկու բրիլիանտի խաչեր (Յովհաննէս Կաթողիկոսի և Գէորգ Ե Կաթ/ողիկոս/ Սուրէնեանի/.*

*գ. Մի հազար անգ/լիական/ ֆունդ ստերլինգի չէք և (Թ. 8բ).*

*դ. Յիսուն հազար րուբլի սովետական դրամով:*
*Այլ և յատուկ հաշիւ բանալ Ս.Ս.Ռ.Մ. պետական բանկում»:*
*Նախագահ՝ Գէորգ Արքեպս.*
*Անդամներ Գեր. Հոգ. Խ-ի՝ Արսէն Արքեպս.*
*Բժ. Հ. Եղիազարեան:*

## *ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ*

*Թ. 7բ - Ս. Էջմիածնում Գեր. Հոգ. Խ-ի միայն երկու անդամներ լինելու, տարուայ ընթացքում նոցա երկարատև հիւանդանալու և յաճախ Էջմիածնից պաշտօնական հանգամանքներով բացակայելու հետևանքով ժողովական արձանագրութիւններ չեն կազմուել, բայց գործերը ընթացել են անխափան և որոշումները արձանագրուած և գործին կազմուած:*

*Գէորգ Արքեպս.*

*1943:*

*Թ. 11բ.- 1944 և 1945 թուերը արձանագրութիւններ չունեն՝ կոլլեգիա չլինելու պատճառով: Այդ շրջանում կառավարել է Տ. Տեղակալը և ելեալ թղթերը ծառայում են որպէս արձանագրութիւն:*

*Գ/էորգ/ Արքեպս.:*

*Թ. 12ա.- Արձանագրութիւններ*
*Գերագոյն Հոգևոր Խորհրդի*
*1945 թ. և 1946 թիւ:*

## *ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*/Կազմի առաջին երեսի պիտակի վրա գրված է/*
*Գերագոյն Հոգևոր Խորհուրդ*
*Արձանագրութեան մատեան*
*Գեր. Հոգ. Խ-ի*
*1941 թ. սեպտեմբեր*
*Ս. Էջմիածին:*

*Թ. 186ա.- Թալինի շրջան*
*Վ. Թալին Տէր Վաղարշակ Բաղումեանին:*
*Բացի այդ, մատյանում գտնվում են հետևյալ երեք նյութերը.-*

*Ա. Մայր Աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելու հինգհարյուրամյակի տոնակատարության և Կիլիկիո Մեծի Տանն Գարեգին Ա Կաթողիկոսի ծննդյան 80-ամյա հոբելյանական հանդեսի տպագիր ծրագիրը:*

*Բ. Մայր Աթոռի միաբան Խորեն վրդ. Էլչունձյանի 13 մայիսի 1946 թ. մեկ գրությունը:*

*Գ. Ազգային Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության տպագիր պատճենը, որ կրում է 28 մայիսի 1930 թ.:*

*ՆԵՐԴԻՐ ԹՂԹԵՐ*

*1. Մատյանում գտնվում են Գ.Հ.Խ.-ի 1949 թ. հունվարի 20 և 27-ի երկու նիստերի արձանագրության սևագրությունները, որոնք չեն ընդօրինակված ձեռագրում (ընդամենը 4 թերթ)։ Գրված են Մինաս Մինասյանի ձեռագրով։*

*2. Մատյանում գտնվում են նաև Գ. Հ. Խ-ի 1948 թ. օգոստոսի 27-ի և 31-ի, սեպտեմբերի 5-ի, 20-ի և 26-ի, հոկտեմբերի 25-ի և նոյեմբերի 21-ի յոթ նիստերի արձանագրության սևագրությունները, որոնք ընդօրինակված կան ձեռագրում (վերջին երկուսը մեքենագրված են) - (ընդամենը 19 թերթ)։*

*3. Ազգային Եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրության տպագիր պատճենը։*

*4. Խորեն վրդ. Էլչուձյանի 13-5-46 թ. մի գրություն։*

*5. Թեհրանում կատարված մի հանդիսության տպագիր ծրագիրը։*

*ԾՐԱԳԻՐ*

*Մայր Աթոռը Սուրբ Էջմիածին տեղափոխելու*
*Հինգհարյուրամյակի տոնակատարության*
*և*
*Կիլիկիո Մեծի Տանն*
*Գարեգին Ա Կաթողիկոսի*
*Ծննդյան 80-ամյա Հոբելյանական Հանդեսի*
*Տպ. «Իրանչափ»։*

№ 739

**ՄԱՏԵԱՆ ԿՈՆԴԱԿԱՑ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 194։ - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 12, յուրաքանչյուրը 16-ական թերթից։ - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 35.3×22.2×2 սմ։ - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած բարակ թուղթ։ - ԿԱԶՄԸ՝ հաստ ստվարաթուղթ։ - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մի հատ սպիտակ հաստ թուղթ։ - ՎԻՃԱԿԸ՝ բավարար։ - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։ - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ կան բազմաթիվ թղթեր։ - ՏՈՂԵՐԸ՝ 33։ - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է։ - ԳԻՐԸ՝ շեղագիր։ - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի։ - ԳՐԻՉԸ՝ անհայտ։ - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Գեորգ Ե Սուրենյանց, Կաթողիկոս Ամենայն Հայոց (1911-1930)։ - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1924-1930 թթ.։ - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք։ - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է 11 սեպտեմբերի 1984 թ. Մայր Աթոռի արխիվից։*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Մատյանը բովանդակում է 1924-30 թթ. գրված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե-ի կոնդակների պատճենները։*

Ըստ տարիների դրանք սկսում են հետևյալ թերթերից.

Թ. 1ա.- 1924 թ.
Թ. 19ա.- 1925 թ.
Թ. 35ա.- 1926 թ.
Թ. 65բ.- 1927 թ.
Թ. 98բ.- 1928 թ.
Թ. 142բ.-1929 թ.
Թ. 193բ.- 1930 թ.:

Վեհափառ Հայրապետի կոնդակը ստացողների թվում են եղել.

Թ. 1ա.- Եթովպիայի գահաժառանգ Ռաս Թաֆարի Մակոնըն (Ադիս Աբեբա), 27 սեպտեմբերի 1924 թ.:

Թ. 2ա.- Բարեբար Կարապետ Մելքոնյան (Կահիրե), 13 հոկտեմբերի 1924 թ.:

Թ. 22ա.- Եթովպիո թագուհի Զովդեդո Մենելիք (Ադիս Աբեբա), 25 հունիսի 1925 թ.:

Թ. 43ա.- Իրանի Շահնշահ Ռիզա Փեհլևի (Թեհրան), 10 ապրիլի 1926 թ.:

Թ. 44ա.- Իրանի նախարարապետ և սադրակամ (Թեհրան), 10 ապրիլի 1926 թ.:

Թ. 48ա.- Երուսաղեմի հայոց Պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյան (Երուսաղեմ), 27 մայիսի 1926 թ.:

Թ. 48բ.- Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Սահակ Բ Խապայան (27 մայիսի 1926 Թ.):

Թ. 58ա.- Կրաֆտ Բոնար՝ ղեկավար «Կենտրոնական վարչության Միության Հայասիրաց ի Զվիցերիա» (Ժնև), 3 նոյեմբերի 1926 թ.:

Թ. 64ա.- Իրանի Շահնշահ Ռիզա Փեհլևի (Թեհրան), 20 դեկտեմբերի 1926 թ.:

Թ. 71ա.- Բարեբար Վահան Խորասանճյան (Մարսել), 15 փետրվարի 1927 թ.:

Թ. 81ա.- Քրիստոնեական Համաշխարհային Վեհաժողով (Ժնև), 4 հունիսի 1927 թ.:

Թ. 82բ.- Կ. Պոլսի հայոց Պատրիարք Մեսրոպ Եպիսկոպոս Նարոյան (Կ. Պոլիս), 5 հուլիսի 1927 թ.:

Թ. 126ա.- Ազգային գործիչ և հեղինակ Մեսրովբ Հ. Սեթյանց (Կալկաթա), 4 նոյեմբերի 1928 թ.:

Թ. 158ա.- Իրանի Շահնշահ Ռիզա Փեհլևի (Թեհրան), 15 օգոստոսի 1929 թ.:

Թ. 161ա.- Իրանի նախարարապետ և սադրակամ (Թեհրան), 15 օգոստոսի 1929 թ.:

Թ. 165ա.- Եթովպիո թագավոր Թաֆարի Մակոնըն (Ադիս Աբեբա), 9 սեպտեմբերի 1929 թ.:

Թ. 174 բ.- Իրաքի թագավոր Էմիր Ֆեյսալ (Բաղդադ), 4 հոկտեմբերի 1929 թ.:

Թ. 178ա.- Իրաքի նախարարապետ (Բաղդադ), 3 հոկտեմբերի 1929 թ.:

Թ. 183ա.- Կ. Պոլսի հայոց Պատրիարք Մեսրոպ Արքեպիսկոպոս Նարոյան (Կ. Պոլիս), 16 նոյեմբերի 1929 թ.:

Թ. 188ա.- Ռումինիո Պատրիարք (Բուխարեստ), 28 նոյեմբերի 1929 թ.:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

*(Պահպանակի վրա գրված է)*

*Մատեան*

*Կոնդակաց Տ.Տ. Գէորգ Ե*

*Կաթուղիկոսի*

*Ամենայն Հայոց*

*Վասն 1924, 1925, 1926, 1927, 1928, 1929, 1930:*

*Թ. 34ա.- Մատեան Կոնդակաց*

*Տ.Տ. Գէորգ Ե Կաթուղիկոսի Ամ/ենայն/ Հայոց*

*Վասն 1926, 1927, 1928, 1929, 1930-ց 14/IV...*

*Թ. 53ա.- Կնքեմ*

*Անդամ Գեր. Հ. Խորհրդոյ (Նոյնը՝ Թ. 55բ):*

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 26ա.- Նախկին Բենիկ վրդ.ի պապը:*

*Թ. 106բ.- Չթոյլ տուին Տ. Գարեգին Արքեպիսկոպոսին գնա Թիֆլիս, ուստի այս Հայրապետական Կոնդակը մնաց անկատար:*

*Թ. 167ա.- Կատարելի՝ Գ. Ե.*

*Թ. 193ա.- 1930 թ.:*

**№ 740**

## ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 6: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 1:- ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 32.5×20.4×01 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած հաստ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մի հաստ բարակ դեղնած թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 34: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Հայրապետական տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոս Չորեքչյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1941 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ զեկուցագիրն ստացվել է 3 հոկտեմբերի 1984 թ. Մայր Աթոռի արխիվից::*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.- Զեկուցում*

*Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի*

*Ութնամեայ գործունէութեան մասին:*

*/1932 - 1941/*

*1932 թուի Նոյեմբերի 13-ին Ազգային Եկեղեցական Ժողովի ընտրութեամբ Հայրապետական Աթոռ բարձրացաւ երջանկայիշատակ*

Տ. Խորէն Ա Կաթողիկոսը և կազմուեցաւ ներկայ Գերագոյն Հոգևոր Խորհուրդը: Այն օրից ց'այսօր անցել է մօտաւորապէս ութևկէս տարի. Ս. Էջմիածնի Գեր. Հոգ. Խ-ը պարտք է համարում ներկայ Ազգային-Եկեղեցական ժողովին տալ իր այդ շրջանի գործունէութեան համառօտ պատկերը՝ պարզելով իր խոհերն ու առաջնորդող սկզբունքները և իր կատարած յիշատակութեան արժանի գործերը, անտես առնելով ընթացիկները: Սոյնպէս նաև նկարագրել Արտասահմանի և Խորհրդային երկրների Հայ Եկեղեցու ներկայ վիճակը:

(Ստորև նշված 8 կետերում զեկուցագրում խոսվում է արդեն կատարված և կատարվելիք գործերի մասին, որոնք տրվում են այստեղ համառոտ կերպով – Ն. Մ.):

1. Ս. Գրքի թարգմանության և հայ գրականության սկզբնավորության 1500-ամյա հոբելյանի կազմակերպման մասին:

2. Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գարեգին Արքեպիսկոպոս Հովսեփյանի արտասահման գործուղման մասին, հետևյալ շարժառիթներով.

ա. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության հարց:

բ. Սփյուռքի մի քանի թեմերի կազմակերպման խնդիր:

գ. Էջմիածնի պահպանության հարց՝ նոր եկամուտներ ստեղծելով: Նաև ծրագիր Երևանից-Էջմիածին տրամվայ անցկացնելու հարց, սփյուռքահայության նյութական օժանդակությամբ:

3. Հայ Եկեղեցու բարեկարգության հարց:

4. Հայ Եկեղեցու Սահմանադրության հարց:

5. Արտասահմանի և Միութենական երկրների Հայ Եկեղեցու ներկա վիճակի մասին:

6. Գերագույն Հոգևոր Խորհրդի վարած գծի մասին:

7. Հոգևոր դասի պատրաստության խնդիր:

8. Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման հարց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Զեկուցում
Ս. Էջմիածնի Գեր. Հոգ. Խորհրդի
1932 - 1941 թ.
Ս. Էջմիածին:

№ 741

ԿՈՆԴԱԿ

ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 61.2×30 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղին բարակ ստվարաթուղթ: - ԿԱԶՄ՝ չունի:- ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միայուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: -

*ՏՈՂԵՐԸ՝ 28: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ մատիտով քաշված: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակում կան ութ թռչնագրեր և մեկ կարդագիր: - ԳՐԻՉԸ ԵՎ ԾԱՂԿՈՂԸ՝ Ալբերտ Կարագյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 9 հուլիսի 1979 թ.: - ՎԱՅՐԸ՝ Երևան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակն ստացվել է 25 օգոստոսի 1984 թ. Մայր Աթոռի Դիվանատնից:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Օրհնության կոնդակ Ֆրեզնոյի (ԱՄՆ) բնակիչ Ժան Հովհաննես Թյութելյանին՝ իր եկեղեցաշեն գործունեության համար:*

*ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Վազգէն Ա (ստորագրություն)*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց*

*Տուաւ Կոնդակս ի 9 Յուլիսի*
*1979 Փրկչական ամի,*
*և ի տումարի Հայոց ՌՆԻԸ*
*ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:*
*Համ. 967*

*ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*(Վերջում կա Հայրապետական ուղղանկյուն կնիքը, 2.7×2 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալը)*

*Վազգէն Ա*
*Կթղկս. Ամ. Հայոց:*
*(երկու լուսանցքներում գրված է)*
*(ձախում) Պօղոս.*
*(աջում) շինութեան յանձնախմբի:*

**№ 742**

**ԿՈՆԴԱԿ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 28.4×13.7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ բարակ ստվարաթուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: - ՏՈՂԵՐԸ՝ 46: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ մատիտով քաշված: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ վերնագրի առաջին երկու տողերը ամբողջությամբ գրված է թռչնագրերով, իսկ տեքստում էլ կան մի քանի կարդագրեր և թռչնագրեր: - ԳՐԻՉԸ ԵՎ ԾԱՂԿՈՂԸ՝ Ալբերտ*

*Կարագյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 27 հոկտեմբերի 1982 թ.: - ՎԱՅՐԸ՝ Երևան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակն ստացվել է 25 օգոստոսի 1984 թ. Մայր աթոռի Դիվանատնից:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Հիշյալ ձեռագիրը բուն կոնդակի ֆոտո-պատճենն է: Կոնդակն ուղղված է Հունաստանի Հանրապետության նախագահ Կոնստանտին Կարամանլիսին և գրված է 1922 թ. Զմյուռնիայի կոտորածի 60-ամյակի առթիվ՝ հայտնելով հայ ժողովրդի երախտագիտությունը հույն ժողովրդի հյուրասիրության համար:*

*ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Վազգէն Ա (ստորագրություն)*
*Կաթողիկոս Ամենայն Հայոց*

*Տուաւ կոնդակս ի 27 Հոկտեմբերի*
*1982 Փրկչական ամի,*
*և ի տումարիս Հայոց ՌՆԼԳ*
*ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:*
*Համր. 1162*

**№ 743**
**Կ Ո Ն Դ Ա Կ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 36.4×25.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: - ՏՈՂԵՐԸ՝ 25: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չկան: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Եփրեմ Ա Ձորագեղցի, Ամենայն Հայոց կաթողիկոս /1809-1830/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 13 փետրվարի 1822 թ.: - ՎԱՅՐԸ՝ Շուշի (Լեռնային Ղարաբաղ): - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ստացվել է 15 հոկտեմբերի 1984 թ. Երևանի Մատենադարանից ձեռամբ Տ. Հակոբ քահանա Գյոկչյանի:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*(Հիշյալ ձեռագիրը բուն կոնդակի ֆոտո-պատճենն է:*

*Սույն կոնդակով Եփրեմ Ա Ձորագեղցի կաթողիկոսը, առողջական վիճակի պատճառով, կաթողիկոսական կառավարման իրավունքները հանձնում է Էջմիածնի Հոգևոր Սինոդին):*

№ 744

КОНДАК

ԿՈՆԴԱԿ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 42×29.7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ բարակ թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: - ՏՈՂԵՐԸ՝ 40: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակի վերևում նկարված են երկու բույսեր, եկեղեցու մի գմբեթ, թռչնագիր երկու մեծ տառեր (Է և Գ), ինչպես նաև 11 փոքր ծաղկազարդ բույսեր: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Նահապետ Ա Եդեսացի, Ամենայն Հայոց Կաթողիկոս /1691-1705/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1 փետրվարի 1701 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Վեհափառ Հայրապետը կոնդակը Ձեռագրատուն հանձնեց 30 օգոստոսի 1984 թ.:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Հիշյալ ձեռագիրը բուն կոնդակի ֆոտո-պատճենն է: Բուն օրինակը գտնվում է Հռոմում, Հիսուսյան Միաբանության Մայր Վանքի արխիվում:*

*Կոնդակի ֆոտոլուսանկարը և բովանդակությունը հրատարակված են Սահակ վարդապետ Քեչիշյանի կողմից Բեյրութում, Հայ Կաթողիկե Պատրիարքարանի պաշտոնաթերթ «Ավետիք»-ում, թիվ 2, ապրիլ-հունիս 1983 թ., էջ 142-145:*

№ 745

ՆԱՄԱԿ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29.6×20.8 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ մաքուր թուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ: - ՏՈՂԵՐԸ՝ 32: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ (Մայր Աթոռի մի մաբան): - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 10 հունվարի 1801 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ս. Էջմիածնի վանք: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ նամակն ստացվել է 15 հոկտեմբերի 1984 թ. Երևանի Մատենադարանից ձեռամբ Տ. Հակոբ քահանա Գյուկչյանի:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*(Նամակը վերաբերվում է Դավիթ և Դանիել կաթողիկոսների հակառակության խնդրին):*

**№ 746**
**ՈՒԽՏԱԳԻՐ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 64.7×45.2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնավուն բարակ ստվարաթուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 8: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չկան: - ԳԻՐԸ՝ մեծ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ թուղթն ինքնին ծաղկազարդ է: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Մոնտեվիդեոյի Արմենիա Երիտասարդական Միություն: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ ապրիլ 1984 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մոնտեվիդեո (Ուրուգվայ): - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ստացվել է 12 սեպտեմբերի 1984 թ. ձեռամբ Վեհափառ Հայրապետի:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Թ. 1ա.-*

*- Սիրելի Շիրակ... քու մահովդ կ'անմահանայ Մասիսը. Դուն մեզի սորվեցուցիր սիրել անծանօթ հայրենի հողը:*

*- Վստահ եղիր, որ մենք՝ օտար ափերու վրայ հասակ նետած երիտասարդներս, ուխտած ենք քալել քու ճանապարհով:*

*- Հողը թեթև գայ վրադ...*

*ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Թ. 1ա.- Արմենիա Երիտասարդական Միութիւն.*
*Մօնթէվիտէօ - Ուրուկուայ*
*Ապրիլ 1984:*

*ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*Թ. 1ա.- Շուրջ 280 ուսանողների ստորագրությունը կա այստեղ, մեծ մասը հայերեն գրված, իսկ մյուս մասն էլ՝ իսպաներեն:*

*Թ. 1բ.- Նույնպիսի շուրջ 44 ուսանողներ ևս ստորագրել են ուխտագրի ետևի մասում:*

**№ 747**
**ԺԱՄԱԳԻՐՔ**

*ԹԵՐԹԵՐԸ՝ 266: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ 23, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԳ՝ 6, Ա և ԺԷ պրակները՝ 10-ական թերթից են: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 10.5×7.3×3.5 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնած թուղթ: Միայն*

*չորս թերթ մագաղաթ են (1, 2, 9 և 10): - ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որն ունի երկու բռնիչներ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: Վերջում կա միայն մեկ թերթ դեղնած մագաղաթ, վրան հունարեն գրությամբ, որ փակցված է կազմին: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն վերջում պակաս է: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՍԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 18: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով: - ԳԻՐԸ՝ բոլորգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի բավականին գեղեցիկ մանրանկարչություն: Կան բազմաթիվ գեղեցիկ թռչնագրեր, լուսանցազարդեր և զարդագրեր, ինչպես նաև գլխազարդեր (2ա, 30ա, 62ա, 98ա, 130ա, 166ա, 197ա և 228ա): Հետաքրքիր մի փոքրիկ նկար կա ձեռագրի սկզբում (Թ. 1ա): Արքայական թագով մեկը նստած է գահին և երկու ձեռքով մի սազ է բռնել ծնկի վրա: Հեռվից երևում են երկու շենքեր: Թվում է, թե մի երկրորդ ծաղկողի գործերն են 129բ և 165բ էջերում նկարվածները: Առաջինում մի գեղեցիկ ծաղկեփունջ է, իսկ երկրորդում՝ մի զարդամոտիվ: Այս վերջին երկուսում միայն կարմիր գույնն է օգտագործված, մինչդեռ նախորդ նշվածներում՝ կանաչյան գույներ: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ անհայտ: - ԾԱՂԿՈՂՆԵՐԸ՝ անհայտ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 18-րդ դար: - ՎԱՅՐԸ՝ անհայտ: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ստացվել է 26 սեպտեմբերի 1984 թ., ձեռամբ Թուրքիո հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստյանի: Այն նվեր է ուղարկված Ստամբուլից տիկին Սիրվարդ Կյուլպենկյան-Գունտաքճյանի կողմից:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Թ. 2ա.- Երանեալ է այր ոչ գնաց...*

*Թ. 30ա.- Ի կատարած սաղմոս ի Դաւիթ: Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս...*

*Թ. 62ա.- Սաղմոս ի Դաւիթ:*

*Թ. 98ա.- Ի կատարած վասն ժողովոյն որ ի արքոյն հեռացեալ էին: Ողորմեա ինձ Աստուած զի կոխեաց զիս մարդ...*

*Թ. 130ա.- Տէր ապաւէն է ազգի մինչև յազգ...*

*Թ. 197ա.- Ալէլուիայ: Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է...*

*Թ. 228ա.- Երգ աստիճանաց: Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի...:*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

*Դեկտեմբերի 27-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Արագածոտնի թեմի նորաստեղծ Խորհրդի և եկեղեցական դասի անդամներին՝ թեմակալ առաջնորդ Նավասարդ վրդ. Կճոյանի գլխավորությամբ:*

*Նավասարդ վրդ. Կճոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նորաստեղծ թեմական խորհրդի աշխատանքային ծրագրերը, մասնավորապես Առաջնորդարանի վերանորոգչական աշխատանքների ընթացքի և ավարտից հետո այնտեղ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հոգևոր, գիտական-կրթական և մշակութային կենտրոնի գործունեության նախատեսված ծրագիրը:*

*Վեհափառ Հայրապետը մեծ ուրախությամբ ողջունեց թեմական խորհրդի ծնունդը և, հաջողություններ մաղթելով նրանց ձեռնարկներին, իր հայրական խորհուրդները տվեց հատկապես Մաշտոցի կենտրոնի գործունեության և թեմի եկեղեցիների վերանորոգման և վերականգնման ուղղությամբ:*

*Հանդիպմանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Հրաչյա Գրիգորյանը, որը թեմական խորհրդի պատվավոր անդամ է, և Աշտարակի քաղաքապետ Կարեն Գևորգյանը:*

***ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ***




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Դեկտեմբերի 1-ին, Բ կիրակի (Յիսնակաց).*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բագրատ աբղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

***

*Դեկտեմբերի 8-ին, Գ կիրակի (Յիսնակաց).*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Անուշավան աբղ. Ժամկոչյանը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը հանգամանալից քարոզ խոսեց, որից հետո կատարվեց հոգեհանգստյան պաշտոն 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ահեղ երկրաշարժի զոհերի համար (Տես էջ 106):*

***

*Դեկտեմբերի 15-ին, Դ կիրակի (Յիսնակաց).*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զարեհ աբղ. Կաբաղյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

*Դեկտեմբերի 22-ին, Ե կիրակի (Յիսնակաց).*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Բաբկեն աբղ.*

*Սալբյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

***

*Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի. — Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին.*

*Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոս նախավկայի խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:*

*Ս. պատարագի ընթացքում Հոգևոր ճեմարանի յոթ շրջանավարտ սաներ՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվեցին սարկավագ: (Տես էջ 185):*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

***

*Դեկտեմբերի 29-ին, Ջ կիրակի (Յիսնակաց).*

*Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Դերենիկ արք. Դավթյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:*

*Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:*

*Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:*

# ՑԱՆԿ

## «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1996 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

### Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը լոնդոնահայ Վաչե Մանուկյանին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրվելու առթիվ, Բ-Գ 166:

Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները, Ա 4:

Հայրապետական խօսք Նոր տարուայ առթիւ Հայաստանի և Արցախի հայութեան, Ա 10:

Հայրապետական խօսք շնորհակալութեան և գնահատանքի՝ ուղղուած ամերիկահայ թեմերուն, Բ-Գ 4:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ուղերձը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ազգային տուրքի մարաթոնի Արցախի մասնակիցներին, Բ-Գ 156:

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի կողմից քույր Եկեղեցիների հոգևոր պետերին ուղղված շնորհավորական գրությունների ցանկը, Դ 7:

Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի Զատկական Պատգամը, Դ 9:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Ապրիլ 24-ի առիթով, Դ 13:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար Կոնրադ Ռայզերի պատգամը Հայկական ցեղասպանության տարելիցի առթիվ, Դ 24:

Հայրապետական տնօրինություն Հայաստանի Հանրապետությունում Հայաստանյայց Եկեղեցու թեմական կառուցվածքի նոր դրության մասին, Ե-Զ 89:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ - Սարդարապատը՝ նոր անուններով (Խոսք Ս. Էջմիածնի Մայր Տաճարում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության /1918 թ./ 78-րդ տարեդարձի առիթով), Ե-Զ 95:

Վեհափառ Հայրապետի մաղթանքը Մայր Աթոռում, վարդապետական մասնավոր իշխանության տվչության ժամանակ, Ե-Զ 132:

Վեհափառ Հայրապետի խոսքը Հոգևոր Ճեմարանի փակման հանդիսությանը, Ե-Զ 150:

Հայրապետական խօսք շնորհակալութեան և գնահատանքի Հայաստանեայց Եկեղեցւոյ Հարաւային Ամերիկայի թեմակալ առաջնորդաց, հոգևորականաց

դասում, ազգային-եկեղեցական իշխանութեանց և հաւատացեալ ժողովրդեան, Է-Ը 4:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեռագիրը Ամերիկահայոց արևմտյան թեմի թեմական պատգամավորական ժողովին, Է-Ը 116:

Հայրապետական օրհնութեան և գնահատանքի խօսք, Է-Ը 117:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հինգերորդ տարեդարձի առթիւ, Թ 6:

Վեհափառ Հայրապետի խոսքը Հոգևոր Ճեմարանի բացման հանդիսությանը, Թ 112:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Հայաստանի Հանրապետութեան նորընտիր Նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի երդման արարողութեան առթիւ, Ժ-ԺԱ 6:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական հեռագիրը Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար Հայր Սերոբ Չամուրլյանին, Ժ-ԺԱ 10:

Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար Հայր Սերոբ Չամուրլյանի շնորհակալական հեռագիրը Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ժ-ԺԱ 11:

Մխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար Հայր Սերոբ Չամուրլյանի ծանուցումը՝ Մխիթարյան միաբանության ընդհանուր Աբբահայր Հայր Սահակ Ծ. Վրդ. Ճեմճեմյանի մահվան առթիվ, Ժ-ԺԱ 12:

Վեհափառ Հայրապետի հեռագիրը Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապին՝ վիրահատության հաջող ընթացքի կապակցությամբ, Ժ-ԺԱ 13:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Բիլ Քլինթոնին՝ ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում վերընտրվելու առթիվ, Ժ-ԺԱ 14:

Ռումին Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքի հեռագիրը Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ժ-ԺԱ 50:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի խոսքը ՔԴՔԿ-ի բացման առթիվ, Ժ-ԺԱ 162:

Վեհափառ Հայրապետի խոսքը Քրիստոնեական դաստիարակության օրվան նվիրված հանդիսության ժամանակ, Ժ-ԺԱ 168:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհակալական հեռագիրը Հովհաննես-Պողոս Բ Պապին Իտալիայից Ս. Էջմիածին վերադառնալիս, ԺԲ 91:

Նորին Սուրբ Օծութիւն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատասխանը տրուած Փարիզի «Յառաջ» թերթին, ԺԲ 96:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մամլո ասուլիսը, ԺԲ 99:

Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Գարեգին Ա Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, ԺԲ 102:

Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեան, Պատրիարք Հայոց Երուսաղեմի, ԺԲ 104:

## Բ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶՆԵՐ

Բեթղեհէմի Աստղին Լոյսը՝ Ս. Էջմիածնի պրիսմակէն..., Ա 20:

Դարձ դեպի մեր հոգևոր ավանդույթները, Բ-Գ 150:

Վեհափառ Հայրապետի քարոզը՝ խոսված Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Թարգմանչաց տոնի առիթով, Ե-Զ 144:

Վեհափառ Հայրապետի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում, հոկտեմբերի 19-ին, Ֆրիտյոֆ Նանսենի հիշատակին, Ժ-ԺԱ 24:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի քարոզը դեկտեմբերի 22-ին, Մայր Տաճարում մատուցվող Ս. Պատարագի ընթացքում, Վատիկան կատարած իր պաշտոնական այցելության առթիվ, ԺԲ 92:

## Գ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Բ-Գ 3:
Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի անդրանիկ հովվապետական այցելությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Կանադա, Բ-Գ 19:
ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - Վեհափառ Հայրապետի այցելությունները քաղաքամայր Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցի Մեծի Պահոց շրջանում, Բ-Գ 155:
ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ ԺՈՌՈՅԱՆ - Վեհափառ Հայրապետի այցը Ազգային գրադարան, Դ 48:
ԱԲՐԱՀԱՄ ՎՐԴ. ՄԿՐՏՉՅԱՆ - Վեհափառ Հայրապետի այցելությունը Կոստանդնուպոլիս, Ե-Զ 24:
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Շվեյցարիա, Ե-Զ 66:
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Փարիզ, Ե-Զ 80:
Գարեգին Ա Կաթողիկոսի ուխտագնացությունը Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին, Ե-Զ 142:
Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցելությամբ մեկնեց Հարավային Ամերիկա, Է-Ը 3:
ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ այցելությունը Հարավային Ամերիկա.
Այցելություն Բրազիլիա, Է-Ը 15:
Այցելություն Ուրուգվայ, Է-Ը 40:
Այցելություն Արգենտինա, Է-Ը 47:
Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի անդրանիկ հովվապետական այցը նորաստեղծ Արմավիրի թեմ և մարզ, Է-Ը 119:
ՏԻԳՐԱՆ ՍՐԿ. ՍԱՆՈՍՅԱՆ - Լոռվա մարզի Սուրբ Աստվածածին եկեղեցու օծումը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Է-Ը 122:
ԿԱՐԱՊԵՏ ԱԲՂ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական այցը Նորվեգիա, Թ-ԺԱ 15:
Հաղորդագրություն, ԺԲ 3:
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը Վատիկան և Իտալիա, ԺԲ 4:
Գարեգին Ա Կաթողիկոսի այցը Գյումրի՝ երկրաշարժի զոհերի ութերորդ տարելիցի առիթով, ԺԲ 106:

## Դ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաղորդագրություն, Ա 3:
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ Մայր Աթոռում, Բ-Գ 168:
Հաղորդագրություն (Քրիստոնեության Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամյակի Գործադիր Մարմնի ժողովը Ս. Էջմիածնում), Թ 10:
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Թ 16:

## Ե. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Մյուռոնօրհնեք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Բ-Գ 162:

## Զ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Խմբագրական, Ա 7:
Այսօր հարյավ ի մեռելոց, Դ 3:

Հանուն քրիստոնեական սիրո և միության, Ե-Զ 3:
Հոգի ճշմարտության, Թ 3:
Խմբագրական, Ժ-ԺԱ 3:

## Է. ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ – Ս. Միւռոնը առնչել կեանքին, Թ 19:
ԹԱՄԱՐ ԳԵՂԱՄՅԱՆ – Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով օրհնվեց «Վերածննդյան Մյուռոնը», Թ 31:
Միւռոն Վերածննդեան (Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը Միւռոնօրհնութեան առթիւ), Թ 35:
Ընդունելություն Մյուռոնօրհնության առթիվ, Թ 39:
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ – Սուրբ Մյուռոնօրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Թ 40:
ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ ԺՈՌՈՅԱՆ – Սրբալույս Մյուռոնը և Մյուռոնօրհնեքը Հայաստանյայց Եկեղեցու ավանդության մեջ, Թ 46:
Հայ Եկեղեցու Հայրերը Սրբալույս Մյուռոնի մասին, Թ 60:
ՆԱԶԻԿ ՍԱՐԳՍԻ ԽԱՆՋՅԱՆ – Սրբալույս Մյուռոնի բույսերը, Թ 70:
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Սրբալույս Մյուռոն (կանոնացման պատմությունը, օրհնության ընթացքը և ժողովրդային պաշտամունքը), Թ 90:

## Ը. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Վեհափառ Հայրապետի գահակալության մեկ տարին, Դ 32:
Հանդիսություն՝ նվիրված Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարվան, Դ 39:
Համերգ՝ նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գահակալության-տարեդարձին, Դ 40:
ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ – Հանդիսություն՝ նվիրված Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձին, Դ 42:

## Թ. ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ

Վեհափառ Հայրապետի ցաւակցական հեռագիրը Մանուկեան ընտանիքին, Է-Ը 105:
Հաղորդագրություն, Է-Ը 106:
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի խոսքը Ալեք Մանուկյանի հուղարկավորության առթիվ, Է-Ը 106:
Հոգեհանգստյան արարողություն Մայր Տաճարում՝ Ալեք Մանուկյանի հիշատակին, Է-Ը 113:
Իր ժողովրդի արժանավոր զավակը, Է-Ը 114:

## Ժ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մեծ Բրիտանիայի արտաքին և համագործակցության գործերի պետական քարտուղար տիար Մալքոլմ Ռիֆքինդը Մայր Աթոռում, Ա 28:
Վրաստանի Խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիան Մայր Աթոռում, Ա 29:

Եկեղեցական բժմ. լուրեր, Ա 30, Բ–Գ 207, Դ 118, Ե-Զ 216, Է-Ը 225, Թ 155, Ժ-ԺԱ 210, ԺԲ 210:

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ- Ամանորը Մայր Աթոռում, Ա 36:

Տյառնընդառաջի Սուրբ Պատարագ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բ–Գ 158:

Վաչե Մանուկյանը պարգևատրվեց Ս. Գրիգոր Լուսավորչի բարձրագույն շքանշանով, Բ–Գ 163:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ- Հայաստանցյան «Կլոր սեղան», Բ–Գ 171:

Ընդունելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բ–Գ 176, Դ 112, Ե–Զ 203, Է-Ը 213, Թ 147, Ժ-ԺԱ 201, ԺԲ 209:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Կոնրադ Ռայզերի պաշտոնական այցը Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Դ 17:

Ապրիլի 24–ը Մայր Աթոռում, Դ 25:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ- Ավագ Շաբաթը Մայր Աթոռում, Դ 27:

Գարեգին Ա Կաթողիկոսը Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշան շնորհեց բարերար Արթուր Մարտիրոսյանին, Դ 44:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսիյ Բ Պատրիարքի պատմական այցը Հայաստան, Ս. Էջմիածին, Ե-Զ 7:

Ս. Պատարագ Հոգեգալստյան տոնի և Հայաստանի առաջին Հանրապետության ոգեկոչման առիթով, Ե-Զ 91:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում, Ե-Զ 98:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Համալրվեց Մայր Աթոռի միաբանությունը, Ե-Զ 102:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ - Վարդապետական մասնավոր իշխանության տվչություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ե-Զ 129:

Խորեն Ա Կաթողիկոսի աճյունն ամփոփվեց Մայր Տաճարի բակում, Թ 25:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ - «Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք» (Խորեն Ա Մուրադբեկյան նահատակ Հայրապետի աճյունն ամփոփվեց Մայրավանքի բակում), Թ 27:

Քահանայական ձեռնադրություն Էջմիածնի Սուրբ Աստվածածին եկեղեցում, Թ 125:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ռումինիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Թեոկտիստ Պատրիարքի փոխադարձ այցելությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ժ-ԺԱ 29:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ թեմակալ առաջնորդների հերթական նիստը, Ժ-ԺԱ 51:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետի այցը Հայաստան, Ժ-ԺԱ 52:

Ուխտագնացությունների կազմակերպման անդրանիկ ժողովը, Ժ-ԺԱ 58:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ - Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի բացման արարողությունը Ս. Գայանե վանքում, Ժ-ԺԱ 159:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ - Քրիստոնեական դաստիարակության օրվան նվիրված հանդիսություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ժ-ԺԱ 164:

Վախճանունեց Նորայր արքեպս. Պողարեանը. Հոգեհանգիստ Ս. Էջմիածնում, ԺԲ 105:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Աբեղայական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ԺԲ 181:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում և Ստեփանոս Նախասարկավագին նվիրված երեկույթ Հոգևոր Ճեմարանի սրահում, ԺԲ 185:

## ԺԱ. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ


Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, Բ-Գ 160:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ- Ամավերջի հանդիսություն Հոգևոր Ճեմարանում, Ե-Զ 148:

Գրական ցերեկույթ Հոգևոր Ճեմարանում, Ե-Զ 191:

Բացվեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հերթական ուսումնական տարին, Թ 111:


## ԺԲ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ


Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում կրկնազատկին, Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության Ա տարեդարձի առթիվ, Դ 36:

Հոգեշնորհ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանի անդրանիկ քարոզը Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում, Ե-Զ 115:

Հոգեշնորհ Տ. Աշոտ աբեղա Մնացականյանի անդրանիկ քարոզը Ս. Հռիփսիմե տաճարում, Ե-Զ 118:

Հոգեշնորհ Տ. Զարեհ աբեղա Կարաղյանի անդրանիկ քարոզը Ս. Գայանե վանքում, Ե-Զ 121:

Հոգեշնորհ Տ. Սմբատ աբեղա Պողոսյանի անդրանիկ քարոզը Ս. Շողակաթ եկեղեցում, Ե-Զ 125:

ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԻՍՅԱՆ - Մասնավոր վարդապետական աստիճանի տվչությունը Հայ Եկեղեցու ավանդության մեջ, Ե-Զ 139:

Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում «Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնի» առթիվ, Ե-Զ 155:


## ԺԳ. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ


Վիրահայոց թեմի Ախալցխայի շրջանի եկեղեցիների և մեկ հուշամատուռի օծումն ու վերաբացումը, Դ 108:

Բ. Ա. Գ.- Զատկական օրերը Բաթումիի հայոց համայնքում, Դ 110:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - Սարկավագական ձեռնադրություն Սևանի «Վազգենյան» դպրանոցում, Ե-Զ 193:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս եկեղեցում, Ե-Զ 194:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - Ավարտական վկայականների հանձնման արարողություն Արարատյան Հայրապետական թեմում, Ե-Զ 196:

Իրաքահայոց թեմի առաջնորդի ընտրություն, Ե-Զ 197:

ՎԱՆՈՒՀԻ ԵՂԻՕՅԱՆ - Հանուն հավատի և հիշատակի, Ե-Զ 199:

Գուգարաց թեմ, Ե-Զ 201:

Կոտայքի թեմ, Ե-Զ 201:

Գեղարքունիքի թեմ, Ե-Զ 202:

Կ. Պոլսում ավարտվեց Վարդավառին նվիրված գիտաժողովը, Է-Ը 118:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Համագումար, որ արդեն պատմություն է, Է-Ը 124:

ԱՆԱՀԻՏ ԱՆՏՈՆՅԱՆ - Ուսումնական նոր տարեշրջանի բացում Սևանի «Վազգենյան» դպրանոցում, Թ 117:

Մ. Վ.- Օշականում բացվեց Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը, Թ 124:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի օրհնությամբ բացվեց Նորավանք-Ռինդ ջրատարը, Ժ-ԺԱ 152:

Նոր եկեղեցու հիմնօրհնեք Սյունյաց աշխարհում, Ժ-ԺԱ 156:

ԳՐԻԳՈՐ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ - Թորոս սարկաւագ Օհանեան դարձաւ Տէր Զաքէոս Աբեղայ, Ժ-ԺԱ 174:

ԱՆԱՀԻՏ ՍԵԴՐԱԿՅԱՆ - «Այսօր ուխտի ենք եկել և ամեն տարի պիտի գանք», Ժ-ԺԱ 176:
ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ուխտագնացություն «Վանեվան» եկեղեցի, ԺԲ 191:

## ԺԴ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

Էկումենիկ ժողով, Ե-Զ 198:
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ - Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի հերթական տարեկան նստաշրջանը, Թ 130:
ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ - Միացյալ Աստվածաշնչային Ընկերության համագումարը Կանադայում, Թ 132:
ՆԱԹԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - «Կրոնը և Եկեղեցին հետսոցիալիստական երկրներում» միջազգային գիտաժողով Կիևում, Ժ-ԺԱ 177:
ՆԱԹԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Միջեկեղեցական համաժողով Մինսկում, Ս. Էջմիածնի մասնակցությունը, Ժ-ԺԱ 179:
ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ - Համաշխարհային Առաքելության և Ավետարանչության ԺԱ համաժողովը Բրազիլիայի Սալվադոր քաղաքում, ԺԲ 189:

## ԺԵ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Գարեգին Ա Կաթողիկոսին հանձնվեց Երևանի Պետական Համալսարանի պատվավոր դոկտորի դիպլոմ, Դ 46:
ՄԱՐԻ ՍԱՆԹՈՒՐՋԵԱՆ - Երևանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան ֆակուլտետի առաջին տարին, Թ 119:

## ԺԶ. ԳՐԱԿԱՆ

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Էջմիածինը՝ նորոգ Բեթղեհեմ, Ա 27:
Էջմիածինը՝ Հարության խորան, Դ 6:
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Փրկության ափ, Դ 80:
Ջառաքի-Խան - Վերածնված և վերգտած փոքրիկ Վան, Է-Ը 190:
Կենսատու առավոտ, Ժ-ԺԱ 131:
Դեպի հավիտենություն, ԺԲ 168:
ՆԵՍԵՍ ՎԱՆՆԱԿԱՆ
Տեսիլք մշտավառ, Ե-Զ 192:
Սուրբ Մեռոն, Թ 30:

## ԺԷ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԺԷՄԵԱՆ ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ - Նոր Կտակարանի համարի մը հայերէն նոր թարգմանութեան առիթով, Ժ-ԺԱ 85: - Հայոց սպարապետ Հեթում Պայլի Յիշատակարանը, ԺԲ 129:
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԳԻՆ - 17-րդ դարի հայ գեղանկարչության հուշարձանները Հայաստանի Պետական Պատկերասրահում, Ժ-ԺԱ 91:
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՐԱԳ - «Հակազյան բառարանի նորոգումը», Դ 102:
ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ - Հայաշխարհի հավերժության հավատավորը, Ժ-ԺԱ 121:
ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԱՆՆԱ - Կոմիտասի անդրանիկ երաժշտագիտական հոդվածը և նրա նշանակությունը, Է-Ը 141:
ԲԱԴԻԿՅԱՆ ԽԱՉԻԿ - Հրաչյա Աճառյանը Էջմիածնում, Ժ-ԺԱ 107:

ԲՈԶՈՅԱՆ ԱԶԱՏ – Պապությունը ու հայերը վաղ և զարգացած միջնադարում, ԺԲ 115:
ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ – Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, ԺԲ 135:
ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – Գրական ավանդույթը Ալիշանի տեղագրական հատորներում, Դ 89:
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊՈՂՈՍ – «Մատյան ողբերգության» երկի նորահայտ համաբարբառը, Ա 50:
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌԱԻՍԱ – Գանձերի ժողովրդական ակունքները և հորինման արվեստը, Ե-Զ 158:
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ– 7-րդ դարի եկեղեցաշինարարները, Ժ-ԺԱ 100:
ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՀԱՅԿ – Վանեցի քանդակագործը, Բ-Գ 204:
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՈՎԻԿ – Վաղարշապատի 1467 թ. Ճառընտիրը, Է-Ը 131:
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԾԱՀԵ ՔԱՀԱՆԱ – Սարգիս Երզնկացի Կաթողիկոսի Ավետարանը, Ժ-ԺԱ 139:
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ – Անգլիան և հայ գաղթականությունը առաջին աշխարհամարտի տարիներին, Դ 72:
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱՅ – Նորօրեայ թարգմանիչները, ԺԲ 176:
ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ– Գարեգին Հովսեփյանի անտիպ նամակներից, Է-Ը 186:
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ – Անիի եպիսկոպոսական Աթոռը (Գաւազանագիրք եպիսկոպոսաց Անւոյ), Է-Ը 149:
ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐՄԵՆ – Կեսարահայ կազմարվեստի պատմությունից, Ե-Զ 174:
ՄԵԼԻՔՅԱՆ ՎԱՀԱՆ – Հայ Եկեղեցին և արևմտահայության խնդիրները 1917 թ. Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում, Դ 62:
ՆԱԶԱՐՅԱՆ ԾՈՒԽԱՆԻԿ – Մովսես Խորենացու «Ողբը» հայոց անկախ պետականության գաղափարի գրական հիմն է, և Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկը աղերսներ ունի նրա հետ, Ա 78:
ԾԱԽԿՅԱՆ ԳԱՌՆԻԿ – Հովհան Օձնեցի Իմաստասեր, ԺԲ 165:
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ – Հայ ժողովրդի անզուգական բարեկամը (Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 135-ամյակի առթիվ), Ժ-ԺԱ 63:
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՍՐԱՊԻՈՆԻ – Նուխի և Արեշ գավառների հայության կոտորածները ու ինքնապաշտպանությունը, Ա 105:
ՍՏԵՓԱՆՑԱՆՑ ՍՏԵՓԱՆ – Հայ Եկեղեցին 1914 թվականին, Դ 51:
ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ն. – Սուրբ Էջմիածնի ձեռագրատունը, Ա 87:
ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ – Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Սահակ Ճեմճեմյան՝ ճգնակյաց վանական-գիտնականը, Ժ-ԺԱ 148:
ՏԵՐՏԵՐՅԱՆ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ՔԱՀԱՆԱ – Խորեն Ա Կաթողիկոսի օրոք Մայր Աթոռի հարաբերությունները Հայ Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների հետ, Թ. 97:
ՔՅՈՍԵՅԱՆ ՀԱԿՈԲ – Հունարեն բնագրով անհայտ հատվածներ Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Եզեկիելի մեկնության հայերեն թարգմանությունից, Բ-Գ 189: – Հատվածներ Ս. Եպիփան Կիպրացու «Խարսխեալ» (ΑΓΚΥΡΩΤΟΣ) երկի հայերեն թարգմանությունից, Ժ-ԺԱ 75:

## ԺԸ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐՈՖ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Բարձրարվեստ գործերի արարիչը (Բաղդասար Արզումանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ), Բ-Գ 199:
Տ. Աբգար աբեղա Հովակիմյան, Ե-Զ 108:
Տ. Տրդատ աբեղա Մարտիրոսյան, Ե-Զ 109:
Տ. Աշոտ աբեղա Մնացականյան, Ե-Զ 110:

Տ. Սմբատ աբեղա Պողոսյան, Ե-Զ 111:
Տ. Զարեհ աբեղա Կաբաղյան, Ե-Զ 112:
Տ. Մկրտիչ քահանա Մուշատյան, Ե-Զ 113:
Տ. Վահան քահանա Սարիբեկյան, Ե-Զ 114:
Հոգեշնորհ Տ.Վազգեն վարդապետ Միրզախանյան, Ե-Զ 135:
Հոգեշնորհ Տ. Մովսես վարդապետ Մովսիսյան, Ե-Զ 137:
Տ. Վարուժան քահանա Տերտերյան, Ե-Զ 195:
Չթուլացող եռանդով (Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ծննդյան 70-ամյակի առթիվ), Է-Ը 211:
Տ. Հարություն քահանա Քեսաբյան, Թ 126:
Տ. Մաշտոց քահանա Իսայան, Թ 127:
Տ. Սարգիս քահանա Խլղաթյան, Թ 128:
Տ. Վահան քահանա Ազատյան, Թ 129:
ԳԵՎՈՐԳ ՎՐԹԱՆԵՍՅԱՆ - Սրբազան հատուցում (Արտաշես Բալաբանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ), Ժ-ԺԱ 198:
Տ. Ներսեհ աբեղա Խալաթյան, ԺԲ 183:
Տ. Մաշտոց աբեղա Ժողոյան, ԺԲ 183:
Տ. Բարսեղ աբեղա Փիլավչյան, ԺԲ 184:

## ԺԹ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ Լևոն Հակոբի Կարամանուկյանի, Ա 124:
Հանգիստ և թաղում Պարթենիոս Գ Պատրիարքի, Է-Ը 223:
Մխիթարյան ավանդների ճշմարիտ շարունակողը (Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Սահակ Ծայրագույն Վարդապետ Ճեմճեմյանի մահվան առթիվ), Ժ-ԺԱ 9:
Հայ Երուսաղեմի նվիրյալը, ԺԲ 104:

## Ի. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ - Մատենագիտական արժեքավոր աշխատություն, Ա 98:
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ - «Ազգապատում»-ի Դ հատորը, Բ-Գ 188:
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ - Վկայում են վավերագրերը, Թ 106:
ՆՈՒԲԱՐ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ - Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, Է-Ը 197, Թ 134, Ժ-ԺԱ 182, ԺԲ 192:
ՍՈՒՍԱՆՆԱ ՄՆՈՅԱՆ - Գիրքը՝ մարդու նման հարատևող, ԺԲ 178:

«Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր համարի վերջում տրվում են բովանդակության համառոտ թարգմանությունները ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:

## "ЭЧМИАДЗИН"
## ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
## (ДЕКАБРЬ 1996)


1. Сообщение (об официальном визите Патриарха Всех Армян в Ватикан и Италию) - (стр. 3).
2. Визит Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I в Ватикан и Италию, 10-19 декабря 1996 г. (стр. 4-90).
3. Благодарственная телеграмма Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I Папе Иоанну-Павлу II по возвращении в св. Эчмиадзин их Италии, 19 дек. 1996 г. (стр. 91).
4. Проповедь Верховного Патриарха Гарегина I 22 декабря на литургии в Кафедральном Соборе в связи с официальным визитом в Ватикан - (стр. 92-95).
5. Ответ Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I парижской газете "Арач" (стр. 96-97).
6. Пресс-конференция Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I, 23 декабря 1996 г. (стр. 98-101).
7. Соболезнующая телеграмма Армянского Патриарха Иерусалима архиепископа Торгома Манукяна Его Святейшеству Католикосу Всех Армян Гарегину I по случаю кончины архиепископа Норайра Погаряна, 20 декабря 1996 г. (стр. 102).
8. Ответная соболезнующая телеграмма Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина I Армянскому Патриарху Иерусалима архиепископу Торгому Манукяну, 20 дек. 1996г. (стр. 103).
9. Поминальное слово о почившем архиепископе Норайре Погаряне (стр. 104).
10. Почил Норайр архиепископ Погарян (стр. 105).
11. Посещение Гюмри Католикосом Гарегином I по случаю восьмой годовщины жертв землетрясения, 7 дек. 1996 г. (стр. 106).
12. Проповедь Верховного Патриарха в церкви Св. Богородицы в Гюмри, 7 дек. 1996 г. (стр. 107-110).
13. Проповедь Верховного Патриарха Всех Армян в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, посвященная идее возрождения, 8 декбря 1996 г. (стр. 110-114).
14. АЗАТ БОЗОЯН - Папство и армяне в раннем и позднем средневековье (исследование) - (стр. 115-128).
15. АРХИЕПИСКОП ШАГЕ АЧЕМЯН - Памятная запись армянского военачальника Этума Пайла (исследование, подлинник) - (стр. 129-134).
16. ГРИГОР БРУТЯН - О некоторых аспектах армянского летоисчисления (исследование) - (стр. 135-164).
17. ГАРНИК ШАХКЯН - Овнан Одзнеци Имастасер (исследование) - (стр. 165-167).
18. ВОЛОДЯ АБРААМЯН - К вечности (литературное) - (стр. 168-175).

19. ИЕРОМОНАХ МАКАР ОВАННИСЯН - Проповедь (стр. 176-177).
20. СУСАННА МНОЯН - Книга вечна, подобно человеку (лит. критика) - (стр. 178-180).
21. МАРИАМ ВАРДАНЯН - Рукоположение во иеромонаха в Первопрестольном Эчмиадзине, 24 ноября 1996 г. Помещены также биографии иеромонаха Нерсега Халатяна, иеромонаха Маштоца Жорояна и иеромонаха Барсега Пилавчяна (стр. 181-184).
22. ДИАКОН АРМЕН ХАЧАТРЯН - Рукоположение во диакона в Первопрестольном Эчмиадзине и мероприятие, посвященное первомученику Стефану в зале Духовной Академии, 24 декабря 1996 г. (стр. 185-188).
23. ВЕРХ. АРХИМАНДРИТ МИКАЕЛ АЧАПАГЯН - XI конгресс Всемирного миссионерства в бразильском городе Сальвадоре, 24 нояб.-3 дек. 1996 г. (стр. 189-190).
24. ВАЧЕ ГРИГОРЯН - Паломничество к церкви "Ваневан", 16 дек. 1996 г. (стр. 191).
25. Н. ТЕР-МИКАЕЛЯН - Перечень рукописей, поступивших в Первопрестольный Эчмиадзин (№№ 731-747) - (стр. 192-208).
26. Приемы в Первопрестольном Эчмиадзине (Верховный Патриарх Гарегин I принял членов епархиального совета Арагацотна, 27 декабря, 1996 г.) - (стр. 209).
27. Хроника Первопрестольного Эчмиадзина (стр. 210-211).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(DECEMBER 1996)

1. Communiqué (about the visit of Supreme Patriarch and Catholicos of All Armenians to Vatican and Italy) - (p.3).
2. The visit of His Holiness Gareguin I Catholicos of Ali Armenians to Vatican and Italy, 10- 19th of December 1996 (pp. 4-90).
3. The thanks telegram of His Holiness Garegnin I Supreme Patriarch and Catholicos of Ali Armenians to His Holiness John Paul II, Bishop of Rome and Pope of the Catholic Church, on the 19th of December 1996, after returning Holy Etchmiadzin from Italy (p. 91).
4. The sermon of His Holiness Garegum I Supreme Patriarch and Catholicos of All Armenians on the 22nd of December 1996 in Holy Etchmiadzin Cathedral during the holy mass, on the occasion of His visit to Vatican (pp. 92-95).
5. The answer of His Holiness Oaregum I Catholicos of All Armenians given in Paris of the news paper "Harach" (pp. 96-97).
6. The press conference of His Holiness Oaregum I, on the 23rd of December 1996 (pp. 98-101).
7. The condolence telegram of His Beatitude Archbishop Torkom Manookian, the Patriarch of the Armenians of Jerusalem to His Holiness Gareguin I Catholicos of All Armenians, on the occasion of passing away of Archbishop Norayr Bogharian, on the 29th December 1996 (p. 102).
8. The answer of condolence telegram hy His Holiness Garegum I Catholicos of All Armenians to His Beatitude Archbishop Torkom Manookian, Patriarch of the Armenians of Jerusalem, on the 20th of December 1996 (p. 103).
9. The devoted Armenian of Jerusalem (word of rememhrance on the occasion of passing away Archbishop Norayr Bogharian) - (p. 104).
10. The Archbishop Norayr Bogharian passed away (p. 105).
11. The visit of His Holiness Gareguin I Catholicos of All Armenians to Gumri on the occasion of the eight anniversary end of the earthquake victims, on the 7th of December 1996 (p. 106).
12. The sermon of His Holiness Gareguin I Supreme Patriarch and Catholicos of All Armenians in the Holy Astvadzadzin Church of Gumri, on the 7th December 1996 (pp. 107-110).
13. The sermon of Supreme Patriarch and Catholicos of all Armenians in the Cathedral of Holy Etchmiadzin devoted to the idea of reconstruction, on the 8th of December 1996 (pp. 110-114).
14. AZAT BOZOIAN- The Popedom and the Armenians in early and advanced Middle Age (study) - (pp. 115-128).
15. ARCHBISHOP SHAHE ADJEMIAN- The archive of the Armenians Generalissimo Hetum Bail's (study, original) - (pp. 129-134).
16. GRIGOR BROOTIAN- Ahout distinct questions of Armenians calendar (study) - (pp. 135-164).

17. GARNIK SHAKHKIAN- Philosopher Hovnan Otsnetzi (study) - (pp. 165-167).
18. VOLODYA ABRAHAMIAN- Towards eternity (literary) - (pp. 168-175).
19. MONK MAKAR HOVHANNESSIAN- The nowadays translators (study) - (pp. 176-177).
20. SOOSSANNA MNOIAN - The book: persistent like man (bibliography) - (pp. 178-180).
21. MARIAM VARDANIAN - Monkish ordination in the Holy See of St. Etchmiadzin, on the 24th of November 1996. The biographies of Monk Nerseh Khalatian, Monk Mashtotz Joroian and Monk Parsegh Pilavchian are also instated (pp. 181-184).
22. DEACON ARMEN KHACHATRIAN - Deaconal ordination in Holy See and evening party in the hall of Spiritual Seminary dedicated to Archdeacon Stepanos, on the 24th of December 1996 (pp. 185-188).
23. The 11th World Mission Conference in the city of Salvador, Brasil, from the 24th of November to the 3rd of December 1996 (pp. 189-190).
24. VATCHE GRIGORIAN - Pilgrimage to "Vanevan" Church, on the 16th of December 1996 (p. 191).
25. N. DER-MIKAELIAN - The index of menuscripts which the Holy See of St. Etchmiadzin has received recently (Nos. 731-747) - (pp. 192-208).

RECEPTIONS IN THE HOLY SEE

26. HIS HOLINESS GAREGUIN I SUPREME PATRIARCH AND CATHOLICOS OF ALL ARMENIANS entertained the Council members of newly created Aragadzotn Diocese, on the 27th of December 1996 (p. 209).

ECCLESIASTIC STAGE

27. News about the celebrated Holy Masses, sermons during December month in Holy Etchmiadzin Cathedral and the descriptions of the other festivities in Holy See (pp. 210-211).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(DECEMBRE 1996)


1. Communiqué à propos de la visite du Catholicos de tous les arméniens au Vatican et en Italie. (p. 3).
2. La visite de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, au Vatican et en Italie du 10 au 19 décembre 1996 (pp. 4-90)
3. Le télégramme de remerciement de SS Karékine 1er Catholicos de tous les arméniens, au Pape Jean-Paul 2 à son retour d'Italie le 19 décembre 1996 (p. 91)
4. Le sermon de SS Karékine 1er durant la messe dominicale en la cathédrale de St Etchmiadzine, suite à sa visite officielle au Vatican (pp. 92-95)
5. La réponse de SS Karékine 1er Catholicos de tous les arméniens, adressée au journal "Haratch" de Paris (pp. 96-98)
6. La conférence de presse de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, le 23 décembre 1996 (pp. 99-101)
7. Le télégramme de condoléances du 20/12/1996 de SB Torkom Manoukian, Patriarche des arméniens de Jérusalem, à SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à l'occasion du décès de l'archevêque Norair Bogharian (p. 102)
8. Le télégramme de condoléances du 20/12/1996 de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, à SB Torkom Manoukian, Patriarche des arméniens de Jérusalem. (p. 103).
9. L'arménien qui s'est adonné à Jérusalem. Message en la mémoire de l'archevêque Noraïr Bogharian suite à son décès. (p. 104)
10. Le décès de l'archevêque Noraïr Bogharian (p.105)
11. La visite du Catholicos Karékine 1er à Gumri, à l'occasion du huitième anniversaire des victimes du seïsme, le 7 décembre 1996. (p. 106)
12. Le sermon de SS Karékine 1er en l'église St Asdvadzadzine de Gumri, le 7 décembre 1996 (pp. 107-110)
13. "L'idée de reconstruction". Sermon de SS Karékine 1er, Catholicos de tous les arméniens, en la cathédrale de St Etchmiadzine, le 8 décembre 1996 (pp. 110-114).
14. AZAD BOZOYAN - Etude. La papauté et les arméniens durant l'ancienne et instruite période du moyen-age (pp. 115-128).
15. ARCHEVEQUE CHAHE ADJEMIAN - Etude original. La mémoire du général en chef arménien Hétoum Païl (pp. 129-134).
16. KRIKOR BROUTIAN - Etude. Quelques questions autour du calendrien arméniens (p. 135).
17. KARNIG CHAKHIAN -Etude. Le philosophe Hovnan Otsnetsi (pp. 165-167).
18. VOLODIA ABRAHAMIAN - Ecrit. "Vers l'Eternel" (pp. 168-167).
19. RP MAGUAR HOVANISSIAN - Etude. Les traducteurs modernes (pp. 176-177)
20. SUZANNA MENOYAN - Ecrit. Le livre est comme l'homme, perpétuel (p. 178-180)

21. MARIAM VARTANIAN - Ordination sacerdotale le 24 novembre 1996 au St-Siège d'Etchmiadzine. Biographies des RP Nerseh Khalatian, Machdotz Joroyan et Parsegh Pilavdjian (pp. 181-184)
22. DIACRE ARMEN KHATCHADRIAN - Ordination de diacres au St-Siège et soirée dédiée au pré-diacre Stépanos à la salle de l'académie de théologie, le 24 déc. 1996. (pp. 185-188)
23. ARCHIPRETRE MIKAEL ADJABAYAN - La 11 ième réunion mondiale de l'apostolat à Salvador (Brésil) du 24 novembre au 3 décembre 1996 (pp. 189-190)
24. VATCHE KRIKORIAN - Pèlerinage à l'église Vanévan, le 16 décembre 1996 (pp. 191)
25. NORAIR DER-MIKAELIAN - Liste des nouveaux manuscrits reçus au St-Siège /731-747/ - (pp. 192-208)
26. Réceptions au St-Siège. SS Karékine 1er a reçu les membres de l'éphorie nouvellement créee du diocèse d'Arakadzodn, le 27 décembre 1996 (p. 209)
27. Informations diverses. Les messes célébrées en décembre 1996. Les sermons et descriptions des diffèrentes cérémonies au St-Siège (pp. 210-211).

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ - Համաշխարհային Առաքելության և Ավետարանչության ԺԱ համաժողովը Բրազիլիայի Սալվադոր քաղաքում ........ 189
ՎԱՉԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ուխտագնացություն «Վանեվան» եկեղեցի ........ 191
Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ - Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի ........ 192
Ընդունելություններ Մայր Աթոռում ........ 209
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ - եկեղեցական բեմ. լուրեր ........ 210
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1996 թվականի տպագրված նյութերի ........ 212
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата ........ 221
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin ........ 223
«Etchmiadzine» organe officiel du Saint-Sierge d'Etchmiadzin ........ 225

**Խմբագիր՝ ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱԼՍՏՅԱՆ**

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ**
**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ**